

89

ԷԶՄԻԱԾԻՆ



Ե
1998



ԾԴ ՏԱՐԻ

Է. ԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՒՈՅ
Ս. Է. ԶՄԻԱԾՆԻ

Մայիս
1998



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՆ ԵՐԵՐՈՒՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ անկախ Հանրապետության ստեղծման 80-ամեակին և Սարտարապատի հերոսամարտում զոհուածների հիշատակին	3
--	---

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԲԱԳՐԱՏ ԱՐԵՂԱ ԳԱԼՍՏԵԱՆ - Սարգարապատի ճանապարհն անցնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով	7
ԱՐՇԵՆ ԱՐԵՂԱ ՍԱՆՈՍԵԱՆ - Սարգարապատի հերոսամարտի 80-ամյակի ռգեկոչումը	13
ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Հիշի՛ր, հայորդի	18

ԿՐՈՆԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՀԵ ԱՐՔ. ԱՃԷՄԵԱՆ «Նովին մարմնով»	20
Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսի ճամպը Կոստանդնուս թագավորին՝ երկնքում Սուրբ Խաչի ճշմանի երևալու մասին	25
ՀԱՅՈՐ ՔՅՈՍԵԱՆ - Քերտվքի վարդապետի նորահայտ «Պատճառ Գալստեան Տեառն յերուսաղէմ» երկը	28
ՖՐԱՆՅԵՍԿՈՍ ԴԸ ՍԱԼԻ - Ուղեցույց բարեպաշտ կյանքի	41
ԺԱՆ-ՄԱՐԻ ՄԱՐՏԻՆ - Արևելյանները հարավային Իտալիայում (մինչև ԺԱ դարը)	57
Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ - Նորահայտ բառեր «Յայսմաւուրբ»-ի մեջ	66
ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ - Քրիստոսի ծննդեան թուականը ըստ եպ մատենագրական աւանդոյթի	73
ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԱՆ - Հայ ուղեգրության առաջնեկը	89
ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Ղուկաս Կարենցի Կաթողիկոսի ճամկագրութունը Քարթլ-Կախեթի թագավոր Հերակլ երկրորդի և վրաց թագավորական ընտանիքի անդամների հետ (1786-1792 թթ.)	97
ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Բանասիրական դիտարկումներ	109
ԳԵՎՈՐԳ ՎՐԹԱՆՆԻՍՅԱՆ - Սարգարապատ 80	114
ԲԱԼԱԲԵԿ ՄԵԼՅԱՆ - Ագգային հոգսերով տառապալ հոգևորականը (Զաքարիա Բախանա Ապրեպան)	120
ԽԱԶԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ - Գևորգյան ձեմարանի երախտավորները Ստեփան Մալխասյանց (ծննդյան 140 և մահվան 50-ամյակի առթիվ)	128
ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ - Բարեգործութիւնը՝ փրկութեան կայան	141
ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ - Մազլում արուեստագէտ Բոյրերը	147

ՄԱՅՐ ԱԹՈՒՌՆԵՐ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՄՈՒՇԵՂ ՀՈՎՀԱՆՆԻՍԹԱՆ - Հանդիսություն Գևորգյան ձեմարանում	152
ԱՎԱԳՅԱՆ ԱՆԱՀԻՏ, ՓԱՆՈՍԹԱՆ ԱՐՄԻՆԵ - Համարձում	153
Ազատագրված հողի սրբազործումը	155
Մ. Ծ. Վ. Ա. - Ուղղափառ եկեղեցիների նախահամաժողովյալ	
հանդիպում Դամասկոսում	157
ՓՈԹՐՐ ԲՈՒՌԹԵՆՆԻՑ - Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի	
50-ամյակը և 8-րդ աստիճան	159
Սր. Աստվածածին վանք	165
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Քեթրեքների Արքեպիսկոպոսի նվիրակ	
Հայր Ֆիլիպ Սթորը Վեներաբլիսյան Բազիլիկում	
Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի	170
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՆԵՐ - Եկեղեցական բն. լուրեր	172
ԽՈՐԵՆ ԱՐԱՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍԹԱՆ - «Էջմիածին» տասագրի	
մատենագիտությունը (1974-1983)	176
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикоства	191
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	193
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	195

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ 80-ԱՄԵԱԿԻՆ ԵՒ
ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՈՒԱԾՆԵՐԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ**

ԳԱՐԵԳԻՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ
ՊԱՏՐԻԱՐԸ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԻՐՈՑ ՈՂԶՈՐԹՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ՝ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԸ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՒ ԳԱՀԱԿԱԼԱՑ ՆՈՑԻՆ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄԱՑ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ, ԱՄԵՆԱՊԱՏԻ
Տ. ԹՈՐԳՈՄԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ՝ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ
ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑՆ, ԳԵՐԱԾՆՈՐՀ
Տ. ՄԵՍՐՈՊԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՅԵԱՆԻՆ՝ ԼԻԱԶՕՐ
ՓՈՒՍՆԱՐԴԻՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՑ,
ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ, ՀՈԳԵՆՈՐԱԿԱՆԱՑ ԴԱՍՈՒՆ՝
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՑԻՑ,
ՍԱՐԿԱԽԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԱԶԳԱՑԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՇՈՍՆՈՒԹԵԱՆՑ
ԺՈՂՈՎԱԿԱՆ ԱԶԳԱՑՆՈՑ, ՀԱՄԱՑՆՔԱՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ ԵՒ
ՀԱՄԱՑՆ ՀԱԽԱՏԱՑԵԼՈՑ ՈՐԸ Ի ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ, ՅԱՐՑԱՆ ԵՒ
Ի ՍՓԻՒՍ ԱՇՈՒՐՀԻ

*Մյուսի խորագոյն հրճուանքի պատշաճով փառք և գոհութիւն
կ'ընծայենք Ամենակալին Աստուծոյ որ 20-րդ դարու երկրորդ
տասնամեակին մեր քաղաքայրայր ժողովուրդին շնորհեց յոյսի և յոյսի
օրեր 1918 թուի Մայիսի 28-ի Ակատ ու Անկախ Հանրապետութեան
ստեղծումով, որուն 80-ամեակն է որ կը նշեք ազգովին որպէս
պետութիւն, Եկեղեցի և ժողովուրդ:*

*Բնականօրէն և առաջին հերթին կ'անդրադառնանք որ Հայոց արդի
պատմութեան սխրալի դէպքը՝ 1918 թուի Մայիսեան անկախութեան*

հոյակումը արդար պսակումն էր Սարտարապատեան հերոսամարտին: Մնմոռանալի հերոսներուն, քաջամարտիկներուն, ֆետայիներուն արեան գինն էր ան, զոր անոնք վճարեցին իրենց կեանքերուն ընծայումովը հայրենասիրութեան, ազատատենչ կամքի և իրենց ազգի անկախ ապրելու ուխտի խորանին:

Բիւր յարգանք և անհուն երախտիք անոնց անմեռ և կենդանարար իշատակին և աղօթք հայցողական վասն խաղաղութեան հոգւոց նոցին:

ՍԻՐԵԼԻՔ,

80-ամեակի այս փառատը հանգրուանին, մեր բոլորի պարտքն է ճիշդ գնահատել այդ շքեղագոյն դրուագին իմաստն ու արժէքը մեր այսօրուայ կեանքին մէջ: Մնուրանալի իրողութիւն է Հայ ժողովուրդի հերոսական մաքառումներու և սիրագործութեանց ոսկի շարքին գազաթնային պսակումն եղող Սարտարապատի յաղթանակը - այն պայծառ արտայայտութիւնն էր Հայ ժողովուրդի միահամուռ կամքին, համաժողովրդական միասնական պայքարին, ոյժերու ամբողջանուէր ու անսակարկ ընծայումին, քաջարի կեցումօքի պողոկումին:

Մեր ազգին դէմ 1915 թուին գործուած թրքական ցեղասպանութիւնը առիւթ ու մութ տարածեց չորս կողմ, աւելի քան մէկ ու կէս միլիոն կեանքեր իպէց մեր ազգէն, տեղահանութեան և աքսորի բռնադատեց հարիւր հազարաւորներ, քանդեց ու կործանեց շէն քաղաքներ և գիւղեր, անհամար եկեղեցիներ և դպրոցներ, խոպան դաշտի վերածեց մեր հայրենի սեփական հողերուն մեծ մասը. բայց - հապա՛ր փառք Սատուծոյ - չյաջողեցաւ վերածուիլ հոգեւայանութեան, ազատութեան և անկախութեան գաղափարի ու կամքի չքացումին մեր ժողովուրդի շարունակուող կեանքին մէջ: Այդ կամքն էր որ տարերային ուժգնութեամբ պայթեցաւ և Ղարաքիլիսէի, Բաշ-Սպարանի ու յատկապէս Սարտարապատի գոյամարտին իր յաղթանակն արժանագրեց լուսաճաճանչ պայծառութեամբ անգամ մը ևս ճշմարտելով Քրիստոսի խօսքը՝ «զոգի ոչ կարեն սպանանել» /Մատթ. Ժ. 28/:

Հայց. Առաքելական եկեղեցին, որպէս մեր ազգի ողջ գոյութեան տարրերուն մէջ շաղախուած հոգևոր ոյժ և բարոյական ներգործութիւն, իր Մայր Աթոռով՝ Ս. Էջմիածնով իր շունչը խառնեց գոյապայքարի այդ վճռադրոշմ պահին իր ընտիր հոգևորականներու և անոնց ընտրելագոյններէն մէկուն՝ Գարեգին Եպս. Յովսէփեանցի բոցաշունչ և սրտապնդիչ մասնակցութեամբը: Ս. Էջմիածինը՝ հաւատարիմ իր ազգակերտական ու հայրենապաշտական առաքելութեան՝ իր օրինալից Վօրակցութիւնը ընծայեց 1918-ի Մայիսեան Հանրապետութեան: Չմոռնանք երբեք որ անցնող 70 տարիներու խորհրդային իշխանութեան բռնական տիրապետութեան շրջանին երբ Սարտարապատը մոռացութեան և ուրացութեան էր տրուած, անոր հերոսներու ոգեկոյման

առաքին ձայնը հնչեց Ս. Էջմիածնի լուսոյ խորանէն, ճիշտ երեսուն տարիներ առաջ: Մեր երջանկայիշատակ նախորդին՝ Վաչգէն Ս Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով և կենդանի խօսքով:

80-ամեակը, սակայն, անցեալի մատուցուած յարգանքի առիթ չէ: Սն մեր ներկայի նոր կեանքին մէջ նոր հասկացողութեամբ և նորոգեալ ուժգնութեամբ վերակենդանանալի և վերարժեւորելի երևոյթ է: 80 տարիներ ետք, ահա մենք Հայաստան աշխարհի ունինք դարձեալ ազատութեան և անկախութեան նոյն լոյսով պայծառակերպուած երկիր: Արցախեան ազատագրական շարժումին բնականօրէն հետևող Հայաստանի անկախութեան հռչակումը 1991 թուի Սեպտեմբերի 21-ին նոր էջ բացաւ, նոր դարձակէտ առաջացուց մեր դարաւոր պատմութեան հոլովոյթին մէջ: 1918-ի անկախութիւնը պատմական գեղեցիկ յուշ պիտի մնար եթէ նոյն այս 20-րդ դարը, իր վերջալոյսին, չբանար Հայ ժողովուրդի կեանքին մէջ նոր արշալոյս, հռչակումովը Ազատ եւ Անկախ նոր Հանրապետութեան, որ ահա, Սատուծոյ օրհնութեան ներքն, բոլորեց իր առաջին եօթնամեակը:

Սարտարապատի հերոսամարտին և Հայաստանի առաջին Հանրապետութեան 80-ամեակի այս բարեբաւտիկ առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն հայրական կոչ կ'ուղղենք մեր համայն ժողովուրդին՝

ա) Ամրացնել, ժայռացնել, խորացնել իր ներքին միութիւնը Սարտարապատեան շունչով: Սարտարապատի առաջին դասը պարզ է և հրահանգիչ. - Մեր գերագոյն ոյժը մեր միասնութեան մէջ է, որով ձեռք բերուեցաւ Սարտարապատի յաղթանակը: Աչքի բիբի պէս մաքուր, ջինջ և առողջ պահենք այդ միասնութիւնը: Թող ոչ մի տեսակ պղտորութիւն, ներսէն կամ դուրսէն, չխառնուի անոր մէջ:

բ) Հոգեռանդն նուիրումով արժեցնել մեր կեանքը մեզմէ հեռու պահելով մեղկութեան, անտարբերութեան, պարտուողական հոգեբանութեան յատուկ զգացումներու փորձութիւնը: Սարտարապատեան սերունդի մարդիկը ամբողջանուէր, անսակարկ և անվերապահ կեանքի և յանձնառութեան պերճախօս ուսուցիչներ են մեզի և զայիք սերունդներուն համար: Ս. Պօղոս Առաքեալի խօսքերը ուղղուած բոլոր քրիստոնէաներուն՝ այսօր Մենք կ'ուղղենք և կը սնեռենք մեր հարապատ Հայ ժողովուրդի բոլոր զաւակներուն. «Վեհերոտ մի՛ ըլլաք նախանձախնդրութեան մէջ, հոգիով եռացէք, Տիրոջը ծառայեցէ՛ք, յոյսով ցնծացէք, նեղութիւններու տոկացէք» /Հռոմ. ԺԲ. 11-12/:

գ) Հայրենիքի և Հայ ժողովուրդի ընդհանրական բարիքն ու շահը վեր դասել բոլոր տեսակի անհատական, մասնական կամ խմբակցային ու տեղայնական նկատումներէ և շահերէ: Սարտարապատի մէջ ո՛չ ոք մտածեց իր կամ իր խմբակցութեան մասին: Բոլորի միտքի, սիրտի և

կամքի սլաքները ուղղուեցան դէպի մէկ նպատակակէտ - Հայրենիքի ու Հայ ժողովուրդի փրկութիւնը և թշնամիին դէմ տարուելիք յաղթանակը վասն ազատութեան և անկախութեան:

դ) Լծուիլ դրական, կառուցողական, շինարար և ներդաշնակ աշխատանքի մեր նոր Հանրապետութիւնը իր բոլոր պետական, տնտեսական, կրթական, մշակութային կառոյցներով, մասնաւոր պաշտպանութեան բանակով ամրապնդելու, պորացնելու և պարգացնելու առաքելութեան անշեղ և անխորտակ գիտակցութեամբ: Սարտարապատէն ծնունդ առած Անկախ Հանրապետութիւնը հապիւ երկու տարուան կեանք ունեցաւ, տարածաշրջանի մէջ առաջ եկած դէպքերու և ստեղծուած քաղաքական ու ռազմական նոր կացութիւններու բերումով: Մեր սրտագին աղօթքն է և մեր բոլորի գերագոյն ջանքը պիտի ըլլայ որ մեր ներկայ Հանրապետութեան եօթնամեակը դառնայ եօթնասնամեակ, եօթնասնամեակը վերածուի եօթնադարամեակի և շարունակէ իր գնացքը յաւերժութեան ճանապարհի վրայ: Մենք, բոլոր հայերս, անխտիր, Հայաստանի պետական քաղաքացի կամ ոչ, ուր ալ ըլլանք, Մայր Հայաստանի, Արցախի թէ արտասահմանեան երկիրներու մէջ, պիտուորներն ենք նոր Հանրապետութեան: Կեանքը յարագնաց պայքարի ընթացք է /Բ. Տիմ. Դ. 7-8/: Գիտնանք գործով, նուիրումով, արիական յանձնառութեամբ և գործնապաշտ մօտեցումով այդ շարունակական պայքարին մէջ յաղթանակի պսակը պահել մշտադալար մեր ազգի գլխուն վրայ և զայն ընծայել Աստուծոյ և մարդկութեան որպէս վկայութիւն Հայ ժողովուրդի գործօն մասնակցութեան Տիեզերքի արարչութեան, աշխարհի խաղաղութեան և մարդկութեան բարօրութեան համար:

Ողջ լերուք ի Տէր պօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւետ օրինեալ ի մէնք. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14 Մայիսի
Յամի Տեառն 1998 և ի թուին Հայոց ՌՆԽԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/180

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱՆԱՊԱՐՀՆ ԱՆՑՆՈՒՄ Է

ՍԱՅՐ ԱԹՈՌ-ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՎ

Հարգանքը մարդկային ամենապարզ հարաբերությունների հիմքն է: Առավել ևս, երբ հարգանք ես ընծայում անցյալի հիշատակներին, ցանկանում ես այդպիսով նախ վերաբերմունք ճշտել անցյալի նկատմամբ, ապա որդեգրել մի ուղղություն կամ ճանապարհ, որով պիտի անցնես նաև դու:

Այս իմաստով են հիշատակվում և տոնակարգի մեջ մտնում պատմական դանազան իրադարձություններ, առանձնանում իրենց նշանակությունը և ժամանակների վրա իրենց թողած հետքով: Ըստ էության տոներ կամ տոնակատարությունն այլ բան չէ, եթե ոչ հարգանքի պարզագույն դրսևորում կատարվածի հանդեպ, երկրորդ՝ անուղղակի կամ ուղղակի քարոզչության, դաստիարակության լավագույն առիթ, մտածողության ձևավորման ամենագեղեցիկ դասաժամ: Վերհուշը՝ ապրումն՝ վերհուշը մարդու հոգում վերակենսավորում է այն բարի բոլոր զգացումները, որոնք կարող են մաքրել Հայրենիքի, ազգի, ժողովրդի, մեկ խոսքով՝ սերունդների կյանքը կանգնեցնելով նոր իրադործումների առջև:

Մեր Հայրենի Պետությունը մեն շուքով նշեց Սարգարապատյան հերոսամարտի 80-ամյա հորեյյանը՝ մեկ անգամ ևս վերակոչելով, պանծացնելով և արժանին մատուցելով մեր այսօրը պատրաստած հերոսներին: Իրավամբ, ստեղծվել էր կառավարական մակարդակով հանձնաժողով՝ պաշտպանության նախարար պրն. Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ, կատարվեցին Սարգարապատի հուշահամալիրի և թանգարանի վերանորոգության, տարածքի կանաչապատման, փողոցների մաքրման, կարգավորման և նմանաբնույթ լայնածավալ աշխատանքներ: Մայիսի 28-ին տեղի ունեցավ ՀՀ նախագահի այցելությունը Սարգարապատ, հրավառություն և ապահովվեց Համազգային տոնախմբության արտաքին դրսևորումը:

Սակայն, կարծում եմ, մեկ բան մոռացան մեր պետության հարգարժան այրերը, որ Սարդարապատի ճանապարհն անցնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնով: Ցավոք սրտի այդ մասին հիշվում է լուր աշխարհազբական դիրքի և ճանապարհային ցուցանակների չնորհիվ: Հասկանալի կամ անհասկանալի կերպով, զարմանալիորեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լիարժեք մասնակցությունը դուրս մնաց այս ամբողջ տոնակատարությունների ծրագրից: Ստեղծված հանձնաժողովում չկար մեկ հոգևորական, գոնե առ ի հիշատակություն Սարգարապատի դաշտ դուրս եկած այն հինգ հարյուր բարձրաստիճան և կրտսեր հոգևորականների, որոնք ոչ միայն ոգևորեցին Հայ մարտիկներին, այլև խաչն ու զենքն ի ձեռին ուղղակիորեն առաջնորդեցին դեպի թշնամու բանակը՝ որպես զորքի առաջամարտիկներ: Բայց այս մասին քիչ ավելի ուշ:

այլ մոտեցում, մեղմ ասած, կհանգեցնի անհաջող խաչասերման՝ իր բոլոր հետևանքներով՝ տեսակի անդիմուծությունից մինչև անպտղաբերություն։ Ասվածիս ամենացայտուն և պարզից էլ պարզ օրինակն այն է, որ առ այսօր պետական մակարդակով որևէ մոտեցում անգամ գոյություն չունի Թարգմանչաց և Վարդանանց տոնակատարությունների նկատմամբ, որոնք ապահով և հաստատապես հանգրվանել են եկեղեցական տոնացույցում։ Մի՞թե այս երկու իրադարձությունները, որ պատիվ կարող են բերել ցանկացած ազգի, առնչություն չունեն մեր լինելության հետ կամ էլ շատ երկրորդական և չգիտեմ որբորդական նշանակություն ունեն մեզ համար։ Ամեն ինչ այստեղից է սկսվում...

Ազգայինի նկատմամբ ունեցած նախանձախնդրությամբ Հայ եկեղեցին զանազան ներքին և արտաքին հալածանքներին տոկալով, մի տեսակ որպես յուրահատուկ պետություն մեծ ճիգերի գնով, «կանացիազգեստ, կղերական դիվանագիտություն» որակված գործելակերպով, կարողացավ պահպանել այս վերջին հոգակտորն ու իրավացիորեն այն փոխանցել Հայրենական իշխանութուններին։ Սարգարապատի հերոսամարտն ու 1920-30-ական թվականների գոյառջնացման տարիների ամենասարսափելի հալածանքները, զնդակահարություններն ու աքսորները ասվածի ամենավառ վկայություններն են, երբ դարձյալ ճակատագրական պահին ամենածանր հարվածը կրողը Հայ եկեղեցականությունն էր։

Այո՛, պետք է մոռանալ, որ Սարգարապատ էլ էր լինի, եթե Գևորգ Ե երջանկահիշատակ Հայրապետն իր վճռական կեցվածքով չկանգնեցներ փախուստի և նահանջի հոգեվիճակով պարուրված Հայ զորավարներին ու զինվորներին և ընդհանրապես ամբողջ ժողովրդին։

Տեղին է հիշել այդ անմահացնող դրվագը, երբ Թուրքական նվաճող հեղեղից խուճապի մատնված և օրհասական վիճակում Հայտնված զորավար Միլիկյանը որոշել էր Հայոց արյունաքամ բանակը տանել Կոտայքի և Սևանի բարձունքները, լեռնակռովով պայքարելու թշնամական հսկայածավալ բանակի դեմ՝ այսպիսով զիջելով և՛ երևանը, և՛ էջմիածինը, և՛ ամբողջ Արարատյան դաշտավայրը։ Այդ նպատակով մայիսի 20-ին եկել էր նաև Ամենայն Հայոց Հայրապետին առաջարկելու հեռանալ Մայր Աթոռից։ Պատվիրակության մեջ էին նաև այս իրադարձություններին լուելայն հետևող Արամ Մանուկյանն ու Պողոսբեկ Փիրումյանը։

Պատմական վկայությամբ, Գևորգ Ե Կաթողիկոսը մոռայված լսեց այս առաջարկը և, չթողնելով այլևս շարունակել, պոռթկաց՝ ասելով.

«Ա՛զգ հայոց, թուրքը, մեր բանական հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագորոթյան։ Գալիս է Արարատյան երկրի վրա։ Թուրքը կոտորած ու ավեր փոելով գալիս է, և մեր զորապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան Հայոց Հայրապետին փախուստի մղել։ Նրանք Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջարկում են ոսոխի քերանին թողնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, մեր սրբարանները, հայ ժողովուրդը, հայրենի երկրի վերջին կտորը։ Առաջարկում են լքել այս քոլորը և սեփական կյանքը փրկել Բյուրականում կամ այլ անմատչելի

լեռնածերայի վրա: Ո՛չ և ո՛չ, հազա՛ր անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդված Մայր Աթոռը: Ես չեմ հեռանա Հայոց Առաքելական Եկեղեցու օջախից: Եթե հայոց գինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանա թշնամու առաքիտացումը կասեցնել, եթե ի գործու չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստե՛ղ, շեմի վրա՝ Մայր Աթոռի, որի զահակալի պատիվն ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխոսությամբ և Աստուծո ռդորմածությամբ: Մի՞թե մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օջախի կրակը, մեր հավատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը: Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչ ո՛ւ չընդունենք պատվով ու քաջությամբ և ոչ թե ռդորմելի գեոունի պես ոսոխի առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջության օրինակներով, ներկված են նահատակների արյամբ: Դրանով չի սպառվել մեր արյունը, և չի կորսվել քաջությունը մեր շարքերից: Դարեր շարունակ հայոց ազգն այսպես է ապրել՝ իր ինքնության համար պայքարելով, իր վաղվա համար այսօր մեռնելով: Եվ որովհետև ով զաղափարի հետ է մեռնում, մեռնում է որպես հատիկը ցորյանի, ապա հատիկի մահով մոր կյանքը են ծնվում վաղ թե անագան: Դրա համար է, որ զանգվածային կոտորածներով ու մահերով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել և երբեք էլ չպիտի ունենա վերջին վերջակետ: Ուրեմն էլ ինչ ո՛ւ դավենք ապրելու և գոյատևելու մեր ազգային կերպին: Ինչ ո՛ւ ազգովին չբարձրանանք թշնամու դեմ, որ գալիս է անդրադարձյալ իր թեթև հաջողություններով ճղփացած և մեր արյան վերջին կաթիլին ծարավի...»: Եվ Վեհաբանի ղազիխում ու Մայր Աթոռի բակում Հավաքված ամբողջ բազմությունը կերպարանափոխված միահամուռ բացականչեց. «Պատրա՛ստ ենք ելնելու, Վեհափա՛ռ Տեր»: Ապա ծերունազարդ Հայրապետն իր արծվային Հայացքն ուղղելով ժողովրդին՝ չարունակեց.

«Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ մրա անցած ճանապարհի դառնությունները: Ես համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթական»:

Այնուհետև Հայոց Հայրապետը կարգադրում է Հեչեցնել Մայր Տաճարի և Հայոց բոլոր եկեղեցիների տաճնապի ու սուգի դանդերը, որոնք չլուեցին մինչև ճակատամարտի հաղթական ավարտը և Համազգային միակամ պայքարի մղեցին գաղթական ու արյունաքամ ժողովրդին: Նա ինքն առաջնորդեց միաբանությունն ու ժողովրդին այս վճռական պահին Հայացքն ուղղել դեպի Աստված, և Հայոց «Տէր ողորմեա»-ով ծնկաչոք Հայցել Տիրոջ ապավինությունն ու օրհնությունը: Այսպիսին էր ճակատամարտի նախօրյակը, որը փաստորեն կանխորոշեց Հայոց բանակի հաղթանակը: Աստուծո ներկայությունը Հավաստող այդ զանգակների կանչն էր թևածում ողջ ճակատամարտի ընթացքում, որի լուռ վկան այսօր Սարգարապատում վեր խոյացող զանգակատուն-Հուշայունն է:

Ավելորդ չհամարեցինք գրեթե ամբողջությամբ մեջբերել Գևորգ Ե Հայրապետի բոցավառ խոսքն ու այդ պահի նկարագրությունը, քանի որ

սարգարապատյան հրաշքը խտացված և հիմնավորված է այստեղ: Առանց այս կեցվածքի այլ կլինեիր իրադարձությունների զարգացումը, և դաժան է մտածել, որ այսօր միգուցե չկարողանայինք առնել Սարգարապատի հերոսամարտի 80-ամյակը: Իսկ Գևորգ Ե Սուրենյանց Տփղիսեցի, ժողովրդի տառապանքի պատճառով Վշտալից ստորագրող Հայրապետն այսօր հանգչում է Մայր Տաճարի զանգակատան մոտ, և կարծում եմ, անպատշաճ չէր լինի, տոնակատարությունների ծրագրի շրջանակում տեղ հատկացվեր նաև նրա շիրմին հարգանքի այցելությանը:

Պարտ է շեշտել, որ թե՛ նախապատրաստական շրջանում և թե՛ ճակատամարտի օրերին Ս. էջմիածնի միաբանությունը և շուրջ հինգ հարյուր տարբեր աստիճանի հոգևորականներ խաչանշան սպիտակ պատանքներով, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի, Զավեն եպիսկոպոս Բաբայանի (Զավեն եպիսկոպոսի շիրմը գտնվում է Ս. Գայանե վանքի հյուսիսային պատի տակ), Թադեոս և Եղնիկ վարդապետների գլխավորությամբ տենդագին կերպով ոգևորում և առաջ էին մղում զինվորին ու շինականին՝ իրենք իսկ ընթանալով նրանց առջևից: Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանն էր, որ Մահապարտներ անունով կնքեց 5-րդ փառապանծ գուշիցը, որի աջ թևում կրակի ամենաթեթեկետում կռվում էր հոգևորականների գուշիցը նույն հերոս սրբազանների գլխավորությամբ: Կարելի է դեռ երկարել և մանրամասն նկարագրել սիրագործությունների շարքը, սակայն կարծում եմ, այսքանն էլ խոսուեն է և բավական ասելիքի համար:

Բայց ինչո՞ւ թշնամու հետ բախվելու վայր ընտրվեց ռազմագիտական և ճակատամարտի համար բոլոր առումներով ամենաանհարմար տեղանքը՝ Սարգարապատը: Մի՞թե Հայոց զորքի գերակշռությունն ու սպառազինությունն էին պատճառը: Կամ ասենք իրենց բնական և արհեստական ամրություններով Հայտնի Կարսը, Կարինը, ինչու չէ՞ նաև Ալեքսանդրապոլը շատ դյուրություն՝ գրավվեցին, բայց այս բաց դաշտում, գերծ պաշտպանական ուղե է միջոցից, Հայ զենքը փայլուն հաղթանակ տոնեց: Թող ռազմագետները որոնեն այս հարցի պատասխանը, մենք միանշանակ կասենք, որ Հայ մարդու թիկունքում Մայր Աթոռ Սուրբ էջմիածինն էր, հետևաբար նահանջել և զիջել՝ նշանակում էր հանձնել Սուրբ էջմիածինը: Սուրբ էջմիածնի ոգին էր, որ երբեք հրամանատարին վերափոխեց հաստատավճիռ զորավարի, նահանջող բանակին՝ փրկարար զորքի, հուսահատ և գաղթական ժողովրդին՝ հաղթանակած Հավաքականության:

Իսկապես որ հրաշք էր Սարգարապատը, և այդ հրաշքը շնչավորողն ու կյանքի վերածողը՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Իսկ այդ Եկեղեցուն պաշտոնյան նույն Հայ ընտանիքից, նույն ժողովրդի ծոցից դուրս եկած զավակը, որ երբեք ու երբեք առանձին դասակարգ կամ կաստա չի ներկայացրել, այլ եղել է իր ժողովրդի ցավերով, տառապանքով, ուրախությամբ և հաղթանակներով ապրող, նրա համար աղոթող Հայ մարդը, որն Հայոց Պատմությունը սերտել է իր երանելի նախնիներից և ոչ թե սոսկ ընթերցել Մաքս-լենինյան ուսմունքի ոսպնյակից:

Նեղություն պահին բնագդաբար հիշվող Հայ Եկեղեցին արժանի է վերաբերմունքի նաև ազատության և հաղթանակների օրերին: Հանե՛նք Հայ

Եկեղեցին կամ բազմաշարչրկվող «տերտերներին» մեր պատմության էջերից, և այնտեղ անգոյությունից, անդիմությունից բացի այլ բան չենք տեսնի:

Այս ամենի մասին որոշեցինք գրել ոչ թե որպես սեփական «դասակարգի» շահերի պաշտպանության մոլուցքով տառապող պաշտոնյա, այլ պարզապես երևույթները կողքից դիտող մի հասարակ հայ մարդ, որը երախտիք ունի իր Մոր հանդեպ:

Այսօր էլ Հայ Եկեղեցին խոնարհ լուծյամբ, առանց բարձրադաղակ ճիչների շարունակում է անսակարկ ծառայել Աստուծո փառքի և իր հարազատ, սեփական, համբուրելի ժողովրդի բարեպաճման համար: Միայնակ, մեծ զոհողությունների գնով քայլ առ քայլ վերարուժում է իր ստացած վերքերը, Մայրական գորով սրտով և ներող ժպիտով ընդունում զավակների՝ իր հանդեպ դործած չարաճճիությունները և մշտական դաստիարակ լինելով Վեհ Հայացքը ուղղում դեպի առաջ:

Որպես վերջաբան ցանկանում ենք մեջբերել 1937 թվականի դեկտեմբերի 6-ին զնդակահարությանը մարտիրոսացած Թադեոս Եպիսկոպոս Մարտիրոսյանի ՆԳԺԿ-ի բանտում արտասանած ուսանելի խոսքը. «Էջմիածնի պատմությունը շատ մեծ է Հայ ազգի պատմության մեջ: Անցել են շատ թշնամական ժամանակներ, կանցնեն նորից և մենք Ձեզ հետ կանցնենք, իսկ Էջմիածինը կշարունակի իր գոյությունը»:

ԲԱԳՐԱՏ ԱՐԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՍԱՐՏԻ 80-ԱՍՅԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ

Սույն թվականի մայիսի 28-ին լրացավ Սարդարապատի հերոսամարտի 80-ամյակը: Հերոսամարտ, որը հայ ժողովրդի պատմության հուղիկությունն ուր խոսք էր՝ պայքարի և արժանավայել հաղթանակի խոսք: Հերոսամարտ, որը վերածվեց համազգային ընդվզումի: Հայաստանը ոտնատակ անելու թուրքական մոլուցքի դեմ: Դարասկզբին դարձավ ահեղ կոտորած, աքսոր, սարսափ ու մահ տեսած ժողովրդի ահեղագույն մոռցյուն՝ ի լուր ուղիշի ցավին ականջները փակած հզոր տերությունների: Սարդարապատով ևս մեկ անգամ աշխարհի երեսին Արարչագործության պարզանքը վայելելու իր իրավունքը հաստատեց և վաստակեց իր հաղաղությունը մի ողջ ժողովուրդ:

Հերոսամարտի 80-ամյակի առիթով ՀՀ կառավարական հորելացական հանձնաժողովը կազմակերպել էր մի շարք հանդիսություններ, որոնց մասնակցելու էին հրավիրվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կիլիկիո Կաթողիկոսության միաբանները:

Մայիսի 28-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Մայր Աթոռի և Կիլիկիո Կաթողիկոսության միաբանները Մայր Աթոռից մեկնեցին Երևանի գերեզմանատներից մեկում ամփոփված 1918 թ. Երևանի Հայոց Ազգային հուրիորդի նախագահ Արամ Սանուկյանի շիրիմին՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Առաջին Հանրապետության հիմնադրին: Պատվիրակության մեջ էին Մայր Աթոռի միաբաններ՝ Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Ռումինիայի և Բուլղարիայի թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիրյանը, ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Ֆրանսիայի առաջնորդ և Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Գյուտ արքեպս. Նազաշյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը, Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը, Տ. Արսեն արքեպս. Պերպերյանը, Տ. Գրիգորիս արքեպս. Բունիթյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարզե եպս. Մարտիրոսյանը, ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պրասմյանը, Սյունիքի թեմի առաջնորդ Տ. Արրահան եպս. Սկրտչյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Զուլջյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Զարամյանը, Ուկրաինայի թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը, Գևորգյան Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, Տ. Սիքայել ծ. վրդ. Աջապահյանը, Ս. Հոփսիսիմե վանքի վանահայր Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը, Բանակի հոգևոր խորհրդատու Տ. Վրթանես վրդ. Արրահանյանը, «Էջմիածին» ժամագրի գլխավոր խմբագիր Տ. Բագրատ արքեպս. Գալստյանը, ԶԶԲ-ի փոխտնօրեն Տ. Զարեկ արքեպս. Կաբադյանը, Տ. Արշեն արքեպս. Մանուսյանը և Կիլիկիո Կաթողիկոսության միաբաններ Թեհրանի թեմի առաջնորդ Տ. Արտակ արքեպս. Մանուկյանը, Տ. Տաթև արքեպս. Սարգիսյանը, Հայաստանում Զրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության եկեղեցական հանձնաժողովի գործադիր վարիչ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, ինչպես նաև Կիլիկյան Աթոռի Ամերիկայի և Կանադայի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Խաժակ եպս. Հակոբյանը, Կիպրոսի թեմի Կաթողիկոսական

փոխանորդ Ս. Վարուժան եպս. Գերկեյանը, Կիրակնօրյա դպրոց-ների մարիչ-տնօրեն և Դամասկոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ Ս. Սեպուհ եպս. Սարգիսյանը, Լիբանանի թեմի առաջնորդ Ս. Գեղամ Ժ. Վրդ. Խաչերյանը, Ցեզիրեի թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նորայր Ժ. Վրդ. Աշրգյանը:

Գերեզմանատուն եկան նաև 33 վարչապետ պարոն Արմեն Դառեհյանը, Սահմանադրական դատարանի նախագահ պարոն Գազիկ Գարուբյունյանը, բարձրաստիճան զինվորականներ, մտավորականներ և բազմաթիվ հյուրեր արտերկրից:

Արամ Մանուկյանի շիրմին թարմ ծաղիկներ զետեղելուց հետո, Ս. Տիտայր արքեպս. Մարտիրոսյանի նախագահությամբ կատարվեց Գոգեհանգստյան արարողություն՝ Արամ Մանուկյանի հոգու հանգստության համար: Գաղարտ արարողության Արքազան հայրը մխիթարական խոսք ասաց ի լուր ներկաների, թե ամմահ են այն անձինք, ովքեր իրենց կյանքը բոլորանվեր ընծայում են իրենց ժողովրդին ու հայրենիքի բարգավաճմանը, ովքեր հավատով իրենք հրեզ են ընծայաբերում հայրենակերտության զոհասեղանին:

Ամուռնետե հնչեցին հայրենասիրական և ազգային երգեր: Վերջում ներկաները ուղևորվեցին դեպի 33 Պաշտպանության նախարարության Սպայի տուն, ուր զինվորական պատվով դրվեց հայդուկապետ Աղբյուր Սերոբի կնոջ՝ Սուսե մայրիկի աճյունի մաստնը: ԳՕՄ-ի նախաձեռնությամբ բերված եզիպտոսից:

Բազմաթիվ ուխտավորներ Գայաստանից և արտերկրից եկան և խոնարհվեցին մեծ հայրենասերի աճյունի առջև:

Այստեղ խոսք ասաց Ս. Մեսրոպ արքեպս. Աշճյանը: Արքազան հայրն ի մասնավորի ասաց.

«Այսօր իմ կեանքին և, վստահաբար, Ձեզմե իւրաքանչիւրի կեանքի զոքին մէջ բացառիկ զեղեցկութեամբ և խորիմաստութեամբ զեղուն էջ մը կ'արձանագրուի: Այսօր իր վերջըներ ծամբորդութիւնը կ'ընէ Սօսէ մայրիկը, և մեր աչքերուն առջև հայրենի հողին կը հասնի իր աճիւնը:

Սօսէ մայրիկը.

Ով, մեզմէ ով իր մանկութեան չէ երգած այդ սիրելի երգը.

Չայն տուաւ Սօսէն, Սերոբ քան հոս եմ,

Տինուած պատրաստուած՝ Չայնիդ կը սպասեմ

Ո՞վ էր այդ խորհրդաւոր Սօսէն...

Ու մենք մեծցանք, սորվեցանք, ճանչցանք, սիրեցինք ու պաշտեցինք այդ հայուհին, Սօսէն, հայ յեղափոխութեան այդ հրաշք հերոսուհին, որ իր կեանքի և զենքի ընկերոջ հետ միասին զոքեց մեր պատմութեան շքեղ դրուագները:

Սօսէն ծնած էր Նեմրոս սարի փեշերուն, Թեղուտ գիւղը, և մեծցած ազատ, քաջ, և 13 տարեկանին ալ իր կեանքը կապած էր իր պատանի կեանքի հերոսին՝ Սերոբին:

Այդ օրերուն իսկ Սօսէն ի յայտ կը բերէ քաջ և աննկուն հայուհիի մը կերպարը՝ երբ իր ամուսնին հետ միասին սար կը բարձրանար, կը բաժնէր Ֆիտայիի չարքաշ կեանքը, և ամէն վայրկեան աչք կ'առնէր մահը:

Այդպէս անցան տարիներ: Ատեն մը Սերոբը արտասահման մեկնեցաւ, Սօսէն ընտանիքի մոտը մնաց. Սերոբ վերադարձաւ. Սօսէ իր երեք կորիւններով՝ Յակոբը, Ազատը, Սամսոնը, շարունակեց պատրաստ ըլլալ իր ամուսնի ծային, և լեռ բարձրանալ: Պիթիսի շրջանը վտանգուեցաւ, գործի մոր ասպարիզ բացուեցաւ Սամսոյ մէջ, Սօսէն այնտեղ էր, միշտ պատրաստ, ամէն տեղ, երթալու, կռուելու ...

Ու օր մըն ալ՝ դաւաճանի ձեռքը հասաւ Սերոբին: Սերոբ առիծի

պէս կոռուեցաւ մինչև վերջ, և մեռաւ հերոսի մահով: Թշնամին անարգեց հերոսի մարմինը, գլխատեց Սերոբ փաշայի գլուխը, ցիցի վրայ դրաւ և քաղաքէ քաղաք պտրտուց առիծի անմարմին գլուխը, և յետոյ Սերոբի գլուխը քաղեցին Ելիզուզան գիւղը, մարմինն ալ, օրուան Առաջնորդ Եղիշէ Եպիսկոպոս Չիլինկիրեան քաղեց Կարմրակայ եկեղեցւոյ բակը:

Սօսէ կորսնցուցած էր ամուսին և զաւակներ, մէկ, երկու, երէքը... ոչ ոք գիտէ, և Սօսէն, իր ամուսնոյն երկու զերեզմաններուն այցելելէ յետոյ թողեց Սասունը և զնաց Վան, զնաց Հայաստանի տարբեր կողմերը, զնաց Պոլիս, զնաց Եգիպտոս, զնաց Պէրսիա, զնաց Սուրիա, ամէն տեղ զնաց ու փնտրեց իր մէկ որդին, որ, լսել էր, ճողոպրեր էր սպանդէն և ազատեր: Սարերուն այծեամբ մայրական փխրուն սիրտ ուներ, կաթոգին կերպով կը սիրեր իր որդիները, անոնց համար ալ իր կեանքը կուտար, բայց իր կեանքի ամբողջ ընթացքը մնաց որդիներու փնտռութիւն մէջ տուայտող հայ մօր մը կեանքը, որ սէրը հազաւ և վիշտը սրտին մահացաւ Աղեքսանդրիոյ մէջ, Եգիպտոս, 1953-ին: Վերջին օրերուն նախազգացեր էր իր մահը, և իր շուրջիներուն ըսեր էր. «Սերոբը կը կանչէ ինձ իր մօտ...»:

Եւ Սոսէ մայրիկի հոգին՝ դէպի երկինք սլանալէ առաջ՝ թաւ Միջերկրականի ալիքներուն վրայով, անցաւ Կիլիկիայէն, բարձրացաւ Տարսուսեան լեռնաշղթայ, ձեն տուաւ Սերոբին, ու թաւ երկինք: Հիմա հայրենի հողին վրայ ինք, ու իր մարմնի մէկ նշխարը պիտի քաղինք Եռաբլուրի բարձունքին վրայ, Արցախի մեր նորագոյն հերոսներու գրկին մէջ: Արցախի մեր հերոսները պիտի հետ այսորիկ ապրին իր գրկին մէջ:

Այս առթիւ, երեք կետերու վրայ կ'ուզեմ կեդրոնացնել մեր մտածումը.

ա.-Գնահատանքի և օրհնութեան խօսք ուղղել մեր հայրենի կառավարութեան, որ, ընդառաջելով ԴՕՄ-ի փափաքին, ոչ միայն արտօնեց, այլև կազմակերպեց, հովանաւորեց և պետական բարձրագոյն պատիւներով այսօր հողին կը յանձնի Ելիզուզանի հերոսուհին: Իր այս խորհրդանշական քթով՝ մեր պետութիւնը յետադարձ կերպով ողջոյն կուտայ հայ յեղափոխականութեան, ողջոյն կուտայ Ազատութեան ծանապարհին նահատակուած մեր ջան ֆիդայիներուն, ողջոյն կուտայ անցեալ դարու 80-ական թուականներէն մինչև Հայաստանի առաջին Հանրապետութիւն հայրենիքի համար նահատակուած հերոսներուն, երբ անոնցմէ մէկուն Սոսէ մայրիկին աճիւնը կ'ընդունի իր գրկին մէջ: Ողջոյն Հայաստանի Հանրապետութեան, և ողջոյն հայ զինուորին:

բ.-Այսօրուան թաղման կարգը յարգանքի տուրք է հայ կնոջ հանդէպ: Որովհետև մեր այս քայլով՝ մենք մեր յարգանքը կ'ընծայենք հայուհիին հանդէպ, հայ կնոջ հանդէպ, հայ մօր հանդէպ, և կ'ըսենք որ հայ կինը իր ամուսնոյն նման, իր զաւակներուն նման քաջ էր և յանդուգն, նուիրեալ և զոհաբերեալ, որ հայ կինը՝ երկրորդ չմնաց ո'չ ոքի՝ երբ պէտք էր գէնք առնել և կոռել յանուն հաւատքի, յանուն պատիւի, յանուն հայրենիքի: Եւ Սօսէն քաջերուն մէջ քաջն էր. և թէև կային շատ հերոսուհիներ՝ մտքի տիտաններ, Ռուբինաներ, Շաքէներ, Հրզրոսներ, այդ բոլորին մէջէն Սօսէ մայրիկը իրաւ գերազանցողէն խոստն սևազգեստ և լռիկ այն մայրը որ խորհրդանշեց Մայր Հայաստանը: Եւ այսօր, երբ Սօսէ մայրիկ հող պիտի իջնի Եռաբլուրի վրայ՝ այլևս այն միայն Սերոբի ընկերներուն զինակիցը չէ, միայն մեր հին ֆետայիներուն մայրիկը չէ. ան մայրիկն է նաև Արցախի հերոսամարտին զոհուած մեր նորագոյն մարտիկներուն, մեր նոր հերոսներու. բոլորին մայրն է, և բոլորին մայրութիւն պիտի ընէ Եռաբլուրին վրայ:

գ.-Եւ, վերջապէս, սիրելի հայրենակիցներ, կ'ուզեմ մտածում մը

բաժնել շեր հետ: Խոսքի սկիզբն այ ըսի - Սօսէ մայրիկի վերջընթեր ճամբորդութիւնն է ասիկա - վերջինը չէ: Սխալ չհասկնաք՝ երջանիկ են այսօր, այս Եռաբլուրի վրայ պիտի հանգչի Սօսէ մայրիկը՝ մեր պետութեան ամբողջական յարգանքին մէջ: Բայց անկատար երազ մը ունէր Սօսէ մայրիկ, և սրտին մէջ տառապանք մը կար: Ինք չէ՝ որ օր մը, երբ կը մերժէր թողուլ Սերոբի գերեզմանը ըսեր է. «Իմալ թորկիմ հոնի գիմ Սերոբի եթիմ գերեզման... իմալ թորկիմ տուշմընի ձեռքը...»:

Եւ պիտի գայ օրը, երբ Սօսէն վերջին ճամբորդութիւն մըն ալ պիտի ընէ, պիտի դառնայ երկիր, պիտի դառնայ իր որդիներուն, պիտի տէր կանգնի իր Սերոբի գերեզմանին, և իր հանգիստը գտնի Սասնոյ սարերուն գիրկը, իր ծննդավայր Նեմրութայ սարիբարի հայեազքին ներքև, և այն ատեն պիտի գիտնաք որ իրականացած է Սօսէնտու և Սերոբ Աղբյուրներու երազը, մեր բոլորի երազը, Միացեալ, Ազատ և Անկախ Հայաստանի երազը:

Աստուած խաղաղութիւն տայ իր հոգիին. Ամէն:

Ժողովրդական թափորով ապա աճյունամասունքը բերվեց մեր նոժօրյա քաջակորով մարտիկների մարմինները ամփոփած Եռաբլուր, ուր հավաքվել էր հոծ բազմություն՝ Սոսե մայրիկի աճյունա-թափորի՝ հայրենի հողին հանձնելու արարողությանը մասնակցելու:



Հանգստյան աղոթք Սոսե մայրիկի աճյունի վերջընթեր հանգրվանում

Այստեղ էին եկել նաև ՀՀ Պաշտպանության նախարար, կառավարական հորելյանական հանձնաժողովի նախագահ պարոն Վազգեն Սարգսյանը, ՀՀ կառավարության բարձրաստիճան անդամներ, Սոսե մայրիկի ազգականները: Եռաբլուրի հարթակում տեղի ունեցավ կարճ պաշտոնական հանդիսություն: Ելույթ ունեցան ՀՀ ՍԽԻ նախագահ տիկ, Մարգարիտ Մկրտչյանը, Սոսեի ազգական պարոն Վահան Հակոբյանը: Պաշտպանության նախարարի անունից ելույթ ունեցավ նախարարի տեղակալ, գեներալ Աստվածատուր Պետրոսյանը:

Այնուհետև աճյունասափորը հոգևոր դասի, կառավարության ներկայացուցիչների և հոծ բազմության ուղեկցությամբ տարվեց նախապես պատրաստված գերեզմանափոսի մոտ:

Այստեղ Տ. Ներսես արքեպս. Պողապալյանի նախագահությամբ

կատարվեց աճյունասափորը հողին հանձնելու կարգ, որից հետո խոսք ասաց Սրբազան հայրը:

Այնուհետև կատարվեց զինվորական պատվո արարողակարգը, լսվեցին համազարկեր, և հանդիսավորությամբ եռագույն դրոշմ հանձնվեց Սոսե մայրիկի ազգականներին:

Վերջում աճյունասափորը հանձնվեց հողին:

Օրվա երկրորդ կեսին, մախապես հաստատված օրակարգի համաձայն, Տ. Վաչե արքեպս. Գովսեփյանի նախագահությամբ Սարգարապատի հերոսամարտում զոհված և Արմավիրի մարզի Արշալույս գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու բակի եղբայրական գերեզմանատանը թաղված Ստեփան Սյոյանի և անհայտ ռուս զինվորի հիշատակին կատարվեց Դոգեհանգստյան կարգ:



Սարգարապատ. 1998 թ., մայիսի 28

Երեկոյան ժամը 17.00-ին հորելյանական հանդիսության մասնակիցները, որոնց միացան ԳԳ նախագահի պարոն Ռոբերտ Ջոշարյանը, Ազգային ժողովի նախագահի պարոն խոսրով Գարությունյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, Գայաստանում հավատարմագրված դիվանագետներ, հյուրեր, մեկնեցին Սարգարապատի հուշահամալիր: Սյուտեղ առավոտից, բազմահազար հայորդիների մասնակցությամբ, տեղի էին ունենում տարբեր հանդիսություններ: Արմավիր-Սարգարապատ խաչմերուկի կամրջի հատվածում աղ ու հացով դիմավորեցին ԳԳ նախագահին, հոգևոր դասին և կառավարության անդամներին: Այնուհետև հուշահամալիրի գլխավոր հրապարակում տեղի ունեցավ զինվորական տոնահանդես՝ նվիրված 1918 թ. Մայիսյան հերոսամարտի 80-ամյա հորելյանին, որից հետո ներկաներին շնորհավորական խոսքով դիմեց Պաշտպանության նախարար պարոն Վազգեն Սարգսյանը: Ենդրհակալական խոսք ասացին Դրաստամատ Կանայանի որդի Մարտիրոս Կանայանը, Արամ Մանուկյանի դուստր Սեդա Մանուկյանը և Դանիելբեկ Փիրումյանի թոռ Յուրա Փիրումյանը: Այնուհետև խոսքը տրվեց Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանին:

Զինվորական տոնահանդեսից հետո ԳԳ նախագահը, հոգևոր դասը և կառավարության ներկայացուցիչները ծաղկեպսակներ և ծաղիկներ դրեցին Զանգակատան պատվանդանին և ուղղվեցին դեպի Դուշահամալիր-թանգարան, որտեղ տեղի ունեցավ ընդունե-

լուծյալուն ԶԶ նախագահի կողմից, որին հաջորդեց գեղարվեստական հայտագիրը:

Ուշ երեկոյան տեղի ունեցավ հրավառություն:

Այդ օրը Սարգարապատ այցելեցին և իրենց հարգանքը առ հեռոսսամատի մասնակիցները հավաստեցին հարյուր հազարավոր հայորդիներ, որոնք Սարգարապատին, Բաշ-Ապարանին ու Ղարաքիլիսային են պարտական այսօրվա Մեր Հայրենիքի և իրենց մեզ ազգային մտածելակերպի ձևավորման ու Հայոց անկախ պետականության հիմնադրման համար:

ԱՐՇԵՆ ԱՐԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ

Գևորգ Հարությունյան

ՀԻՆԻՐ, ՀԱՅՈՐԴԻ

Հիշի՛ր, հայորդի, փառքը անսասան, պահի՛ր քո սրտում
Նրանց, որոնց թանկ արյամբ ներկվեցին
Սարգարապատը, Բաշ-Ապարանն ու Ղարաքիլիսան.
Հիշի՛ր, որ քաջերն հինավուրց ազդի՜դ քեզ համար ընկան,
Ընկան, որ հավերժ ապրի աշխարհում ազգը մեր հայկյան,
Որ Արարատն ու Արաքսը մեր սուրբ արևո՛վ օծվեն,
Որ մեր հավատն ու լույս տաճարները չսրբապղծվեն,
Որ էջմիածնի զանգերն հարատև, քաղցր դողանջեն,
Որ մեր ցավերը իսպառ վերանան, էլ մեզ չտանջեն:
Ընկան՝ ասելով գազանաբարո ու դոռող թուրքին,
Որ չի՛ հանդուրժի լուծ ու կապանքներ մեր խրոխտ հոգին.
Ընկան հավատով, ա՛յն համոզմունքը իրենց սրտերում,
Որ լո՛կ հաղթողին այս նենգ աշխարհում բնավ չեն դատում.
Նրանք հաղթեցի՛ն, որ մե՛նք չդատվենք, չդատապարտվենք,
Նրանք հաղթեցի՛ն, որ մե՛նք, միայն մենք մեր տերը լինենք:

25.05.98



ԿՐՈՂԷ - ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ



ԵՍՎԷ ԱՐՔ. ԱՃԷՄԵԱՆ

«ՆՈՎԻՆ ՄԱՐՄՆՈՎ»

Հարց տուած եմ միշտ ես ինձի թէ ինչո՞ւ Հայ Եկեղեցւոյ մէջ ընդունուած և կանոն դարձած Հաւատոյ Հանգանակը երկու տեղ կը շեշտէ “Նովին մարմնով” րացատրութիւնը, զոր չենք գտներ արևմտեան Եկեղեցիներու ռադիկալ բանգանակին մէջ: Մենք կը խոստովանինք թէ Քրիստոս համարաճաւ երկինք “Նովին մարմնով” և թէ անոր երկրորդ գալուստը պիտի ըլլայ նոյնպէս “Նովին մարմնով”: Տասներորդ դարու խաչիկ Կաթողիկոսի Յոյներուն գրած նամակին մէջ կը րացատրէ խաչի խորհուրդը եիմնուելով Պօղոս Առաքեալի Կորնթացոց գրած առաջին թուղթին վրայ (Ա. Կորնթ. Ա. 22) և կը գրէ. “*Քանզի մեռաւ անմահական, և տակաւին անմահ ի նմին մեռելութեանն մնաց: Վասն այսորիկ զխորհուրդ խաչին, Հրէից գայթակղութիւն և Հեթանոսաց յիմարութիւն, ասաց Պաւղոս: Զի թէ երեւեալն ի վերայ երկրի Աստուած ո՛չ է, ոչ եւս դայթակղեցաւ Հրեայն, և եթէ մեռեալն անմահ ի նմին մեռելութեանն ոչ մնաց, ապա ոչ յիմարի Հեթանոսն*” (Որովհետեւ մեռաւ անմահականը, քայց տակաւին անմահ մնաց իր մեռելութեան մէջ: Այդ պատճառով է որ Պօղոս ըսաւ երեւաներուն՝ գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն: Որովհետեւ, եթէ երկրի վրայ երևցողը Աստուած չէ՝, երեւան պիտի չգայթակղէր, իսկ եթէ մեռնողը անմահ չմնար իր մեռելութեան մէջ, ապա հեթանոսը պիտի չյիմարանար): (Գիրք Թղթոց. 575):

Նոյն տրամաբանութեամբ, Ներսէս Շնորհալիւն կը հաստատէ Հայ Եկեղեցւոյ րացատրութիւնը Յիսուսի մարդեղութեան մասին: Մարմինը, զոր Յիսուս առաւ, “*անմեղութեան*” մարմին էր և “*նոյն ինքն անմեղ յաղագս գաւառանելոյն մեր ի բանսարկուէն և գայթակղելոյ ի մեղս, մատուցաւ ի խաչին պատարագ Հօր և արեամբն իւրով սրբեաց զմեզս Հաւատացելոց ի սքանչելի իւր խորհուրդս*” (նոյն ինքն անմեղը, որովհետեւ դաւաճեցեցինք քանսարկուից պատճառով և ինկանք մեղքի մէջ, պատարագ մատուցուեցաւ Հօր՝ խաչին վրայ և իր արիւնով սրբեց հաւատացեալներուն մեղքերը, սքանչելի իր խորհուրդներով): (Ընդհ. էջ 259):

Իր գրած քաղմաթիւ թուղթերուն և հաւատոյ բանաձևերուն մէջ, Շնորհալիւն կը եիմնուի Պետրոս Առաքեալի և Պօղոսի փաստարկութիւններուն վրայ,

“*Եւ զի խաբեցաք և մեղաք, փոխանակ այնորիկ զիւր անմեղ մարմինն Քրիստոս պատարագեաց Աստուծոյ Հօր, և եղև անմեղ արիւնն նորա ջնշան ամենեցուն ի նա Հաւատացելոցս մեղաց. որպէս գրէ Պետրոս, ո՛չ ապականացու արծաթեղինոք փրկեցայք, այլ արեամբ ամբիժ և անարատ գառինն՝ որ ետ զանձն իւր փրկանս ընդ ամենեցուն, գոչէ ըստ այսմ և Պօղոս*” (Եւ որովհետեւ խաբուեցանք և մեղանցեցինք, անոր փոխարէն Ան իր անմեղ մարմինը պատարագ մատուց Հօր Աստուծոյ և անոր անմեղ արիւնը ջնշեց իրենք բոլոր հաւատացողներուն մեղքերը, ինչպէս կը գրէ Պետրոս Առաքեալ: Մենք չփրկուեցանք ապականացու արծաթի փոխարէն, այլ գառի ամբիժ և անարատ արեամբ, որ իր անձը փրկանք տուաւ բոլորի փոխարէն, ինչպէս Պօղոս կը յայտարարէ այս մասին) (Ընդհ. էջ 271):

Փրկագործութեան, որ կատարուեցաւ խաչին վրայ, նպատակն է, ոչ միայն արեան փրկագին մը վճարել բոլորին համար, այլ ստեղծել *“նոր արարածը”*, ինչպէս կ’ըսէ Պօղոս Առաքեալ: Պատարագուած անմեղ մարմինը խաչուեցաւ մեզի համար, որպէսզի նոր մարդուն մարմինը վերադառնայ *“պատկեր աներեւոյթին”*, ինչպէս կ’ուսուցանէ Պօղոս Առաքեալ. *“Որով ունիմք զփրկութիւն արեամբ նորա, և թողութիւն մեզաց՝ մարմնովն նորա. որ է պատկեր աներեւոյթին, անդրանիկ ամենայն արարածոց”* (Կղս. Ա. 14):

Հինէն ի վեր, մեր աստուածաբանները յիշած են Ս. Աթանասի խօսքը՝ *“Քրիստոսի մարդեղութեան նպատակի մասին”*. “Աստուած մարդացաւ, որպէսզի իրմով՝ մարդը աստուածանայ”: Աստուածացումը վերացական հասկացողութիւն մը չէ հղած ընաւ մեր աստուածաբաններուն մօտ, որովհետեւ ան նշանակած է ըլլալ նման Քրիստոսի, մաքրուած մարմնով մը, որ կարենայ ըլլալ տաճար Ս. Հոգիին, ինչպէս կ’ըսէ նոյնպէս Պօղոս Առաքեալ. *“Եթէ ո՛չ գիտէք զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն որ ի ձեզ է՝ զոր ունիք յԱստուծոյ. եւ չէք անձանց Տէր քանզի գնոց գնեցայք: Փառաւոր արարէք զԱստուած ի մարմինս ձեր՝ (չգիտէ՞ք թէ ձեր մարմինները Հոգիի տաճար են ձեր մէջ, որը ստացած էք Աստուծմէ: Դուք տէրը չէ՞ք ձեր անձերուն, որովհետեւ գնուեցաք գինով մը: Փառաւորեցէք զԱստուած ձեր մարմիններուն մէջ) (Ա. Կորնթ. Զ. 19): Աստուծոյ միացումը մարմինին իրականացուց հաշտութիւնը մարդուն՝ Աստուծոյ հետ. *“Ձի ի նմա Հաճեցաւ ամենայն լուսմն աստուածութեան ընկել. եւ նովաւ Հաշտեցուցանել զամենայն ի նոյն: Արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի՝ եւ որ ինչ յերկինս”* (Անտր. մէջ է որ Աստուած հանեցաւ ընկելի իր ամբողջութեամբ և անով հաշտեցնել ամէն բան նոյնութեամբ: Իր խաչին արիւնով, Ան խաղաղութիւն ըրաւ, ինչ որ երկրի վրայ և ինչ որ երկինքի մէջ) (Կղս. Ա. 20): Բանն Աստուած, միանալով ամբողջապէս մարդկային մարմինին, եղաւ աղբիւր և վայրը մարդու աստուածացումին: *“Աստուածանալ”* կը նշանակէ *“ապրիլ ի Քրիստոս”*, մասնակից ըլլալ անոր մարմինին, որ է Եկեղեցին, ուր կ’ընծայուի նոյն մարմինը բոլոր անոնց, որոնք մաքրուած հոգիով կը մօտենան Հացին և Գինին: *“Այլ գուռք մարմինք Քրիստոսի էք, եւ անդամք յանդամոց նորա”* (Ա. Կորնթ. ԺԲ. 27):*

Պատարագիչը, երբ կը դառնայ դէպի եաւատացեալները և կը բարձրացնէ Ս. Սկիիւր ի տես բոլորին, կը բնութագրէ նուիրագործուած Հացն ու գինին ըսելով. *“Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն և թողութիւն մեզաց”*: Մասնակցութիւնը Եկեղեցիի կեանքին կ’առաջնորդէ յաւիտեանականութեան կեանքին, խոստացուած արդարներուն, ըստ Յիսուսի խօսքին ուղղուած իր աշակերտներուն. *“Ես եկի զի զկեանս ունիցիք և առաւել եւս ունիցիք”*:

Հայ Եկեղեցիի դաւանութիւնը խաչով կատարուած փրկութեան մասին, անշեղօրէն հասած է մեզի Ս. Գրիգոր Լուսաւորիչէն սկսեալ. *“առ զկերպարան մարմնոյ տկարութեան մերոյ, զի զմեզ փոխեսցէ յիւր անմահութիւնն”* (տկարութեան մեր մարմնի կերպարանքը առաւ, որպէսզի փոխէ մեզ իր անմահութեան) (ԿԼ էջ 149) *“խոնարհեցաւ և խառնեաց զաստուածութիւնն ընդ մարդկութիւնն և զանմեռն ընդ մեռոտն, զի զամենայն մարդկութիւնն անքակ արասցէ յանմահութենէ աստուածութեան իւրոյ”* (խոնարհեցաւ և խառնեց իր աստուածութիւնը մարդկութեան հետ և անմեռը մեռելոտիին հետ, որպէսզի

ամբողջ մարդկութիւնը անհատական ընէ իր աստուածութեան անմահութենէն) (նոյն):

Անմահութիւնը և յաւիտեանական կեանք պիտի իրականանան Քրիստոսի երկրորդ գալստեան, երբ մեռելները յարութիւն պիտի առնեն և ներկայանան Աստուծոյ դատաստանին: Մեռելներուն յարութիւնը պիտի ըլլայ մարմնով յարութիւն, ինչպէս եղաւ Յիսուսի յարութիւնը: Խաչուած և Քաղուած Քրիստոսն է որ յարութիւն առաւ: Ան է որ երեցաւ Մարիամի և աշակերտներուն, ցոյց տուաւ թովմասի իր ձեռքերուն և կողին վերքերը, նաշեց անոնց հետ և տուաւ անոնց իշխանութիւն մարդոց մեղքերուն թողութիւն տալու (Յովհ. Ի. ԻԱ.): Ան է որ երեցաւ իմ մատուսի նամբորդներուն և հացը կիսեց անոնց հետ (Ղուկա. ԻԱ.): Ան է որ երեցաւ իր աշակերտներուն Գալիլիոյ բարձունքին վրայ և տուաւ անոնց առաքելութիւն՝ փարզելու և մկրտելու յանուն Ա. երրորդութեան (Մտթ. ԺԸ.) և խոստացաւ ըսելով. *“Եւ ահա ապիկ ես ընդ ձեզ եմ դամենայն աւուրս, մինչև ի կատարած աշխարհի”* (Ս. ահաւասիկ ես ձեզի հետ եմ ամէն օր, մինչև աշխարհի վերջը) (Մտթ. ԻԸ. 19):

Հայ եկեղեցիներու կիրակի առաւօտեան ժամերգութեան սկիզբը կը կարդացուի Աւետարան մը, որ կը կոչուի “Տանարի Աւետարան”: Ան կը բովանդակէ Քրիստոսի երկրորդ գալստեան և աշխարհի վախճանին նկարագրութիւնը: Քրիստոսի յայտնութիւնը կանխող եղիւթիւնները կը նմանցնէ երկունքի ցաւերուն, տիեզերական չափանիշով:

Առաջին ճշման Տանարի աւերումն է, որուն կը հետևից բազում այլ ճշմաներ, բոլորն ալ ահաւոր աւերածութիւն՝ պատերազմ, սով, ազգերու և թագաւորութիւններու ընդհարում, մատնութիւն, սպաննութիւն, սուտ մարգարէներ, գայթակղութիւն, բոլորին հետևանքը ըլլալով սիրոյ պակասիւր: Շեշտուած է մանաւանդ հալածանքը, որուն պիտի ենթարկուին Քրիստոսի հետևորդները. *“Թայնժամ մատնեցան զձեզ ի նեղութիւնս, եւ սպանանիցեն ի ձեռք, եւ եղիչիք ատեցեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ”* (Այն առնէ ձեզ պիտի մատնեն նեղութիւններու, ձեզմէ ոմանց պիտի սպաննեն և ատելի պիտի ըլլաք բազմաթիւ ազգերու) (Մտթ. ԻԴ. 10): Ապա, հակառակ հալածանքին, *“քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս” ի վկայութիւն ամենայն Հեթանոսաց, եւ ապա եկեսցէ կատարած* (Արքայութեան Աւետարանը պիտի փարփուի ամբողջ տիեզերքին, իբրև վկայութիւն բոլոր եթանոսներուն: Անկէ ետք պիտի գայ վախճանը) (Մտթ. ԻԴ. 14): Նեղութիւններուն պիտի յաջորդէ մեծ փայլաւորը. *“Վաղվազակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի եւ լուսին՝ ո՛չ տացէ զլոյս իւր, եւ աստեղք՝ անկցին յերկնից եւ դաւրութիւնք երկնից՝ չարժեսցին”* (Այն օրերու նեղութիւններէն ետք՝ արեգակը պիտի խաւարի և լուսինը պիտի չտայ իր լոյսը, աստղերը պիտի իյնան երկնիցէն և երկինքի գոբութիւնները պիտի շարժին) (Մտթ. ԻԴ. 29): Այնուհետև մարդու որդիի ճշմանը պիտի երևի երկնիցէն: Այն առնէ երկրի բոլոր ազգերը պիտի կոծեն և պիտի տեսնեն մարդու Որդին, որ կուգայ երկնիցէն ամպերու վրայ, զօրութեամբ և մեծ փառքով (Մտթ. ԻԴ. 29-31, Մրկ. ԺԲ. 18-26, Ղուկա. ԻԱ. 5-27):

Մեծ երկունքէն պիտի ծնի նոր աշխարհը: *“Ձի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ի դերեզմանս կայցեն, լուիցին ձայնի նորա եւ եկեսցեն արտաքս”*.

որոց գրարիս գործնալ իցէ՝ ի յարութիւն կենաց, եւ որոց զշար արարեալ իցէ՝ ի յարութիւնն դատաստանի (Յովհ. Ե. 28-29): Յարութեան կեանքը, որ պիտի իրականանայ Քրիստոսի գալուստով, մարմինի յարութեան կեանքն է, ինչպէս յարութիւն առաւ նոյն ինքն Քրիստոս՝ փառաւորեալ մարմինով: Գերեզմանէն յարութիւն պիտի առնեն թուր մեռելները և քաժնուին երկու տեսակներու՝ անոնք որոնք գործած են քարին պիտի արժանանան Աստուծոյ տեսութեան և անոնք որոնք չար գործած են՝ «*ի յարութիւնն դատաստանի*» (դատապարտութեան յարութիւն): Առաջիններու մասին, «*Գիտեմք՝ զի յորժամ նա յայտնեացի՝ նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ որպէս եւ էն (գիտեմք թէ երբ Ան յայտնուի, անոր նման պիտի ըլլանք, որովհետեւ պիտի տեսնենք զայն ինչպէս որ է) (Ա. Յովհ. Գ. 3):* Կողոսացւոց ուղղուած թուղթին մէջ, Պօղոս Առաքեալ կը գրէ արդարեւորութեամբ մասին. «*Քանզի մեռարուք, եւ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած: Իսկ յորժամ Քրիստոս յայտնեացի՝ կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեալիք փառաւք*» (որովհետեւ պիտի մեռնիք և ձեր կեանքը Քրիստոսի ետ ծածկուած է Աստուծոյ մէջ: Երբ Քրիստոս յայտնուի, ձեր կեանքը և դուք պիտի յայտնուիք իրեն հետ փառով) (Կղս. Գ. 2): Ինչպէս մեր մկրտութիւնը կը համապատասխանէ Յիսուսի մարդեղութեան, երբ աստուածայինը միացաւ մարդկայինին, նոյնպէս՝ մեր յարութիւնը պիտի լինի Աստուծոյ ազդեցութեամբ, ինչպէս եղաւ Յիսուսի յարութիւնը. «*Թաղեալք ընդ նմին ի մկրտութեան, որով եւ ընդ նմին յարեալք Հաւատովք՝ Աստուծոյ ազդեցութեանն, որ յարոյց զնա ի մեռելոց*» (Մկրտութեամբ՝ թաղուած անոր հետ, անոր հետ յարութիւն առնելու հաւատով յարութիւն պիտի առնենք Աստուծոյ ազդեցութեամբ, որ յարոյց զայն մեռելներէն) (Կղս. Բ. 12):

Մարմնով յարութեան ակնկալութեան վրայ ելմունտած է Արևելեան եկեղեցիներու քրիստոսաբանութիւնը, այնպէս ինչպէս հաստատուեցաւ Եփեսոսի ժողովին և անխախտ մնաց մինչև այսօր: Անոնց հետ, Հայ եկեղեցին կը հաւատայ թէ մեռնող հաւատացեալը կը ննջէ ի հանգիստ Տեառն, թէ անոր հոգին սպասումի վիճակի մէջ՝ կը նայի դէպի այն օրը, երբ պիտի հնչէ փողը և, վերամիացած մարմինին, նորագոյն և յաւիտեակեան կեանքի պիտի արժանանան: Հոգեհանգիստի շարականը կը հայցէ Աստուծոյ նորոգել «*զննեցեալսն ի Սուրբ Անունդ քո*»: Այդ հաւատքը պահուած է նաև Հաւատոյ հանգանակին մէջ, որ կ'արտասանուի Պատարագի ընթացքին: Ան կը հաստատէ թէ Քրիստոս, մի՛ բնութեամբ մարմնացած Բանն Աստուած «*նովին մարմնով*» համարածաւ երկինք և «*նովին մարմնով*» պիտի գայ «*դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ դոյ վախճան*» (Հաւատոյ հանգանակ):

Հայ եկեղեցւոյ, ինչպէս նաև Արևելեան եկեղեցիներուն վախճանական հաւատքը իր երկրաւոր կեանքին մահացողը կը կոչէ «*ննջեալ*», ընդհանրապէս, իսկ հաւատացեալը՝ «*ի Քրիստոս ննջեալ*»: Ասոնցմէ անոնք, որոնք ապրած են սուրբ կեանք մը և սրբացած, անոնք «*բազում կոչեցեալներուն*»՝ «*սակաւ ընտրեալքն*» են, որոնք չեն ննջեր, այլ մահկանացու կեանքէն կ'անցնին անմահութեան կեանքին: Ասոնցմէ են տասներկու Առաքեալները, որոնց Յիսուս ըսաւ. «*զի ուտիցէք եւ ըմպիցէք ի սեղան իմ յարքայութեան իմում. եւ նստիք յերկոտասան աթոռ՝ զատել զերկոտասան ազգ իսրայէլ*» (Ղուկ. ԺԲ. 30): Անոնց մարմինը արդէն իսկ փառաւորեալ է: Անոնց աճիւնները արդէն իսկ Ա. Հոգիի

քննարարածոր եմ. որոնք և՛ պահուի՜ն Եկեղեցիին մէջ և կը յարգուի՜ն իրո՜ւ մասունքը: Հայ Եկեղեցիին մէջ, այդ մասունքներէն ամենէն հոշակատրոն է Ս. Գրիգոր Լուսատրիչի Աջը, որով կ'օրհնուի Ս. Միտոնը:

Արևելեան Եկեղեցիներու դաւանանքին հիմնաքարն է հաւատքը՝ մարմնով յարութեան: Ան հիմնուած է Ս. Գրական բացորոշ վկայութիւններու վրայ: Մին, Պօղոս Առաքեալի Կորնթացիներուն ուղղուած նամակի մէջ, ուր գրուած է. *«ամենեքեան նշնացուք, այլ ոչ եթէ ամենեքեան նորոգեսցուք: Յանկարծակի յական թաւթափել ի փող յետին. քանզի փող հարկանի, եւ մեռեալք յարիցեն առանց ապականութեան, եւ մեք նորոգեսցուք: Զի պարտ է ապականութեանս այսմիկ սգնուլ զանապականութիւն եւ մահկանացուիս այսմիկ զգնուլ զանմահութիւն: Այլ յորժամ մահկանացուս այս զգեսցի զանմահութիւն, եւ ապականութիւնս զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն որ գրեցաւ. եթէ ընկաւ մահ յաղթութիւն»*:

Երկրորդ Կորնթացիներուն ուղղուած և պարկտնոն նկատուած Պօղոսի երրորդ թուղթն է: Շատ յատկանշական է, որ Աստուածաշունչի հայերէն հիմ ձեւագիրներուն մէջ, հոն ուր կան Պօղոսի թուղթերը, այնտեղ կը գտնենք նաև Կորնթացւոց Գ. Թուղթը, ուր գրուած է *«զի յաշխարհս միեսցի ճիսուս, եւ ազատեսցէ զամենայն մարմին իւրով մարմնովն. զի զմեզ ի մեռելոց յարուսցէ. որպէս եցոյց զանձն օրինակ»*: Բացատրութիւնը պարզ է. Հայ Եկեղեցւոյ Հայրերուն հայեացքով, ան կը հաստատէ մարմնով յարութեան հիմնական դաւանանքը առաջին ֆրիստոնեաներու միջավայրին մէջ:

Առաքեալը կը խօսի Քրիստոսի երկրորդ գալուստի մասին, որուն ակնկալութեամբ կ'ապրի ամէն հաւատացեալ: Անոր կը ձգտին բոլոր անոնք, որոնք Քրիստոսի հետ ի նադորութեան ապրուած կեանքով վերանորոգուած, պիտի տեսնեն *«զնչան Որդոյ մարդոյ յերկինս»*: Այդ է ֆրիստոնեային վախճանական յոյսը, գեղեցիկ եղանակով երգուած ամէն Կիրակի, լուսաւորուած Քրիստոսի յարութեան լոյսով:

Երևեցար խնկաբերից
Ողջոյն կենաց ուրախալից
Եւ ի լերինն Գալիլիա
Առաքելոց մետասանից:
Արժանացոյ զմեզ ընդ նոսին
Քեզ տեսանել յօրն վերջին:

Երևցար խունկ բերողներուն
Ուրախալի կեանքի ողջունով
Եւ Գալիլիոյ լեռը
մետասան առաքեալներուն:
Անոնց հետ արժանացուր և մեզ
Տեսնել քեզ վերջին օրը:

Հայոց աշխարհին մէջ, ի Քրիստոս ննջեցեալներուն մարմնով յարութեան յոյսը, ամենագեղեցիկ իր արտայայտութեան ձևը գտած է հայկական խաչքարին մէջ: Ամէն խաչքար խնդրանք մըն է, որ կ'երգուի շարականի բառերով և կը խնդրէ ողորմութիւն.

Շնորհեա մեզ Տէր ողորմութիւն ի ծագել Սրբոյ Խաչին, որով եղև մեզ փրկութիւն, զի նովաւ ելցուք ընդ առաջ աստուածորդոյն որ ի յերկնից:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿՅՈՒՐԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՍ ԹԱԳԱՎՈՐԻՆ՝ ԵՐԿՆՔՈՒՄ ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ՆՇԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ

Աստվածասեր եւ բարեպաշտ թագավորին՝ Օգոստոս Կոստանդինոսին, Կյուրեղից, որ եպիսկոպոս է Երուսաղեմում, խնդրություն ի Տեր:

Երուսաղեմից առաջին հերթին քո աստվածասեր թագավորությանն եմ առաքում մամակներիցս այս առաջինը, որն ընդունելը վայել է քեզ, իսկ տալը՝ իմ:

Օրոշորորթ խոսքերով չի լցված, այլ երկնավորներից ազգակից աստվածատեսությամբ:

Եվ ոչ թե ճարտասամների հավանությանը ձգտող իմչեք՝ որ խոսքերի գեղեցկադիր շարադրանք ունի իր մեջ, այլ սուրբ ավետարանների կամխաձայնությունը՝ տեղի ունեցած դեպքերի միջոցով, որոնք ճշմարտությունն են վկայում:

Համզի ոմանք, ովքեր ստացվածք ունեն, քազում անգամ պսակում են քո պատվական գլուխը. փայլում, ոսկեհուռ և զանազան պայծառ քարերով պսակներ են բերում ու մատուցում:

Իսկ մենք քեզ երկրից չենք պսակում, որովհետև երկրից ընծայածներիս վախճանը երկիրն է, այլ քո աստվածասեր թագավորության ժամանակներում Երուսաղեմում կատարված երկնավոր դեպքերի աստվածային զորությունն ենք շտապով ի գիտություն համձնում քո բարեպաշտությանը:

Ոչ թե մրա համար, որ իբրև թե այժմ ամզիտությունից դեպի աստվածգիտություն գաս, այլ որպեսզի ժամանակ գտնես մահ ուրիշներից ուսուցանելու այն, ինչի մեջ որ բարեպաշտ ես, և որպեսզի հաստատվես այն բանի մեջ, իմչարդեմ գիտեիր:

Եվ թագավորությանդ սեփականությունը կալվածք ընդունելով՝ մեծ և երկնավոր աստվածառաք պսակով պատվված լինես:

Որպեսզի ամենաթագավոր Աստծուց սովորելով՝ վայելուչ գոհությամբ արդ վարձառատույց լինես:

Եվ քաջալերված թշնամիների դեմ մեծ հաղթությամբ՝ արդյունքներով լցնես Աստծուց սիրված, ուստիև հրաշակերտ կերպով քեզ հասած քո թագավորությունը:

Որովհետև քո աստվածասեր և եղբանկափշատակ հոր՝ Կոստանդինանոսի օրոք աստվածային շնորհներով Երուսաղեմում խաչի փրկական փայտը գտնվեց մրա կողմից, ով գեղեցիկ բարեպաշտություն փնտրեց, և սուրբ տեղերը ծածկված գլուխը մատուցեցին:

Իսկ քո օրոք, ամենաբարեպաշտ թագավոր, սկզբնական բարեպաշտությունն Աստծո նկատմամբ երկյուղով մեծապես նվաճված լինելով, այսուհետև ոչ թե երկրից, այլ երկնքից են Աստծո միածին Որդու՝ Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի զարմամալի գործերը, որը հաղթության մշամ է ընդդեմ մահվան՝ երանելի խաչի մասին եմ ասում, որը լուսի ճառագայթներով տեսնվեց Երուսաղեմում:

Որովհետև սուրբ Պենտեկոստեի այս օրերին՝ Ասեկամի սկզբին՝ երրորդ ժամին, լուսինը կազմված ամենահաղթ խաչը ցույցով երևաց երկնքում՝ սուրբ Գողգոթայի վերևից մինչև Զիթենյաց սուրբ լեռը, ոչ թե երևալով միայն մեկին կամ երկուսին, այլ հայտնապես ցույց տրվեց քաղաքին ողջ բազմությանը:

Ոչ այնպես, ինչպես մեկն ինչ-որ հապշտապ թվացյալ հարևանցի մի տեսիլ կարող է կարծել, այլ բազում ժամեր ակներև տեսնվեց երկրի վերևում:

Եվ թոցաճաճանչ փայլմամբ արեգակնային ճառագայթներից էր հաղթում: Այսպես թե ոչ՝ նրանցից հաղթահարվելով ծածկված կլինեք:

Եվ որովհետև արեգակից այնքա՛ն առավել հզորագույն ճառագայթներ էր մատուցում տեսողներին, մինչև որ քաղաքին ողջ բազմությունը միահամուռ և առանց բացառության ընթացքով դեպի սուրբ եկեղեցի՝ բռնված աստվածատեսությանց երկյուղով ու ուրախությամբ, միանգամայն մանուկներն ու ձեռերը, տղամարդիկ ու կանայք և ամեն տարիքի մարդիկ, մինչև իսկ նրանց մեջ եղած տանջ արգելափակված աղջիկները, բնակիչներն ու օտարները՝ քրիստոնյաների մասին եմ ասում, և այլ տեղերից եկվոր ազգերը, ամենքը միահամուռ ու միաբերան օրհնում էին սքանչելագործին՝ Աստծո միածին Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

Որ արդյունքներով ու փորձով ցույց տրվեց, թե քրիստոնյաների կրոնն ամենաբարեպաշտն է ոչ թե խոսքերի հավանական իմաստությամբ, այլ Հոգու հայտնությամբ ու գործությամբ, որը ոչ թե միայն մարդկանցից է պատմվում, այլ երկնքից՝ Աստծուց է վկայված:

Այդ, որովհետև մենք, որ Երուսաղեմում ենք բնակվում, կարծիքից վեր հրաշքը մեր իսկ դեմքով ընդունեցինք, ամենաթագավոր Աստծուն և Նրա միածին Որդուն գոհությամբ հանդերձ վայելչական երկրպագություն հատուցեցինք ու հատուցելու ենք:

Նաև քո աստվածասեր թագավորության համար սուրբ տեղերում երկարատև ու մշտական աղոթքներ կատարեցինք ու կատարելու ենք:

Եվ որովհետև այս երկնավոր աստվածատեսությունն արժանի էր լոռության չմատնվելու, այլ ավետարանվելու քո բարեպաշտությամբ, այդ պատճառով շտապեցի գրել, որպեսզի քաջալերվելով՝ մահ հույսն ընդունես քո առաջնային հավատքի հաստատումն ու բարի հիմքի վրա, որն Աստծուց ցույց տրված գիտությունն է՝ հաստատապես շինված դեպի մեր Տեր Հիսուս Քրիստոսը:

Եվ ամեն սովորությամբ լցված՝ նույն ինքն Աստծուն գորավիզ ունենալով, խաչի հաղթությանն մշանը պատրաստ մատուցես որպես պարծանքների պարծանք, քեզ հետ կրելով երևելի մշանը, որի ձևը ցույց տրվելով մարդկանց, մեծապես փառավորվեց երկինքը:

Սակայն այս հրաշագործությունը, ով աստվածասեր թագավոր, մարգարեների վկայությամբ ու Քրիստոսի սրբերի՝ Ավետարաններում եղած խոսքերով է, որ հերթականությամբ կատարվեց մինչև այժմ, և դարձյալ մեծապես կատարվելու է:

Որովհետև Մատթեոսի ավետարանում Փրկիչը՝ հանդերձյալ դեպքերի գիտությունն իր երջանիկ առաքյալներին պարգևելով և իր հետ եղածներից հայտնի բաների մասին խոսելով, կանխաձայնելով ասում էր՝ «և այն ժամանակ երկնքում երևալու է Մարդու Որդու մշանը»:

Որի ավետարանի աստվածային գրքերը սովորական ձևով վերցմելով, կգտնես հենց այս մասին գրի առնված առաջապատում վկայությունները, որ կան այնտեղ:

Որի հետ մամալամդ, ով տեր, հորդորում եմ Հոգու կրթությամբ հաճախակի մայել ման մեր Փրկչի կողմից մախապես ասված և այնտեղ եղած ուրիշ գրվածների վրա, որոնց համդեպ պետք է զգուշություն ունենալ բազում երկյուղածությամբ, որպեսզի հակառակողների գործություններից ոչ մի վնաս չկրենք:

Մեր խոսքերից այս առաջինը, աստվածասեր թագավոր, քեզ եմ մատուցում երուսաղեմից, շարունակում եմ իմ մտերիմ ձայնով բարբառել, որովհետև քեզ համարում եմ հարազատ ու բարեպաշտ և մեզ հետ երկրպագող Քրիստոսին՝ Աստծո միածին Որդուն և մեր Փրկչին, Որն ըստ աստվածային գրքերի՝ տնօրինական փրկությունը կատարեց Երուսաղեմում:

Նա, Ով այստեղ ոտնակոխ արեց մահվանն ու իր պատվական արյամբ ի բաց ջնջեց մարդկանց մեղքերը և կյանք, ամապականություն ու հոգևոր շնորհներ տվեց բոլոր մրանց, ովքեր հավատում են իրեն, թե Աստված է, զորությամբ ու շնորհներով պահպանելով՝ թող քեզ պայծառացնի և մեծամեծ բարեպաշտությամբ, վայելույ ուղղությամբ ու հարազատ արքայական սերունդներով հարստացնի:

Ամենաթագավորն Աստված, որ տվիչն է ամենայն բարությանց, ապագա բազում խաղաղ տարիներով թող ամբողջ պահի քեզ ողջ ընտանիքովդ հանդերձ՝ ի պարծանս քրիստոնյաների ու ողջ աշխարհի: Եվ զարդարված ամեն ինչով ու սուրբ եկեղեցիների ընտանության սովորությամբ, և իշխանությամբ մարդասիրություն ցուցաբերելով հոռմայեցիների մկատմամբ, և մեծ բարեպաշտությամբ ու հաղթությամբ բարձրանալով, Աստված թող բազում խաղաղ տարիներ շնորհի մեզ ամենքիս՝ բոլոր ընտանիքներով հանդերձ, Օգոստոս աստվածասեր թագավոր:

ԳՐԱԲԱՐԻՑ ԱԾԽԱՐՀԱԲԱՐԻ ՎԵՐԱԾԵՑ

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱԶԱԳԱՀՅԱՆԸ

ՀԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՔԵՐՈՎԱԲԷ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆՈՐԱՀԱՅՏ

«ՊԱՏՃԱՌ ԳԱԼՍԵՏԱՆ ՏԵԱՌՆ ՅԵՐՈՒՍԱԴԷՄ» ԵՐԿԸ¹

«Մաւտ եղեմ, ասէ, յերուսաղէմ»^{68*}, զի մաւտ էր եւ եկեղեցւոյ խաղաղութիւնն «Քրիստոսի» երէից եւ ի հեթանոսաց մի եկեղեցի լինել¹³⁸ զհաւատացեալս ամենայն եւ «երուսաղէմ» անուանել, որ է խաղաղութիւն ի «Քրիստոս»¹³⁹:

«Եկն ի Բեթրաֆէ եւ ի Բեթանիա»։ «Բեթրաֆէ», այսինքն՝ տուն Մնատի, զի ծնաւտ սպասաւոր է րանի։ Եւ նախաստեղծն Աղաւ յամենայն կենդանիս միայն րանական եղեալ, պատիւ խաբէութեամբ աւճին կորոյս զնա, ըստ մարգարէին. «Հաւասարեաց անասնոց անբանից»^{69*}։ Վասն որոյ եւ Տէրն երկրորդ Աղաւ լինելով ընդ հետս կորստեան առաջին մարդոյն գա ի կենագործել զնա։ Նա դարձեալ, զի «Մնտի տուն» կոչեցաւ տեղին, վասնզի միամաւր եւթնագիսակ ուխտաւորն եւ արին Սամոն՝ յարինակ Միածնին Յիսուսի յայնմ¹⁴⁰ տեղուջ հազարս յայլագգեացն ծնաւտի իշոյ սպանաւեր, եւ ի ծարաւին ջուր ի ծնաւտ իշոյն րիւի¹⁴¹ տայր նմա Աստուած։ Վասն որոյ եւ Միածնին Հաւր Յիսուս աւետածինն եղեալ եւ ուխտաւոր Հաւր եւ զեթնարփի շնորհս Հոգւոյն ընդ ինքեան ունէր արին եւ եզարն ի պատերազմի գալով ի տեղի արինեակին ի Բեթրաֆէ, որոյն իսկ իշու խնդիր առնէր նստիլ ի վերայ այն, որ ելանելն կամէր ի կոռս խաչին եւ հեծելութեամբն տալ պատերազմ ընդդէմ սատանայի՝ կոխելով զիշխանութիւն մահու մահաւարն իւրով. քիւրս քիւրուց սատակելով ի դիւաց, արձակեաց զԵմբռնեալսն առ ի նմանէ, ըստ մարգարէութեանն. ել եւ զերեաց, եւ ետ փրկելոց¹⁴² ծարաւեացս զքիսեալն ի կողէն աղբիւր առատապէս։ Իսկ «Բեթանիա» թարգմանի «Տուն Ագոյ» յանցմանն Աղամայ, որ մեռաւ մեղաւք, գորոյ եւ զարինակն այժմ ի մաւտոյ յանձն էառ Ղազար «բարեկամն»^{70*} Յիսուսի՝ մեռանելովն ի Բեթանիա ի տանն սգոյ եւ տրտմութեան։ Սակա որոյ գա կենագործողն ի տեղին եւ կենագործէ զՂազարոս՝ յարինակ եւ առնաւատչեա Աղամայ։ Եւ զսուգ քերցն Ղազարու փարատ յարինակ նախապետացն եւ մարգարէիցն, որ սուգ ունէին ի վերայ Աղամայ իւրում Ստեղծիչն եւ զհնազանդիւն մահու եւ մեղաց։ Գա Տէրն ի նոյն տեղի եւ զհնազանդեւն մահու զՂազար յարուցանէ եւ «Ինքն հնազանդի Հաւր մահու չափ եւ մահու թաչի»^{71*} փոխանակ Աղամայ։ Եւ այս է ասելն. «Եկն ի Բեթրաֆէ եւ ի Բեթանիա»։ Իսկ այն, զի ասէ «մաւտ ի լեռն Զիթեմեաց», բազում արինակչ խորին խորեւոյ յայնմ լերին երեւի կատարեալ, գորոց ոչ է մարթ զանց առնել. վասնզի ասի, թէ անդ կոչեաց Աստուած զԱրքանա¹⁴³ պատարագի զմիամաւրն Իսահակ՝ յարինակ միածին Յիսուսի։ Ի նմին եւ զխոյն կախեաց ի փրկութիւն Իսահակայ՝ առակելով

¹ Սկիզբը տե՛ս Բիվ Դ, էջ 58:

68* Մրկ. ԺԱ 1:

69* Մրկ. ԺԱ 1:

70* Տե՛ս Յովն. ԺԱ 11:

71* Փիլիպ. Բ 8:

զՄիածինն, որ Գառն կռչեցաւ բարձող մեղաց աշխարհի^{72*}: Յայնմ լերին ասի եւ տեսին Յակոբայ եւ յերկնից յերկիր գէշսն եւ յերկրէ յերկինս զԵսն նշանակէր, որ Քրիստոսն եղիւ: Յայնմ լերինն ասի եւ փախուստն Դաթի մարգարէի, եւ ի միին լերին առեալ¹⁴⁴ իմաստութիւն Սաղոմոնի: Եւ Իմֆն՝ հրաշագործողն ամենայնի համապագ անդ ագանէր, ելանէր եւ աղաթէր, եւ անդի վերանալոյց էր յերկինս: Վասն այսորիկ¹⁴⁵ մերձ գայր, զի մերձեալ էր աւուրք վերանալոյ Նորա: Եւ մերձ կացուցանէր, որ զեետն էին, զի զառաջնոցն խորհուրդն¹⁴⁶, որ անդ եղիւ, յիշեսցնէ, եւ կամ զի զԵս մտիցն երկնից եւ նանապարհն ասասցնէ: Եւ զի «Զիթեմեաց» կռչեցաւ լեռն, զի ձեթ գիշերոյ եւ խաւարի է լուծիչ եւ լուսաւորիչ: Եւ ազգ մարդկան ի խաւարի կռապաշտութեան լինելով կարաւորէին լուսոյ: Վասն որոյ արեգակն արդարութեան Քրիստոս ծագելով ի Կուսէն լուսաւորեաց զիմանալի աշս¹⁴⁷ մտաց եւ հոգւոց մերոց աստուածային լուսովն, եւ ձիթոյ աւրինակաւ զողորմութիւն աստուածային մեզ յայտ առնէ, որպէս եւ աղաւնին ի Տապանի անդ Նոյի նորին տերեւովն ծանուցանէր զգամափութիւն աշխարհի՝ ողորմութեամբն Աստուծոյ եղեալ¹⁴⁸: Արդ, ի բարձրութիւն լերինն մերձեցուցանելով ցուցանէ յամենայն վայրաբարշ եւ ի սնտոի վարուց վերանալ եւ սպիտակափայլ լուսով զարդարիլ, որպէսզի արասցէ հաղորդութիւն մերում նուաստութեանս ընդ իւրում մեծութեան¹⁴⁹:

«Առաքէ երկուս յաշակերտացն», ո՞չ էին երկուս աշակերտոքն. բոլի թէ Պետրոս եւ¹⁵⁰ Յովհաննէս, զի ամենայն ուրեք գնոսա նախապատուէ¹⁵¹, որպէս ի Թափաւր եւ ի պատրաստել զգառիկն եւ յաղաթելն ի լեռն: Պետրոս ձեր եւ եին աւուրքք զդասս մարգարէիցն նշանակէր, որ նախքան զգալ Բանին ի Հաւրէ առաքեցան առակաւոր պատգամաւ զիրէայս եւ զհեթանոսս պատրաստել հաւատով ընդունել զգալուստն Քրիստոսի: Իսկ Յովհաննէս՝ երիտասարդ եւ դեռաբայս, նկարէ զգունդս առաքելականս, որ առաքեցան ի Քրիստոսէ՝ զիրէայս եւ զհեթանոսս լուծանել ի կապանց մեղացն եւ մահու եւ արձակել ի դատապարտութենէ աւրինացն յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ:

«Ենթայք ասէ ի գեաւդդ, որ ընդդէմ ձեր կան»^{73*},¹⁵² Մատթէոս. «առաջի ձեր»^{74*}, ասէ, զի ամենայն աշխարհս իբրեւ զմի գեաւդ¹⁵³ համարեալ է Արարչին: Եւ «ձեր» ասելովն յայտ արար թէ՝ եւ ձեզ ասէ¹⁵⁴ այսուհետեւ առաջի կա¹⁵⁵ եւ ուսուցանել: Այլեւ այսու զկարի իմն քարերարսն նշանակէ եւ զնազանդսն հրամանին Աստուծոյ: Իսկ Ղուկաս, զի «հանդէպ մեր»^{75*}, ասէ՝ զնոցանէ յայտ առնէ, որ զմիջակա ունիցին բարս, որ ոչ ի կատարեալ քարեացն իցն, եւ ոչ յամենեւին¹⁵⁶ չարացն, որ թէպէտ եւ ոչ ընդունիցին զմեզ, ասէ եւ ոչ¹⁵⁷ չարչարել ձեռնարկին: Այլեւս այսու յուշ ածէ նոցա զինքն ընդ նոսա լինել, որպէս յետ յարութեան ասաց. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուր մինչեւ ի կատարած աշխարհի»^{76*},¹⁵⁸ Իսկ սա «զի ընդդէմ» եթէ զամենեւին չարսն նշանակէ, զոր եւ «գալս» կոչէ. «Առաքեմ», ասէ, զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գալոց^{77*},¹⁵⁹ Այլեւ «ընդդէմն» ասել առաւել զերուսաղէմէ ի դէպ է: Եւ որպէս քաղաքն Աստուծոյ ընդդիմանայր իւրում¹⁶⁰ Տեսաւ, յայտնի է յերացն, թէ որպէս ընդդիմանայր նշանացն: Նա զգիւս նոցա հանէր, եւ հալածէր եւ նոքա ասէին Բեզգեբուդ գոյ ի

72* Տե՛ս Յովհ. Ա 29:

73* Մրկ. ԺԱ 2:

74* Մտք. ԻԱ 2:

75* Ղկ. ԺԹ 30:

76* Մտք. ԻԸ 20:

77* Մտք. Ժ 16:

նմա¹⁶¹, եւ նովաւ հանէ. զհիւանդս նոցա¹⁶² բժշկէր եւ զմեռեալս նոցա յարուցանէր. եւ նոյա հակառակ Աստուծոյ եւ արիւնգացն կոչէին զՆա: Եւ զլուխ չառեացն¹⁶³ մատնեցին զՏէրն ի մահ Խաչին եւ ուրացան զշնորհս նորա եւ կոտորու կողոպտու եղին¹⁶⁴ ի փառացն Աստուծոյ, որպէս եւ¹⁶⁵ ասաց Տէր «Գնամ աստի. զմամ» եւ «ահա թողեալ լիցի առնդ ձեր արեւակ»^{78*}:

«Գառնիցէք», ասէ, յաւանակ մի կապեալ^{79*} «արտաքայ»¹⁶⁶ փողոցի. Մաթեոս երկուս ասէ. էշ եւ յաւանակ^{80*}, որպէս եւ զկայսն երկուս եցոյց. այսպէս եւ զայս արիւնակ երէից եւ հեթանոսաց, զի անմաքուր կենդանին արիւնակ է¹⁶⁷ երէիցն անմաքուրեան, որ զի թէպէտ եւ արէնս ունէին, այլ սուրբ ոչ էին, զի կոտց զոհէին եւ դիւաց խուցկս արկամէին եւ զհանդս նոցա կամացն¹⁶⁸ գործէին: Զի որպէս էշն թափառեալ եւ րեռնակիր, այդպէս եւ հրեայն վարժեալ էին արիւնաւ եւ մարգարէիւ՝ զառաջինն ի կամս¹⁶⁹ Աստուծոյ զնալով եւ ի պատուիրանս արիւնաց նորա, զորս խաբեաց սատանա եւ ինքեան նուանեաց ի ծառայութիւն ի րազում ամաց րեռնակիր չաբեաց արարեալ եւ կառս կազմեալ ինքեան զմարդիկ իբրեւ զէշ անմիտ թիկնախի եւ կողավեր վիրաւորեաց յոգի եւ ի մարմին: Իսկ յաւանակ անվարժ եւ տրմուղ, զոր այլ աւետարանիչն յիշատակեն եւ սա զհեթանոսս ամենայն, որ առանց արիւնաց եւ մարգարէից, ըստ կամս անձանց վարէին, զի անկիրթ էին աստուածապաշտութեան, եւ միայն զհետ կամացն սատանայի մոլեալ¹⁷⁰ եւ մոլորեալ էին¹⁷¹ ի կուսապաշտութիւն սիրով եւ ցանկութեամբ, զոր «կապանս» կոչէ «կապեալ» ասէ, այսինքն՝ մեղաւք. ըստ այնմ թէ՝ «ի գործս ձեռաց իւրեանց կապեցիցն¹⁷² մեղաւորք»¹⁷³ եւ որ կապեացն սատանա րազմաստուած մոլորութեամբն: Իսկ ասելն, թէ՝ «արտաքայ» նշանակէ, թէ արտաքայ էին ամենայն գործոց րարեաց, կամ արտաքայ դրախտին հանեալ եւ արտաքայ վերինն Երուսաղէմի, կամ արտաքայ արիւնաց եւ մարգարէից¹⁷⁴:

«Ի փողոցի»^{82*}, ասէ, որ նշանակէ զանցաւոր կենցաղոյս ծփական վարս, զի որպէս փողոց բազմաց կոխան է, այսպէս եւ միտմ մարդկան կոխան եղեալ էր սատանայի եւ նաճապարհ կամաց նորա, եւ կապեալ կաշկանդեալ էին կուսապաշտութեամբն, զորս լուծանել հրամաէ Քրիստոս առաքելական քարոզութեամբն ի մեղաց¹⁷⁵ կապարանէ:

Յասկն. «լուծեք¹⁷⁶, եւ անէք ինձ»^{83*}, զերէիցն ժողովարանն յարիւնացն՝ յԱւետարան. ի Սիոնէ՝ յեկեղեցիս եւ ի վերինն Երուսաղէմ, ի թլփատութենէ՝ յաւազանին մկրտութիւն, ի գրոյն, որ սպանցներ, ի հոգւոյն ազատութիւն, եւ զհեթանոսս ի կոտցն եւ ի դիւացն՝ ի Խաչին երկրպագութիւն:

«Լուծէք, ասէ, եւ¹⁷⁶ անէք ինձ». քանզի¹⁷⁷, որ կապեացն, սատանա էր, որ գողարար մտանելով սողեցաւ անձատեսիլ ցանկութեամբն յունկն Եւայի եւ նովաւ պատրեաց զԱդամ՝ հաւանել¹⁷⁸ ինքեան, զորս արտաքայ դրախտին հանելով կապեաց ի տոտունս մեղաց եւ ի զայտս¹⁷⁹ ախտիցն¹⁸⁰, զոր «փողոց» անուանէ: Եւ զի այժմ՝ հրամայեաց Տէր¹⁸¹ առաքելոցն զանբան կենդանին լուծանել ի կապարանէն¹⁸² յարիւնակ այնմիկ. զի հանդերձեալ էր ինքն լուծանել զրանաւորն Ադամ Խաչին իւրով ի կապանաց մեղացն եւ յանձնիցն դատապարտութենէ:

78* Մտթ. ԻԳ 38:

79* Մարկ. ԺԱ 2:

80* Մտթ. ԻԱ 2:

81* Աղմ. Թ 17:

82* Մրկ. ԺԱ 4:

83* Ղկ. ԺԹ 30:

«Եւ զի ասաց. «թէ ոք ասէ՝ ի՞նչ ձեզ»^{84*}. զիտէր զլրբութիւն քանսարկուին, զի որպէս տեսարք յաւանակին¹⁸³ ասացին, թէ՝ «Զի՞ լուծանէ՞ք», այսպէս եւ սատանա ասէր. «Զի՞ կա իմ եւ քո Յիսուս Նազարեցի»^{85*}: Եւ յորժամ ասացին, թէ՝ «Տեսուն իւրում պիտոյ է», թոյլ հտուց. նմանապէս եւ քանսարկուն արար, յորժամ առաջին Տէրն խնդրեաց, ոչ կարաց րոնանալ, զի չէր նորա: Եկն Հովին քաջ զիւր ոչխարն խնդրել, եւ¹⁸⁴ եկն Տէրն խնդրել զիւր պատկերն, որ թաղեալ կայր յաղբ ախտիցն: «Գնացին, ասէ, աշակերտսն եւ արարին, որպէս ասաց¹⁸⁵ Յիսուս. Ածին զյաւանակն»^{86*}: Ջարմանալ արժան է յայսմ վայրի, թէ զիա՞րդ այնպէս դիւրաւ թոյլ հտուց լուծանել զիւրեանց անասնիկն. վասնզի չէր նոցա, այլ գողացեալ յայլոց եւ ի նոցանէ գտեալ եղիւ կամ¹⁸⁷ թէ¹⁸⁸ մոլորեալ եւ¹⁸⁹ եկեալ ի գեւղն, գոր կալեալ կապեցին արտաքոյ՝ երկուցեալ¹⁹⁰ ի պատուիրանէ աւրինացն. զի մի ի տան զտցի եւ իրրեւ գողաւ համարեալ պատուհասեսցին^{86*}: Եւ վասն այսորիկ չասացին ինչ. եւ կամ այս իսկ հաւաստի միտք է քանիս. թէ վասնզի տնաւրէնութիւն Որդւոյն Աստուծոյ կատարեսցի. տեսչութիւն¹⁹¹ Աստուծոյ, այնպէս ներգործեաց հաւանս՝ զնոսա ցուցանելով առաքելոցն եւ ոչ դիմադարձ, որպէս զայրն, որ զստփորն ունէր առ որում եւ¹⁹² զգատիկն արար^{87*}: Եւ այսու աւրինակաւ քաջալերս տայր առաքելոցն, թէ ոչ միայն ինձ այսպէս դիւրին է զԱղամ արձակել յախտեցից մեռելովն, որպէս դուք՝ զյաւանակդ, այլեւ՝ ձեզ այդպէս դիւրեցից՝ զիրեայս եւ զհեթանոսս արձակել ի կապանաց մեղացն մահու եւ դարձուցանել առ Աստուած: «Ածին, ասէ, զյաւանակն եւ արկին զնովաւ ձորս եւ նստաւ»^{88*}: Միւս¹⁹³ աւետարանիչն ասէ. «Ածին զէշն եւ զյաւանակն», այսինքն՝ որպէս վերագոյցն ասացաւ, մարգարէին եւ առաքեալն, զերեայս եւ զհեթանոսս ածին ի հնազանդութիւն Աւետարանին Քրիստոսի: «Եւ նստաւ ի վերայ նոցա, ասէ»¹⁹⁴: Եւ որպէս հնար եւ միտմ առն ի միտմ նուագի նստել ի վերայ երկուց կենդանեաց, զի ոչ եթէ կառք ինչ էր կազմեալ կամ լծեալ ոչ ի չորիցն եւ ոչ ի քազմաց, այլեւ յերկուց ասէ եւ երկուսն կառք ոչ կազմի եւ ոչ ասի: Եւ արդ, զի՞նչ. մի՞թէ ստիցէ ինչ աւետարանիչն, որ զայս ասէ. ոչ, այլ յայտ է, թէ¹⁹⁵ երկուս էին ստուգապէս, որպէս եւ կոյրքն երկուս: Եւ զառաջինն նստաւ ի վերայ յիշոյն մինչեւ ի դուռն Երուսաղէմի եւ յաւանակն զհետ նորա երթայր քաց արձակ: Զի¹⁹⁶ նստաւ ժամանակս ինչ ի ժողովուրդն հրէից աւրինակաւն եւ մարգարէիւ¹⁹⁷ ի ձեռն պատարագացն հանգչելով ի նոսա մինչեւ մերձ եղիւ¹⁹⁸ ի դուռն նոր Երուսաղէմի, այսինքն՝ եկեղեցւոյ հեթանոսաց: Եւ ապա իջեալ յիշոյ անտի նստաւ¹⁹⁹ ի վերայ նոր յաւանակին²⁰⁰ եւ մտանէ ի քաղաքն: Եւ էշն զկնի երթայր յաւանակին՝ յարինակ հեթանոսաց նորոյ թագաւորին նոր ժողովուրդն անուանեցան, յորս հանգուցեալ եղիւ Բանն Աստուած ի հրէայս եւ ի հեթանոսս²⁰¹ մի եկեղեցի յարինեալ առաքելոց եւ մարգարէից քաղաքեամբ, որով, իբր հանդերձիւ ծածկեալ եղին աւագանին մկրտութեամբ, զի ի վերայ արինացն պատուիրանի զառաքեալական քաղաքութիւն արկանէին եւ ի վերայ երէից եւ հեթանոսաց՝ զաւագանին մկրտութիւն եւ զՀոգւոյն շնորհս, որպէսզի յայնմ հանգչիցի քաղաքն Քրիստոս: Որով զանմաքրութիւն հրէից եւ հեթանոսաց սրբեսցին²⁰² առաքեալն եւ տանարացուցին թագաւորին յախտեցից: Բայց դու զարմացիր

84* Մտր. ԻԱ 3:

85* Մրկ. Ա 24, Ղկ. Դ 34:

86* Մտր. ԻԱ 6-7:

86ա* Հմմտ. Բ Օր. ԻԴ 7:

87* Հմմտ. Ա Թագ. Ա 24-25:

88* Մտր. ԻԱ 7:

դարձնալ, թէ գիարդ նոր յաւանակն, յորայ վերայ ասէ²⁰³ ի մարդկանէ ոչ ոք նստաւ, այնպէս զգաւն եւ հանդարտ ընթանայր: Այլ քանզի ամենակարող զարութեան²⁰⁴ Աստուծոյ այնպէս դիրքին էր զայն առնել, որ եւ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքայ ոտից մարդոյն: Իսկ զի զպատուիրանն Աստուծոյ նա ոչ պահեաց, ապստամբեցին քազումք ի կենդանեաց եւ անհնազանդ եղին նմա, մինչ զի²⁰⁵ ռմանք ի կենդանեաց զազանաց խածատեն եւ գիշտեալ սպանանն զմարդիկ, իբրեւ ստունգանազս պատուիրանաց Արարչին: Այլ զի Տէրն երկրորդ Ադամ եղեւ և զպատուիրանն հայրենի պահեաց մարմնովն Ադամայ: Վասն այնորիկ եւ ամենայն բնութիւնք կենդանեաց եւ անկենդանեաց հնազանդեցան նմա: Այլեւ յարինակ հեթանոսաց զայն տնաւորինաց, որոց ոչ ոք ի մարդկանէ մարգարէ կամ առաքեալ քարոզեաց զմարդեգոութիւն Որդւոյն Աստուծոյ: Իսկ յորժամ ծնաւ Տէրն ի Կուսէն առանց ուրում ի մարդկանէ քարոզելոյ, զգաւն²⁰⁶ եւ հանդարտ ընթացիւք եկին մոգն ի հեթանոսաց յաստեղէ իմեմնէ²⁰⁷ առաջնորդեալք²⁰⁸, եւ երկիր պագին ծնիցելոյ Թագաւորին խորհրդակցան ընծաիւք եւ պատարագաւ²⁰⁹ յայտ արարեալ պստւ ամենայնի առաքելոցն զիւր ամենագաւր զարութիւնն²⁰⁹, թէ կարող եմ զբիրտ եւ զյանդուզն²¹⁰ քարս հեթանոսացն այսպէս դիրքաւաւանս առնել ձեզ, որպէս յաւանակս տրմաղ եւ զտեարս նորա: Այլեւ էչն եւ յաւանակն խոնարհութեան արինակ էր: Ջոր Իւրով մարմնաւոր զարտեմարն մեզ ուսուցանել կամեցաւ՝ զինքն²¹¹ արինակ կացուցանելով, մանաւանդ առաջնորդաց եկեղեցւոյ քահանայից եւ կրանաւորաց²¹², ոչ հպարտութեամբ ի ծիս եւ ի ջորիս յաւրանալ որպէս եւ այժմ սովորեալ են քազումք զանազան պատրաստութեամբ զարդարել զինքնանս պլաստիկոցն հանդերձիւք եւ աշխարհական կոշկաւ²¹³ եւ կանացի առիս ոտից ագուցեալ²¹³ ծիարոյծս լինելով եւ այն ի վատթար եւ յէզ ազգէն, զի²¹⁴ քազմասցի ոսկի եւ արծաթ մեր եւ առաւել բորբոքեցի ակտ ազանութեան²¹⁵ յայնպիսի²¹⁶ պատրաստութեանց: Վասն որոյ եւ Տէրն զայնպիսի Արմատ չարութեան կտրել կամեցեալ յառաջնագոյն մարգարէիցն եցայց, եւ ինքն եկն եւ կատարեաց խոնարհութեամբ յիշկան հեթանոսեալ, եթէ պէտք ինչ լինիցին վասն տկարութեան մարմնոյ կամ²¹⁷ հեռաւոր ճանապարհի, զի²¹⁸ այնպիսի խոնարհութեամբ սատանա կործանեցի²¹⁹:

«Եւ քազումք, ասէ²²⁰, զհանդերձս իւրեանց տարածունէին»⁸⁹, Յոնաննէս աւետարանիչն ցուցանէ զպատեանն, թէ է՛ր վասն ընդառաջ եղին նմա²²¹ հրուսաղէմացիքն, ասէ. «Ժողովուրդն, որ ընդ նմա էր, վկահաց, թէ զՂազար կոչեաց ի գերեզմանէն»⁹⁰, եւ յարոյց, եւ վասն այնորիկ ընդառաջ եղեւ նմա ժողով, զի լուան, եթէ զայն նշան արարեալ էր նորա: Բայց քանզի²²² Հոգին Սուրբ շարժեաց զքազմութիւն քաղաքին Նրուսաղէմի ելանել ընդառաջ քազաւորին Քրիստոսի, որք եւ զհանդերձս իւրեանց մերկանային յանձանց եւ առաջի տարածանէին²²³ զհանապարհ այն առ պատիւ Վարդապետին, զի ի վերայ հանդերձից նոցա ընթացին²²⁴ ոտք յաւանակին եւ մի ընդ յատակս երկրին²²⁵, ճանապարհ Տեառն պատրաստելով զինքնանս ըստ այնմ թէ՛ «Պատրաստ արարեմք զհանապարհս Տեառն»⁹¹: Այլեւ այս յարինակ լինէր տիեզերաց, որք յետ յարութեան նորա ի մեռելոց հնազանդեցան Աւետարանին եւ սփռեցին առաջի

89* Մտք. ԻԱ. 28:
90* Հովհ. ԺԲ. 17:

91* Եսայի Խ 3:

Տեառն²²⁶ զսիրաս իւրեանց. ըստ այնմ, թէ՛ «Պատառեցէ՛ գսիրտս ձեր եւ մի զեանդերմս»⁹² : Որք եւ ոչ զերկրաւորս միայն, այլ եւ զանձինս իսկ մերկանաին²²⁷ յագւոց վասն սիրոյն. Քրիստոսի եւ արեամբ նահատակեցան: Դարձեալ նշանակէ եւս զկրկինն ի մեզ ծածկոյթ մերկանալ ի քոց. այսինքն՝ զհին մարդն եւ զմեղացն տեսակ, որ յետոյ եմուտ, խոստովանութեամբ տարածանալ առաջի Աստուծոյ, որպէսզի առ ուռն կոյսկոյ՛ զմեզս մեր ճանապարհի՛ մեզ արաստէ Բանն Աստուած, ըստ այնմ, թէ՛ «Գնացից ի նոսա եւ քնակեցայց ի նոսա»⁹³,²²⁸

«Եւ այլք ուսա ի ծառոց հատանէին եւ տարածանէին նահապարհի»⁹⁴,²²⁹ Զի գարնանահին էր ծամանակն եւ ծաղկաւ գնարեացեալ զարդափայլէին գագաթունք ծառոցն²³⁰, ռուտի հատանէին զծաղկաւետ բուսիս ուտոցն եւ Քրիստոսի գարշապարնցն մատուցանէին կոյսն²³¹ զնահապարհ այն՝ նշանակեալ այնու, թէ Սա էր, որ ասացն. «Քիսեսցէ՛ երկիր, ծաղիկ եւ ծառ պաղաքիւր եւ զարդարեաց զաշխարհս ի պէտս մեր»⁹⁵: Վասն որոյ, զոր երբեմն դիւաց եւ կոռց մատուցանէին, այժմ²³² իմացեալ զԱրարիչն, նմա ընծանէ՝ Թննելով²³³ զնահապարհ մտի նորա յստովք եւ տերեւեալ ձիթենովք, որպէս եւ²³⁴ երբեմն մոգքն ի ծննդեանն զխորհրդական ընծայսն մատուցանէին ծսկի եւ կնդրուկ եւ զմուռս այնմ, որ ասաց մարգարէին. «Իմ է ուկի եւ իմ է արծաթ»։ Յայս միտս եւ այսաւր տգէտ ժողովուրդն ծանել զհեկեալ քաջնւորն Քրիստոս, եւ արինաբառնդ ասիւք ընդառաջ ելանէին ձիթենեալք եւ արմաւենեալք, որ են աստուածաին եւ քաջաւորական սպասաւորութիւնք²³⁵ ձիթենեալն զողորմութիւն Աստուծոյ նշանակելով եւ զաւծումն մկրտութեան, զոր պարգեւեաց հեկեղեցւոյ սրբոյ, եւ արմաւենեալն, որ քարձր է հասակաւ եւ քաղցր ի կերակուր, զի ի քարձանց զալուստն նշանակեալ եւ քաղցր վարդապետութիւնն²³⁶ Քրիստոսի, ըստ այնմ, թէ՛ «Քաղցր ի քիմս իմ բանք քո քան զմեզր քերանոյ իմոյ»⁹⁶,²³⁷ «Եւ որ առաջի եւ զկնի երթաին աղաղակէին»⁹⁷ եւ ասէին⁹⁸,²³⁸ «Առաջի» Ազաւմ՝ իւրաք ծննդովք մինչ ի ծնունդն Քրիստոսի, եւ «զկնի»՝ յայնմ արեւ մինչ ի միւս անգամ նորայն զալուստ։ «Առաջի» արեւնք եւ մարգարէք, քահանայութիւն, քաջաւորութիւն։ Եւ Յովնաննէս՝ «կատարած», որ կարապետ էր եւ կարապետեաց առաջի Նորա՝ եւ²³⁹ ի դժոխս եւ²⁴⁰ միջակ եւ կնտ ամենայնի՝ Քրիստոսի քաղցր վարդապետութիւն, որ զտառաջին յինքն յանկեցոյց եւ երկրորդիս հիմն էարկ հաստատութեամբ եւ զկնի՝ երանելի առաքեալն եւ սուրբ վկայն, հայրապետն²⁴¹ եւ վարդապետն եւ բովանդակ աւագանին ծնունդք, որ աղաղակէին եւ աղաղակեն, «Ովսաննա Բարձրելոյն արինեալ հեկալ յանուն Տեառն»⁹⁸, «Ովսաննա»²⁴², այսինքն՝ փրկութիւն ի քարձանց, դարձեալ՝ Կեցոյ կամ ապրեցոյ, զոր ձեւացուցանէին ասողքն վասն Ղազարու յարութեան զայս ասել՝ Փրկիչ զոյ զնա եւ ապրեցուցիչ։ «Ի քարձանց» ասեն, զի ի քարձանց էր հեկալ քաջաւորն, զի ո՞ր քերկրայնոցս ունիցի այնպիսի զաւրութիւն որպէս եւ Սա։ Որքան²⁴³ գիտէին Նորա զաւրութեան²⁴⁴ ասէին. «Այլ ով է սա»⁹⁹, եւ որք գիտէին. պատասխանէին. Նա է, ասեն, որ յառաջ քան զյաւիտեանս Որդի Աստուծոյ, Աստուած ընդ Հաւր, եւ այժմ հկն յաշխարհս։ Եւ միւս անգամ ասեն. Ո՞վ է սա։ Նա է, ասեն, որ ի ձեռն խաչանիչ

92* Յովն Բ 13:

93* Հմմտ: Ղեւտ. ԻԶ 12:

94* Մտք. ԻԱ 8:

95* Հմմտ. Մկնդ. Ա 11:

96* Սղմ. ԺԺԸ 103:

97* Մտք. ԻԱ 9:

98* Մրկ. ԺԱ 9:

99* Մտք. ԻԱ 10:

դառազանից Մովսեսի գծովն պատառեաց ժողովրդեանն Իսրայելի. և ընկղմեաց զփարաւոն զաւրաւն իւրով: Եւ դարձեալ ասեն. Ո՞վ է սա: Նա է. ասեն. որ զհառասուն ամ երկնատեղեաց հացին կերակրեաց զհարսն մեր յանապատին և զվէմն աղբիւրացոյց յերկտասան վտակս: Եւ յաւելեալ ասեն. Ո՞վ է սա: Սա Գա է. ասեն. որ զԹորդանն սանձեաց և զպարիսպն երիճովի իբրեւ զշուր փռոյց: Ապա ասեն միարարն. Արեհնեալ եկեալ թագաւորութիւն Հաւր մերոյ Դաւթի¹⁰⁰: Մանեան զնա Աստուած նշարիտ և¹⁰¹ մշտնջենաւոր ի երեշտակաց արեհնարանեալ, և խոստովանէին եամագոյ Հաւր ըստ Աստուածութեան և անորիշ ըստ մարդեղութեան: Որդի Դաւթի դաւանէին, ըստ այնմ, թէ՛ «Բիսեսէ գաւազան յարմատոյ ճեսեայ»¹⁰¹,¹⁰² և թէ՛ «Յաթոն Դաւթի նստցի»¹⁰², և զի մարգարէն ամենայն զայսպիսի եկաւորութիւն գուշակեցին, և քահանայն միշտ ընթեռնուին ի տանարին և մնային աստուածային զալստեան: Վասն որոյ և ասէին¹⁰³. «Խաղաղութիւն յերկինս և վառք ի բարձունս», որպէս և¹⁰⁴ ի ծննդեանն երեշտակն երգէին «Փառք ի բարձունս Աստուծոյ»¹⁰⁴ և յերկիր խաղաղութիւն»¹⁰³: Քանզի յիշանելն յերկնից արար խաղաղութիւն մարդկան: Իսկ աստ զի մերձեալ էր վերանալ յերկինս, երկրաւորքս փոխադարձն երկնայնոցն, զխաղաղութիւն յերկինս առաքելով, զի մերով մարմնովս վերացաւ յերկինս մեզ թողեալ զխաղաղութիւն՝ յասելն «Ջիսաղաղութիւն թողում ձեզ»¹⁰⁴ և երկնայնոցն արարեալ խաղաղութիւն ըստ այնմ, թէ՛ «Արարի»¹⁰⁵ խաղաղութիւն յերկինս և յերկրի»: Այլիւ այսու յայտ առնեն, թէ Տէրն Եղեա և մեր զերկունսն ի մի ան թագաւորութիւն, և հաշտեցոյց զՀայրն ընդ արարածս և արար խաղաղութիւն երեշտակաց և մարդկան:

Արդ¹⁰⁵, սուրբ արմաւենեաց աւր, գոր և արեհնեալ աւր անուանեցին իմաստունք եկեղեցւոյ, արինակ իմանամք զալստեանն Քրիստոսի, յորում և մարդկութեանս ազգ բոլորովն յառաջ ընթանան ի վերջնումն նորոգման և յարութեան ի գերեզմանաց, որպէս և յարդնն ժամանակիս ընդառաջ ելանել քաղաքին վասն յարութեան Ղազարու: Քանզի ի Ձիթենեաց լեռնէն ասի իշանել յերուսաղէմ, որ ակնարկէ զգալուստն Քրիստոսի յաշխարհ և զդրդել տիեզերաց ննջեցելոց: Եւ զի ի կիրակէի տաւնեմք, որ է աւր տէրունի, նոյնպէս յարութիւն հասարակաց ի կիրակէի լինելոյ է, որ ասի աներեկ:

Իսկ ծերոցն և տղայոցն արեհնարանութիւն իմանի ծերացեալ մարմնոյն Ադամայ մահուամբ նորոգումն վերստին՝ իբրեւ յորովայն մաւր համաւրէն ծննդաւ յարութեամբն մատաղացեալք և մանկացեալք, առհասարակ բարձրացուցանեն զարեհմութիւն ի փառս Քրիստոսի:

Իսկ ոստոցն զատուցմունքն զգործս իւրաքանչիւր ցուցանէ, և ծերոցն զձիթենեացն առնուլ ոստս, զի ի ծերութեանն հասակի զպտուղ պարարտ առաջինութեան պարտ է բերել և որպէս ձիթենի ի տան Աստուծոյ տնկել, ըստ մարգարէին¹⁰⁵:

Իսկ տղայոցն զարմաւենեացն առնուլ ոստս, վասնզի տղայացելոցն անապական վերջին յարութեամբն զարդարութեան գործսն վայելացուցանեն, ըստ մարգարէին.

100* Հմտ. Մտք. ԻԳ 38, Ղկ. ԺԳ 35:

101* Եսայի ԺԱ 1:

102* Եսայի Թ 7:

103* Ղկ. Բ 14:

104* Յովն. ԺԴ 27:

105* Աղմ. ՄԱ 10:

«Արդարեւ որպէս զարմանեցիս ծաղկեսցին»¹⁰⁶։ Մինն զաստի արդարութեան մարդկան պտուղ եւ միւսն զմոցին զարդարութեան վաեղական նորոգումն եւ զանապական փառաց պարգեւսն ցուցանէ։ Վասնզի պատմադաս մարդոյն քարի վաեղութեամբ զոյացաւ երկիր ի գարնանային զուգաւորութեան։ Եւ զի ընդ ամիձիւք պարփակեալ է փուշ եւ դժնիկ բուսուցանելով ի նոյն հասարակաւորութեան գա երկրորդն Ադամ՝ վերադարձուցանելով յառաջին կարգն զերկիր։ Վասն որոյ զուարմացեալ ձերոցն եւ մանկանցն, ռստս ծառոց ի ճանապարհին տարածանէին տէրունեան գալստեանն. զի եկն ի քառնալ զանէծս փշարեւութեան եւ յառաջինն դարձուցանել պայծառութիւն։ Եւ դարձեալ զարիական ըմբիշսն յողումպիական մահատակութիւնսն ռստովք պսակէին։ Ծանեան ժողովուրդքն, եթէ Տէր մեր յաղթող եղեւ մահու զՂազար կոչելով՝ իբր քազաւորի յաղթողի ռստովք արմաւենեաց ելին ընդառաջ։ Իսկ ըստ խմանալի տեսութեան, ծառ է իրեշտական գաւրութիւնքն՝ զաստիւք ի ստորնայնոցս, յոր եւ վերածայրեալ սերորէն սոսկացեալ ի ներոյ տերունեան ռսիցն յաղթական ծայնիւ նուագեն զսրբութիւն Սուրբ Երրորդութեան¹⁰⁷։ Ըստ այսմ եւ ռստամատոյց ժողովրդեանն ձերոց եւ մանկանց ի քարճրագոյն փառատրութենէ սերորէիցն առեալ զաւրիւնութիւնս վերագոչէին տերունեան եկաւորութեան եւ միածայն աստուածաբանութեամբ սերորէիցն եւ տղայոցն դասք. սերորէքն՝ զանբաժանելի Սուրբ Երրորդութիւն եւ տղայքն՝ զմարմնաւոր տնաւրեւութիւն։

Եւ դարձեալ, զի լուծեալ եղեն նախաստեղծին յանպատմելի փառացն եւ նորին աղագաւ սաղարթաւ ռստոց պարածածկէին զինքեանս։ Եւ, յորժամ տեսին զմարդն առաջի տարածանէին, զի զանապական եւ զառաջինն ընկալցին զգեստ։

Եւ այն, զի ասէին «Սաստեա աշակերտացդ» եւ «Թէ դո՛ւք լոնսցեն, քարինդ աղաղակեսցեն»¹⁰⁸։ Քար անպտղութիւն ունի, այսպէս հեթանոսք քարացեալք անպտղէք էին յաստուածպաշտութեան արգասեօց, եւ հանդերձեալ էին քարզութեամբ առաքելոցն՝ պտղաբերիլ Աստուծոյ, որպէս Նիկողիմոս եւ Գամաղիէլ եւ Պաւղոս։ «Եթէ մանկտիդ» լոնսցեն»՝ Պետրոս «Վէմն» աղաղակէ այլով առաքելովքն զԱստուածութիւն Որդւոյ¹⁰⁹։

Իսկ կանոն աւուրս իրամայէ ի մատրանն կատարել զայսր աւուր խորհուրդ, զի աւրինակ է նա արքայութեան եւ դուռն վերին քաղաքին։ Վասն որոյ ամենայն ինչ կատարեցաւ ի մարդանայն Աստուծոյ՝ գրեալքն ի մարգարէիցն։ Եւ զի աստ յանգեցաւ մարգարէութիւն՝ ընդէր ի յորեմիաքթուն կարգեցաւ ընթերցուած մինչ ի Սիոն կանոնեալ էր կարգն։ Վասնզի աւետիք մարգարէիցն նախ ի Սիոն քարոզեցաւ, զոր լոնալ սգաւորին Սիոնի հինգ աւուրք յառաջ պատրաստի հինգ զգալութեամբ, եւ այնպէս ընդառաջ ելանէ քազաւորին։

Եւ ելանելն ի լեռնոն եւ զաւրեան երգել սաղմոս. «Լերինք ցնծասցեն առաջի Տեառն»¹¹⁰, զի եկն նախ դատել զսատանա՝ եւ ջնջել զմեղս, եւ յերկրորդ գալստեանն դատի գնա եւ զաշխարհասէր մարդիկ արդարութեամբ, այսինքն՝ ըստ իւրաքանչիւր գործոց, եւ զժողովուրդն անհաւան՝ ուղեղ իրաւամբք։ Եւ Պաւղոս տղայն յառաքեալսն ձերունական հանճարով ռստուցանէ մանկանց եկեղեցւոյ առ Հայր վերադարձեալ աւրեւութիւն ասելով. Աւրեւեալ է Աստուած, որ արժանի

¹⁰⁶ Աղմ. ԵԱ. 13:

¹⁰⁷ Հմմտ. Եսայի 2 3:

¹⁰⁸ Ղկ. ԺԹ. 39-40:

¹⁰⁹ Հմմտ. Մար. ԺԶ 18:

¹¹⁰ Աղմ. ՂԼ 8:

արար գմեզ ծննդեամբ աւագանին որդիս լինել ինքեան^{111*}։ Նաեւ ի տասներորդ ժամուսն ըմդառաջ եղանելն խաչիւ և ժամահարաւ ընդառաջ վերանալ Նմա սրբոցն նշանակէ։ Իսկ ռստոցն զատուցմունքն զգործոցն ցուցանէ զանագանութիւն. ծերքն զպարարառ առաքինութիւն եւ լուսաւոր իմաստութիւնս մատուցանեն ընծայս, եւ տղայքն վասն նորա փթիթ եւ աճապական ի հիւանդութենէ մահու յարութեամբ հղեալ զբարի գործս ընծանեն։ Իսկ անդրէն դարձսն զխաչակրաւսն ընդ ինքեան առնուլ փրկչին նշանակէ, զոր ի դրուսն տան ի վերին առագաստին։ Իսկ Սաղմոսն, զի գուէ կցուդդիւն. «Աւրինեալ եկեալ անուամբ Տեառն, արինեալ, որ գալոցդ ես»^{112*}։ Գառաջինն եւ զերկրորդն հաստատէ գալուստ։ Եւ արինութեամբն մտանել յեկեղեցին զարդարոցն ընդ Պրիստոսի յարայութիւն մտանելն նշանակէ։ Եւ ի վերայ բեմին զԱւտարանն ընթեռնուլ զՆորա վարդապետելն եւ մեր ուսանելն ցուցանէ, զոր այժմ արինակաւ տեսանեմք, իսկ յայնժամ զփառսն Տեառն տեսանելով ի նոյն նորոգիմք պատկեր ի փառաց բարձրացեալ ի նոյն ինքն ի Պրիստոս Յիսուս ի Տէր մեր, Որ է արինեալ յարիտեանս²⁵²։

ՏԱՐԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

1. Ե զմեծասանչ։ 2. Ե զտիեզերածագ ծագումն։ 3. ԱԵ սգալի։ 4. Ա արածս։ 5. Ե առնել ասէ։ 6. Ա երկինք։ 7. Ե Եւ արդ *փխ*, որ։ 8. Ե Մերձակա *փխ*, Մերձ ապա։ 9. Ա յիք Տեառն։ 10. Ա զապացոյց *փխ*, զտարացոյց։ 11. Ա զանդաստանս։ 12. Ա զբայս։ 13. Ա *չիք* իբրեւ։ 14. Ե Աստուած մարդացեալն։ 15. Ա մարդեղութենէ։ 16. Ե հաստատիլ բանից։ 17. Ե մարդեղութենէ։ 18. Ե այլ։ 19. Ե այնորիկ։ 20. Ա *չիք* եր բանն... Աստուած։ 21. Ա ժամն *փխ*, պտեն։ 22. Ա զան։ 23. Ե Տէր թէ։ 24. Ա *չիք* ի։ 25. Ա ժողովուրդ։ 26. Ա ասէ *փխ*, ցուցանէ։ 27. Ե զայլոցն։ 28. Ե *չիք* աւտարանչացն։ 29. Ե սչարեալ։ 30. Ե իբրեւ։ 31. Ե մեղաւ արտացեալ։ 32. Ե է ասէ։ 33. Ե ժամ, ասէ։ 34. Ե լիցի։ 35. Ե զեզ սպանանել։ 36. Ե ասէր։ 37. Ա *չիք* եւ Աղամ։ 38. Ա *չիք* ասէ Յիսուս։ 39. Ե *չիք* ասէ։ 40. Ե *չիք* ի։ 41. Ա զձայն։ 42. Ա *չիք* միայն։ 43. Ա *չիք* առ հասարակ։ 44. Ե ասացն։ 45. Ե հռոմֆ։ 46. Ե յարոյցն։ 47. Ե *չիք* ասէ։ 48. Ա նախապատուի։ 49. Ա *չիք* անգամ։ 50. Ե *փխ*, եկն։ 51-52. Ե կենագործեաց զՂազար յաւուր շաբաթու ի վեցերորդ ժամու *փխ*, ի վեցերորդ... զՂազար։ 53. Ե *չիք* յարինակ Աղամայ։ 54. Ե կենագործիլ։ 55. *չիք* էր։ 56. Ա զաւակ։ 57-58. Ե վասն յարութեան Ղազարու ասացաւ ի մէջ *փխ*, ասացաւ... Ղազարու։ 59. Ե *չիք* ի խորհուրդ տաւնիս։ 60. Ա Նրուսաղէմու։ 61. Ե Քվակ։ 62. Ե անուանեն։ 63. Ա մեքեմաիւ։ 64. Ա պղծի։ 65. Ե արտաք արտաք։ 66. Ա *չիք* իսկ։ 67. Ա *չիք* Սրբայ։ 68. Ե երկաթիք։ 69. Ե զերիքով *փխ*, զնա։ 70. Ե որպէս *փխ*, զի։ 72. Ե Շրաւար։ 73. Ա գալուստին։ 74. Ե այսր։ 75. Ե յերիքով։ Եւ զան, ասէ, յերիքով։ 76. Ե ելանելն։ 77. Ա աշակերտն։ 78. Ա *չիք* ասէ։ 79. Ա ժողովուրդ։ 80. Ա *չիք* ի։ 81. Ա տաւնի։ 82. Ա ամենեման։ 83. Ե ժողովուրդաւ։ 84. Ե նորա ի մեռելոց։ 85. Ա *չիք* կայր։ 86. Ե *չիք* իսկ։ 87. Ե նշանակէ (*ի լուսանցս*)։ 88. Ա *չիք* եւս։ 89. Ե եւ ի։ 90-91. Ա *չիք* ճանապարհն... որպէս։ 92. Ա *չիք* իւր։ 93. Ե հեթանոսաց։ 94. Ա *չիք* քեզ։ 95. Ա հեթանոսաց։ 96. Ա *չիք* ի ժառանգութիւն։ 97. Ե Ողորմութիւն։ 98.

111* Հմմտ. Տիտ. Գ 4-7։

112* Մտք. ԻԳ 39, Աղմ. ՃԺԸ 28։

A առաւել: 99. A սաստեին: 100. A լինին: 101. B դրդեսցի: 102. A
 համարձակութիւն: 103. A գիտալել ամենայն *փիւ*. զի երեսուն ամ: 104. B էր
 տվոր: 105. A *չիք* նոցա: 106. B *չիք* եւ: 107. A *չիք* կոյրքն. որ բժշկեցան: 108. B
 գեհա նորա գնացին: B գնացին մինչեւ ցնրուաղէմ, որ թարգմանի Խաղաղութիւն:
 109. A *չիք* եւ ամենայն: 110. A պաշտանեայս: 111. A *չիք* իմ եղիցի: 112. AB
 Բարտիմէոս: 113. A Նշանակելի է *փիւ*. Նշանակէ: 114. B *չիք* զի «Բար»...
 մարմին: 115. - 116. B *չիք* միով ... բաղկացեալ: 117. B բաղկացեալ. զի «Բար»
 եղցի եւ «Տիմէոս»՝ մարմին: 118. A ելանել: 119. B իւրով: 120. A
 Աստուածութեան: 121. A Աստուածութիւն: 122. A կարել: 123. A նազովացի: 124.
 B է *փիւ*. անց (Մրկ. Ժ 47): 125. B Տէր Յիսուս: 126. B ողորմեայ: 127. B ինձ *փիւ*.
 մեզ: 128. A նախ ժամանեաց: 129. B ընկեցեալ ասէ: 130. B թեթեւացաւ ասէ: 131.
 B բաշկոնակ: 132. B լեալ: 133. A *չիք* Աստուածութեան: 134. A *չիք* ծանրարեոյն:
 135. A *չիք* եւ: 136. B գնայր: 137. B զիւր: 138. B շինել *փիւ*. լինել: 139. B
 Բրիստոս: «Մաւա եղեն, ասէ, յնրուաղէմ»: 140. A յայն: 141. B թիւեալ: 142. B
 փրկեցելոց: 143. A զԱրահամ: 144. B տուեալ՝ *փիւ*. առեալ: 145. B այնորիկ: 146.
 B խորհուրդ: 147. B աշխարհս *փիւ*. աչս: 148. B որ ողորմութեամբ Աստուծոյ եղիւ
փիւ. ողորմութեամբն... եղեալ: 149. A Աստուածութեան *փիւ*. մեծութեան: 150. A
չիք Պետրոսի: 151. A պատուէ: 152. B *չիք* ձեր կան: 153. A գեղ: 154. A *չիք* ասէ:
 155. B առաջի կա այսուհետեւ: 156-157. A *չիք* ամենեւին... եւ ոչ: 158. B *չիք*
 կատարած աշխարհի: 159. A *չիք* ի մէջ գայլոց: 160. A *չիք* եւ: 166. B արտաքի ի:
 167. B էր: 168. B կամացն նոցա: 169. B կամսն: 170. B մոլեալ եւ: 171. B *չիք* էին:
 172. A կայեցին: 173. B հեթանոս *փիւ*. մեղաւոր: 174. B մարգարէից
 կռապաշտութեամբ կայեալ: 175. A լուծեմ ասէ: 176. B *չիք* եւ: 177. B եւ քանզի:
 178. A հաւանեալ: 179. B գայր: 180. B ախտից: 181. B *չիք* Տէր: 182. A *չիք* ի
 կապարանէն: 183. B յովանակին (*միշտ այսպէս*): 184. B *չիք* եւ: 185. B ասացն:
 186. B կամ թէ վասնզի: 187. B եւ կամ: 188. B *չիք* թէ: 189. A *չիք* եւ: 190. B
երկուցեալ: 191. B *չիք* Աստուծոյ... տեսչութիւն: 192. A *չիք* եւ: 193-194. A *չիք*
 Միւս... ասէ: 195. A *չիք* յայտ է թէ: 196. B Որպէս եւ *փիւ*. Զի: 197. B մարգարէիւն:
 198. A *չիք* մերձ եղիւ: 199. B նստէր: 200. AB յովանակ: 201. B ի երէից եւ ի
 հեթանոսաց: 202. B սրբեցին: 203. A *չիք* ասէ: 204. B գարութեան: 205. B զի եւ:
 206. B սգոն: 207. B իմեմէն առ: 208. A առաջնորդեալ: 209. A գարութիւն: 210.
 A զանդուզն: 211-212. B մանաւանդ առաջնորդաց եկեղեցւոյ եւ վարդապետաց եւ
 քահանայից. կրօնաւորաց՝ տալով զինքն արիւնակ *փիւ*. զինքն... կրօնաւորաց:
 213. B սգեցեալ *փիւ*. ազուցեալ: 214. B որպէսզի: 215. B ազահութեան: 216. B
 զայսպիսի: 217. B կամ վասն: 218. B որպէսզի եւ: 219. B կործանեցի եւ այս է
 ասելն. «Ածին զէշն եւ զյովանակն եւ նստաւ ի վերայ»: 220. A *չիք* ասէ: 221. A *չիք*
 նմա: 222. A Այլ *փիւ*. Բայց քանզի: 223. B տարածանէին: 224. A ընթացի: 225. A
 առակս երկրի: 226. B Աստուծոյ *փիւ*. Տեսն: 227. B մերկացին: 228. A *չիք* ի
 նոսա: 229. B արկանէին զհաւապարհի *փիւ*. տարածանէին ի հաւապարհի: 230. A
 ծառոց: 231. A *չիք* կոխան: 232. B *չիք* այժմ: 233. B պնդելով ուստով եւ տեքուեալ
 ձիթենաւ: 234. B *չիք* եւ: 235. A սպասաւորութիւն: 236. A վարդապետութիւն:
 237. A *չիք* բերանոյ իմոյ: 238. A *չիք* աղաղակէին եւ ասէին: 239. A *չիք* եւ: 240. B
չիք եւ: 241. B ծայրեպետ: 242. B *չիք* Ովանան: 243. B եւ որքան: 244. B
 սխանչեալ *փիւ*. գարութեան: 245. B *չիք* ճշմարիտ եւ: 246. A *չիք* յարմատոյն
 ճիւղեալ: 247. B ասին: 248. A *չիք* եւ: 249. A *չիք* Աստուծոյ: 250. A Արար: 251-

252. Եւ այս է ասելն. «Խաղաղութիւն յերկինս եւ փառք ի բարձունս»: Այլն զոր Մաթեոս աւետարանիչ ի տեղոյչ այս յաւելու. չէ պարտ վայրասլար համարել, զի ասէ. «Այս ամենայն եղեւ, զի լցցի բան մարգարէիմ, որ ասէ. Ասացէ՛ք դատոր Սիւնի. Ահա թագաւոր քո գա հեզ եւ հեծնալ յէշ եւ յաւանակ» (ԻԱ 4-5): Եւ թէ՛ «Ուրախ լիք յոյժ, դուստր Սիւնի եւ խնդա» (Ջաֆ. Բ 10): Սիւն ամրոց էր ի Հրեաստանի, զոր Յերուս կոչէին, որ է Երուսաղէմ: Եւ կամեցաւ Դաւիթ առնուլ զնա: Եւ արգելուին զնա արք տեղւոյն. զի մի թագաւորանիստ լիցի Երուսաղէմ: Իսկ Դաւիթ պատերազմաւ առնայր զնա, եւ շինեաց քաղաք թագաւորութեան իւրոյ. եւ անդ եղ զտապանակն եւ զխորանն, վասնզի անդ եւ տաճարն շինեցաւ ի Սողոմոնէ եւ պաշտանն քանանայութեանն: Եւ անդ ելանէր ամենայն Իսրաէլ՝ պաշտել զՏէր: Անդ զեղայր գառն զատկին, որ արինակ էր Քրիստոսի եւ ամենայն արեւելք եւ մարգաւէ եւ արինակք, որ վասն Քրիստոսի գալստեանն նկարագրեցան, անդ պատմէին, ըստ այնմ թէ՛ «Ի Սիւնէ ելցեն արեւելք եւ բան Տեառն՝ յԵրուսաղէմ» (Ես. Բ 3): Վասն այսորիկ եւմարգարէին յառաջ ժամանակաւ աւետիս մատուցանէր Երուսաղէմի՝ պատրաստել զինքն ընդունարան որդւոյն Դաւթի: «Ուրախ լիք, ասէ, եւ խնդա, զի Աստուածն յաւիտեանից եւ Միածինն Հաւր խոնարհեալ մարդացեալ եւ որդի Դաւթի եղեալ գա խոնարհութեամբ ի քաղաքդ. «Ահա թագաւոր քո գա հեզ, ասէ, հեծնալ յէշ եւ յաւանակ»: Ոչ իրքեւ զայնս, որք ի Դաւթա եւ այսր թագաւորեցին ի վերայ քո թոնութեամբ եւ զրկանաւ եւ սպանութեամբ՝ հպարտութեամբ յաւրանալով ի ձիս եւ ի ջորիս ի կառս եւ յիրիվարս, այլ հեզ եւ խոնարհ այնքան մինչ զի եւ յիշու նստեալ գա ի հեզ՝ առ ի յիրիվարս, այլ հեզ եւ խոնարհ այնքան մինչ զի եւ յիշու նստեալ գա ի հեզ՝ առ ի լնուլ զմարգարէութիւնն: «Աղաղակեա, ասէ, դուստր Երուսաղէմի», զի լուծան կապանք բերանոյ քո: Եւ ահաւասիկ հասեալ է ժամանակ ուրախութեան քո: Քարոզեա, Երուսաղէմ զուրախութիւն քո եւ զուրբնացիր սրտիւ րեւրկեալ: Ջարթիր, զարթիր Երուսաղէմ, եւ զարթո զմանկունս Քո յարեմաքանութիւն եւ լուսաւորեա Երուսաղէմ: Բաց զայս քո եւ տես զեկեալ փրկութիւնն քո, որ որդիարար նորոգեալ եկեալ է զԱթո թագաւորութեանն Դաւթի հաւր իւրոյ: Եւ վասնզի այս ամենայն եւ եւս բազում արինակաւ ի Սիւն եւ Երուսաղէմ կատարեցաւ յառաջագոյն, յիւրախ աւետաւորէին մարգարէին՝ զուրբնալ դստեր Սիւնի, յիւրախ եւ Տէրն եւս նմա կատարեր. զամենայն փրկագործութեանցն խորհուրդ. զհառանաւրեա գալուստն ի տաճարն զայսր աւուր յաւանականմ գալուստ, զխաչն, զթաղումն, զյարութիւնն, զհամարանալն, զՀոգւոյն իջանիւն: Եւ որ մեծն է պարգեւ, զոր ետ եկեղեցւոյ սրբոյ՝ զմարմինն եւ զարիւնն Իւր սուրբ ի Սիւն աւանդեաց եւ անոի առաքեաց զառաքեալսն՝ փչելով ի նոսա Հոգի Սուրբ: Իսկ «դուստր Սիւնի» Երուսաղէմ կոչէ, որ է քաղաք ծննդական, ուստի Յովսէփ որդի Դաւթի անուանեցաւ: Վասնզի անդ Քրիստոս զխաղաղութիւնն երկնաին ծննդաբաշխէր առաքելացն եւ նոքաւ՝ ամենայն տիեզերաց, որ է պտուղ եւ դուստր այսպիսի շնորհաց եկեղեցի: Զի ի Սիւնէ սկիզբն առ ծնունդ առաջինն որդեգրեալ զտիեզերս Հաւրն երկնաւորի: Վասն որոյ իրաւապէս աւետաւորէին մարգարէին՝ ուրախանալ դստեր Սիւնի՝ ասելով. «Ահա թագաւոր քո գա հեզ», ըստ այնմ՝ «Մի պակասեսցէ իշխան Յուդա, եւ մի պետ յերանաց նորա մինչեւ եկեսցէ այն, որ իւրն է թագաւորութիւն, եւ նա է ակնկալութիւն հեթանոսաց» (Մենդ. Խթ 10):

Արդարեւ, Փրկիչ, զի պնդեցաւ Նա ի վերայ բանին ճշմարտութեան եւ ոչ էհատ գոյս մեղաւորաց. եւ փրկեաց զարարածս ի ծառայութենէ եւ ի դիւացն խարեւորեանց:

«Հեզ է»։ այլ խորտակեցե՛ղ զկառս յնփրեմայ եւ զերիվարս յերուսաղէմէ եւ զաղեղն պաաերազմողին։ Սոքա ամենեքեան յայանեն զամբարձեալ թագաւորութիւնն սատանայի, զոր խորտակեաց Յիսուս թագաւորն մեր էշով մտեալ յերուսաղէմ։

«Եւ տեսեալ զհաղաքն, ելաց ի վերայ նորա եւ ասէ. Թէ գիտէի՞ր դու զժամանակն քո» (Ղուկ. ԺԹ 41)։ Զի զոր հանդերձեալ էր յետո ժամանակի անցանել ընդ նոսա վասն անհաւատութեանն նոցա ի նմանէ զամենայն տեսներ ամենագետն։ «Ելաց», ասէ՝ յայտ արարեալ այնու, թէ ոչ եմ, ասէ, կամակից կորստեան քո, այլ եւ ցաւիմ եւս եւ արտասուեմ։ Բայց զի չարիքն քո հարկեն զայն ամենայն ածել ի վերայ քո, եւ զի մարգարէիցն լցցի բան, զոր վասն Իմ ելադագս քո ասացին, թէ՛ «Եղիցին դիակումք նոցա, որպէս աղբ զնանապարհ այն» (Նս. Ե 25), եւ թէ՛ «Բագում եղին դիակումք նոցա վասն սովոյ հացի եւ ծարաւոյ ջրոյ» (Նս. Ե 13)՝ ի լնուլ ձորոյն Կեդրոնի դիակամբք անթաղ մեռելոցն։ Արդ զայս տեսեալ զապականութիւն շարժեցաւ խնամք արարչական եւ ախտակրութիւն եղբայրական եւ սկսաւ լալ զթշնամութիւն ապախտաւորացն։ Վասն որոյ եւ ասէ. «Ի քէն այժմ ծածկեցաւ այն ամենայն, զի պաշարեցսն զքեզ եւ նեղեցսն եւ յատակեցսն զքեզ եւ ոչ թողուցուն քար ի քարի վերա յամենայնի քեզ փոխանակ, զի ոչ ծանեար զժամանակ այցելութեան քո» (Ղուկ. ԺԹ 43-44), այլ մատնիչ եւ սպանող գտար կենդարարին քո։

«Եւ հմուտ Յիսուս ի տանարն՝ ասէ, եւ հանցաւ շուրջ» (Ղուկ. ԺԹ 45)։ Այլ աւետարանիչն, զոր ինչ գործեաց ի տանարին լինով պատմեն, զորս չէ արժան մեզ թողուլ, այլ մասամբ ինչ զմիտս բանին ցուցանել, զի մտեալ տանարն վրեժխնդիր լինի աւրինացն, որում նոքա համբաւէին քամբասելով զնա լուծիչ լինել, եւ ինքեանք առ ուն հարկանէին։ Վասնզի գտանարն զայն, որում այնքան էր ահն, զի անսուրբ ոք ոչ իշխէր մերձեալ յորմս տանն, նոքա տեղի արարին վաճառի եւ աւագակարէն զլանալոյ։ Արդ, յանդիմանէ զնոցա վատթարութիւնն ի սկզբան անդ եւ ի կատարածին, զի գտեղին աղաւթից եւ պատարագաց արարին տեղի խարեութեան եւ նենգութեան։ Եւ լի ցասմամբ հայեցեալ ի նոսա, սաստեաց խարագանաւ արտաքս հանեալ զվաճառականսն ասելով. «Զրեալ է. Տուն իմ, տուն է աղաւթից, եւ դուք արարեք զսա այրս աւագակաց» (Մաղմ. ԿԸ 10)։ Այլ եւ այնու, զի զսեղանսն կործանեաց առ ի զուշակել նոցա զխափանումն գոնիցն եւ անգամ եւ երկիցս զնայն արար եւ նոքա ի նոյն վաճառաշահութեան կային, եւ հակառակ Աստուծոյ կարծէին զասացեսպսն առ ի նմանէ։

Իսկ Տէրն բժշկելով զկաղս եւ զկայրսն, որ մատեան առ նա, ի տանարին ցուցանէր նոցա զաստուածական զարութիւնն, զի գոնեալ յայնմանէ իմանայցեն եւ ի միտս եկեցսն նմաչել զմա։ Բայց սակայն նոքա չանսային, այլ եւս առաւել ըմբոստանային եւ ընդդիմանային, յորժամ ի մանկտոյն եւս լսէին զփառաբանութիւնն ի՞նչ սեր եկեալ հեղձնութիւն եւ ոչ համարձակէին ընդդէմ կալ հրամանին վասն բազմութեանն, որ աւրեցէին զեկեալ թագաւորութիւնն։ Ուստի եւ մանկուցն ստիճողայք ի գիրկս մարցն աղաղակէին։ «Ովսաննա, աւրեցեալ եկեալ յանուն Տեառն» (Մրկ. ԺԱ 9)։ Զէն ընդդատ այս սքանչելիք յայնմանէ, որ ասացն. «Թէ դոքա լոնսցեն, քարինք աղաղակեցեն» (Ղուկ. ԺԹ 41)։ Զի ահաւասիկ, ի լոն աշակերտացն՝ բացան անխաւս քերամք մանկանցն, եւ որ ոչ ունէին բան ընդ հրեղէն զաւրացն երգէին աւրեցութիւն, որ եւ առժամ ի մանկունսն կատարեցաւ սասցեալն, թէ՛ «քարինք աղաղակեցեն», զի անբան էին իբրեւ զբար։ Բայց

գաղափարները գործնականորեն հեռացնուց, որ կարկամեալ էին իբրեւ գաղափարներ հեռացնուց, եւ եղեն ռոպորտաժիստական եւ փառաբանիչ Աստուծոյ: Եւ արդեամբ գկատարումն էաւ ի յարոթեանն Քրիստոսի: Ի փախչել աշակերտացն եւ ի լոյս քաջաւ կնքեալ գերեզմանն եւ պատառեցան վե՛րք ի սաստիկ շարժմանէ երկրի, եւ աղաղակէին մեծածայն հնչմամբ՝ Աստուած փառեցեալ զյարուցեալն ի մեռելոց, զոր նկարէին այսաւր դեռածին մանկունքն՝ արեւմտեանեղով Տէր: Վասն որոյ զչարեալ ֆախեցաւ արեւմտեանն: «Զլսե՛ս զի՛նչ ասեն դո՛ք»: Բայց զայս ի դէպ էր Քրիստոսի առ նոսա, թէ ո՛չ լսէք, զի անխաւս մանկունքն խաւսին զինէն քանս արեւմտեանն եւ վասն այսորիկ ձեզ պարտ է հաւատալ ինձ: Այլ զի նա ոչ ինչ յարգել կամեցաւ զանձն տանու, նոքա յայլ միտս ձեռնալ կամելով զքանս մանկանցն ասեն. Զլսե՛ս՝ զինչ ասեն դո՛ք: Զոր եթէ հարցեալ էր Տէրն, թէ՛ զի՛նչ՝ կարծեմ ասէին նոքա, թէ՛ «Դու զանձն քո Աստուած եւ Որդի Աստուծոյ ասես», եւ դո՛ք, որ զորեքամբն Աստուծոյ խաւսեցան այժմ, զքեզ մարդ եւ որդի մարդոյ եամբաւեն՝ ասելով՝ «Արեւմտեանն որդւոյ Դաւթի», քանզի եւ Դաւիթ մարդ էր: Վասն որոյ եւ Տէրն իմացեալ զմիտս նոքա, զի չարախաւսեալ զմանկունսն հանդերձեալ էին, անդէն եւ անդ ի Դաւթայ մարգարէութեանցն յարգէ զքանս մանկանցն՝ ասելով առ նոսա. «Եւ ձեր, ասէ, չիցէ՛ ընթերցեալ, զոր գրեացն Դաւիթ, թէ ի քերամոյ մանկանց տղայոց, որ դեռես ի ստինս մարցն կայցեն, կատարեսցին արեւմտեանն» (Մտք. ԻԱ 16), զոր լսեալ լոցին եւ կարկեցին ամենեքին: Այլեւ այս լինէր ի հաւատ եւ ի ֆաշախոս առաքելոցն, որոց քաջամ հոգ առաջի կայր, թէ զիա՛րդ իցեն կարող առանց դպրութեան հաւանեցաւանել զիմաստունս եւ զդպիրս կամ զքիրտս եւ յանդուգն քարս հեռացնուց: Ուստի ֆաշախոս ի միտ առին, թէ սա, որ ետանս գործեաց զնոր յաւանակն եւ գտեարս նորա եւ երաց զերանս, արդ, ի ձեռնալ մանկանցս յարեւմտեանութիւն ինքեան ունի նա նովին զարութեամբ քանալ զերանս մեր՝ փառեցել եւ ուսուցանել եւ ըմբերանել զկարծեցեալ իմաստունս հեռացնուց: Յառաջ քան զձեռնոր նորա, խաղաց մանուկն Յովաննէն յորովայնի մաւր ընդառաջ նորա (Ղուկ. Ա 41), եւ յետ ձեռնոր նորա կատարեցան մանկունքն անմեղք (Մտք. Բ 16): Յառաջ քան զմահ նորա խաղացին ցնծալով մանկունքն, այսաւր արեւմտեանեղով զնա, եւ յետ յարութեան նորա մանկացան աւագանաւն հրէայք, եւ հեռացնուց ետաւտացեալք եւ եղեն վկայք Աստուածութեան նորա եւ ողկոյզք հարսանեաց նորա:

Իսկ ասելն, թէ «Դորդեցաւ ֆաղափն ամենայն» (Մտք. ԻԱ 10), որպէս եւ ի ձեռնոր նորա՝ Հերովոդես եւ Երուսաղէմ ընդ նմա: Այսպէս եւ մերձ ի մահն, զոր հանդերձեալ էին սպանանել եւ քառնալ, իբրեւ տեսին փառաւորեալ եւ քարեքանեալ մանուկն ի մանկանցն: Ապա չարեալ դորդեցաւ ֆաղափն եւ ֆախեցաւ արեւմտեանն՝ դպրաւն եւ փառիսեցաւն: Վասն այնորիկ թողու զնոսա եւ գնա, զի փոքր մի ոգի առնուցուն յախտէն եւ չկամի սկիզբն առնել վարդապետութեան, զի մի բորբոքեալ ի նախանձուէն, եւս առաւել ընդ երկես էր, դառնա ի Բեթանիա ի տուն հանգստան իւրոյ, յորում ելոյժ զմահ եւ քաղաւորեցոյց զկեանս աստուածաբար *փխ*. Արդ ... յաւիտեան:

ՅՐԱՆՑԻՍԿՈՍ ԴԵ ՍԱԼԻ
(1567-1622)

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԱՐԵՊԱՇՏ ԿՅԱՆՔԻ

ՄԱՍ Բ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ԱՂՈԹՔԸ ՂՐՊԵՍ ԱՍՏԾՈՒՆ ՄԵՐՉԵՆԱԼՈՒ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՉԼՈՒՆ Ա

Խոկման և աղոթքի անհրաժեշտությունը

Աստվածապաշտական խոկումները պայծառացնում են մեր միտքը, իսկ կամքը՝ մղում դեպի երկնային Անը: Ուրիշ ոչինչ չլինի, չի հստակեցնում մեր միտքը տգիտությունից, իսկ կամքը՝ անիմաստ կապվածություններից: Դա այն սուրբ քուրմն է, որի շիթերի ներքո սկսում են նորից կանաչել մեր բարի իղձերի շուղերը, հոգին մաքրվում է իր անկատարությունից, իսկ միտքը՝ կրքերից:

Խորհուրդ եմ տալիս քեզ հատկապես խոկալ մեր Տեր Հիսուս Քրիստոսի կյանքի և կրած չարչարանքների մասին: Որքան հաճախ էր մասին մտածես, այնքան ավելի հոգիդ կլցվի Իրենով և դու կսովորես մանավել Իրեն: Նա է աշխարհի լույսը (Հովհ. 8. 12): Նրանում, Նիանով և Նրա համար մենք պիտի լուսավորվենք և կրթվենք: Նա է Կենաց Ծառը (Երզ. 2. 2), որին ձգտում ենք մենք և որի հովանու տակ հանգիստ գտնում: Նա է Հակոբի աղբյուրը (Հովհ. 4. 6), որի քուրդ լվանում է մեր բոլոր մեղքերը: Երեխաները խոսել են սովորում՝ լսելով մոր խոսքը, և փորձում են թոթովել ի պատասխան: Մենք ևա, երբ մտքով մերժ ենք Տիրոջը և ուշադիր չենք մնում ենք Իր խոսքերը, վարմունքը և զգացմունքները, Իր շնորհի ներգործությամբ սովորում ենք խոսել, գործել և ապրել Իր նման:

Հավատա՛ ինձ: Ժաբեկա՛մս, միայն այդ դուռն է (Հովհ. 14. 6), որ տանում է մեզ Հայր Աստուծո մոտ: Ինչպես հայելին, եթե ամրացված չլիներ կապարի վրա, ընդունակ չէր լինի արտացոլելու, նույնպես և Աստվածությունն անմատչելի կլիներ մեզ այստեղ՝ երկրի վրա, եթե միացած չլիներ Փրկչի տրագործված մարդեղությանը: Այդ իսկ պատճառով Նրա կյանքը, չարչարանքն ու մահը հանդիսանում են մեր խոկումների ամենաանհրաժեշտ, մոտիկ, կենսական նյութը: Իզուր չէ մեր Փրկիչը կոչվում «երկնքից իջած Հաց» (Հովհ. 6. 41-57): Ինչպես հացը մշտապես ներկա է մեր սեղանին, այնպես էլ Փրկիչը պիտի ներկա լինի մեր բոլոր գործերում և խորհրդածություններում: Ամենից շատ Աստուծո մասին պետք է խորհրդածել քնից արթնանալուն պես, երբ մեր ուղեղը դեռ թարմ է գիշերվա հանգստից հետո:

Եթե հմարավորություն կա, ապա այդ ժամանակն անցկացրու տաճարում, ուր քեզ ոչ ոք չի խանգարի և չի անհանգստացնի: Ամեն անգամ սկսիր Աստծուն դեմ հանդիման գտնվելու զգացողության հաստատումից: Անգբաղ մտքով կարդա «Հայր մեր» աղոթքը և «Հավատամքը»: Տերունական աղոթքը, և

առաքելական համագանակը ամենից լավ կլիցքավորեն հոգին մույնիսկ այն դեպքում, երբ ժամանակ չունենաս կարդալու բոլոր սահմանված աղոթքները:

Եթե որևէ մի պատճառով քեզ չհաջողվի առավոտյան գոնե մեկ ժամ հատկացնել աղոթքին, հետաձգիր ավելի ուշ ժամի, բայց ոչ ճաշից հետո: Կարող ես այդ խորհրդածությունները փոխարինել հոգևոր գրքի ըմբերցանությամբ, սակայն աշխատիր հաջորդ օրը սխալ ուղղել:

ԳԼՈՒԽ Բ

Ինչպես նախապատրաստվել այդ պարապմունքներին

Գուցե դու չես պատկերացնում, բարեկամս, թե ինչպես ձեռնամուխ լինել այդ գործին, որը մեր ժամանակներում քչերին է հայտնի: Նախքան համապատասխան գրվածքներին ծանոթանալը, ես հուշեմ քեզ մի կարճ և պարզ ձև: Ուզում եմ հրավիրել քո ուշադրությունը երկու պահի վրա. ա) անհրաժեշտ է գիտակցել, որ կանգնած ես Աստուծո ղիմաց, բ) օգնություն հայցել Աստծուց:

Առաջին խնդիրն իրականացնելու համար խորհուրդ եմ տալիս դիմել հետևյալ հիմնական միջոցներին. հիշիր, որ Աստված ամենուր է: Աստված ամեն տեղ է, աշխարհում գոյություն չունի այնպիսի մի վայր կամ երևույթ, ուր Աստված ներկա չլինի: Ինչպես թռչունը՝ ուր էլ որ թռչի, միշտ օդում կլինի, մենք մույնպես՝ որտեղ էլ լինենք, ուր էլ որ գնանք, միևնույն է, Աստված ամենուր ներկա է: Այս ճշմարտությունը հայտնի է բոլորին, բայց ոչ ոք լրջորեն չի անդրադառնում դրան: Կույրը կարող է չիմանալ իշխանի ներկայության մասին, բայց եթե զգուշացնեն նրան, ավելի զգաստ կլինի իր պահվածքի մեջ: Սակայն չի բացառվում, որ տեսնի, բայց շուտով մոռանա զգուշացումի մասին և պատշաճ հարգանքով չվերաբերվի ներկա գտնվողի հանդեպ: Ավաղ, բարեկամս, հաճախ մենք ոչ միայն չենք տեսնում իսկ զգում ամենազո Աստծուն, այլև մոռանում ենք հավատից բխող նախազգուշացումները: Մենք մոռացության ենք մատնում դրանք և ընդունում այնպիսի կեցվածք, ասես Աստված շատ հեռու է մեզանից: Սնշուշտ, մենք գիտենք, որ Աստված ներկա է ամենուր, բայց մոռանում ենք այդ և վարվում այնպես, ասես երբեք այդ մասին չենք իմացել: Ահա թե ինչու, նախքան նոր գործ սկսելը, պետք է լրջորեն մտորել սաղմոսերգուի հետևյալ տողերի շուրջ. «Եթե երկինք ելնեմ, այնտեղ ես դու, եթե դժոխք իջնեմ, դրան էլ մոտ ես» (Սաղմ. 138. 8):

Երբ Դավիթը տեսավ սրբազան սանդուղքը բացականչեց. «Սարսաղեցիկ է այս վայրը, Տերն այստեղ է, իսկ ես չգիտեի» (Օմ. 28. 17, 16): Նա ուզում է ասել, որ չմտածեց այդ մասին, թեև շատ լավ գիտեր, որ Աստված ամենուր է և ամեն ինչում:

Աղոթքի կանգնելիս ասա ինքդ քեզ. «Սիրտ իմ, Աստված իսկապես այստեղ է»: Առաջարկում եմ ևս մեկ միջոց, որը կօգնի Աստուծո ներկայությունը գիտակցելուն: Մտածիր, որ Աստված ոչ միայն ներկա է ամեն տեղ, ուր էլ գտնվես, այլ առավել ևս ներկա է քո սրտում, հոգուդ խորքում, իր ներկայությամբ կենդանություն և ոգեղինություն պարզելով նրան, Նա է սիրտը քո սրտի և հոգին քո հոգու: Ինչպես հոգին լցնում է մեր ամբողջ էությունը, բայց ամենից մոտ է գտնվում մեր սրտին, այնպես էլ Աստված ամեն բանի մեջ ներկա

լինելով հանդերձ, ամենից մոտ է մեր հոգուն: Պավիթն այդ նկատի ունի, երբ ասում է. «Իմ սրտի Աստված» (Սղ. 72, 26), նաև Պողոս առաքյալը. «Նրանով ապրում ենք և շարժվում ենք և կանք» (Գործք. 17, 28): Եթե նկատի առնենք այս, ապա շատ ավելի ուշադիր կլինենք ձեր սրտի նկատմամբ, որին այդքան անմիջականորեն մերձ է ինքը՝ Աստված: Երրորդ միջոցն է՝ մտածել, որ մեր փրկիչն իր «մարդեղությամբ» տեսնում է աշխարհում ապրող ամեն մի մարդու, հատկապես իր որդիներին՝ քրիստոնյաներին, և հատուկ ուշադրության արժանացնում նրանց, ովքեր զբաղված են աղոթքով: Սա միայն երևակայություն չէ, այլ հավաստի ճշմարտություն: Նա զննում է մեզ, երբ մենք նրան չենք տեսնում:

Զորորդ միջոցն է՝ պատկերացնել Փրկչին այնպիսին, որպիսին էր Նա իր երկրային կյանքում, ինչպես սովորաբար ասում ենք մեր ընկերների մասին. «Ես հստակ պատկերացնում եմ, թե նա ինչ է մտածում կամ անում»: Աբ. Սեղանի առջև կանգնած մենք անմիջականորեն գտնվում ենք Փրկչի ներկայության մեջ, Որը թաքնված է Աբ. Ընծաների մեջ, ասես վարագույրի ետևում: Սենք միշտ պիտի դիմենք այս բոլոր միջոցներին, որպեսզի չզրկվենք Աստուծո ներկայությունից:

ԳԼՈՒԽ Գ

Կոչ առ Աստված, որպես նախապատրաստության երկրորդ տարր

Եթե հոգիդ գիտակցորեն կանգնած է Աստուծո առջև, հասկանալով իր անարժանությունը, ապա համակվում է ակնածանքի խոր զգացումով և օգնություն հայցում Նրանից: Մտաքերիի սաղմոսերգուի խոսքերը. «Մի՛ մերժիր ինձ, Տե՛ր, քո երեսից, և Աբ. Գոգիդ մի՛ հանիր ինձնից (Սղմ. 50, 13)», «Երեսդ ցույց տուր քո ծառային, և քո արդարությունը սովորեցրու ինձ» (Սղ. 30, 17, 118, 135), «Իմաստուն դարձրու ինձ, որ քննեմ քո օրենքը և ամբողջ սրտովս պահպանեմ այն» (Սղմ. 118, 34), «Ես քո ծառան եմ, ինձ իմաստուն դարձրու, որ ճանաչեմ քո վկայությունները» (Սղմ. 118, 125):

ԳԼՈՒԽ Դ

Պատկերացումների կոնկրետացում՝ կապված խոկման այս կամ այն նյութի հետ (որպես նախապատրաստության երրորդ տարր)

Փրկչի չարչարանքների և մահվան մասին խորհրդածելիս, փորձիր հստակ պատկերացնել այդ վայրերը, որտեղ տեղի են ունեցել իրադարձությունները՝ համաձայն ավետարանիչների պատմածների: Աղոթքով հիշիր նրանց, ովքեր ներկա էին Գողգոթայում՝ Աստվածամորը, Դավիթանես առաքյալին, Մագդաղենացուն, հարյուրապետին, նրանք կհաղորդեն քեզ այդ պահերին ապրած իրենց զգացումները:

Ավելի վերացական հասկացությունների շուրջ խորհրդածելիս՝ նման կոնկրետացումն անհնարին է, ինչպես օրինակ, Աստուծո մեծության, տեսանելի աշխարհի անցողիկության, առաքինությունների կատարելության: Սակայն այս դեպքում նույնպես հնարավոր է հենվել կոնկրետ պատկերացումների, համաման օրինակների վրա: Դա անհրաժեշտ է մեր մտքի թափառումները

կանխելու համար, այդպես մենք թռչնակին տեղավորում ենք վանդակի մեջ՝ նրան ավելի լավ զննելու նպատակով, կամ բազմին կապում ենք, որ նա անշարժ մնալի վերևում: Գուցե առարկեն, որ բավական է հավատ ունենալ և զուտ հոգևոր պատկերացում նրա գաղտնիքների մասին, բայց նորահավատների համար այդ հնչում է շատ բարձր և խորիմաստ: Ես խորհուրդ եմ տալիս քեզ, աստվածասեր բարեկամ, մնալ ներքևում, դաշտավայրում, մինչև ինքը Աստված բարձրացնի քեզ ավելի վեր¹:

ԳԼՈՒԽ Ե

Խորհրդածության մեկ այլ երեսը

Հոգևոր նյութի շուրջ խորհրդածելիս մեր նպատակը ոչ թե գիտություն կամ ճարտարամտություն ձեռք բերելն է, այլ միայն առաքինություն և Աստվածային սիրո մեջ հաստատվելու ու գործնալու ունակություն:

Երբ միտքը և զգացումները կենտրոնացնում ես որոշակի առարկայի վրա, դու ի վիճակի ես լինում զննել, քննել այն քո հմարավորության ներածի չափով, ինչպես մեղուները չեն թողնում ծաղիկը մինչև չհավաքեն ամբողջ մեղրը: Միայն հիշիր, որ պետք է այդ անել հանդարտ, առանց շտապելու:

ԳԼՈՒԽ Զ

Խորհրդածության երրորդ փուլը

Ամեն խորհրդածություն խթանում է մեր կամքը՝ առաջացնելով որոշակի մղումներ, ձգտումներ և ցանկություններ. սեր Աստուծո և մերձավորի հանդեպ, Փրկչին նմանվելու փափագ, վախի զգացում՝ հանկարծ Աստծուն չվիրավորելու, ատելություն մեղքի նկատմամբ, վստահություն Աստուծո գթասրտությանը և շատ այլ մղումներ:

Այս վերացական զգացումներից և մղումներից անհրաժեշտ է հանգել անհատական ստույգ որոշումների, որոնք անմիջապես վերաբերում են քո կյանքին, քո անձը շտկելուն: Օր. խաչի վրա Տիրոջ արտասանած առաջին բառերը անշուշտ կմղեն քեզ ներքև և սիրելու թնամիներդ: Բայց սրանով բավարարվելը թիչ է, լավ է որոշակիորեն վճռել. «Ես այլևս չեմ նեղվելու իմ հարևանուհու կամ աշխատակցուհու խայթոցներից, կամ որոշակի անձանց արհամարհանլից վերաբերմունքից: Ես ամեն կերպ կաշխատեմ շահել նրանց բարյացակամությունը և այլն»: Այդ կերպ, քարեկամս, քեզ ավելի հեշտ կլինի ուղղել սխալներդ:

ԳԼՈՒԽ Է

Ամփոփում և հոգևոր ծաղկանոց

Շնորհակալություն հայտնիք Աստծուն քո մեջ ծագած բոլոր զգացումների և որոշումների համար: Խնդրիր, որ Աստված օրհնի քո բոլոր գործերն ու վճիռները

¹ Ի տարբերություն կաթոլիկ ավանդության, Ուղղափառ եկեղեցին զգուշացնում է դավանաբաններին և ժամավանդ երեսակալությանը մեծ տեղ չհատկացնել աղթքի ու խոկման ընթացքում, այլ աղթքն ու խորհրդածությունը կենտրոնացնել Աստուծո խոսքի վրա:

և գորացնի քեզ ի կատար ածելու դժանք: Աղոթիր եկեղեցու և նրա հովիվների, հարազատներիդ և ընկերներիդ համար, պարտադիր բոլոր հավատացյալների համար ասա «Չայր մեր» աղոթքը:

Ծաղկաշատ այգում զբոսնելիս միշտ ցանկություն է առաջանում քաղել գոնե մի քանի ծաղիկ՝ նրանց բուրմունքը մի ամբողջ օր վայելելու համար:

Հոգին նույնպես իր աղոթական մտորումների ավարտից հետո ուզում է ընտրել նրանցից երկուսը կամ երեքը, որոնք առավել մոտ ու հարազատ են իրեն, որպեսզի ամբողջ օրվա ընթացքում հոգեպես վայելի և պահի հիշողության մեջ: Սիա թե ինչ նկատի ունեմ, երբ ասում եմ հավաքել աստվածապաշտության մի փոքրիկ ծաղկեփունջ:

ԳԼՈՒԽ Ը

Անհրաժեշտ հավելումներ

Իմացիր, հատկապես կարևոր է, որ դու կյանքում բժախնդրորեն իրագործես այն բոլոր որոշումները, որոնց հանգել ես խորհրդածելիս: Սիա թե որոնք են խորհրդածության պտուղները: Հակառակ դեպքում խորհրդածությունները ոչ միայն անօգուտ են, այլև՝ վնասաբեր: Կյանքում չիրականացվող որոշումները միայն տկարացնում են հոգին, որովհետև մեզ թվում է, թե մենք այնպիսին ենք, ինչպես մտածեցինք և որոշեցինք: Այնինչ, եթե որոշումները ի կատար չեն ածվում, դառնում են փուչ ու վտանգավոր: Սիա թե ինչու, անպայմանորեն, անհրաժեշտ է որոշումները կյանքում իրագործել և մեծ ու փոքր պատրվակներ փնտրել նրանց իրականացման համար: Օր.՝ ես որոշեցի հեզությամբ վարվել ինձ վիրավորողների հետ, հետևաբար նույն օրը առիթ եմ փնտրում նրանց հանդիպելու և սիրալիք խղճումներ: Եթե՝ այդ հնարավորությունը չունեմ, ապա գոնե լավ արտահայտվեմ նրանց հասցեյին և աղոթեմ նրանց համար:

ԳԼՈՒԽ Թ

Մի քանի օգտակար խորհուրդներ խոկման վերաբերեալ

Աղոթքն ու խոկումն ավարտելուց հետո՝ աշխատի ցրվել մտքով, գոնե որոշ ժամանակ լռություն պահպանիր սրտումդ: Պատկերացրու, թե ինչ զգուշությամբ կքայլեիր, առանց այս ու այն կողմ նայելու, թանկարժեք հեղուկով լի մի անոթ տանելիս, որպեսզի ոչ մի կաթիլ չթափվեր: Անգամ եթե մեկին հանդիպես և պարտավորված լինես զրուցելու, իհարկե, առանձնակի խնամքով սրտումդ կպահպանես քո հավաքած աստվածապաշտության պտուղները:

Աղոթքից և խոկումից հետո պետք է սովորել հանդարտությամբ անցնել սովորական առօրեական գործերին և պարտականություններին: Այդ անցումը պիտի կատարվի խոնարհաբար և բարեպաշտորեն, քանի որ մեր պարտականություններին հետևելը նույնպես մտնում է Աստուծո կամքի մեջ:

Գուցե պարզվի, որ ամենևին էլ հակված չես խորհրդածելու, համապատասխան տրամադրություն չի ստեղծվում և սիրտդ մնում է չոր ու անտարբեր, այդ դեպքում ընդունիր քո անարժանությունը, օգնության կանչիր Աստծուն և սուրբերին, բայց ոչ մի դեպքում մի նահանջիր, Հակոբի պես ասա. «Թույլ չեմ տա, որ զնաս, մինչև ինձ չօրհնես» (ԾՆՆՊ. 32. 26), կամ քանաճաղի կնոջ պես.

«... շնորհ է կերակրվում են իրենց տիրոջ սեղանից ընկած փշրանքներով» (Մտթ. 15, 27): Զգացմունքների ջերմություն հաղորդող որևէ գիրք սկսիր կարդալ:

Եթե մեծակ ես, կարող ես ծունկի գալ, համբուրել խաչը: Եթե այսքանից հետո էլ սիրտդ չի ջերմանում, միևնույն է, մի շփոթվիր և շարունակիր գոնե արտաքին ապահպանել բարեպաշտությանը վայել վարքն ու գործերը: Զե որ պալատականները կարող են բազմիցս մտնել իրենց տիրակալի մոտ զրույցի ակնկալիքով, բայց չարժանանալ ուշադրության և բավարարվել միայն նրանով, որ վայելում են Նրա ներկայությունը, կատարում իրենց պարտքը և դրանով իսկ փաստում իրենց հավատարմությունը:

Իհարկե, մեծ ուրախություն է, եթե Աստված կամենա մեզ խրախուսել, մխիթարել և սուրբ ռզեշնչում պարգևել, բայց եթե չի կամենում և ասես չի էլ նկատում, միևնույն է, մենք չպիտի հեռանանք նրանից, այլ զինվենք խաղաղությամբ և համբերությամբ, վստահ լինենք, որ հաջորդ անգամ կմխիթարվենք: Սակայն, եթե նաև մյուս անգամ մեր սպասումները չարդարանան, բավարարվենք այն գիտակցությամբ, որ նրա կողքին գտնվելն արդեն իսկ մխիթարություն է մեզ համար:

ԳԼՈՒԽ Ժ

Առավոտյան օրհնություն

Առավոտյան շնորհակալություն հայտնիր Աստծուն՝ նախորդ գիշերվա ընթացքում քեզ պահպանելու համար: Ներում խնդրիր, եթե մեղանչել ես: Խորհիր, ինչպես լավագույնս օգտագործել այս օրը հավիտենականությանը պայքրաստվելու համար: Մտաբերիր, թե ինչ գործեր ունես անելու այդ օրը, ինչպիսի իրադրություններ կարող են ստեղծվել, և ինչպես կարելի է օգտագործել այդ ամենը Աստծուն ավելի լավ ծառայելու համար: Ինչպիսի գայթակղությունների կարող ես հանդիպել ենթադրվող իրավիճակներում, օր.՝ բարկության, հպարտության կամ որևէ այլ պատվիրազանցության: Նախապատրաստվիր լավագույն ձևով գործադրելու բոլոր միջոցները, որոնք կօգնեն քեզ Աստծուն ծառայելու և բարեպաշտության մեջ առաջադիմելու: Աշխատիր խուսափել, պայքարել և հաղթահարել այն ամենը, ինչ հակասում է փրկագործությանը և Աստուծո փառքին: Բավական չէ որոշում ընդունել, անհրաժեշտ է նախապատրաստել այն միջոցները, որոնք հնարավորություն կտան որոշումն իրագործելու: Այսպես օր.՝ եթե այսօր ծրագրված է հանդիպում բարկացկոտ և բռնկուն մարդու հետ, ապա ես կաշխատեմ ոչ միայն տեղիք չտալ նմանօրինակ զգացմունքների, այլև հեզությամբ կանխել նրա բարկության պոթքումները կամ գալ նրա մոտ այնպիսի մարդկանց ընկերակցությամբ, ում ներկայությունը կզսպի նրան: Եթե ես մտադիր եմ այցելել հիվանդի, ապա նախապես կքննեմ, թե ինչով կարող եմ օգտակար լինել կամ մխիթարել, կըմտրեմ այցելության հարմար ժամ և այլն: Խոնարհվիր Աստուծո առաջ՝ քաջ գիտակցելով, որ առանց Նրա օգնականության ընդունակ չես ոչ բարիք գործելու, ոչ էլ չարին տեղիք չտալու: Խնդրիր Աստծուն, որ ուսուցանի քեզ և օգնի ծառայել իրեն: Դիմիր Աստվածամորը, պահապան հրեշտակիդ և սուրբերին: Այս ամենը պետք է անել արագ և առույգ, մինչև սենյակից դուրս գալը: Օրվա բոլոր գործերդ կանցնեն Աստուծո օրհնության ներքև: Խնդրում եմ քեզ, երբեք չմոռանաս անել այդ, բարեկամս:

ԳԼՈՒԽ ԺԱ

Երեկոյան օրհնությունը և խղճմտանքի ըննությունը

Երեկոյան մի փոքր ժամանակ գտիր, գուցե ընթրիքից առաջ, և շնորհակալություն հայտնիր Աստծուն անցած օրվա համար, քեզ թուր վտանգներից պահպանելու համար: Վերհիշիր օրվա թուր գործերդ, զբաղմունքներդ, հանդիպումներդ: Եթե քեզ հաջողվել է որևէ բարի գործ կատարել, շնորհակալ եղիր Աստծու: Եթե, ընդհակառակը, որևէ չարիք ես գործել խոսքով, գործով, մտքով, ներում աղերսիր Աստծուց և առաջին իսկ հնարավորության դեպքում՝ փութա խոստովանել մեղքերդ:

Աստուծո կամքին համծնիր քեզ՝ մարմինդ և հոգիդ, քո հարազատներին և ընկերներին, եկեղեցին: Խնդիր Աստվածամորը, սուրբերին ու պահապան հրեշտակին բարեխոսել մեզ համար և Աստուծո օրհնությամբ գնա հանգստանալու:

Երբեք մի մոռացիր անել այդ, թե՛ առավոտյան, թե՛ երեկոյան, որովհետև առավոտյան աղոթքով դու բացում ես հոգուդ պատուհանները ճշմարտության Արեգակի առջև, իսկ երեկոյան աղոթքով փակում ես նրանց անդրշիրիմյան խավարի առջև:

ԳԼՈՒԽ ԺԲ

Պոզևոր առանձնութեան մասին

Այս գլխում մենք խոսելու ենք հոգևոր առաջընթացին նպաստող ամենահավաստի միջոցներից մեկի մասին: Օրվա ընթացքում աշխատի որքան հնարավոր է հաճախ անդդադառնալ այն բանին, որ գտնվում ես Աստուծո առջև, որ Աստված մեզ միշտ տեսնում է, հետևում՝ աննկարագրելի սիրով:

«Ո՛վ իմ Աստված, ինչո՞ւ եմ այդքան հազվադեպ ուղղում հայացքս դեպի քեզ, այնինչ Քո հայացքը միշտ ուղղված է ինձ: Ինչո՞ւ եմ այդքան քիչ մտածում Քո մասին: Որտե՞ղ ենք գտնվում մենք, ա՜նձ իմ, երբ հեռանում ենք Աստծուց»:

Թռչունները բներ ունեն պատսպարվելու, եղջերուները ապաստանում են ծառերի ստվերում: Սեր սիրտը նույնպես, ո՛վ բարեկամս, պիտի փնտրի իր հանգրվանը: Ուրեմն փնտրենք այն: Գուցե Գողգոթան է, ուր չարչարվել է մեր Փրկիչը, կամ Նրա կյանքի հետ կապված մեկ այլ վայր: Այնտեղ է դադար առնելու տեղը, փորձություններից պաշտպանող ամրոցը: Երանելի է այն հոգին, որ բուռն անկեղծությամբ կասի Տիրոջը. «Իմ ապավենն ես Դու» (Սղմ. 30. 3), «Դու ես իմ հաստատությունը, Դու ես իմ ապաստանը, ծածկույթ խորշակից և վերարկու միջօրեի» (Սիրաք 31. 19):

Չիշիր, աստվածասեր բարեկամ, անհրաժեշտ է որքան հնարավոր է հաճախ պատսպարվել սեփական սրտի առանձնության մեջ, հենց այն ժամանակ, երբ գործերի և խոսակցությունների տարափի տակ ես: Այդ հոգևոր առանձնությանը չեն կարող արգելք հանդիսանալ և շրջապատող բազում մարդիկ, չէ՛ որ նրանք շրջապատում են միայն մեր մարմինը և ոչ սիրտը, որը պետք է միայնակ մնա՝ Միասնական Աստվածության աչքի առջև:

Այդպես էր վարվում Դավիթ թագավորը՝ բազում գործերով և պարտականություններով ծանրաբեռնված, ինչպես ասում է իր սաղմոսներում. «Տե՛ր, բայց ես միշտ քեզ հետ եմ» (Սղմ. 72. 23), «Ակզբից նեթ Տիրոջը մշտապես տեսնում էի

իմ ամբը» (Աղմ. 15. 8), «Այնքերս դեպի քեզ բարձրացրի. Տեղ, Դու, որ բնակվում ես երկնքում» (Աղմ. 122. 1), «Այնքերս իմ մշտամպես Տիրոջն եմ ուղղված» (Աղմ. 24. 15): Եւ իսկապես, մի՞թե հաճախ եմ մեր գրողներն այնքան լուրջ բնույթ կրում, որ հնարավոր չէ սրտով առանձնանալ:

Եկատերինա Աիենացու² հայրն ու մայրը ամեն կերպ ջանում էին, որ իրենց աղջիկը ո՛չ տեղ ունենա, ի՞նչ ժամանակ աղոթելու և խորհրդածելու: Տիրոջ օգնությամբ նա իր հոգում կառուցեց մի փոքրիկ տաճար, ուր վայելում էր սրտի սուրբ միայնությունը, թեև ճրարված էր բազմաթիվ գործերով: Երբ աշխարհը պաշարում էր նրան, նա ամենակիմ չէր ամհանգստանում, այլ պատսպարվում էր իր ներքին կացարանում, ուր մխիթարություն էր գտնում իր Երկնային Փեսայի հետ հաղորդակցվելով: Նա իր խղճառ դավանքի խորհուրդ էր տալիս մամն մի ապաստարան կառուցելու իրենց սրտերում և երբեք չլքելու այն:

Այսպիսով, մերք ընդ մերք թույլ տուր, որ միտքդ թափանցի քո սրտի ներսը և մարդկանցից հեռու, հոգիդ ավելի սերտ հաղորդակցվի Աստուծո հետ, ինչպես Դավիթն էր ասում. «Եղա ինչպե՞զ բու աղթականներում, տքնեցի ու դարձա ինչպես մեծավոր ճնճողուկ տանիքում» (Աղմ. 101. 7-8):

ԳԼՈՒԽ ԺԳ

Հակիրճ աղոթքներ և բարի մտքեր:

Աստուծո մեջ առանձնանում է նա, ով ձգտում է դեպի Աստված: Ձգտումն առ Աստված միայնությունը աջակցում են իրանք: Բարեկամս, որքան կարող ես հեռախոս մտքով սլացիր առ Աստված, հայցիր Նրա օգնությունը, մտովի երկրպագիր խաչին, թող քո ներքին հայացքը միշտ ուղղված լինի Նրա սիրուն և գթասրտությանը: Աստուծո սերը որպես դռն բարձրացրու քո սրտում, թող որ Աստուծո ներք մամն լինի իրաշալի ծաղիկներով լեցուն մի ծաղկամոցի, որի քուրճումնքը՝ դու շնչում ես լիաթոք: Հավատա, բարեկամս, այս բոլոր զգացմունքները երբեք չեն խանգարի քո գործերին և զբաղմունքներին, հակառակը, նրանք քեզ ուժ ու կայտառություն կնեղշնչեն, և դու կմտալվես մի ճամփորդի, որ մի րոպեով կանգ է առել, որպեսզի էլ ավելի համարձակ ու փառախ շարունակի ճամպարիդ: Այնքան էլ մեծ նշանակություն չունի, թե ինչ բառերով կարտահայտես քեզ համայնող զգացմունքները: Մեր սրտին համահունչ բառեր կարող ենք գտնել Դավթի սաղմոսներում, «Երգ երգոց»ում, բազմաթիվ չափալեզներում: Որևէ բան չափազանց չատ սիրելիս մարդուն բնորոշ է թե՛ մտքով, թե՛ խոսքով մշտապես անդրադառնալ իր սիրո առարկային: Աստուծո սիրող մարդիկ երբեք չեն դադարում մտածել Նրա մասին, ձգտել դեպի Նա, կարոտել Նրան և, քանի որ դա հնարավոր է, դրոշմել իրենց սրտերում Հիսուսի սուրբ անունը: Աշխարհն ամբողջ, բոլոր արարածները վկայում են Աստուծո փառքը: Ինչպես ասում է Երանելի Օգոստինոսը. «Աշխարհում չկա մի բան, որ

² Եկատերինա Աիենացի (1847-1880) - կաթոլիկ եկեղեցու ամենաՀայտնի սրբուհիներից, դոմինիկյան միանձնուհի, Փոքր Հասակից Հակում է ունեցել ներանձնական կյանքի և 18 տարեկանում մտել է վանք, Մեն դեր է խաղացել պապականության վերադարձն ապահովելու գործում՝ Ավինյոնից Հռոմ, Միակ կին սուրբն է, որ կաթոլիկ եկեղեցում հռչակվել է որպես եկեղեցու վարդապետ:

թեկուզ անբառ, բայց սրտին հասկանալի լեզվով չխոսի Աստուծո մեծության մասին: Բոլոր երևույթները հանգեցնում են բարի մտքերի, և էլ ավելի ուժեղացնում նրանց ձգտումն առ Աստված»:

Բերենց մի քանի օրինակ.

Այն անգամ Աբ. Գրիգոր Նազիազանցի եպիսկոպոսը գրոսնում էր ծովափին և դիտում՝ ինչպես են ծովի ալիքները ափ բերում. զանազան խխունջներ, ցողուններ, մանր ձկներ և ամեն տեսակի մնացուկներ, որոնց ծովը կարծես դուրս էր նետում, շարտում ցամաք: Ափը ողողող հաջորդ ալիքը կարծես լիզում տանում էր այդ ամենը ետ, ծովի մեջ: Նույն ժամանակ շրջապատող ժայռերը մնում էին հաստատուն կանգնած, անտարբեր ծովի ալիքների հարվածներին: Աբ. Գրիգորը, դիտելով այս տեսարանը, այսպես է մտածում. «Թույլ մարդիկ մեծ են խխունջների և խոտի ցողունների, նրանց ներքին վիճակը պայմանավորված է մակընթացություններով և տեղատվություններով, այսինքն կյանքում տեղի ունեցող լավ կամ վատ իրադարձություններով, վշտերով և մխիթարություններով, քամու ուղղությունով, ալիքներով ու ճակատագրի փոփոխություններով: Այնինչ ուժեղ և քաջարի մարդիկ երբեք չեն երերում կյանքի փոթորիկներից, նրանց չեն շփոթվում նաև «շատ ջրերի աղմուկից»: Դավիթ սաղմոսերգուն ասում է. «Փրկի՛ր ինձ, Աստված, քանզի ջրերը հասան իմ անձին, Տե՛ր, ազատի՛ր ինձ խորը ջրերից, մտա ես խորքերը ծովի և հորձանքներն ինձ ընկղմեցին» (Աղմ. 68, 2-15-3):

Անսելմ Զենտրբերգի³ եպիսկոպոսի ուշադրությունը գրավեց հետևյալ միջադեպը: Երբ շների ոհմակից փախչող նապաստակը մոտ վազեց ծիւղն և ճարահատյալ թաքնվեց նրա ռտքերի արանքում՝ մահացու վտանգից փրկվելու միտումով, շները չհամարձակվեցին հարձակվել, քանի որ տեսան նրան այդպես պաշտպանված: Ներկաները զարմանքից ծիծաղեցին: Իսկ Անսելմ եպիսկոպոսն ասաց. «Դուք ծիծաղում եք, բայց խեղճ կենդանին սարսափից դողում է: Մեր փրկության թշնամիները նույնպես անդադար հետապնդում են մեր հոգուն, բոլոր խաչմերուկներում փորձում են քեզաշել տարատեսակ մեղքերի մեջ, անհամբեր սպասում են, թե երբ կընկնի մահվան ձորը, որպեսզի կլանեն նրան: Սիաբեկված, նա օգնություն է փնտրում և ապաստարան, իսկ թշնամիները միայն ծաղրում և ծիծաղում են նրա թշվառության վրա»:

Շատերն էին զարմանում, որ Կոստանդիանոս Մեծը նամակագրական կապ է հաստատել Աբ. Անտոնի՝ մի հասարակ վանականի հետ: «Ինչո՞ւ եք զարմանում, - ասաց սուրբը, - որ մարդը մարդուն նամակ է գրում: Զարմանալին այն է, որ մշտնջենավոր Աստված մահկանացու մարդկանց գրավոր օրենք տվեց և խոսեց նրանց հետ շուրթը շրթին՝ Իր Սիածին Որդու միջոցով»:

Աբ. Ֆրանցիսկոսը, միայնակ մի մաքի տեսնելով այծերի հոտում, իր ուղեկցին ասաց. «Տե՛ս, ահա մի հեզ ոչխար նոխազների մեջ, այդպես հեզ ու խոնարհ էր մեր Տերը փարիսեցիների մեջ»:

³ Անսելմ Գենտրբերգի (1033-1109) - Գենտրբերգի արքեպիսկոպոս 1083-ից, Կաթոլիկ եկեղեցու վաղ սխոլաստ աստվածաբաններից: Գրել է բազմաթիվ գործեր: Իրեն է պատկանում «Հալատում եմ, որպեսզի հասկանամ» աստվածաբանական նախադրույթով հալատի գերակայության լատագոլոգիաներ բանականության նկատմամբ:

Ֆրանցիսկոս Բորջիան⁴ որսի գնալիս դիտում էր, ինչպես է բազեն հանգիստ ցատում որսորդի ձեռքին և թույլ տալիս կապել աչքերը, մինչդեռ մարդիկ որքան անհնազանդ են գտնվում Աստծո պատգամներին: Սբ. Բարսեղ Մեծն ասում էր, որ փշերի մեջ ածող վարդը պետք է հիշեցնի մարդկանց հետևյալը. «Ո՛վ մահկանացուներ, այս կյանքում ամենահաճելի բաները միախառնված են տխրությանը, ամեն ինչ անմաքուր է, ուրախությանը հաջորդում է դառն ափսոսանքը, փառքին՝ անպատվությունը, վայելքին՝ հիասթափությունը, հիվանդությունները, հարսանիքին՝ այրիությունը: Գեղեցիկ ծաղիկ է վարդը, բայց նա հիշեցնում է ինձ իմ մեղքերը, որոնց հետևանքով երկիրը փուշ ու տատասկ աճեցրեց»: Մի աստվածապաշտ հոգի մայրց աստղաշատ երկնքի արտացոլանքին ջրի ջիմջ մակերեսին՝ խաղաղ գիշերով, և բացականցեց. «Ա՛խ, Աստված իմ, այս բոլոր հիասքանչ աստղերը կհայտնվեն իմ ոտքերի տակ, երբ հասնեմ Զո օրհնյալ օթևանները»: Ինչպես երկնքի աստղերն արտացոլվում են ջրի մակերևույթին, այնպես էլ մարդկանց հոգիներն են երկնքում արտացոլվում՝ աստվածային սիրո վճիռ աղբյուրներում: Մեկ այլ աստվածասեր մարդ՝ մայելով արագընթաց գետի հոսանքին, ասաց. «Հոգին մույմպես չի գտնի իր հանգիստը, մինչև չծուլվի աստվածային սիրո ծովին»:

Ֆրանչեսկան⁵, երբ խոնարհվեց ամտառում առվակի մոտ աղոթելու, շշմեցաց. «Ի՛նչ մեծն են այս առվակի ջիմջ ու մաքուր շիթերը աստվածային շնորհի հոսքին»: Սուրբերից մեկը, տեսավ ծաղկող ծառը ու ասաց. «Ինչո՞ւ եկեղեցու իրաշալի պարտեզում միայն իմ ծառը ծաղիկներ չունի»: Մեկ ուրիշը տեսավ, ինչպես է թռչունը իր ձագերին ամել թևերի տակ, և հառաչեց. «Տե՛ր, քո թևերի հովանու տակ ծածկիր ինձ» (Սղմ. 16. 8): Երրորդը, երբ նկատեց ինչպես են ծաղիկները շրջել իրենց գլխիկները դեպի ծագող արևը, բացականցեց. «Տե՛ր իմ, ե՛րբ եմ հոգով Բեզ դառնալու»: Շատ գեղեցիկ, բայց անբույր ծաղիկ մասին ասաց. «Ես մույմպես, թեև շատ եմ գեղեցիկ խոսքեր ասում, բայց գործերս զուրկ են հոգևոր բուրմունքից»:

Ահա թե ինչպես կարելի է, բարեկամս, շրջապատող տեսանելի աշխարհի տպավորություններից քաղել հոգուն օգտակար մտածումներ: Դժբախտ են մրանք, ովքեր իրենց գիտակցության մեջ ստեղծագործությունը անջատում են Ստեղծողից և միացնում մեղքին: Որքա՞ն երջանիկ են մրանք, ում ամբողջ արարչագործությունը պատմում է Աստուծո փառքը:

Սբ. Գրիգոր Նազիազանցին ասում է. «Ես սովորել եմ ամեն բանից հոգևոր օգուտ քաղել, յուրաքանչյուր հանդիպումից կարող եմ ծնվել հոգևոր մտքեր և մղումներ»:

⁴ Ֆրանցիսկոս Բորջիա (1510-1572) - Հիսուսյան վանական և միաբանության երրորդ մենավորը 1586-ից, Ազնվական էր և մեծահարուստ, սակայն իր կնոջ մահից հետո մտավ Հիսուսյան միաբանության շարքերը և մեծ դեր խաղաց միաբանության տարածման գործում՝ լինելով Իդնատիոս Լոյոլայի աջակիցն ու խորհրդատուն:

⁵ Ֆրանչեսկա Հոմեացի (1384-1440) - աղքատախնամ Նվիրյալների միաբանության հիմնադիրը՝ 1426-ին, Թեև ամուսնացավ 13 տարեկան հասակում, սակայն մնաց խորապես կրոնական և աղոթական վիճակում, իր ամուսնու մահից հետո միացավ իր հիմնած միաբանությանը (1438) և դարձավ դրա Մենավորը, իր շիրիմը Հոմի ամենաշայտի ուխտավայրերից է:

Նման հոգևոր առանձնությունը և շրջապատող իրականության վերաբերյալ հակիրճ աղոթական մտորումներն ինքնին բարեպաշտության մեծագույն դրսևորումներ են: Նրանք ի վիճակի են փոխարինել որոշ այլ աստվածապաշտական գործերի, սակայն նրանց բացակայության դեպքում պակասը լրացնելու ուրիշ միջոցներ չկան: Առանց նրանց, խոհական հայեցողական կյանքը դառնում է անհնարին, իսկ գործնականը՝ մեծապես թերի: Եթե նրանք բացակայում են, ապա հանգիստը վերածվում է անգործության, իսկ աշխատանքը՝ ունայնության: Սիա թե ինչու են խնդրում քեզ, որ ամբողջ սրտով սիրես առանձնության պահերը, կարճ աղոթական մտորումները և երբեք չբաժանվես նրանցից:

ԳԼՈՒԽ ԺԴ

Աբ. Պատարագին ներկա գտնվելու մասին

Աստվածապաշտությանը վերաբերող գործերի մասին խոսելիս՝ ես դեռ չեմ անդրադարձել Աբ. Պատարագին՝ ամենակարևոր, ամենամիյրական արարողությանը, որն համդիսանում է քրիստոնեական եկեղեցու սրբություն սրբոցը: Պատարագի խորհուրդը քրիստոնեական հավատի սիրտն է, աստվածապաշտության հոգին, աստվածային սիրո գաղտնիքն ընդգրկող մի անճառելի խորհուրդ, որի միջոցով Աստված իրապես հաղորդակցվում է մեզ հետ, բաշխում մեր մեջ իր ողորմածության և շնորհի պարգևները: Այս միախառնումից հոգին ինքն է խնկաբույր բարձրանում երկինք, հագնում անպատմելի հոգևոր բուրմունքներով, ինչպես ասվում է Երզ Երզոցում (3. 6): Գործադրի՜ր բոլոր ջանքերն անպայմանորեն ներկա գտնվելու Աբ. Պատարագին, ուր եկեղեցին անարյուն զոհ է մատուցում քո և բոլորի համար՝ իրեշտակների զնդերի մասնակցությամբ, երբ մարտնչող եկեղեցին միավորվում է հաղթանակած եկեղեցուն:

Եթե հնարավորություն չունես զնալու եկեղեցի՝ մասնակցելու Աբ. Պատարագին, աշխատիր այդ ժամին հոգեպես ներկա լինել այնտեղ և ներշնչվել նրա պարզ աշխատանքով, որոնք վերապրում են եկեղեցուն գտնվելիս և այդպիսով միավորվել բոլոր քրիստոնյաների հետ: Խոնարհությամբ և ակնածանքով ընդունիր Տիրոջ օրհնությունը, որը Նա հաղորդում է քեզ իր սպասավորների միջոցով:

ԳԼՈՒԽ ԺԵ

Եկեղեցական այլ արարողություններ և կրոնական միաբանություններ

Եթե հնարավոր է, կիրակի և տոնական օրերին լավ է ներկա լինել առավոտյան և երեկոյան ժամերգություններին: Եկեղեցական արարողությունների մեջ կարող ես մեծ օգտակարություն և միաբարություն գտնել: Այնտեղ, ուր հնարավոր է, անդամակցիր որևէ համայնքի կամ միաբանության: Թեև պարտադիր չէ, սակայն մեծապես նպաստում է հոգևոր դաստիարակությանը: Բարի նպատակներ իրագործելու համար միշտ էլ օգտակար է միաբանվելը: Եղբայրների և մերձավորների միաբանությունից Աստված փառավորվում է:

Մենք կոչված ենք բարի օրինակ ծառայելու միմյանց, միահյուսելով մեր զգացմունքներն ու մտադրությունները Աստուծո փառքի և փոխադարձ շինության համար:

ԳԼՈՒԽ ԺԶ

Սուրբերին պատվելու և նրանց միջնորդությունը հայցելու մասին

Աստուծո հետ մենք կարող ենք հաղորդակցվել ոչ միայն անմիջականորեն: Աստված հաճախ է դիմում մարդկանց հրեշտակների և սուրբերի միջոցով, ովքեր նաև մեր միջնորդներն ու բարեխոսներն են Աստուծո առջև (Ղուկ. 2. 9), և պետք է հայցել նրանց սուրբ աղոթքները: Աստվածասեր բարեկամս, միավորվենք երկնային գորություններին և երանելի հոգիներին: Ինչպես սոխակների ծագուկները սովորում են երգել մեծերից, այնպես էլ մենք ավելի լավ կսովորենք աղոթել և փառավորել Աստծուն ոգեղեն լակների և երկնաքմակ սուրբերի օգնությամբ: «Գրեշտակների առջև սաղմոս պիտի երգեմ քեզ».- ասում է Դավիթը (Սղմ. 137. 1): Մանավանդ մեծարի՜ր, պատվի՜ր ամենաօրհնյալ սուրբ կույս Մարիամ Աստվածածին: Օգնության կանչենք նրան յուրաքանչյուր գործ ձեռնարկելիս: Դիմենք նրա մայրական սիրուն, ջանանք ընդօրինակել նրա առաքինությունները:

Մտերմացիր հրեշտակներին՝ նրանց մշտական ներկայությունը կյանքիդ ամենատարբեր պահերին զգալու, դիմիր քո և հարազատներիդ պահապան հրեշտակներին, փնտրիր նրանց օգնությունը ոչ միայն հոգևոր, այլև կյանքի ընթացիկ խնդիրներ լուծելու, որպեսզի նրանք մասնակցեն քո մտադրություններին: Ընտրիր քեզ հոգեհարազատ սուրբերի, ում կուզենայիր մմանվել, ովքեր քեզ առանձնահատուկ վստահություն են ներշնչում: Իսկ այն սուրբի հետ, ում անունը կրում ես, առավել ես կապված մկրտությանդ օրից ի վեր:

ԳԼՈՒԽ ԺԷ

Ինչպես կարդալ և ունկնդրել Սուրբ Գիրքը

Հավատարիմ եղիր Աստուծո խոսքին: Համակվիր խորը ակնածանքով թե՛ տաճարում պատարագին ունկնդրելիս, թե՛ քարոզի ժամանակ, թե՛ տանը՝ հարազատներիդ ու մտերիմներիդ հետ կամ առանձին ընթերցելիս: Եւ քո չսածն ու կարդացածը «պահիր սրտիդ մեջ», ինչպես անում էր Աստվածամայրը (Ղուկ. 2. 19):

Գիշի՜ր, Տերը մեր աղոթքի բառերին նույն կերպ է վերաբերվում, ինչպես մենք Սուրբ Գրքի բառերին: Հոգևոր գրքերը կարդա այն գիտակցությամբ, որ այս կամ այն սուրբը անձամբ քեզ է նմանկ գրել, որպեսզի ցույց տա դեպի կյանք տանող ճանապարհը և ոգևորություն ներշնչի նրանով ընթանալու: Կարդա սուրբերի վարքը, ուր քրիստոնեական կյանքն արտացոլված է ինչպես հայելում, և մտածիր, թե ինչպես կարող ես քո կյանքի ընթացքում հետևել նրանց օրինակին:

Թեև աշխարհի մեջ ապրող մարդիկ ի վիճակի չեն ամբողջությամբ մմանվել սուրբերին իրենց գործերով, կենսաձևով, սակայն ինչ-որ չափով այդ անել կարող է ամեն մեկը: Ինչպես արդեն ասվել է՝ միայնակյացի առանձնությունը կարելի է փոխարինել հոգևոր առանձնությամբ, աղքատությունը՝ կենսական բարիքներից որոշ չափով հրաժարմամբ:

Կան սուրբեր, որոնց վարքը հատկապես կարող է վառ օրինակ ծառայել մեր կյանքի և կենսակերպի համար: Ոմանց կյանքն ազնվի շատ հիացմունք է պատճառում, քան ընդօրինակելու ցանկություն: Սակայն նրանք նույնպես արթնացնում են ձգտում առ Աստված:

ԳԼՈՒԽ ԺԸ

Ինչպես ընկալել ներշնչումները

Աստուծո կողմից ուղարկված ներշնչումները՝ խրատները, զգուշացումները, համդիմանությունները, հոգու բոլոր շարժումները՝ խղճի խայթը, մտքի պայծառացումները և ճանաչողությունը նպատակ ունեն մեզ ուղղություն ցույց տալու, հորդորելու, մղելու սուրբ առաքինությունների, երկնային սիրո, բարի, ազնիվ մտադրությունների, մի խոսքով, այն ամենին, ինչ առաջնորդում է մեզ դեպի հավիտենական բարիքները:

Երկնային փեսան բախում է հարսնացուի դուռը (Երգ. 5. 2)՝ ցանկանալով արթնացնել նրան, եթե ընած է (Երգ. 5. 2), կանչել, եթե բացակայում է (Երգ. 2. 10-13), հրավիրել իր հրաշալի պարտեզը (Երգ. 2. 1; 6. 1), լսել նրա քաղցր ձայնը (Երգ. 2. 14):

Պողոս պետք է լսի Աստուծո կանչը և արձագանքի:

Մեղքի՝ դեպի ներքև տանող երեք աստիճաններն են. փորձությունը, վայելքը և համաձայնությունը: Իսկ դեպի վեր են տանում առաքինության երեք աստիճանները. թելադրանք, որ հակառակ է փորձությանը, ներշնչանք, որ հակառակ է մեղքի վայելքին, և համաձայնություն այն թելադրանքին, որ հակառակ է փորձության հետ համաձայնությանը:

Եթե Աստված զգուշացնում է մեզ ամբողջ կյանքի ընթացքում, բայց մենք ականջ չենք դնում, միայն վիրավորում ենք Աստծուն, ինչպես խրայելացիները, որոնց Աստված կանչում էր քառասուն տարի անընդմեջ, բայց արձագանք չէր գտնում: Որովհետև նրանք չէին լսում Աստուծո կանչը, Աստված ասաց նրանց. «Դուք չեք մտնի իմ հանգիստը»:

Եթե մարդ սիրի աստվածային ներշնչումները, սա արդեն քայլ է համաձայնության հասնելու ճանապարհին և հաճելի է Աստծուն, քանի որ մարդը հակված է համաձայնության: Սակայն առաքինության դրսևորում դիտվում է միայն համաձայնությունը: Որովհետև ինչ փուլ, որ մեզ դուր են գալիս աստվածային ներշնչումները, եթե համաձայնություն չկա: Դրանով մենք անարգում ենք Աստծուն, անշնորհակալություն և արհամարհանք ցուցաբերում: Նույնը պատահեց Փեսային, երբ վերջապես լսեց իր սիրելիի ձայնը, բայց մա դուռը չբացեց: Խորապես վիրավորված, Փեսան ընդմիշտ լքեց նրան (Երգ. 5. 6): Որոշում կայացրու, բարեկամս, ամբողջ սրտով ընդունել Աստուծո ուղարկած բոլոր ներշնչումները: Ընդունիր՝ նրանց, ինչպես Երկնային Արքայի պատգամաբերների, ով ուզում է դաշինք կնքել քեզ հետ:

Տուր համաձայնությունդ, և թող այն լինի լիարժեք, հաստատուն, մշտատև: Մինչ այդ խորհրդակցիր հոգևոր առաջնորդիդ հետ: Ներշնչումները կարող են և կեղծ լինել, որոնք թշնամին հրամցնում է պարզ հոգիներին խաբելու, մոլորեցնելու համար: Նման բան քեզ երբեք չի պատահի, եթե խոնարհությամբ դիմես առաջնորդիդ:

Համաձայնությունը տալուց հետո պետք է իրականացնել պահանջվածը: Սրտով համաձայնել, բայց կյանքում չձգտել իրականացնել պահանջվածը՝ նույնն է, եթե խաղողի այգի տնկես, բայց բերքի համար հող չտանես: Այս բանում քեզ կօգնեն առավոտյան պարապմունքները և հոգևոր առանձնությունը, ինչի մասին արդեն ասել եմ: Այսպես մենք նախապատրաստվում ենք ոչ միայն ընդհանրապես, այլ հատկապես բարիք գործելու համար:

ԳԼՈՒԽ ԺԹ

Սուրբ խորհուրդների մասին

Փրկիչն տվել է իր եկեղեցուն խոստովանության և ապաշխարության խորհուրդները, որոնց միջոցով մենք մաքրվում ենք մեր բոլոր մեղքերից:

Երբեք թույլ մի տուր, իմ աստվածասեր բարեկամ, որ սիրտդ երկարատև կրի իր մեջ մեղքի ախտը: Քանի որ ախտահանման համար ունենք հեշտ ու վճռական միջոց: Դոգին պետք է որքան հնարավոր է շուտ մաքրվի գործած մեղքից, որպեսզի կարողանա նորից կանգնել Աստուծո առջև: Նման զորավոր դեղամիջոց ունենալով, ինչպես է պատահում, որ վրա է հասնում հոգևոր մահը: Խոստովանիր մեղքերդ հանգամանորեն, խոնարհությամբ՝ ութ օրը մեկ⁶: Խոստովանությամբ ոչ միայն ներվում են մեղքերդ, այլև զորություն ես ստանում խոսափելու նրանցից հետագայում, որպեսզի նրանց առավել լավ զանազանես, նաև շնորհ ես ընդունում մեղքերի հետևանքները վերացնելու համար: Այսպիսով, խոստովանությունն իրենում ներառում է մի քանի առաքիություն, խոնարհություն, հնազանդություն, պարզություն և սեր:

Թող մեղքերդ քեզ միշտ նողկանք ներշնչեն, որքան էլ չնչին կամ աննշան լինեն: Հաստատակամ եղիր ապագայում դրանք չտկելու մեջ: Խոստովանությունը մեզ տրված է հենց չտկվելու նպատակով:

Խոստովանելիս խոսափիր ընդհանուր ձևակերպումներից, ասելով՝ ես չեմ սիրել Աստծուն ինչպես հարկն է, չեմ սիրել մերձավորներիս ինչպես պետք է, պատշաճ ջանասիրությամբ չեմ աղոթել և այլն: Այդպես դու չես բացահայտում քո խիղճն ու հոգին, որովհետև բոլորն էլ աշխարհում կարող են ասել նույնը: Քննիր հատկապես, թե ինչում ես մեղանչել, ինչում է մեղադրում քեզ քո սեփական խիղճը, և շատ պարզ պատմիր այդ մասին: Օր.՝ ես ճանաչում եմ մի աղքատի, որին կարող էի օգնել և մխիթարել, բայց չեմ արել այդ անբարյացակամությունից, կամ խստասրտությունից, կամ անփութությունից: Եթե քեզ հայտնի են քո արարքի դրդապատճառները, ապա մի ասա ընդհանրապես՝ ես բավականաչափ չեմ սիրել մերձավորիս: Ոչ թե մեղադրիր քեզ, որ սրտով նվիրված չես Աստծուն, այլ կոնկրետ պատմիր, թե ինչով ես գերադասել զբաղվել, զվարճացել, իզուր վատնել ժամանակդ: Ինչպես է, որ աղոթքին ժամանակ, տեղ, տրամադրություն չես հատկացրել: Մի խոսքով բոլոր խանգարող հանգամանքների մասին, բայց մի դիմիր ընդհանրացումների, որոնք ոչ մի օգուտ չեն տալիս:

⁶ Կաթոլիկ եկեղեցում քեղադրվում է խոստովանության մոտենալ ութ օրը մեկ, թեև դա պարտադիր պայման չէ:

Մի սահմանափակվիր սոսկ մեղքերի թվարկումով, այլ պատմիր քո այս կամ այն արարքի հիմքում ընկած դրդապատճառի մասին: Օր.⁷ բավական չէ ասել, որ դու խաբել ես որևէ մեկին, այլ պետք է նշել, թե ինչու՝ սնապարծությունից կամ ինքնաարդարացման համար, կամ պարզապես հաճույքից, կամ համառությունից: Նշիր, որքան վաղուց ես հակված այդ մեղքին. դա շատ մեծ նշանակություն ունի: Այսպիսով, պետք է խոսել փաստերի, շարժառիթների և մեղքերի տեվողության մասին: Սնիրաժեշտ է, որ հոգևոր բժիշկը լավ ճանաչի այն հիվանդությունը, որից դու ուզում ես բժշկվել: Պատմիր այն ամենը, ինչ անհրաժեշտ է իմանալ քո արարքի բնույթը հասկանալու համար: Օր.⁸ որն էր քո բարկության պատճառը կամ ինչու աջակցեցիր ինչ որ մեկի արատավոր հակումներին: Այսպես օրինակ՝ գուցե ես զայրացա ոչ թե մարդու խոսքերից կամ վարմունքից՝ ինչը հեշտությամբ կներքի մեկ ուրիշի, այլ որովհետև անձամբ ինքն է տհաճություն պատճառում: Եթե կարողանաս տալ ավելի մանրամասն բացատրություններ՝ առավել օգտակար կլինի, այդպես մենք բացահայտում ենք ոչ միայն մեր չար արարքները, այլև վատթար սովորությունները, հակումները, որոնք և հանդիսանում են մեղքի արմատը: Ամեն կերպ խուսափիր մեղսակիցներից անունները տալուց:

Զգուշացիր մեղքերի կուտակումից, որ հաճախ աննկատելիորեն սողոսկում են մեր սիրտը, ջանա մաքրվել նրանցից: Այդ նպատակով ուշադիր կարդա **Գ** մասի **գ. իէ, իը, իթ, իե, իզ** և **Դ** մասի է գլուխները: Աշխատիր խոստովանահայր գտնել և մի փոխիր նրան: Ժամանակ առ ժամանակ պատմիր նրան քո տրամադրությունների, հակվածությունների մասին: Օր.⁹ քեզ տխրությունն է պատել կամ հակառակը, շատ ուրախ ես, ուզում ես ունեցվածք ձեռք բերել և այլն:

ԳԼՈՒԽ Ի

Չաճախակի հաղորդվելու մասին

Փրկիչը հաստատեց Չաղորդության սրբազան խորհուրդը, որը ստուգապես պարունակում է Քրիստոսի կենարար Մարմինը և սրբարար Սրյունը: «Ով ուտի Իմ մարմինը և ըմպի Իմ արյունը՝ հավիտենական կյանք կունենա» (Չովի. 6. 55): Ով հաճախ և երկյուղածությամբ մոտենում է Սուրբ Չաղորդության խորհրդին՝ զորացնում է իր հոգևոր կյանքն ու առողջությունը և պաշտպանվում պիղծ գգացումներից: Եթե մարդիկ դրախտում ենթակա չէին մարմնավոր մահվան կենաց ծառի պտուղների ճաշակումով⁷, ապա Սուրբ Չաղորդությամբ պաշտպանվում են հոգևոր մահից:

ԳԼՈՒԽ ԻԱ

Ինչպես մոտենալ Չաղորդության Սուրբ խորհրդին

Պետք է նախօրոք պատրաստվել Սուրբ Մարմնին և Սրյանը հաղորդվելուն: Երեկոյան ավելի շուտ պառկիր քնելու, որպեսզի հմարավորին չափ վաղ

⁷ Հեղինակն այստեղ յուրօրինակ տեսակետ է հայտնում, որ այնքան էլ ներդաշնակ չէ ոչ միայն Ուղղափառ, այլև կաթոլիկ ավանդության հետ, քանզի Ս. Գրքի համաձայն նախամարդիկ կենաց ծառին չեն կարողացել մերժենալ:

արթնանա: Եթե գիշերը զարթնես, կրկնիր տողեր քո սիրած աղոթքներից և սաղմոսներից, որ հոգիդ գիշերն անգամ լիցքավորվի: Առավոտյան վաղ վեր կաց սրտի թրթիռով, մտածելով՝ թե ինչ է քեզ սպասում: Խոստովանությունից հետո մոտեցիր Սուրբ Ընծաներին և «արժանի չեմ» (Մատթ. 8. 8) բառերն արտասանելուց հետո մի շարժիր ոչ գլուխդ, ոչ շուրթերդ, անգամ աղոթք կամ հառաչանք արտաբերելու: Ընդունիր Սուրբ Մարմինն ու Արյունը հավատով, հույսով և սիրով: Ինչպես մեղուն է վաղ առավոտյան հավաքում ծաղիկներից երկնային ցողի կաթիլները և լավագույն բուրմունքները և, վերածելով մեղրի, բերում իր փեթակը, այնպես էլ քահանան է վերցնում Սուրբ Սեղանից Աստուծո Որդու Մարմինն ու Արյունը, որ իջավ երկիր, ինչպես ցողը գեղմի վրա: Արտիդ մեջ ընդունիր Իրեն և գոհացիր մեր փրկության Թագավորից: Սիրով ընդունիր սիրո պարգևը: Ջանա առավելանալ և զորանալ Աստուծո սիրով: Եթե մարդիկ հարցնեն, թե ինչո՞ւ ես հաճախ հաղորդվում, այսպես պատասխանիր. «Որպեսզի մաքրվեմ մեղքերից, որպեսզի նեցուկ ունեման իմ տկարության մեջ, որպեսզի մխիթարություն գտնեմ նեղություններիս մեջ, որպեսզի սովորեմ Աստծուն սիրել»: Ասա նրանց, որ հաճախ հաղորդվելու կարիք ունեն երկու կարգի մարդիկ. կատարյալները, քանի որ նրանց պետք է հնարավորին չափ մոտ լինել կատարելության աղբյուրին, և անկատարները, որպեսզի հասնեն կատարելության, ուժեղները՝ ուժասպառ չլինելու, տկարները՝ զորանալու, առողջները՝ չհիվանդանալու, հիվանդները՝ ապաքինվելու: Ասա՛, որ դու անկատար ես, թույլ և հիվանդ, իսկ սա կատարելության, առողջության, զորության աղբյուրն է: Ասա՛, որ պետք է հաճախ հաղորդվեն եւ նրանք, ովքեր քիչ են զբաղված, քանի որ ունեն հնարավորություն, եւ նրանք, ովքեր շատ են գործերով ծանրաբեռնված, քանի որ կարիքն ունեն հաղորդվելու: Շատ և ծանր աշխատանք կատարողը պետք է լավ սնվի: Ասա՛, որ դու հաճախ ես մոտենում Սուրբ Մարմինն և Արյունը, որպեսզի սովորես այդ ամել: Չէ որ մարդը վատ է կատարում այն գործը, որը հազվադեպ է անում: Չմոռանը նապաստակների մորթին սպիտակում է, երբ շրջակայքը ծյան ծածկույթի տակ է, դու մույմպես որքան մոտ լինես Նրան, Ով իրենում մաքրություն, գեղեցկություն և բարիք է պարունակում, այնքան ավելի մաքուր, գեղեցիկ և բարի կդառնաս:

*Ուսերենից թարգմանեց
ԱՐՓԻՆԵ ՊԱՊԱՅԱՆԸ*

ԺԱՆ-ՄԱՐԻ ՄԱՐՏԻՆ

Փարիզի Գիտական

Ուսումնասիրություններ

Ազգային Կենտրոնի (C.N.R.S.) -

Հոռմի ֆրանսիական Դպրոցի պրոֆեսոր

ԱՐԵՎԵԼՅԻՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ
(ՄԻՆՁ ԺԱ ԴԱՐԸ)*

«Մեծ ներխուժումներից»** Հետո, ժողովրդի դադափաբը Հիմնականը դարձավ վաղ միջնադարյան արևմուտքում: Իրոք, դերմանական ժողովուրդների քրիստոնեացման Հետևանքով, վերջիններս մեկը մյուսի հետևից մտան պատմության շրջապուրջի մեջ, այսինքն՝ պատմության թատերաբեմ, առանց մոռանալու իրենց էթնիկական պատկանելությունը: Նրանցից յուրաքանչյուրը դառավ իր պատմիչին (Գրիգոր Տուրացի***, Պողոս Սարկավազ****), որոնք փառաբանեցին իրենց մուտքը քրիստոնեական աշխարհ: Ժողովուրդ եղբր բնութագրվում է երեք հական Հատկանիշով. ոչ թե ազգացություն մ (եթե դա առաջնական մակարդակում է), այլ իրավունքով, լեզվով, կրոնական արարողակարգով:

Գերմանացի նվաճողներին ենթարկված Հոռմեական տարածքներում, Հաղթողների և Հաղթվածների միջև տեղի էր ունենում Համակողմանի ձուլում, որի Հետևանքով կողմերից յուրաքանչյուրն իր ձևավորման Համար մյուսից վերցնում էր Հիշատակված երեք էթնիկական Հատկանիշներից որևէ մեկը: Վերցված լեզուն, Հիմնականում, Հաղթվածին էր, քանի որ մշակույթի տեսանկյունից ավելի վեր էր կանգնած և կապված էր կրոնական արարողակարգի Հետ. լատիներենին, անկասկած, սկսեցին անանցվել բարբառներ: Բառապաշարի մեջ գերմանական ներդրումը, չնայած սակավ, սակայն այնքան էլ անտեսանելի չէր: Այն ծառայում

* (Ներկա Հոգված, գեկուցման անցքով, ընթերցվել է 1998 թ. Հունվարի 22-24-ին Մանսխեյմի Պոլ Վայերի Համալսարանում կազմակերպված «Հայերը և մյուս քրիստոնյաները Բյուզանդական կայսրությանը (636-1055) դեմ Հանդիման» գիտաժողովում, որի նյութերը պատրաստվում են Հրատարակության:

Թարգմանին իր շնորհակալությունն է Հայտնում այս Հոգվածի Հեղինակ պրոֆ. Ժան-Մարի Մարտինին և դիտաժողովի կազմակերպիչներին՝ աշխատանքի Հայերեն թարգմանության Հրապարակումն արտանկու Համար - Ա.Բ.:

** (Հեղինակը նկատի ունի Դ-Ձ դարերում Եվրոպա ներխուժած գեմանական ցեղերի Մեծ գաղթը, որի ալիքը տարածվեց մինչև Հյուսիսային Աֆրիկա, Իսպանիա, Իտալիա, Դրասիա, Անգլիա: Գործանվեց Արևմտահոռմեական կայսրությունը և ստեղծվեցին մի շարք բարբարոսական պետություններ: Արևմտյան Եվրոպայում այսօրվա պետությունների Հիմքերը դրվեցին - Ա.Բ.)

*** (Հատին պատմագիր, «Թրանկների պատմություն» գրքի Հեղինակ, Տուրի եպիսկոպոս Գրիգորը (540-594) Ձ դարի Նշանավոր եկեղեցական գործիչներից է, որն իր երկը նվիրել է մեծադիպեղծ գաղափարների Թրանսի-Եկեղեցական և քաղաքական պատմությանը: Գրիգոր Տուրացի (Gregoire de Tours) ծագումով ֆլորենսացի է: - Ա.Բ.)

**** (Հանգրադրիչի իտալական թագավորության պատմիչ Պողոս Սարկավազը (720-789) ծառայել է Թրանսիական կայսր Կառլոս Մեծի արքունիքում, եղել է վերջինիս կազմակերպած ակադեմիայի անդամ: Պողոս Սարկավազի (Paul Diacon) գլխավոր երկը «Հանգրադրիչի պատմություն» է, որը Հեղինակը Հասցրել է մինչև 744 թ.: - Ա.Բ.)

էր, Հատկապես, արտահայտելու Հաղթող ժողովրդի իրավական ըմբռնումները, որոնք արագորեն պարտադրվում էին բնակչության մեծ մասին կամ մեծամասնությանը. գերմանական տերմինների («Morgengabe»^{*} և այլն) կարևորագույն պաշտոններից մեկն է Համարվում Ռոտարիի Հրովարտակը^{**}: Ինչ վերաբերում է կրոնին, ապա, ավելի կամ պակաս արագ, Հաղթեց պարտվածների Հավատը և ծեսը (է դարի երկրորդ կեսին միայն Լանգոթարդներն էին շարունակում պահպանել Հեթանոսական ավանդույտները, պաշտոնականորեն ճանաչելով արիոսականությունը¹):

Սակայն, ամբողջովին պահպանելով անունը (ի միջի այլոց լանգոթարդ^{***} նշանակում է «երկար մորուք» ունեցող և առնչվում է մի առասպելի Հետ, որի ակունքը Հասնում է մինչև գերմանական ասավածներ Վոտանին և Ֆրեյային²), ժողովուրդը փոխում է էությունը. այնպես որ Զ դարի լանգոթարդը Հեթանոս էր և խոսում էր գերմանական բարբառով. իսկ Ը դարի լանգոթարդը (որը Հիմնականում ուներ Հոռմեացի նախնիներ) բնութագրվում է ոչ միայն քիչ թե շատ պահպանված իր ազգային իրավունքով, այլ նաև նրանով, որ պատկանում է լատինական մշակութային աշխարհին և Հռոմի պատրիարքական Աթոռին: Բացի այդ, լանգոթարդ ժողովուրդն այնքան ձևափոխվեց իր բնութագրով, այնքան Հզորացավ Հաղթված Հոռմեացիների Հետ ձուլումից և, Հատկապես, ձեռք բերեց մի առավելություն, որը նրա Համար, որպես ժողովուրդ, վերապելու պայման ստեղծեց. նա տեր դարձավ մի ընդարձակ, լավ պաշտպանված տարածքի և դործնականում այլևս այնտեղից չտեղաշարժվեց: Այսպես, Հարավային Իտալիայում, սահմանադատված տարածքներից յուրաքանչյուրը զբաղեցնում էր բավական ընդարձակ իշխանություն ունեցող մի ժողովուրդ. (լանգոթարդների ներխուժումից խույս տված) Հոռմեացիները Հաստատվել էին Նեապոլում, Ամալֆիում և Գաետում, իսկ լանգոթարդները՝ մնացած բոլոր շրջաններում, բացառությամբ կալաբրական և Հարավային Սալինոսոյի շրջանների, որոնք Հուլյները զբաղեցրել էին առնվազն մինչև Թ դարը:

Նման տեսարան, որը վերաբերում էր Ե-Ը դարերի գրեթե ողջ Արևմուտքին, Հազիվ թե վերաբաղվեր Հետագայում: Հաղթողների և պարտվածների նման ձուլումը նվաճողների անվան տակ, սակայն Հիմնականում պարտվածներից վերցված մշակութային ավանդույթներով, կարող էր տեղի. ունենալ միայն ժողովրդագրական, տնտեսական, Հասարակական և քաղաքական մեծ ճգնաժամի ընթացքում (և, անկասկած, ոգնությամբ), որն իր գազաթնակետին Հասավ է դարում և որը, Հարավային Իտալիայում, ուղեկցվում էր Հատկապես մեծ

* [Հարսանիքի Հաղորդ առաջնության Հարսին փեսացուի տված նվերը-Ա.Բ.]:

** [Հեղինակը նկատի ունի լանգոթարդների արքա Ռոտարիի 643 թ. Հրապարակած Հրովարտակը, որը արևմտաֆրոպական իրավունքի կարևորագույն Հուշարձաններից է: - Ա.Բ.]

¹ Հմմտ. G.P. Bognetti, S. Maria Foris Portas di Castelseprio e la Storia Religiosa dei Longobardi¹ տե՛ս G.P. Bognetti, G. Chierici et A. de Capitani d'Arzago, Santa Maria di Castelseprio, Milan, 1948, էջ 11-511 և, ² տե՛ս G.P. Bognetti, L'età longobarda, II, Milan, 1966, էջ 12-683:

*** [Նրանց անունն է կրում այսօրվա Հյուսիսային Իտալիայի Լոմբարդիայի մարզը, որի գավառներն են Բերգամո, Բրիչիան, Կոմեն, Կրեմոնա, Մանտուան, Միլանը, Պավիան, Նոնդեռն և Վարեզո - Ա.Բ.]

² Origo gentis Langobardorum. MGH, SRLI, էջ 1-6.

քանակությամբ Հին քաղաքների և դրանց Հետ միասին եպիսկոպոսական թեմերի վերացումով:

Վերջապես՝ Պուլիխայի (Հնում՝ Ապուլիա), Բասիլիկատի և Կալաբրիայի նվաճումը բյուզանդական իշխանությունների կողմից Թ՝ դարի վերջին այս տարածքում ունեցավ ամփելի պակաս ռազիկալ հետևանքներ, քան լանգոթարդների ներխուժումը. ճիշտ է նաև, որ կայսրությունը չէր դիտվում իբրև մեկ ազգություն մեկ ծնակեցված տարածք, ինչպես նաև չէր պարտադրվում մեկ տիրապետող լեզու և մեկ ծես: Չնայած կայսերական իշխանությունները Իտալիայի հունախոս գոտի մտցրեցին միասնական եկեղեցական կազմակերպություն և իրավունք, սակայն բյուզանդական Պուլիխան շարունակվում էր բնակված լինել լանգոթարդներով, որոնք գործնականում ղեկավարվում էին սեփական իրավունքով, խոսում էին լատիներենով և հետևում էին Արևմտյան Եկեղեցու սովորույթներին: Նորմանները, որոնք նվաճեցին երկիրը ԺԱ դարում, այլևս չէին ձուլվում պարտվածներին, որոնցից նրանք առանձնանում էին՝ պահպանելով ծեսը և մշակույթի լեզուն: «Պրանկ» իրավունքը ամփոփված էր առանձին շրջաններում, և չէր պարտադրվում նվաճողների բոլոր հետնորդներին, որոնց մի մասը ըստ զավառների ընդունում էր տիրապետող լանգոթարդական կամ բյուզանդական իրավունքը:

Մյուս կողմից, Հարավային Իտալիայի միջնադարյան պատմագրությունը, որն առաջնորդվում էր վաղ միջնադարյան Արևմուտքի կաղապարներով, շարունակում էր անհաստատանքներ ժողովուրդներին (բնութագրման իմաստով) և նրանց դարձնել պատմության կոլեկտիվ գործիչներ. յուրաքանչյուրին տալով սեփական բնորոշումը. օրինակ՝ նորմանական նվաճման պատմաբանները (չառանձնացնելով տեղաբնակներին և կայսերական իշխանություններին) վատ են բնութագրում Հուլյաններին, որոնք միահամուռ ներկայացվում են իբրև կանացի, պատերազմում անպետք և, հետևապես, խարդախ³: Կարեորն այն է, որ տիեզերականության կայսերական գաղափարը Իտալիայում չընթաց ազգի պատկերացումը:

Ավելացնենք ևս մեկ նկատառում: Անձնանունները չեն կարող օգտագործված լինել միայն էթնիկ իմաստով (քանի որ, դրանք սոսկ մատնանշում են), եթե գոյություն ունեն այլ հաստատուն փաստարկներ, և որ միայն անձնանվան հայտնաբերումը, չի կարող համարվել Հիմնական կոման: Ը-Թ դարերում Հարավային լանգոթարդների մեջ տիրապետում էր գերմանական օնոմաստիկան, սակայն այն մենաշնորհ⁴ չուներ, միաժամանակ լանգոթարդական իրավունքը ևս մրցակից չուներ: Լանգոթարդական Պուլիխայում, բյուզանդական տիրապետությունը, նախքան նորմանական անձանունների տարածումը⁵, օգտագործվում են քրիստոնեական անուններ, երբեմն՝ բնիկ հունական (իսկ երբեմն էլ՝ հայկական, որոնց կանգրադառնանք ստորև): Պետք է նշել, որ անվանագրումը մի համընդհանուր մշակութային երևույթ է, ուր էթնիկ պատկանելությունը հաճախ առաջնայինը չէ:

Առաջադրված տեսական դիտարկումները թույլ չեն տալիս մոռանալ, որ Հարավային Իտալիան Արևմուտքի այն գոտին է, որն ամփելի մոտ է արևելյան Միջերկրականին: Մյուս կողմից, Սիցիլիան Հեռու չէ Հյուսիսային Աֆրիկայից.

³ J.-M. Martin, *Italie normandes XI^e-XII^e siècle*, Paris, 1994, էջ 63.

⁴ Նույնի, *Antroponymie de l'Italie méridionale lombarde (VIII^e-IX^e siècles)*, տե՛ս *Mélanges de l'École française de Rome. Moyen Age*, 107, 1995, էջ 333-342.

⁵ Նույնի, *Anthroponymie et onomastique à Bari (950-1250)*, տե՛ս *Mélanges de l'École française de Rome. Moyen Age*, 106, 1994, էջ 683-701.

անտիկ դարաշրջանում այստեղ նշմարվում է փյունիկյան ներկայությունը, հնարավոր է նաև, որ այն որոշ ժամանակ ենթարկվել է վանդալների⁶, իսկ Թ-ԺԱ դդ. վերջիվերջո, ամբողջովին ներմուծվել է արաբա-մուսուլմանական աշխարհի ոլորտը:

Այնուամենայնիվ, փոխհարաբերությունները Ադրիատիկ ծովի մյուս ափերի և ափերի հեռվում գտնվող արևելյան Միջերկրականի հետ, առավել հետևողական են: Մեսապիացիները, որոնք բնակվում էին Պուլիխայում, խոսում էին իլիրական բարբառով: Մի կողմից քրիստոնեությունը, իսկ մյուս կողմից հրեականությունը (սկզբում, հավանաբար, նրանք կապված էին մեկը մյուսի հետ) կայսերական դարաշրջանում, իտալիա էին թափանցել հարավ-արևելքից: Դեռևս ԺԱ դարում կարևորագույն հրեական դադութներ էին հաստատվել Օտրանտում, Բալիանների հետ փոխհարաբերությունների հիմնական դարպասում, և Ապիայի հին ճանապարհի երկարությամբ⁷: Եթե անդրադառնանք հրեական սփյուռքի, Տաճարի երկրորդ ավերմանը* հաջորդած սերնդի ժառանգներին, որոնք ժամանակ առ ժամանակ հալածվել են Բարսեղ Ա** և Ռոմանոս Լեկապենոս*** կայսրերի կողմից, ապա՝ ապուլիական հրեաները, պահելով իրենց կապերը Բաբելոնի աքսորավայրի (exilarchat) հետ, ստեղծել են բազմաթիվ կրոնական և պատմական բնագրեր: Նրանք միաժամանակ հույս ունեին, որ Բարիի (լատին) արքեպիսկոպոսը, բյուզանդական տիրապետության վերջին շրջանում, հուդայականություն կընդունի⁸:

Այս երևույթը մշակութային տեսանկյունից ավելի կարևոր դարձավ վաղ անտիկ՝ Հունական դադութացման դարաշրջանում, այսինքն՝ երբ Հուլյների (Հանախ դորիական ծագման) կողմից մի շարք քաղաքներ հիմնադրվեցին հարավային իտալիայում (Մեծ Հունաստան) և Սիցիլիայում: Հռոմեական դարաշրջանում Հունարենը բազմաթիվ տարածքներ կորցրեց այս դավառներում, քանի որ Անտիկ շրջանի վերջում, Մեծ-Հունաստանը ամբողջությամբ լատինականացվեց: Միակ գոտին, որը թվում է, թե պահպանել էր Հունարեն լեզուն, Սիրակուզան էր՝ Սիցիլիայում, ուր վաղ միջնադարից Հունարեն արձանագրություններ են պահպանվել: Է դարում բազմաթիվ հույն վանականներ են հիշատակվում Հռոմում⁹, միաժամանակ Սիցիլիայում և Կալաբրիայում սկսում են հայտնվել

⁶ Ch.Courtois, *Les Vandales et l'Afrique*, Paris, 1955, էջ 190-193.

⁷ J.-M.Martin, *La Pouille du VI^e au XII^e siècle*, Rome, 1993 (Collection de l'École française de Rome, 179), էջ 492-503.

* [Տաճարի երկրորդ ավերումը ասելով նկատի ունի մ.թ. 132-135 թ. Հռոմեական կայսր Ադրիանոսի կողմից Օրուսադեմի ավերումը և հրեաների երկրորդ մեծ բռնազաղթը, որից հետո այդ ժողովուրդը հետզհետե տարածվեց ողջ աշխարհում: - Ա.Բ.]:

** [Բյուզանդական կայսր Բարսեղ Ա Մակեդոնացին կառավարել է 867-886 թթ. - Ա.Բ.]:

*** [Բյուզանդական կայսր Ռոմանոս Ա Լեկապենոսը կառավարել է 920-944 թթ. - Ա.Բ.]:

⁸ Լույն անդում, էջ 492-503.

⁹ J.-M.Sansterre, *Les moines grecs et orientaux à Rome aux époques byzantine et carolingienne (milieu du VI^e siècle-fin du IX^e siècle)*, Bruxelles, 1983, 2 t. (Académie Royale de Belgique. Mémoires de la classe des Lettres, 2^e série, t. 66-1). A.Jacob et J.-M.Martin, *L'Église grecque en Italie (v.650-v.1050)*, տե՛ս *Histoire du Christianisme*, sous la dir. de J.-M.Mayeur, Ch.(+) et L.Pietri, A.Vauchez et M.Venard, 4. *Évêques, moines et empereurs (610-1054)*, sous la dir. de G.Dagron, P.Riché et A.Vauchez, Paris, 1993, էջ 349-371.

Հունական անուն կրող եպիսկոպոսներ, Հենց այս դարաշրջանում է, որ Հունախոս միջավայրից Հավաքագրվում են բազմաթիվ պապեր⁹։ Կարծում ենք, որ սկսած Ը դարից, այս շրջաններում նշանակալի Հույն բնակչություն է եղել, որը ենթակա էր Կոստանդնուպոլսի պատրիարքությանը։ Կարծում ենք, որ այդ բնակչությունն իր ծագմամբ (Համենայն դեպս մշակույթով) կապված է եղել ոչ թե Հունաստանի, այլ Սիցիլիայի Հետ և որ այն Հարավ-արևելյան Սիցիլիայի Հունախոս բնակչությունն է, որը հովանավորվում էր կայսերական իշխանությունների կողմից։ Սկզբում Հույները տարածված էին կղզու Հյուսիս արևմուտքում (ուր նրանց ներկայությունը վկայված է մուսուլմանական դարաշրջանում), ապա Հարավային Կալաբրիայում, որտեղ նրանք այնուհետև Համալրվել են մուսուլմանական Սիցիլիայից փախած Հույներով¹⁰։ Թ դարում Հունական տարրը հաղթեց Կալաբրիայի Հյուսիս-արևելքում գտնվող Սիրիյում, իսկ Հարավային Սալենտոն (Տարենտի ծովածոցի մյուս կողմում), թվում է Հելլենականացվել է ավելի շուտ արևմուտքից, քան թե արևելքից¹⁰։ Հունախոս գոտին, գրեթե մինչև ԺԱ դարի կեսը, շարունակում էր տարածվել Հատկապես Իտալիայի Հարավ արևմուտքում։ Իտալիայի Հույներին արևմտյան ծագում վերագրելու գլխավոր փաստարկներին մեկը Կալաբրիայի Հարավում և Սալենտոյի մի փոքրիկ շրջանում ոգտագործվող Հունարեն բարբառների չափազանց Հին բնութագրերն է։ Ուրեմն, եթե Իտալիայում և Սիցիլիայում Հունական բնակչության կորիզը Հաստատվել է սկսած Անտիկ դարաշրջանից, պետք է եզրակացնել, որ բյուզանդական շրջանում Արևելքից չի եղել որևէ նշանակալի դադարեցում։

Այնուհանդերձ չի կարելի անտեսել ավելի փոքր տեղաշարժերը։ Անգրե Հակոբը իտալո-Հունական ժամագրքում (euchologes) նկատել է մեկիտ ասորա-պաղեստինյան ծագման ծիսական տարրերի առկայությունը։ Նա դրանք վերագրում է է դարում՝ պարսկական և արաբական ներխուժումների ժամանակ եկած Հոգևորականներին¹¹։ Հայտնի է, որ այս դարաշրջանում Արևելքից փախող եկեղեցականները և վանականներն ամենաթուև ուղղափառներն էին¹²։

Մոնեմվազիայի ժամանակագրության (Chronique de Monemvasie) մի (Հավանաբար Թ դարում խմբագրված) Հատվածը, պատմելով Զ դարում Պատրասի բնակիչների դեպի Ռեջիո նախնական մեկնումի և Դեմենայի Հակոնացիների

* [Այս փաստը վկայված է նաև ԺԳ դարի Հայ պատմիչ Հեթում Կոռիկոսյու ժամանագրության մեջ, տե՛ս Մանր ժամանակագրություններ XIП-XVIII դդ., Հտ. II, կազմեց՝ Վ.Ա.Հակոբյան, Երևան 1958, էջ 48-50։ Ծավոք, Հրատարակիչ Վազգեն Հակոբյանը դուրս է թողել մի շարք տեղեկություններ, որոնք վերաբերում են Եփրոսյայում եկեղեցական կազմակերպության պատմությանը։ Հուսով ենք, այս երեք մեր պատրաստած բնագիրն ավելի լիակատար պատկերացում կտա այդ Հարցերի մասին - Ա.Բ.]

¹⁰ J.-M. Martin. Une origine calabraise pour la Grecia salentina ?, տե՛ս Rivista di Studi Bizantini e Neolienici, n. 22-23 (XXXII-XXXIII), 1985-1986, էջ 51-63. Նույնի, La Pouille, cit. supra n. 7, էջ 509-518. Նույնի, Hellenisme et présence byzantine en Italie méridionale (VII^e-XII^e siècle), Հանմնված է Հրատարակության L'ellenismo italiota (sec. VII-IX) (Venezia, 1997) դիտաժողովի Նյութերի Հեմ։

¹¹ A. Jacob, Testimonianze bizantine nel Basso Salento, տե՛ս Il Basso Salento. Ricerche di storia sociale e religiosa, sous la dir. de S. Palese, Galatina, 1982, էջ 49-69, Հատկապես՝ էջ 58-60։

¹² Հմմտ. É. Patlagean, Les moines grecs d'Italie et l'apologie des thèses pontificales (VIII^e-IX^e siècles), տե՛ս Studi Medievali, s. III, 5, 1964, էջ 579-602.

կողմից սիցիլական նոր Լակեդեմոնի Հիմնադրման մասին, թվում է, թե Իտալիայի և Պելեպոնեսի ենթադրված կապերի միջոցով փորձում է բացատրել Հարավ-իտալական բարբառների դորիական բնույթը¹³։ Իսկ Սկլիցեսի ժամանակագրության ընդմիջարկություններից մեկում բերված մի այլ լեզվաբանական պատմություն է, որ Ուգենտոն (Սալենտոյի ծայր Հարավում) 876 թ. արաբների կողմից ավերվելուց և Ուգենտոն (Սալենտոյի ծայր Հարավում) 876 թ. արաբների կողմից ավերվելուց և նրա բնակիչներին Կարթագեն տեղահանելուց Հետո, իշխանությունները Հիմնադրեցին Գալիպոլին (իրականում անտիկ ծագում ունեցող մի քաղաք)՝ բնակեցնելով այնտեղ Պոնտական Լեռակիայի բնակիչներին¹⁴։

Թեոփանեսի Շարունակողի (ներկա դեպքում Կոստանդին է) ավելի իրատես պատմությունը հիշում է Բարսեղ Ա-ի Թագավորության օրոք (ավելի ճիշտ՝ այն նվաճելուց Հետո) այրի Դանիելիսի 3000 պելեպոնեսյան ստրուկների առաքումը Լանգոթարդիա¹⁵։ Գևորգ Վանականի Շարունակողը նկարագրում է նույն դեպքը, սակայն Դանիելիսի ստրուկներին ավելացնում է նաև այլ ստրուկներ ու Հայեր¹⁶։ Իրապատում տեղեկությունների այս ժանրը, եթե անգամ (ինչպես ցանկանում են ոմանք) Հալլի չառնենք Սալենտոյի Հելլենականացումը, ցույց է տալիս, որ Բյուզանդիայի սահմաններում, ուր թ-ԺԱ դարերում իր տեղն ունեւր Պուլիխան (ավելի մոտ արևելյան Միջերկրականին, քան Հելլենախոս Կալաբրիան), Հնարավոր է, որ, կայսերական իշխանությունների կազմակերպած ազգաբնակչության փոքրիկ տեղաշարժերի Հետևանքով, ծայր Արևմուտքի այս գոտի են բերվել որոշ արևելյաններ։

Այս դարաշրջանին բնորոշ է Իտալիա ուղարկված զորահրամանատարների և կատեպանների գեթ մի մասի Հնարավոր Հայկական ծագումը, միաժամանակ պետք է ընդգծել, որ նրանց վարքագիծը ոչնչով չի առանձնանում միևնույն պայտոնը զբաղեցրած կայսրության մյուս աղնվականների պահվածքից¹⁷։ Ինչպես Լանգոթարդիայի առաջին զորահրամանատար Սուլբատիկիոսը (891-892), այնպես էլ, Հավանաբար, կատեպաններ Հովհաննես Կուրկուսար (1008-1009/1010), Կոնստյոնտ Թոռնիկիոսը (1017)՝ Կեֆալոնիայի հին և Հելլադայի ապագա ստրատեգը, Հայկական ծագում ունեին։ Պետք է հիշատակել նաև 1043 թ. Իտալիայի կատեպան Բարսեղ Թեոդորոկանոսին, որը Հնտագայում մի Հայկական թեմի ստրատեգ դարձավ։ Ընդգծենք նաև, որ կատեպան Աբուլխարեսը (1063/64-

¹³ *Cronaca di Monemvasia. Introduzione, testo critico, traduzione e note* par I. Dujcev, Palerme, 1976 (*Istituto Siciliano di Studi Bizantini e Neellenici. Testi e Monumenti*, Testi, 12), էջ 12-15; Հմմտ. P. Lemerle, *La chronique improprement dite de Monemvasie, le contexte historique et légendaire*, տե՛ս *Revue des Études Byzantines*, 21, 1963, էջ 5-49; նույնի, *À propos de la Chronique de Monemvasie et de quelques textes apparentés*, տե՛ս *Zbornik Radova...*, VIII-2, 1964 (*Mélanges G. Ostrogorsky*, 1), էջ 235-240։

¹⁴ *Joannis Skylitzae Synopsis historiarum. Editio princeps*, par I. Thurn, Berlin-New York, 1973, էջ 151; Հմմտ. A. Jacob, *Une mention d'Ugento dans la Chronique de Skylitzès*, տե՛ս *Revue des Études Byzantines*, 35, 1977, էջ 229-235.

¹⁵ *Theoph. Cont.*, V, 77, éd. Bekker, Bonn, 1838, էջ 328.

¹⁶ H. Grégoire, *La carrière du premier Nicéphore Phocas*, տե՛ս *Prosphora eis S. Kyriakiden...*, Thessalonique, 1953, էջ 232-254, Հատկապես՝ էջ 249 և ծան. 23, էջ 251։

¹⁷ V. von Falkenhausen, *La dominazione bizantina nell'Italia meridionale dal IX all'XI secolo*, Bari, 1978, էջ 76-107. Հետևություններ արել է C. D. Fonseca, *Tra gli Armeni dell'Italia meridionale*, տե՛ս *Atti del primo Simposio internazionale di Arte armena* (Bergamo, 1975), Venise, 1978, p. 181 - 189.

1067/68) Հավանաբար արաբական ծագում ունեւր, իսկ Կալաբրիայի ստրատեգ Կրենիտսը (940-ական թթ.) Խալդիայից էր: 1048 թ. Բարիում լատիններենով գրված մի վավերագիր Հիշատակում է *Italie krñis Cricorius imperialis* -ին¹⁸: Այս ցանկին ավելացնենք *Κρικóριος προτοσπαθάριος ἐπὶ τοῦ μαγγλαβίου ὁ γεγονὸς κρίτις Ἰταλίας* -ի մասին վկայությունը, քանի որ այն վերաբերում է դեռևս իր բարձր դիրքում մնացած մի Հին կայսերական պաշտոնյայի, որը 1077 թ., Ռոբերտ Գվիսկարի կողմից քաղաքը գրավելուց մի քանի տարի Հետո, վավերագիր է ստորագրել Բարիում¹⁹: 892 թ., Համապատասխանաբար, Լանդգրադիայի ստրատեգներ Սուսթատիկոսի և Գեորգոսի կողմից գրված երկու վավերագրերը որոշակի բանաձևով ազդարարում են Հավանական Հայազգի պաշտոնյայի ներկայությունը²⁰:

Սակայն նման տեղափոխություններում նկատելի է միայն կենտրոնացված կայսրություն քնականոն դործունեության արդյունքը: Փոխարենը, անդրադառնալով միայն 1009 թ. Հակաբյուզանդական ապստամբության ղեկավար և ղեկի Պուլիխ Նորմանների առաջին ուղեկցող՝ Բարիի բնակիչ Մելի անվանը, որը կարող է Համեմատվել Հայկական ծագման Մլեհ-Մելիաս ձևի Հետ: Թեպետ չենք կարող Հաստատել երկու լեզվաբանական ձևերի Հարադատությունը (որն, այնուհանդերձ, թվում է քիչ Հավանական, քանի որ Մելը կարող է նաև լատինական ծագման բառ լինել), միայն պետք չէ մոռանալ, որ ապստամբը աղքատներում ներկայացված է իբրև լանդոբարդ, և որ նրա անունը այս դարաշրջանում Հանդիպում է ոչ միայն Բարիում, այլ նաև Սալեռնոյում²¹: Ինչպես իր որդի Արզիրոսը, նա իր Հրովարտականքում կրում է Պաֆլագոնիայի, Իտալիայի, Կալաբրիայի և Սիցիլիայի դուքսի տիտղոսը: Մտածելու տեղիք է տալիս նրա նշանակումը Պաֆլագոնիայում (այս պարագան թույլ է տալիս մտածել, որ նա կապ էի ունեցել այս տարածաշրջանի Հետ), քանի որ իտալական թեմերի քայքայմանը դեմ Հանդիման, նրան իշխանություն է տրվել մի տարածաշրջանում, որը նա լավ էր ճանաչել, և որ նա, Հավանաբար, միակն է եղել, որը կարող էր փրկել իրավիճակը²²:

Մեզ Համար ավելի գրավիչ է Հաստատել, որ Գեորգ Վանականի Շարունակողի Հայերի ժամանմանը վերաբերող վկայությունը արձանագրված է Ժ դարի վերջին և ԺԱ դարի սկզբին Բարիում կնքված որոշ վավերագրերով, որոնք նպատակ ունենք ներկայացնել մանրամասն քննությամբ:

Այդ վավերագրերից առաջինը թվագրված է 990 թ. Հունիսով²³: Փաստաթղթի Հեղինակը՝ Բարի քաղաքի վանական *Colotolhannes f.Dumneili* -ն, տեղական անուն

¹⁸ F.Nitti, *Le pergamene di S.Nicola di Bari. Periodo greco (939-1071)*, Bari, 1900, *վերահրատ.* տե՛ս Bari, 1964 (*Codice diplomatico Barese*, IV), n° 34.

¹⁹ F.Nitti, *Le pergamene di S.Nicola di Bari. Periodo normanno (1075-1194)*, Bari, 1902, *վերահրատ.* Bari, 1968 (*Codice diplomatico Barese*, V), n° 3; Հմմտ. V.von Falkenhausem, *La dominazione*, տե՛ս վերևում, ծան. 17, էջ 134.

²⁰ F.Trinchera, *Syllabus Graecarum membranarum...*, Naples, 1865, *վերահրատ.* տե՛ս Rome, առանց թվականի, n° 3. *Chronicon vulturense del monaco Giovanni*, éd. V.Federici, Rome, 1925-1938, 3 vol. (*Fonti per la Storia d'Italia*, 58 - 60), n° 80, II, p. 21 - 23.

²¹ Martin, *La Pouille*, տե՛ս վերևում, ծան. 7, էջ 520:

²² Նույն տեղում, էջ 704:

²³ F.Nitti, *Le pergamene* տե՛ս վերևում, ծան. 18, n°4:

կրող մի անձնավորություն է, սակայն վավերագիրը հրապարակ է բերում մի շարք անձնավորություններ, որոնք ներկայացված են էջեր հայեր:

Caloioannes -ը հաստատում է, որ իր հայր Diunnello -ն, գնել է և ոմն Bartisky Armena f. Moises Pacike -ից և այբի Corki Armeni -ից երեք կտոր հողատարածք Ջեյլիի դաշտավայրում²⁴: Սկզբում իր հայրը, ապա նաև ինքը մշակել են դրանք մինչև այն պահը, երբ վերջինս միանգամից զրկվել է հողերից (առևտրական դրանցից մեկից) և վաճառքի պայմանագրից: Իրոք, հողերից մեկը զբաղեցվել է Mele clericus f. Simagoni presbiteri et Armeni -ի կողմից, որը ջանացել է իր և իր ընտանիքի օգտին սեփականել այն: Իր հերթին, այս Մելի որդի Հովհաննեսը վաճառել է (կամ ալիքի շուտ թվում է, թե համաձայնել է վաճառել) դրա մի մասը Cricori f. qd. Achani Armeni -ին, որն այն դարձրել էր խաղողի այգի: Գտնելով իր հոր կնքած գնման պայմանագիրը, Caloioannes -ը միաժամանակ գործ է հարուցում Cricori -ի և Հովհաննեսի դեմ խաղողի այգու և մնացած հողատարածքի շուրջ: Բացի այդ, նա էլ վավերագրից դուրս տեղեկացնում է, որ Հովհաննեսը էլ իր կարող ներկայացնել ո՛չ վավերագիր, ո՛չ էլ որևէ վկայություն: Այնուամենայնիվ, նա Հովհաննեսին մի գործարք (conbenientia) է առաջարկում. նա թողնում էր Հովհաննեսին խաղողի այգին (որի վրա Cricori -ին մեծ ներդրումներ էր կատարել, տնկելով 50 տեսակ խաղող) և ետ էր վերցնում մնացած հողը:

Սույն վավերագիրը վերաբերում է այդ գործարքին: Որոշվում են ունեցվածքի երկու մասերի միջև անցնող սահմանները, որոնցից մեկը մոտենում է Caloioannes -ի այն հողին, որը ժամանակին զբաղեցվել էր Sepi հայի կողմից: Հովհաննեսը նրան իբրև երաշխավոր ներկայացնում է Cricori f. Petrosi Armeni -ին, հակառակ դեպքում՝ 20 սուլ տուգանք էր վճարվելու Կոստանդինին: Վավերագիրը գրված է (լատիներենով) Բարիում, հոգևորական և նոտար Amatus -ի կողմից: Վավերագիրը ստորագրվել է գործարքին միջնորդած հետևյալ boni homines -ների կողմից. Լեոնի, որը ստորագրել է հունարեն, երեցներ Անդրեի և Falkus -ի, ինչպես նաև Հովհաննեսի, որոնք օգտագործել են լատիներենը և վերջապես Յուսեփի, որը ստորագրել է հայերեն՝ մի բացառիկ դեպք հարավային Իտալիայի մասին մեր իմացությունների տեսանկյունից: Թեպետ բնագրում Armenius որակավորումը նոտարի կողմից տրվում է մի շարք անձնավորությունների, պետք է ընդգծել, որ երեցն է միայն ստորագրում հայերեն:

Այս վավերագիրն արժանի է մեկնաբանության: Իրոք, գրեթե քառորդ դար էր անցել, ինչ կայսերական իշխանությունները Լանգոթարդիայի թեմը վերածել էին Իտալիայի կաթոլիկանության և, քիչ բնակեցված շրջաններում, նոր քաղաքներ հիմնադրելու գործուն քաղաքականություն էին որդեգրել²⁵: 990 թ. ավարտվեցին առաջին երկու Օտոնների հարավային ռազմարշավները*, սակայն Սիցիլիայի մուսուլմանները Կալաբրիայում, ինչպես նաև Պուլիիայում շարունակում էին պահպանել ակտիվությունը. 998 թ. նրանք ավարտեցին Բարիի

²⁴ Ջեյլի դե Կամպոն (Cegli del Campo) գտնվում է Բարիի տարածքում, քաղաքի կենտրոնից 7 կմ հեռու:

²⁵ J.-M. Martin, *Le système défensif byzantin en Italie méridionale*, հրապարակվելու է *Il castello di Taranto nella strategia difensiva del Mezzogiorno dalla ricostruzione bizantina all'età aragonese* (Taranto, 1992) գիտաժողովի նյութերի մեջ:

* [Եկտեի ունի գերմանական կայսրեր Օտոն Ա-ի (935-973) և Օտոն Բ-ի (973-983) Իտալական ռազմարշավները - Ա.Բ.]:

արվարձանները²⁶: Ենթադրում ենք, որ տարածքի առավելագույն նվաճման քաղաքականությունն իրագործելու նպատակով որոշ հայ վերաբնակիչների բյուզանդական իշխանությունները պարտադրում էին գաղթել Իտալիա, նույն դարաշրջանում, երբ Բյուզանդիան Կապադոկիա էր տեղափոխում հայերին²⁷: Կարծում ենք, որ Ձեյլիում Հիշատակվածները կարող էին վերաբնակված լինել մեկ-երկու տասնամյակ առաջ. քանի որ հայտնի է մի հայ, որը երեք Հոդակտոր է վաճառել Caloiohannes-ի հորը՝ նրա մահից քիչ առաջ, հանգամանք, որը մեզ տալիս է մինչև կատեպանության սկիզբը: Այս վերաբնակներին, ըստ մեր տեղեկություն, նոր էին տեղավորել կատեպանության ապագա մայրաքաղաքի շրջակայքում. ավելին, 1045 թ. Մուլֆետայում (Բարիից մի քանի կիլոմետր հյուսիս-արևմուտք, Ժովափին), մի Հոդակտորի սահմանների նկարագրության մեջ, հանդիպում ենք *binee Cocci Armeni* -ի վկայության²⁸: Սակայն, արդեն 990 թ., նրանք ներկայացնում են որոշակի կարևորության մի խումբ: Նրանց մեջ թվարկվում է մի քահանա, որը Հիշատակվում է *boni homine* -ների մեջ և արտահայտվում իր մայրենի լեզվով, բացի նրանից Հանդիպում ենք նաև մի քահանայի որդու: Մյուս կողմից, այս փոքրիկ միջավայրում, ուր մեզ թույլ է տալիս թափանցել վավերագրեր, Caloiohannes -ը շրջապատված է միայն հայերով, որոնք մեկը մյուսից անկախ են գործում. վաճառող, Հափշտակիչ, *Cricori* և *Sepi* վարձակալներ, և վերջապես մի երեք: Բացի այս վերջինից (որի մասին ոչինչ չգիտենք), նրանք սեփականատեր կամ ունեոր են: Թվում է, թե որոշակի Համերաշխություն է տիրում այս փոքրիկ Համայնքում, քանի որ նրա անդամներից գրեթե յուրաքանչյուրը ուղղակիորեն Հիշատակվում է իբրև *Armenus*:

Մեր թեմային առնչվող մի երկրորդ վավերագիր էլ 1005 թ. է Հաստատվել Բարիում²⁹: Բարիի ընտանեկան գույք՝ *Eustrati f. Petri* -ին և նրա տիկին *Sanda* -ն Հայտարարում են, որ Բարիում իրենց է պատկանում մի երկհարկանի տան կեսը, որի առջև փոքրիկ բակ կա, և որ մոտակա բակը առաջ պատկանում էր *Amatus f. Muscellii* -ին, իսկ այժմ անցել է նրա *nepotes* -ներին (անկասկած նկատի ունի թոռներ) *Maio* -ին, *Urso* -ին և *Lupo* -ին: Այս կալվածքը գնել են *Eustratia* -ի հայրը և Հորեղբայրը ոմն *Petrosi f. Muscellica* -ից, նրա մայր Աննայից և վերջինիս ամուսին *Iemma* -ից: *Eustrati* -ն և նրա ամուսինը ցանկանում են վաճառել իրենց մասնաբաժինը: Կալվածքը, ինչպես ճշտում են նրանք, մոտ է Մովսես Հայ վանականի կառուցած Ս. Գևորգ եկեղեցուն: Նրանք տուներ վաճառում են 10 և կես սուռով, ոմն *Auria f. Curnsfriede* -ի վրա:

Ֆրանսերենից թարգմանեց
ԱՋԱՏ ԲՈԶՈՑԱՆԸ

Շարունակելի

²⁶ J. Gay, *L'Italie méridionale et l'empire byzantin depuis l'avènement de Basile I^{er} jusqu'à la prise de Bari par les Normands (867-1071)*, Paris, 1904 (BÉFAR, 90), էջ 366-370:

²⁷ G. Dedeyan, *Les Arméniens en Cappadoce aux X^e et XI^e siècles*, տե՛ս *Le aree omogenee della Civiltà Rupestre nell'ambito dell'Impero Bizantino: la Cappadocia*, sous la dir. de C.D. Fonseca, Galatie, 1981, էջ 75-95.

²⁸ M. Morcaldi, M. Schiani, S. De Stephano, *Codex diplomaticus Cavensis*, VI, Milan-Naples-Pise, 1884, n° 1050.

²⁹ Nitti, *Le pergamene*, տե՛ս վերևում, ծան. 21, n° 9.

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐ «ՅԱՅՍՄԱՌՈՒՐՔ»-Ի ՄԵՋ

Հայ Առաքելական Եկեղեցու ծիսական հինգ կարևոր ժողովածուներից է «Ծայսմաւորք»-ը: Նրանում տեղ են գտել տարբեր դարերում գրված վարքեր ու հիշատակություններ, ինչպես նաև թարգմանություններ, որոնք ավելի հին են համարվում: Ժողովածուն կազմող հեղինակները ևս հայտնի են տարբեր ժամանակներից (Տեր Իսրայել, Կիրակոս վրդ. Արևելցի, Գրիգոր Ծերեմց խլաթեցի և ուրիշներ):

Ըստ «Նոր բառգիրք հայկազենա լեզուի» (հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837, այսուհետև՝ ՆՀԲ) աշխատության հեղինակների՝ ժողովածուի «շարադրության ոճը (իմա՝ լեզուն - Վ. Հ.) ամբողջովին պարզ է և հետագա (դարերի լեզվին բնորոշ)», այլև ժողովածուի նյութերը «բառացի ընդօրինակված (են) միայնցից՝ ինչ-ինչ փոփոխմամբ, կրճատումով և հավելումով» (ՆՀԲ, հ. 1, էջ 16):

Մի առիթով «Ծայսմաւորք»-ից նյութեր քաղելիս և թարգմանելիս մեր ուշադրությունը գրավեցին Սրբոց Թարգմանչաց վերաբերյալ հատվածներում հանդիպող որոշ բառեր: Վերջիններս ստուգեցինք հիշյալ «Հայկազյան բառարանի», ինչպես նաև մրա հիման վրա կազմված ու մրան հավելյալ բառահոդվածներ պարունակող «Առձեռն բառարան հայկազենա լեզուի» (2-րդ տպագր., Վենետիկ, 1865, այսուհետև՝ ԱԲ) տվյալներով, և պարզվեց, որ որոշ նյութեր (բառեր) հիշյալ բառարաններից կա՛մ բացակայում են առհասարակ, կա՛մ այլ կերպ են մշակվել դրանցում:

«Ծայսմաւորք»-ի մեջ Սրբոց Թարգմանչաց նվիրված գործերը ընդամենը հինգն են՝ ա) «Թիշատակ վարուց մահուան Սրբոյն Հայրապետին Սահակայ Պարթևին մերոյ» (Նաւասարդ Լ, սեպտեմբեր Թ, էջ 73-76), բ) «Թիշատակ Սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ և աշակերտաց մոցա» (Հռոի Ը, սեպտեմբեր ԺԷ, էջ 93-95), գ) «Գիւտ գրոյն Հայոց, որ ի Բալու» (Տրե ԺԷ, մոյսեմբեր ԻԵ, էջ 269-271), դ) «Թիշատակ Սուրբ Հօրն մերոյ վարդապետին Մեսրոպայ» (Մեհնկի ԺԳ, փետրվար ԺԹ, էջ 499-501) և ե) «Վարք և յիշատակ Սրբոյն Սահակայ» (Մարերի ԻԲ, մայիսի ԻԹ, էջ 778-779):

Ասեմք նաև, որ Հ. Աճառյանը ժամանակին «Հայոց գրերը» գրքում (վերահրատ., Երևան, 1984, էջ 294) սրանցից՝ նշում է միայն չորսը (մեր թվարկածի առաջին չորսը՝ բաց թողնելով 5-րդը): Իսկ մեկ այլ տեղում (էջ 85) երբ խոսում է հայոց գրերին առնչվող հին աղբյուրների շուրջ, իբրև 25-րդ աղբյուր է հիշատակում «Ծայսմաւորք»-ը, որում եղած հիշյալ չորս գործերին ավելացնում է նաև այն, որ է «Վարք և յիշատակ Սուրբ Հայրապետին մերոյ Մաշտոց վարդապետին» (Սահմի Դ, հոկտեմբեր ԺԳ), այն է՝ Մաշտոց Եղիվարդեցի Կաթողիկոսին վերաբերող հատվածը:

«Ծայսմաւորք»-ի հիշյալ հատվածներից մեր քաղած բառերը մեկ տասնյակ են: Եվ իբրև ընդհանուր դիտողություն, հարկ ենք համարում նշելու հետևյալը: Նախ՝ այդ բառերի մի մասը չենք գտնում ՆՀԲ-ում և ԱԲ-ում, որն ինքնին

ուշագրավ է: Երկրորդ՝ կամ այնպիսի բառեր, որոնք բացակայում են ՆՀԲ-ից, բայց հասկանալի պատճառներով առկա են ԱԲ-ում, այսինքն՝ վերջինիս մեջ դրանք հավելում են կամ լրացում: Երրորդ՝ այդ բառերից մեկ-երկուսը ՆՀԲ-ում վկայակոչվում են կա՛մ հետին հեղինակների, կա՛մ միայն «Թայսմաուրք»-ի տվյալների հիման վրա: Եվ չորրորդ՝ որոշ բառերի դեպքում գործ ունենք բառի-մաստալին մոր կիրառությունների հետ, որպիսիք չեն մատնանշվում ՆՀԲ-ի մեջ:

Այդ և մնացած կարգի բառերը մոտություն են ոչ թե առհասարակ, այլ այն նկատառումով, որ ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել գրաբարի ամենաընդարձակ բառարաններից (թեև դրանց մի մասը գտնում ենք, օրինակ, ԱԲ-ում): Ուստի որոշակի պայմանականությամբ է, որ այդպիսի բառերը համարում ենք մոր:

Իսկ ճշմարտությունն այն է, որ դրանք ժամանակին գործածական են եղել կամ կազմվել են որևէ առիթով, ընդ որում՝ տարբեր (այս դեպքում՝ «Թայսմաուրք»-ի հիշյալ հատվածների) հեղինակների ձեռքով: Դրանք այդ ժամանակից էլ սկսած հայտնի բառեր են, սակայն թե՛ ՆՀԲ-ի (մասամբ՝ ԱԲ-ի) հեղինակների և թե՛ հետագա հայերենագետների կողմից չեն արժանացել որևէ ուշադրության՝ հատկապես հայոց լեզվի բառապաշարի պատմության տեսակետից: Եվ ըստ այդմ մնացած իրողությունները հավաստիորեն պիտի կոչվեն չբառարանագրված, իսկ պայմանականորեն՝ մորահայտ բառեր: Ի դեպ՝ եթե նույնիսկ հետազոտող-ներն այդ բառերին՝ ուղենային անդրադառնալ մաս մասիկիմում, ապա այդ պարագայում ևս դրանք պիտի կոչվեին մորահայտ (մեղ իմաստով՝ մոր) բառեր, իսկ ավելի հետագա ուսումնասիրողներ համար դրանք արդեն կլինեին ոչ թե մորահայտ, այլ բառագիտորեն ուսումնասիրված բառային միավորներ:

Այնուհետև, հայ եկեղեցական գրականության բառապաշարի տեսակետից այդ կարգի բառերի վերահանումն այսօր բավականին կարևոր է, և առաջիկայում ևս կարելի է քննության առնել «Թայսմաուրք»-ի ողջ բառամթերքը: Իսկ սա արժեքավոր կլինի նրանով, որ որոշակի գաղափար կունենանք այն մասին, թե ինչ բառեր են կազմվելիս եղել ժամանակի հոգևոր և մտավոր պատկերացումների ստույգ անվանման նպատակով: Եվ առհասարակ գրաբար հայերենով մեզ հասած հոգևոր գրականության յուրաքանչյուր բառ, ամեն մի նախադասություն պիտի հասկանալի լինի ըստ ամենայնի, ամհրաժեշտության դեպքում՝ թարգմանվի ստույգ, ըստ էության և ոչ թե ըստ երևույթին, մոտավորապես:

Ստորև առանձին-առանձին անդրադառնում ենք այդ բառերին:

1. Անապատաւոր («անապատական, անապատի բնակիչ»): Ածանցավոր այս բառը (անապատ-աւոր) գտնում ենք թե՛ ՆՀԲ-ում (հ. 1, էջ 110) և թե՛ ԱԲ-ում (էջ 42), սակայն միայն մեկ՝ ԶԼ. կթ., այն է՝ Մաշտոց Եղիվարդեցու աշակերտ Հովհաննես Կաթողիկոսի (Թ-Ժ դդ.) Պատմագրությունը երկի վկայակոչումով. «Թաշխարհի գոլով՝ և իբրև զանապատաւորս ընդ կարգ աշխարհի անցանէր»: Բառը կիրառված ենք գտնում ման «Թայսմաուրք»-ի մեջ (էջ 74, ման 298 և այլն), որ լրացնում է ՆՀԲ-ի վկայության թիվը, և առայժմ չենք կարող ասել, թե այդ երկու վկայությունից որն է ժամանակով ավելի նախնական. «Եւ մոքօք հանապազորդ զպաշտօնն իւր կատարէր առաւել, քան զանապատաւորսն» (Թայսմ., էջ 74): Այս հատվածը մոտ է Մովսես Խորենացու հետևյալ նախադասությանը. «Որովք մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն, որպէս զայնս, որք յանապատսն էին» (Խոր., էջ 320):

Անապատաւոր բառի կազմությունը միանգամայն պարզ է. այն մակբայ է, որ հոմանիշ է անապատական ածականին, որոնք և կարող էին գործածվել

իրեն գոյական՝ նշելու «անապատի բնակիչ, ճգնափոր, անապատում ապրող ճգնափյաջ անձ, նվիրյալ» իմաստները:

2. Աստուածամկար («Աստծու պատկերն ունեցող»): Այս բառը չենք գտնում ՆՀԲ-ում (Ռ. 1, էջ 327), սակայն բերվում է ԱԲ-ում (էջ 125), որտեղ հիշվում է, որ բառն ունի «Աստծով նկարված» իմաստը: Եվ քանի որ ԱԲ-ն առհասարակ չի տալիս որևէ բառի, ինչպես և աստուածամկար-ի համար վկայություն, ուստի այն ադունեետն պիտի վկայակոչվի «Յայսմաւորք»-ի հիշյալ հատվածի հիման վրա: Իսկ այստեղ բառը գործածվում է իրեն էջմիածնի կաթողիկեի բնութագրիչ բառ. երբ հարց է ծագում, թե Սուրբ Մեսրոպին որտեղ պիտի հուղարկավորեն, վեճ է լինում. «Եւ կէսքն ասեի՜ն՝ թաղել զնա ի նմին քաղաքի ընդ հովանեաւ հոյակապ և աստուածամկար Սուրբ Գրիգորաշէն կաթողիկէ էջմիածնին» (Յայսմ., էջ 237):

Բառը կազմությամբ բարդ է՝ բաղադրված Աստուած և մկար («տեսիլ, պատկեր, կերպ և այլն») բառերով: Բառակազմությունը միանգամայն սովորական է, իսկ իմաստը՝ լրիվ ընկալելի (հմտ. աստուածապատկեր, աստուածակերպ, աստուածատեսիլ և այլն): Ուստի «Յայսմաւորք»-ի հիշյալ հատվածի հեղինակն իրավամբ ազատ է եղել նոր բառաձև կերտելու գործում՝ հիշյալ բառափոխությունը իմաստաբանորեն համալրելով ևս մեկ բառով:

3. Արիւնամերձ («արենակից, ազգական»): Կազմությամբ բարդ այս բառը (արիւն-ա-մերձ) չուենք ՆՀԲ-ն և ԱԲ-ն, իսկ իմաստով միանգամայն հասկանալի է. «Եւ ասաց զտեքնութիւնն իւր, զոր ունէր առ սուրբն վասն ազգականութեանն և արիւնամերձ գոլոյն» (Յայսմ., էջ 74): Բառակազմորեն այդ բառին մոտ է արիւնակից («ազգակից») բառը, և դրանք լայն առումով էլ նույն իմաստն ունեն: Ուստի «Յայսմաւորք»-ի հիշյալ հատվածի հեղինակին գրեթե ոչինչ չի խանգարել նոր բառ կազմելու համար:

4. Գրիգորաշէն («Ս. Գրիգորի շինած՝ կառուցած»): Այս բառը գործածված ենք տեսնում նույն հատվածում, ինչ աստուածամկար բառը՝ հանդես գալով իրեն Ս. Էջմիածին բառի լրացում. «Եւ կէսքն ասեի՜ն՝ թաղել զնա ի նմին քաղաքի ընդ հովանեաւ հոյակապ և աստուածամկար Սուրբ Գրիգորաշէն կաթողիկէ էջմիածնին» (Յայսմ., էջ 237):

Բառը չենք գտնում ՆՀԲ-ում և ԱԲ-ում: Այն բաղադրված է գոյականական և քայական բաղադրիչներով՝ արտահայտելու որոշչային քերականական իմաստ, իրեն լրացում Ս. Էջմիածին հատուկ անվան:

5. Եկեղեցի («յեկեղեցի»): Այս գրչությանմբ բառը «Յայսմաւորք» ժողովածուի հետևյալ հատվածում ունի մի տեսակ անսովոր իմաստով կիրառություն. «Եւ նախ յեկեղեցիմ զՀոռոմ գիրն ի հայերէն այբուբենն, և ապա զթերին լցին աստուածատուր շնորհօքն» (Յայսմ., էջ 207): Նախադասության բովանդակությունը միանգամայն պարզ է, եթե բացառենք յեկեղեցիմ բառաձևը, որը որոշակի դժվարություն է հարուցում, մանավանդ որ նախադասության առաջին մասում բացակայում է ստորոգյալը:

Հարցի լուծման նպատակով թերևս կարելի է առաջ քաշել երկու վարկած. ա) յեկեղեցիմ բառի գրչությունը ճիշտ է, և այն պիտի հասկանանք ինչ-որ (մի արտաստվող) իմաստով, բ) առկա է գրչագրական կամ տպագրական սխալ, որը պետք է կա՛մ ճշգրտել համապատասխան այլ տվյալներով, կա՛մ կոաճել ճիշտ ձևն ըստ բնագրային հատվածի:

Նախ՝ առաջին վարկածի մասին: Հայտնի է (ըստ ՆՀԲ-ի) եկեղեցի (<հուն. էկկլիսիա «արտակրչություն, հրավեր հավաքման» (բառի երեք իմաստ. 1) «կոչ, կոչարան, ժողով, ժողովարան», 2) «եկեղեցի Ջրիստոսի, Աստծու

հավատացյալ կամ դեպի սուրբ հավատ կանչված ժողովուրդ՝ «Քրիստոսի հոտ», 3) «կառույց, տաճար, ժամ»: Ավելին, այն հին եկեղեցի բառակապակցությամբ նշանակում էր «Տուն իսրայելի, հրեա ժողովուրդ, Աքրահամից մինչև Քրիստոս», իսկ եկեղեցի ձեռլեռնացուց բառակապակցությամբ՝ «հույների ժողով և ատյան Աթենքում»: «Թայսմաուրք»-ի մեք, եթե ճիշտ է ձևը, բառն ունի հիմքում «ժողով, միասին», մանավանդ «ի մի գալ, ժողովվել, ի մի բերել» իմաստները՝ շատ ընդհանուր ձևով: Իսկ առանձին վերցված՝ այդ ենթադրելի իմաստներն այնքան էլ վստահություն չեն ներշնչում, թեև խոսքը վերաբերում է հունական գրերին, որոնք իբրև մեկ ամբողջություն («ժողովված մեկտեղ, ի մի բերված մեկ խմբով»), եթե ընդունենք այն տեսակետը, որ հայոց գրերի մի մասն առնված է հունականից կամ ստեղծված հունարենի (մախ)օրինակով, իսկ մնացածը՝ Մեսրոպի ձեռքով՝ աստվածային ներշնչմամբ, ինչ-որ չափով հիմք են հանդիսանում հայոց գրերի հորինմանը: Եվ նկատի ունենալով այս, ինչպես նաև այն հանգամանքը, որ մեզանում (եթե իրոք դա այդպես է եղել) հունական գրերի մի մասի ընդօրինակումով (իբրև մեկ ամբողջություն, ի մի բերված խումբ՝ «եկեղեցի»), ըստ «Թայսմաուրք»-ի տվյալների, վերցվել է և հետո դրան ավելացվել Մեսրոպի ստեղծածը, այդպիսով կազմվել հայկական այբուբենի համակարգը («հայոց գրերը»): Միայն այս տեսակետից է հնարավոր «Թայսմաուրք»-ի մեջ գործածված յեկեղեցին ձևը բացատրել որպես «ի մի բերեցին, իբրև մեկ ամբողջություն, մաս՝ օգտագործեցին» իմաստի նշանակիչ:

Այժմ երկրորդ վարկածի մասին: Կարելի է կարծել, որ յեկեղեցին ձևը գրչագրական կամ տպագրական սխալ է (վրիպում), մանավանդ որ եթե այդ ձևը չենք ընդունում իբրև բայ-ստորոգյալ ցույց տվող բառ, որը շատ անհավանական է, ապա պիտի այդ ձևում տեսնենք մի այնպիսի վրիպում, որով աղավաղված լինի ինչ-որ բայ, որ եղել է հատվածի առաջին մախադասության ստորոգյալը: Այսպես ենք կարծում, որովհետև երկրորդ մախադասության ստորոգյալն է լիցին, իսկ առաջինը չունի որևէ ստորոգյալ, այնինչ պարզ ասվում է, որ հունարեն գրերի հետ ինչ-որ կերպ վարվեցին, այնուհետև թերին լրացրին աստվածատուր շնորհներով: Ուստի եթե մտածենք, որ հունական գրերի նկատմամբ ինչ-որ վերաբերմունք ցուցաբերվեց («յեկեղեցին»), այն է՝ «յեկեղեցին ի հայերեն այբուբենն», ապա նոր «թերին լրացրին», նշանակում է, որ յեկեղեցին-ը պիտի սրբագրվի, ասենք՝ յեղեցին (յեղեմ, յեղում), կամ ավելի հավանական է՝ յեղյեղեցին (յեղյեղեմ, յեղյեղեալ), որ սովորական իմաստներից բացի գրաբարում նշանակում էր «յեղանակել, շրջել, շրջըրջել, դարձնել, հետազոտել» (ՆՀԲ, հ. 2, էջ 354-355): Այսպես կարծելն ավելի հավանական է, քան մախորդ վարկածի ձևով մտածելը:

Ըստ այդմ՝ «Թայսմաուրք»-ի տպագիրը (Կ. Պոլիս, 1706) յեկեղեցին բայը, որ եղել է մախադասության ստորոգյալը, վրիպակով կամ թերևս ձեռագրից եկող թյուրըմթերցմամբ շարել է յեկեղեցին բառով, որտեղ վրիպել են, դ (եթե յ-ն կրկնավորի դեպքում բաց թողնվի) տառի փոխարեն գրվել է Կ տառը, որն էլ տվյալ հատվածի մեջ հարուցում է որոշակի դժվարություն:

6. Երկարաշունչ («տևական շունչ, երկարահունչ», այլև՝ «երկար՝ շունչ ունեցող»): Այս բառը չենք գտնում ո՛չ ՆՀԲ-ում և ո՛չ էլ ԱԲ-ում. «Եւ Սուրբն Իսահակ ժողովեաց յամենայն աշխարհէս հայոց մանկունս ուշեղս և քաղցրաձայն յերկարաշունչս և քաջ ուսմունս. և կարգեալ դպրոց՝ ուսուցին զքնաւ աշխարհս հայոց» (Թայսմ., էջ 74): Բառի կազմությունը շատ սովորական է, իսկ իմաստը՝ ըմբռնելի: Այդ հատվածը մեզ հիշել է տալիս Մովսես Խորենացու

Միայն այս հատվածի հիման վրա ՆՀԲ-ում, նաև ԱԲ-ում ինքնուրույն բառահոդված առանձնացնելը մեզ թույլ է տալիս նախաթարգմանել բառը դիտելու «Ծայսմաուրջ»-ի յուրահատուկ բառերից: Իսկ քանի որ ըստ այդմ բառն արդեն հայտնի է եղել հայոց լեզվի բառապաշարն ուսումնասիրողներին, մնում է միայն ընդգծել, որ նախաթարգմանելով ՆՀԲ-ում միակ վկայությանը, այն է՝ «Ծայսմաուրջ»-ի հիման վրա հաստատագրվելու պատճառով է, որ այստեղ դառնում է մեր ուշադրության առարկան, և դրա մասին խոսում ենք «նորահայտ բառ» հորջորջմամբ՝ որոշակի և հասկանալի պայմանականությամբ:

9. Ծաղփաղփաբան («դատարկախոս, այլաձև խոսող»): Այս բառը հանդիպում է ՆՀԲ-ում (հ. 2, էջ 462), նաև ԱԲ-ում (էջ 629): ՆՀԲ-ն տալիս է «շաղփաղփ» այլաձև խոսքի մեջ՝ իմաստը՝ վկայակոչելով լուկ «Ծայսմաուրջ»-ի մեկ համատարտ նախադասություն, թեև նշում է բնագրերի տարբեր հատվածներ. «ընդէ՛ր իջեր ի շաղփաղփաբան (կամ ի շաղփաղփամս) Ասորիս». խոսքն ուղղված է Մեսրոպին, որ գնացել էր արտասահման՝ գիտական որոնումների: Այս մասին ունենք երկու վկայություն, որոնցում և գործածված ենք գտնում շաղփաղփաբան բառը. «Ջայն որ իջեր ի շաղփաղփաբան Ասորիսն և աշխատեցեր, ընդէ՛ր ոչ եկիր առ մեծն Յոհան Ոսկեբերան՝ որ աղբիւր էր գիտութեան, զի փութով հասանէիր փափազանաց քո» (Ծայսմ., էջ 94), այլև՝ «Եւ սակաւ ինչ մեղադրեցին նմա սիրով. թէ ի շարժելն ձեր ի խնդիր գրոյն ընդէ՛ր իջեր ի շաղփաղփաբան Ասորիսն և ոչ եկիր առ աղբիւրն իմացութեան՝ յԱստուածազգեսցն ի Հայրապետն Յոհաննէս ոսկի Բերանն: Եւ ի մնալէ այլ դիւրաւ գտանէիր զմխիթարութիւն սրտի քո» (Ծայսմ., էջ 498):

Բառը կազմված է շաղփաղփ («շաղկրատ, դատարկախոս, վարիվերո և այլն») և բան («խոսք, գիտելիք և այլն») բաղադրիչներով, որ շատ բնորոշ նշանակ է հայերենի բառակազմության համար առհասարակ: Առաջին բաղադրիչն իրեն ինքնուրույն բառ կրկնավոր կազմություն է շաղփ արմատից, որ թեև չենք գտնում ՆՀԲ-ում, սակայն կա Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ում (հ. 3, էջ 490, այսուհետև՝ Արմ.) Այդ արմատը հայերենում դեռևս ստուգաբանված չէ, թեև եղել են ենթադրություններ:

10. Սոպո («բիրտ, կոպիտ»): Այս բառը ևս չենք գտնում ՆՀԲ-ում և ԱԲ-ում, սակայն կա «Ծայսմաուրջ»-ի մեզ հանդիպած հետևյալ երկու նախադասության մեջ. «Եւ նստան լոռութեամբ անընդունակ եղեալ ի սոպո և ի բիրտ ազգէս հայոց՝ մինչև յօր վախճանի իրեանց» (Ծայսմ., էջ 94). «Եւ նստան լոռութեամբ անընդունակ եղեալ ի խստապարանոց՝ ի բիրտ և ի սոպո ազգէս հայոց» (մ. տ., էջ 501):

Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ում (հ. 4, էջ 243) հանդիպում է սոպո բառը՝ «բիրտ, կոպիտ» իմաստով, որի համար բերվում են ոչ միայն «Ծայսմաուրջ»-ը, այլև ուրիշ հեղինակներ՝ իբրև վկայություն: Նշվում է նաև, որ այդ բառից ունենք ածանցավոր սոպոություն («կոպտություն») կազմությունը, և երկու բառն էլ համարվում են «նորագյուտ»:

Այս պարագայում կարևոր է ուշադրության առնել հետևյալը: Հ. Աճառյանը չի տալիս սոպո բառի ստուգաբանությունը, ոչ էլ համեմատում է հայերեն այլ բառերի հետ: Այնինչ կարծում ենք, որ սոպո-ը արմատով առնչվում է շոպել («հափշտակել, կորզել, խել») և սոպել («համարձակել, հանդգնել, մի բանի վրա քջել») բառերին (հմմտ. ՆՀԲ, հ. 2, էջ 728, Արմ., հ. 3, էջ 531 և հ. 4, էջ 243): Այնուհետև շոպել բայի շոպ արմատը (նաև շորպ տարբերակը), ըստ ՆՀԲ-ի և «Արմատական»-ի, ունի շուպել ձև ևս, իսկ ո սաստկական ածանցով՝ նաև շոպոնել (ըստ «Հին հայկազյան բառարան»-ի և Երեմիա Մեղրեցու բառարանի, էջ 247) ձևը (հմմտ. հայ. ճկել-ճկոնել, ճանկել-ճանկոնել և այլն): Նկատելի է,

որ շոպ արմատը սոպ-ի արտասանական մի տարբերակն է, և դրանք ունեն համաստալին որոշակի ընդհանրություն (հմմտ. «հափշտակել» և «համարձակվել»): Ավելին, սոպ պարզ արմատից առաջացած սոպել («համարձակվել, իշխել, հաճել, ընտրել») բառը (տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 728) դիտվել է իբրև «ամհայտ և անստույգ» բառ, և ըստ այդմ էլ Ոսկեքերամի «Մեկնություն Մսայեայ»-ի ղնագրի մեջ այսպիսեաց սոպեն բառակապակցությունը սրբագրված է ապապիսեացս ոպեն ձևով: Կարծում ենք, որ այստեղ բնագրային խախտում, աղավաղում չկա, և իզուր են Ոսկեքարանի բնագիրը կազմողները «սրբագրել» սոպել բառը: Ուստի և անտեղի է ԱԲ-ն (էջ 728) դուրս թողնում սոպել բայն իր ցանկից, իսկ Աճառյանը, հետևելով ՆՀԲ-ին և ԱԲ-ին, իզուր է այդ բառը դիտել իբրև կեղծ բառ (Արմ., հ. 4, էջ 243):

Ամբողջ հարցն այն է, որ շոպ արմատի շորպ տարբերակը, որ տալիս է ՆՀԲ-ն (հ. 2, էջ 489), այլ բան չէ, քան դրափոխված ձևը շոպր-ի, որն էլ ամբողջովին համընկնում է սոպո-ի հետ, եթե բացառենք ս-2, ո-ր հնչումները: Սա ապացուցվում է ոչ միայն նրանով, որ հայերենի բարբառներում առկա է շորփել (Բուլանուխ, խնուս, Մուշ, Նոր Բայազետ և այլն) բայը, որ հնչում է շորփել, նաև շօռպել (Մուշ), այլև գրականում ունենք շորթել («հափշտակել, խելել, փախցնել»), շորթում («փախցնելը, խելել և այլն») ձևերը, որոնք ևս ծագումով ընդհանուր են նախորդ ձևերի հետ: Այս հարցում ավելի հեռու գնալը դուրս է մեր այստեղ հետապնդվող նպատակից:

Այսպիսով, «Թայսմաուրք» ժողովածուի որոշակի հատվածներում առկա ճիշտ մեկ տասնյակ բառերը, ամկախ իրենց բառարանագրական արտացոլման աստիճանի տարբերություններից, արժեքավոր են ոչ միայն Հայ Առաքելական Եկեղեցու կարևորագույն մի ժողովածուի կոմկրետ բառապաշարի, այլև առհասարակ հայոց լեզվի պատմության համար:

ԳՐԻԳՐԻ ԲՐՈՒՏԵԱՆ

**ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ ԹՈՒՄԱԿԱՆ
ԸՍՏ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՄԻՆԴՈՅԹԻ**

Հայ միջնադարեան մատենագրութեան մէջ՝ պատմագրական, ժամանակագրական եւ այլ բնոյթի բազմաթիւ երկերում ի թիւս ժամանակագրական այլ համակարգերի յաճախ կիրառուած է նաեւ Յիսուս Քրիստոսի ծննդեան թուականը¹: Թեպէտ վաղ միջնադարի հայ հեղինակները չեն գործածել այս թուահաշիւը, սակայն արդէն ժԲ դարից սկսեալ հայ մատենագրութեան մէջ լայնօրէն օգտագործուած է «ի ծննդէն Քրիստոսի» տարեհաշիւը: Հարկաւ, աւելի վաղ շրջանի երկերում եւս կան Քրիստոսի ծննդեան ժամանակից տարիները հաշուելու եզակի դէպքեր, սակայն դրանք տարեհաշուի համակարգի բնոյթ չեն կրում: Այս ժամանակագրական համակարգը լայնօրէն կիրառուած է Սամուէլ Անեցու (~1100–1190թթ.), Մխիթար Անեցու (ԺԲ դ.), Մխիթար Այրիվանեցու (~1222–1291թթ.) եւ այլոց երկերում²: Քրիստոսի ծննդեան թուականի կիրառումը արդէն սովորական է դառնում ուշ միջնադարի հայ մատենագրական եւ այլ³ երկերում:

Չնայած այս թուականի բաւական լայն կիրառութեանը, այդուհանդերձ, տարբեր առիթներով նկատուել է, որ միջնադարեան հայ իրականութեան մէջ կիրառուած Քրիստոսի ծննդեան թուականը տարբեր է ներկայումս համատարած օգտագործուող Փրկչական թուականից⁴, որ յաճախ կոչուած է նաեւ «մեր թուարկութիւն», կամ «նոր թուարկութիւն»: Արեւմտեան գրականութեան մէջ ընդունուած է այս տարեհաշիւը նշել A.D. - Anno Domini - «ամբ Տեառն»: Տարածուած են նաեւ «նոր թուարկութիւն» և «մեր թուարկութիւն - մ.թ.» յորջորջումները: Հայ մատենագրութեան մէջ կիրառուած Քրիստոսի ծննդեան թուականից մեր ներկայ Փրկչական թուականին անցնելու համար հարկ է հայկական քրիստոնէական թուականին գումարել երբեմն 2, եւ երբեմն էլ 1 տարի: Նայեմք մի քանի օրինակներ:

ա. Յովհաննէս Սարկաւազը իր մի աշխատութեան մէջ, յիշատակելով Փ. 1113թ. Մարտի 19-ին տեղի ունեցած Արեւի խաւարումը, տալիս է այդ

¹ Այս թուականը կիրառուած է տարբեր անուններով. «ի ծննդէն Քրիստոսի», «ի զալստեն Տեառն», «ի զալստեն Փրկչին», «ի Քրիստոսէ», «ամբ Տեառն» եւ այլն:

² Տես Սամուէլի քահանայի Անեցուի Հաւաքմունք ի գրոց պատմագրաց (աշխատասիր. Սրշակ Տէր-Միքելեան), տպարան Ա. Էջմիածնի, Վաղարշապատ, 1893: Մխիթարայ Այրիվանեցու Պատմութիւն ժամանակագրական, Սկտ. Պետերբուրգ, 1867: Մխիթար Անեցի, Մատենա Աշխարհալէպ հանդիսարանաց, (աշխատասիր. Հ. Գ. Մարգարեանի), ՀՍՍՌ ԳԱ Հրատ. Երեւան, 1983:

³ Հանդիպում է եւ վիմագիր յուշարձաններում: Օրինակ, Շինուհայրի Կուսանաց Անապատի մի արձանագրութեան մէջ՝ 1678 թուից: Տես Դիւան Հայ վիմագրութեան (կազմող՝ Ս. Գ. Բաղդուարեան), պրակ II, էջ 57, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., Երեւան, 1980, նաեւ՝ նոյն տեղում՝ էջ 109 եւ այլն:

⁴ Տես, օրինակ, Г.А. Брутян, Упоминание двух комет VI и VII веков в армянском летописании, Сообщения Бюраканской Обсерватории, LX, стр. 133-144, 1989.

իրադարձության ժամանակը տաս տարբեր տարեհաշիւներով. «Յայսմ խաւարման արեգականն էր թուական հոռմայեցոց փոքրն ՅԼԳ(333), և հայոցն նոյնպէս փոքրն ԻԹ(29), յերրորդ ժամուն, ի քսաներորդ մարտի, աւուրն չորեքշաբաթօք ի սուրբ քառասներորդացն, ի հինգերորդ շաբաթին խաւարեցաւ արեգակն: Եւ էր շինութիւն քաղաքին Գռոմայ՝ ՌՊԿԵ(1867) ամ, իսկ ի Ղեկտեալանոս ԴԼ(830) ամ: Եւ Անտիոք քաղաքի շինութեան՝ ՌԿԳ(1063) ամ: Եւ Կիւրղոս քաղաքի՝ ՌՆԻԵ(1425): Իսկ ի գալստենէ տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի՝ ՌԺԺԵ(1115) ամ ըստ հաստատուն եւ ճշմարիտ համարոյ: Եւ յԱրամայ՝ 83ԺԳ(6313) ամ ըստ եւթանասնիցն թարգմանութեան, արեգ ամսոյ ի մետասան կամ որպէս արուեստ կարգն ունի նաւասարդի ի Լթն, միով աւուրք առաջ քան գիասարակաւորութիւն տունջեան և գիշերոյ, ի ԼԳԳ(473) ոլոմպիադին՝ յառաջնում ամին ըստ համարոյ յունաց: Եւ էր բուն թուական Դայոց ՇԿԲ(562) »⁵: Այստեղ չծաւալուելու համար նշեմ միայն, որ ինչպէս այլ տեղ այլ առիթով հիմնաւորուել է, այս հատուածում Սարկաւազ վարդապետը խօսում է իրօք Փ. 1113թ. Մարտի 19-ին (չորեքշաբթի օրը) եղած Արեւի խաւարման մասին⁶: Արդ, այստեղ ի թիւս այլ տարեհաշիւների, տրուած է եւ «ի գալստենէ տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի՝ ՌԺԺԵ(1115) ամ ըստ հաստատուն եւ ճշմարիտ համարոյ»: Այսինքն, այս դէպքում Սարկաւազ վարդապետի տուած Զրիստոսի ծննդեան «հաստատուն եւ ճշմարիտ» թուականը (1115) երկու տարով մեծ է մեր կիրառած Փրկչական թուականից (1113-ից):

բ. Սամուէլ Անեցու պատմութեան մէջ Դայոց իշխան Աշոտ Պատրիկ Բագրատունու գահակալման տարին տրուած է 686. «ՈՉԶ: Դայոց՝ Աշոտ՝ ամս Գ»⁷: Միեւնոյն ժամանակ, այս նոյն իշխանի գահակալման ժամանակը ճշգրտուել է օգտուելով Ղեկնդ պատմիչի այն վկայութիւնից, որ այս Աշոտ իշխանի առաջին տարում երեւացել է Դալլեյի գիսաւորը՝ Փ. 684 թուին⁸: Այսինքն, Սամուէլ քահանայի տուած տարին համեմատելով ստոյգ ժամանակով յայտնի աստղագիտական երեւոյթի հետ, ստացւում է, որ Սամուէլ Անեցու տուած՝ Զրիստոսի ծննդեան 686 տարին համապատասխանում է մեր արդի հաշուարկով Փրկչական 684-ին: Այստեղ եւս առկայ է երկու տարուայ տարբերութիւն:

գ. Սամուէլ Անեցու պատմութեան շարունակութեան մէջ Զրիստոսի ՌԱԶԵ (1285) տարուայ դիմաց գրուած է. «Արեգակն խաւարեցաւ»⁹: Այս խաւարման հանգամանքները մանրամասն հետազօտուած են Բ. Թումանեանի կողմից, որ հաստատում է, թէ այստեղ խօսքը Փ. 1283թ. Յունուարի 30-ի Արեւի խաւարման մասին է¹⁰:

Այս օրինակները կարելի է էլի շարունակել. կան օրինակներ էլ, ուր Զրիստոսի ծննդեան թիւը Փրկչականից տարբերում է ոչ թէ 2, այլ միայն 1

⁵ Տե՛ս Աշ. Գ. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասերի մատենագրութիւնը, Երեւանի Դամասկարանի Դրատ., Երեւան, 1956, (այսուհետեւ Յովհաննէս Սարկաւազ) էջ 278:

⁶ Մանրամասն տե՛ս Գրիգոր Բրուտեան, Օրացոյց Դայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 133-134:

⁷ Սամուէլ Անեցի, էջ 84:

⁸ Տե՛ս Դ. Ա. Брутян, Упоминание двух комет VI и VII веков в армянском летописании, Сообщения Бюраканской Обсерватории, IX, см. 133-144, 1989.

⁹ Սամուէլ Անեցի, էջ 163:

¹⁰ Բ. Ե. Թումանեան, Դայ Ստղագիտութեան Պատմութիւն (XIX դ. սկզբից մինչեւ 1920 թ.), «Միտք», Երեւան, 1968, էջ 148-149:

տարով: Սակայն չծալալուենք: Սահմանափակուենք այսքանով: Բերուած օրինակներից արդէն երեւում է երկու բան:

ա. որ Դայ մատենագրութեան մէջ կիրառուած Քրիստոսի ծննդեան թուականը որոշակիօրէն տարբեր է այսօր կիրառուող Փրկչական թուականից:

բ. այդ տարբերութիւնը երբեմն երկու տարի է, երբեմն էլ՝ մէկ:

Ո՞րտեղից է գալիս այս տարբերութիւնը:

Որքան ինձ յայտնի է, հայ տոմարագիտութեան մէջ այս հարցը յատուկ քննութեան առարկայ չի եղել: Առաւելագոյնը՝ նշուել է, որ գոյութիւն ունի այդպիսի տարբերութիւն, սակայն դրա պատճառը քննուած չի եղել: Արդ փորձենք պարզել, թէ ուստի՞ է գալիս նշուած տարբերութիւնը:

Նախ համառօտակի նայենք, թէ ինչ ծագում ունի այսօր կիրառուող Փրկչական թուականը, ի՞նչ հիման վրայ է որոշուել (կամ գտնուել) դրա սկիզբը:

Յայտնի է, որ Քրիստոսի ծնունդից հաշուող՝ ներկայումս կիրառուող Փրկչական թուականի կիրառութիւնը սկսուել է Փ. 525 թուից¹¹: Այդ թուահաշուի «ստեղծողը» է հռոմեական վաճառական, պապական դիւանապետ, ծագումով սկիւթ Դիոնիսիոս Փոքրը: Դիոնիսիոսից առաջ Աղեքսանդրիայի պատրիարք Կիւրէղը Փ. 437-531 տարիների համար (Դիոկղետիանոսի՝ 153-247թթ.) կազմել էր 95-ամեայ զատկացուցակ: Այս զատկացուցակի աւարտից վեց տարի՝ առաջ՝ 525-ին Դիոնիսիոս Փոքրը ձեռնարկում է կազմել նոր զատկացուցակ՝ յաջորդ 95 տարիների համար: Ընդ որում, նա հրաժարուում է մինչ այդ կիրառուող Դիոկղետիանոսի թուականից (որ հաշււում էր Փ. 284-ից), սխալ համարելով ժամանակը հաշուել քրիստոնեաներին դաժանօրէն հալածող կայսեր գահակալման տարուց եւ մտցնում է Քրիստոսի ծնունդից սկսուող տարեհաշիւը (ըստ որոշ այլ տուեալների՝ ոչ թէ Քրիստոսի ծնունդից, այլ մարդեղութիւնից՝ Ս. Կոյսի աւետումից. *Ab incarnatione Domini*):

Թէ ինչ հիման վրայ է Դիոնիսիոսը որոշել իր տարեհաշուի սկիզբը, ստույգ յայտնի չէ: Այս մասին կան տարբեր կարծիքներ: Դնարաւոր է, նա հիմք է ընդունել Յիսուսի խաչելութեան ժամանակի մասին իր ունեցած տեղեկութիւններից մէկն ու մէկը (եւ ապա խաչելութեան ժամանակից հանել Յիսուսի տարիքը): Դնարաւոր է, հիմք է ընդունել Յիսուսի ծննդեան մասին ժամանակագրական վկայութիւններից մէկն ու մէկը: Դնարաւոր է նաեւ բոլորովին այլ տարբերակ (թուականը որոշուել է բոլորովին այլ նկատառումներով):

Ըստ որոշ հետազօտողների, Դիոնիսիոսը հիմք է ընդունել այն աւանդութիւնը, ըստ որի Յիսուսը խաչուել է 31 տարեկանում, եւ յարութիւն է առել Մարտի 25-ին: Այսինքն, առաջին ս. Ձատիկը եղել է Մարտի 25-ին: Դաշուելով եւ գտնելով, որ Մարտի 25-ին Ձատիկ լինում է Դիոկղետիանոսի 279-րդ տարում, դրանից հանելով 532 տարի (զատկացուցակի ամբողջական կրկնման պարբերութիւնը) եւ եւս 31 տարի (Յիսուսի նեքադրեալ տարիքը), գտնում է Յիսուսի ծննդեան ժամանակը: Այսինքն, ըստ այս մօտեցման, ստացում է, որ Դիոկղետիանոսի 279-րդ տարին լինում է Քրիստոսի ծննդեան 563 թուականը:

Դնարաւոր է, Դիոնիսիոսը հիմնուել է *Consularia Constantinopolitana ad A. CCCXCV-«395թ. կոնսուլների կոնստանդնուպօլիսեան ցուցակ»* անուամբ յայտնի փաստաթղթի վրայ: Ըստ այս սկզբնաղբիւրի, Յիսուսի խաչելութիւնը (չարչարանաց օրը) եղել է Ապրիլեան կալենդայից առաջ 10-րդ օրը, իսկ յարութիւնը եղել է 8-րդ օրը: Այս ամսաթուերը համապատասխանում են

¹¹ Տե՛ս И.А.Климишин, Календарь и Хронология, "Наука", Москва, 1985, стр. 240-250.

Մարտի 23-ին եւ 25-ին¹²: Փոկական 31 թուի Մարտի 25-ը (յարութեան օրը) իրօք կիրակի է: Հարկ է նշել, սակայն, որ այդ օրը ոչ մի կերպ չի ներդաշնակում Լուսնի փուլերին: Եթէ յարութիւնը ընկնում է Մարտի 25-ին, ապա պիտի կու՞ն Լուսնի փուլերին: Եթէ յարութիւնը ընկնում է Մարտի 24-ին (շաբաթ) լինէր լիալուսին (Հրեաների Ձատիկը՝ Նիսան ամսի 15-ը, որ նկատի ունենալով հրեական ամիսների լուսնային կը՝ Նիսան ամսի 15-ը, որ նկատի ունենալով լիալուսին): Իսկ, ըստ ճշգրիտ հաշուում-լինելը, պիտի համապատասխանէր լիալուսնին: Իսկ, ըստ ճշգրիտ հաշուում-լինելի, 31 թ. մարտեան լիալուսինը եղել է ոչ թէ ամսի 24-ին, այլ 27-ին: Այս սխալի մասին Դիոնիսիոսը չէր կարող իմանալ, քանի որ նա Լուսնի փուլերը հաշուել է Մեթոնի 19-ամեայ շրջաններով: Քանի որ այս պարբերաշրջանը 19 տարում զույգւում է 0.087 օրուայ սխալ, ապա 28 պարբերութեան ընթացքում (իենց այդքան ժամանակ էր անցել թուարկութեան սկզբից մինչեւ Դիոնիսիոսի ժամանակը) կուտակուած սխալը կը դառնար $28 \times 0.087 = 2.4$ օր: Այսինքն, ետհաշուարկ կատարելով, Դիոնիսիոսը ակամայ սխալուել էր ~2.5 օրով:

Ի դէպ, Յիսուսի ծնունդը Փ. 1 թուականին է դրուած Chronographus anni CCCCLIII-«354թ. տարեգրութիւն» կոչուող փաստաթղթում: Եւ հնարաւոր է համարուում, որ իենց սա էլ նկատի է ունեցել Դիոնիսիոսը, իր թուահաշուի սկիզբը որոշելիս:

Սո՛ժէ աւստեղ համառօտ ի մի բերել այն հիմնական նորկտակարանային տուեալները, որոնց հիման վրայ հնարաւոր է այս կամ այն կերպ ճշգրել Յիսուսի ծննդեան ժամանակը:

ա. Մատթեոսի աւետարանում ասուած է, որ Յիսուս ծնուել է Հրեաստանի Հերովդէս արքայի օրօք (Մատթ. Բ, 1):

բ. Յիսուսի ծնունդը եղել է Օգոստոս կայսեր օրօք (Ղուկ. Բ, 1-7):

գ. Մկրտութեան ժամանակ Յիսուս եղել է շուրջ 30 տարեկան (Ղուկ. Գ, 23):

դ. Յիսուսի մկրտութիւնը եւ քարոզութեան սկիզբը եղել է Հոռոմի Տիբերիոս կայսեր 15-րդ տարում, Պոնտացի Պիղատոսի կուսակալութեան եւ Հերովդէս չորրորդապետի ժամանակ (Ղուկ. Գ, 1):

ե. Յիսուսի խաչելութիւնը եղել է Նոյն Պիղատոսի օրօք (Մատթ. ԻԷ, 11-14):

զ. խաչելութիւնը եղել է ուրբաթ օրով (Մատթ. ԻԷ, 62, Մրկ. ԺԵ, 42, Յովհ. ԺԹ, 31), իսկ յարութիւնը եղել է կիրակի օրը (Մատթ. ԻԸ, Մրկ. ԺԶ, 1-5, Յովհ. Ի, 1):

է. խաչելութիւնը եղել է Բաղարջակերաց տօնի երկրորդ օրը, քանի որ տօնի առաջին օրը եղել է վերջին ընթրիքը, մատնութիւնը եւ դատապարտութիւնը, իսկ յաջորդ առաւօտ Յիսուս տարուել է Պիղատոսի մօտ, որից յետոյ էլ խաչուել է (Մատթ. ԻԶ, 17-ԻԷ, 35, Մրկ. ԺԴ, ԺԵ):

Այս ամենի հետ հարկ է նկատի ունենալ նաեւ, որ Հրեաների Ձատիկը (Բաղարջակերաց տօնը) տօնուել է զարնան առաջին լիալուսնին (Նիսան ամսի 15-ին): Միաժամանակ յայտնի է, որ Պիղատոս Պոնտացին Յուդայի կուսակալ է եղել Փ. 26 - 36 թուերին, իսկ Հերովդէս թագաւորը մահացել է Ն.Բ. 4 թուին: Տիբերիոս կայսեր 15-րդ տարին էլ Փ. 28 թին է (այելի ստույգ՝ 28 թ. Օգոստոսից 29 թ. Օգոստոսը, ըստ հռոմէական հաշուարկի եւ 27 թ. Սեպտեմբերից 28 թ. Սեպտեմբերը՝ ըստ ասորւոց (սիրիական) հաշուարկի):

Նկատենք, սակայն, որ այս տուեալներից եւ ոչ մէկը լրիւ չի ներդաշնակում օրացուցային իրականութեանը: Բանն այն է, որ մեզ հետաքրքրող ժամանակներում Հրեաների Ձատիկը՝ Նիսան ամսի 15-ը շաբաթ օրուայ է զուգահեռել:

¹² Այս հարցը մանրամասն քննութեան է առնուած Ի. Կլիմիշինի գրքում (И. А. Климашин, Календарь и Хронология, "Наука", Москва, 1985, стр. 240-250): Մանրամասներով հետաքրքրուողները կարող են նայել այնտեղ: Իսկ այստեղ կը տրուի սոյն հարցի միայն համառօտ նկարագրութիւնը:

միայն Փ. 26 բ. (Մարտի 23-ին), 33 բ. (Ապրիլի 4-ին) եւ 36 բ. (Մարտի 31-ին): Ի դեպ, չի բացառւում, որ Յիսուսի յարութեան բուն օրը եղած լինի հենց 33 բ. Ապրիլի 5-ը (կիրակի): Այդ տարին չէր կարող Պիղատոսի կուսակալութեան շրջանից (26 - 36 թթ.) դուրս լինել: Միեւնոյն ժամանակ, Յիսուսի ծնունդն էլ չէր կարող Յրեաստանի թագաւոր Յերովդէս Մեծի մահից (Հռոմի 750 բ. = մ.թ. 4 թիւ) յետոյ լինել: Ըստ երեւոյթին, աւետարանական եւ պատմագրական օրացուցային տուեալների այս տարամիտումը հետեւանք է այն բանի, որ Յիսուսի կեանքին եւ գործունեութեանը վերաբերող տուեալները մինչեւ աւետարանների վերջնական շարադրանքում սեւեռուելը որոշ չափով խմբագրուել են եւ կանոնականացուել, որով եւ մեզ հասած օրացուցային տուեալներից (թուերից) որոշները ունեն ոչ այնքան բուն՝ օրացուցային, որքան՝ այլ (թերեւս՝ դաւանական, խորհրդանշական) իմաստ:

Այսպիսով տեսնում ենք, որ Ղիոնիսիոսը իր ունեցած տուեալներից որն էլ հիմք ընդունէր, միեւնոյնն է, պիտի սխալուէր:

Չի բացառւում, որ նա իր տարեհաշուի համակարգը սահմանել է, հիմնուելով ոչ թէ Յիսուսի ծննդեան կամ խաչելութեան ժամանակի մասին ինչ-ինչ տուեալների վրայ, այլ՝ խնդրին մօտենալով զուտ պարզ օրացուցային դիրութեան, նպատակայարմարութեան մեկնակէտից: Բանն այն է, որ ըստ նրա ընդունած ժամանակագրութեան, Քրիստոսի ծննդեան նախորդ տարում (մ.թ. 1թ.) Մարտի 21-ին եղել է նորալուսին (ըստ Ղիոնիսիոսի հաշուարկի, բայց ոչ իրականում): Իսկ նորալուսինի եւ տարեթուերի այսպիսի համադրումը եապէս դիրացնում էր կամայական տարուայ Ձատիկը հաշուելը: Ըստ էութեան, Ղիոնիսիոսը տարեհաշուի սկիզբը կապել է 19-երեակի սկզբի հետ, առաջին տարուայ Լուսնի վերադիրը դարձնելով Ծ¹³: Դրանով կարելի էր դառնում կամայական տարուայ Ձատիկը դիրութեամբ որոշել, իմանալով միայն տարեթիւը (առանց օգտագործելու վերադիրները): Թերեւս հենց այս՝ զուտ կիրառական նկատառումով է Ղիոնիսիոսը կատարել իր տարեհաշուի սկզբի ընդունելութիւնը. այդ թուականը եւ ամենայարմարն էր զատկական հաշուարկների տեսանկիւնից, եւ էլ *որակապէս* ճիշդ էր (հեռու չէր տարբեր ձեւերով Յիսուսի ծննդեան համար գտնուած թուականներից): Միեւնոյն ժամանակ, կարելի է մտածել, որ Ղիոնիսիոսը քաջ գիտակցել է, որ Քրիստոսի ծննդեան մասին աւետարանական եւ այլ բոլոր տուեալներն էլ օրացուցային առումով հակասական են, եւ դրանցից ռեւէ մէկը հիմք ընդունելը կը հանգեցնի միւս տուեալներին հակասելուն: Այսինքն, չգտնելով օրացուցային յստակ մեկնակէտ, նա հիմք է ընդունում հաշուարկի դիրութիւնը. միեւնոյն ժամանակ՝ մնալով սպասելի ճիշդ թուականի մօտակայքում:

Այսպիսով, Ղիոնիսիոս Փռքըր, ելնելով ինչ-ինչ (հաւանական է՝ զուտ գործնական, կիրառական) նկատառումներից, Քրիստոսի ծննդեան դարաշրջան է հռչակել Հռոմի հիմնադրման 753 տարին (սկիզբը՝ Յունուարի 1-ից), 194-րդ օլիմպիադի 4-րդ տարին եւ Օգոստոս կայսեր 43-րդ տարին: Ղիոնիսիոսի հռչակած Փռլչ. 1 թուականի Ապրիլի 21-ին սկսուել է Հռոմի 754 թիւը, իսկ նայն տարուայ Յունիսի 10-ից սկսուել է 195-րդ օլիմպիադի 1-ին տարին, Օգոստոս ամսի 1-ից էլ՝ Օգոստոս կայսեր 44-րդ տարին: Եւ, այստեղից սկսուող տարեհաշին էլ այսօր կիրառւում է, որպէս Փռլչական, կամ Քրիստոսի ծննդեան թուական: Այս մասին այսքանը բաւարար համարենք եւ անցնենք առաջ:

¹³ Տուեալ տարուայ լուսնային վերադիր է կոչւում Լուսնի փուլը այդ տարուայ Մարտի 22-ին:

Նախքան առաջ անցնելը հետազայ շարադրամքի ընկալումը դիտարկելու համար, տանք այսօր ընդունուած վստահ ժամանակագրութեամբ յայտնի որոշ թուականներ:

Օգոստոս կայսեր թուականը հաշււում է Ե.Ք. 43 թ. Օգոստոս ամսի 1-ից: Իսկ Օգոստոս կայսրը մահացել է Փ. 14 թ. Օգոստոսի 19-ին:

Տիբերիոսը կայսր է դարձել Փ. 14 թ. Սեպտեմբերի 17-ին, մահացել է 37 թ. Մարտի 16-ին:

Հերովդէս Մեծը թագաւորել է Ե.Ք. -37-ից Ե.Ք. 4 թթ.:

Հերովդէս չորրորդապետը իշխել է Ե.Ք. 4-ից Փ. 39 թթ.:

Պիդատոս Պոնտացին Հրեաստանում կուսակալ է եղել Փ. 26-ից 36 թթ.:

Արդ մայեք, թէ ինչի վրայ է հիմնուած Զրիստոսի ծննդեան հայկական թուականը, եւ որն է դրա առաջին տարին: Նկատենք, որ այստեղ մեզ հետաքրքրողը ոչ թէ Զրիստոսի ծննդեան հայկական թուականով տրուած տարբեր իրադարձութիւնների ժամանակներն են, որոնցով կարելի է որոշել այդ թուականի սկզբնակէտը (ինչպէս՝ վերի երեք օրինակներում), այլ պիտի փնտռենք ուղղակի կամ անուղղակի վկայութիւններ այն մասին, թէ ինչ մախնական տուեալների վրայ է հիմնուած հայկական քրիստոնէական թուահաշուի սկզբնաւորումը:

Մեր ամենահին մատենագիրներից Սովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Փաւստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու եւ Սեբեոսի մօտ այսպիսի ուղղակի տուեալներ չկան¹⁴: Եղած տուեալները անուղղակի են: Պատմելով Եղեսիայի Աբգար թագաւորի մասին, Խորենացին նրա 2-րդ տարում դնում է Զրիստոսի ծնունդը. «Ի տրա (Աբգարայ-Գ.Բ.) երկրորդ ամի թագաւորութեանն հարկին Հոռմայեցւոց բոլորովինք ամենայն կողմանքն Հայոց: Զանգի հրաման ել յԱգոստոս կայսերէ, որպէս ասի ի Ղուկայ աւետարանին, աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս, վասն որոյ և ի Հայս առաքեալ գործակալք Հոռմայեցւոց, բերելով զպատկերն Ագոստոսի կայսեր՝ կանգնեցին յամենայն մեհեանս: Ձայսու ժամանակաւ լինի ծնեալ Փրկիչն մեր Յիսուս Զրիստոս որդի Աստուծոյ»¹⁵: Այստեղից դժուար է միանշանակ հետեւութիւն անել, քանի որ Խորենացու ժամանակագրական համակարգը ինքը միանշանակօրէն զնահատուած չէ արդի պատմագիտութեան կողմից: Ըստ որոշ մօտեցումների, որ այսօր դիտուում են իբր պաշտօնական ընդունելութիւն գտած, Խորենացու նշած Եղեսիայի Աբգար թագաւորը նոյնացուած է Օսրոյենէի Աբգար IX-ի հետ, որի տարիներն էլ դրուած են Փ. 179-214 թթ.¹⁶, որով եւ անկարելի կը լինի Զրիստոսի ծնունդը դնել այս Աբգարի տարիներին: Ըստ Լ. Շահինեանի քննութեան, Աբգարի տարիներն են , Ե.Ք. 1-ից Փ. 37 թ.¹⁷, որով եւ Զրիստոսի ծնունդը լինում է հէնց Փ. 1 թուին:

¹⁴ Ինչ վերաբերում է Խորենացու Պատմութեանը, ասենք, որ նկատի ունենք այդ երկի առաջին երեք գրքերը, որ առկայ են Խորենացու բոլոր հրատարակութիւններում: Ի տարբերութիւն առաջին երեք գրքերի, վերջերս հրատարակուեց Պատմութեան բազմիցս հոլովուած չորրորդ գիրքը, որ պնդուել ու վերականգնուել է Արտ. Մաթեոսեանի կողմից: Այս գիրքը հէնց ժամանակագրութիւն է, որտեղ կան մաեւ մեզ հետաքրքրող տուեալներ: Ղրանց կ'անդրադառնանք առանձին:

¹⁵ Սովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ Մ. Արեղեանի եւ Ա. Յարութիւնեանի), Տիփլիս 1913, գիրք Բ, գլ. ԻԶ, էջ 143:

¹⁶ Տե՛ս, օրինակ, Հայկական Համառօտ Հանրագիտարան, հ. 1, Երեւան, 1990, էջ 9:

¹⁷ Տե՛ս Լեւոն Շահինեան, Սովսես Խորենացի Պատմութիւն եւ ժամանակագրութիւն, «Լոյս», Երեւան, 1989, էջ 201, աղիւսակ ԺԴ, մաեւ Լեւոն Շահինեան, Հայաստանը եւ

Ստ. Մալխասեանցը Աբգարին դնում է Ե.Ք. 18-ից՝ 38 տարի¹⁸։ Ըստ այսմ, Աբգարի երկրորդ տարին կը լինի Ե.Ք. 17 թիւը, որ բնաւ յարմար չէ։

Բաւական լրիւ տեղեկութիւններ կան այս մասին Անանիա Շիրակունու (Շիրակացու) մեզ հասած երկերում։ Այսպէս, իր «Յայտնութեան ճառի» վերջում տալով Յայտնութեան կայուն ամսաթիւը՝ Յունուարի 6-ը ութ տարբեր ազգերի անշարժ օրացոյցներով, անելացնում է. «Բայց ասացին ոմանք վասն աւուր սրբոյ Յայտնութեանն եթ յուրբաթու հանդիպեցաւ, վասն զի յուրբաթու եղև լինելութիւն առաջին մարդոյն, եւ ոմանք՝ ի շաբաթու։ Բայց ես հաւանեալ եմ սրբոյն Պողիկարպոսի, զի նա աշակերտ էր Յովհաննու աւետարանչի, ... եւ նա ասէ ի միաշաբաթուց դիպեալ ծնունդն»¹⁹։ Յունուարի 6-ը կիրակի (միաշաբաթ) է եղել Ե.Ք. 14, 3, Փրկչ. 4, 9, 15 թուերին։ Իր նոյն աշխատութեան մէջ Անանիան անելացնում է նաեւ. «Իսկ զար մկրտութեանն յետ երեսուն ամի ի նոյն քանիութիւն ամսոյն (իմա՝ Յունուարի 6-ին-Գ.Բ.) ասաց հանդիպել յաւուր չորեքշաբաթուց»²⁰։ Այստեղ ակնյայտ վրիպակ կայ։ Յունուարի 6-ը չորեքշաբթի է եղել Փ. 12, 23, 34, 40, 45 թուերին։ Այս թուերից եւ ոչ մէկը յարմար չէ մկրտութեան տարի լինելու համար։ Բացի այդ, գիտենք, որ 30 տարում կայ 7 նահանջի օր, հետեւաբար, կիրակիից սկսելով, 30 տարի անց Յուն. 6-ը կը զար ոչ թէ չորեքշաբթի (դշաբթի), այլ երեքշաբթի (զշաբթի)։ Շատ հաւանական է, այստեղ գրչական վրիպակ է. շփոթուել են *զ* եւ *դ* գրերը, որով եւ զշաբթին դարձել է դշաբթի։ Եթէ ընդունենք այս անհրաժեշտ շտկումը, ապա նկատի ունենալով, որ Յունուարի 6-ը երեքշաբթի է եղել 22, 28, 33, 39 թուերին, կարող ենք եզրակացնել, որ Անանիան Յիսուսի մկրտութիւնը դնում է 30 տարեկանում՝ Փ. 28 թուի Յունուարի 6-ին՝ երեքշաբթի։ Ըստ այսմ եւս ստացւում է, որ ծնունդը պիտի եղած լինի Ե.Ք. 3 թուին (Ե.Ք. 3 թ. + Փ. 28 թ. - 1 տարի = 30 տարի)։ Այս տարին նաեւ Յունուարի 6-ը կիրակի է, որ լիովին ներդաշնակ է Անանիայի վերը տուածին։

Բացի այդ, վերն արուած մէջբերումներից երեւում է, Անանիա Շիրակունին եւս գիտակցել է, որ Յիսուսի ծննդեան ժամանակը հաշուելիս հնարաւոր չէ ներդաշնակ մնալ աւետարանական եւ այլ աւանդական *քուրոր* տուելաներին։

«Որչափութիւն Շակի» երկում Անանիան գրում է. «Տէր մեր Յիսուս Զրիստոս ծնաւ ի Բեղղէն տեթ իԱ, ըստ երայեցուց ամսաթուին յէ նորոյ ժամու աւուրն. և մկրտեցաւ ի Յորդանան ի քանուն հրա ըստ ասորոց թոյն, որ է յունուարի 2. ի ժ. երորդ ժամու զիշերոյն. և էր ամաց Լճից սկսեալ։ Սիսա յայտ

առաջին Արշակունիները, «Լոյս», Երեւան, 1993, էջ 408-409-ի աղիւսակը, նաեւ էջ 406-ի աղիւսակը։ Թիւրիմացութեան տեղիք չտալու համար նկատենք նաեւ, որ աստ նշուած գրքերում Լ. Շահինեանը Աբգարի տարիները գրում է 38 տարի, բայց իրականում Աբգարին տալիս է միայն 37 տարի՝ Ե.Ք. 1-ից Փրկչ. 37 թիւը։ Թիւրիմացութիւնն առաջացել է նրանից, որ պատմական ժամանակագրութեան համակարգում 0(զրո) թուական չկայ, եւ ըստ այդմ, Ե.Ք. թուականներից մինչեւ Փրկչական թուականներն եղած ժամանակամիջոցները հաշուելիս հարկ է նկատի ունենալ սա եւ Փրկչ. ու Ե.Ք. տարեթուերի գումարից հանել 1(մէկ) տարի։ Սիայն այս կերպ կարելի է հաշուել ճիշդ ժամանակամիջոցները։ Ըստ այսմ, Ե.Ք. 1-ից մինչեւ Փ. 37-ը կը լինի միայն 37 տարի (1 + 37 - 1 = 37)։

¹⁸ Տե՛ս Մովսէս Խորենացի, Գայոց Պատմութիւն (թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները Ստ. Մալխասեանցի), Գայպետհրատ, Երեւան, 1961, էջ 415-424 եւ էջ 428-ի աղիւսակը։

¹⁹ Անանիա Շիրակացու մատենագրութիւնը (Աշ. Աբրահամեան), Մատենադարանի հրատ., Երեւան, 1944, էջ 290։

²⁰ Տե՛ս նոյն տեղում էջ 291։

է թէ ի նոյն ասոր ծննդեան մկրտեցաւ: Եւ ԼԳ ամաց խաչեցաւ յաւուր ուրբաթի ի 2 երորդ ժամու աւուրն, ունելով լուսինն աւուրս ԺԳ»²¹: Այստեղից էլ հետեւում է, որ ըստ Անանիայի Յիսուս խաչուել է 33 տարեկանում, ուրբաթ, Լուսնի 14 օրականում: Դետեաբար, Լուսնի լրումը եղել է շաբաթ: Անանիայի անուամբ հրատարակուած ՀԼԲ բոլորակով²² կարող ենք գտնել, որ սա համապատասխանում է Փ. 31 ք. Մարտի 24-ին (շաբաթ), քանի որ ըստ այս Ե-եակի Գայոց 11 թուին եղել է լրումը Մարտի 24-ին՝ շաբաթ օրը: Իսկ Գայոց 11 թուից 532 տարի ետ էլ Փ. 31 թիւն է: Այսինքն, Անանիա Շիրակունցին Յիսուսի յարութիւնը դնում է Փ. 31 ք. Մարտի 25-ին՝ կիրակի:

Այսպիսով, Անանիա Շիրակունցին Յիսուսի ծնունդը դրել է Ն.Ք. 3 թուի Յունուարի 6-ին՝ կիրակի, մկրտութիւնը՝ Փ. 28 ք. Յունուարի 6-ին՝ երեքշաբթի, եւ յարութիւնը՝ 31 ք. Մարտի 25-ին՝ կիրակի:

Այս նոյն եզրակացութիւնը հաստատում է Անանիայի մի այլ տեղեկութեան միջոցով եւս: Այսպէս, իր գրած մի յիշատակարանում Շիրակունցին, խօսելով իր Գալատեան գալու եւ իր ուսման գիտութիւնը «ի Քրիստոսաստր վիճակ սղոյն Գրիգորի» բերելու մասին, տալիս է դրա ժամանակը. «Եւ սկիզբն քանհաւանութեան բերման թուիս յորժամ լցեալ էր ՈԿԸ [այն] ի կուսական յարգանդէ աստուածն բանի: Եւ ի մետասաներորդի շրջագայութեանն և ի ԺԹ ամի [Կոստանդիանոսի]»²³: Այստեղ Քրիստոսի ծննդեան ժամանակը տրուած է հուօրինակ կերպով. « յորժամ լցեալ էր ՈԿԸ (668) ամ...», այսինքն, լրացել էր 668 տարին: Դետեաբար, խօսքը վերաբերում է 669-րդ տարուան: Ուրեմն, պէտք է վերցնել ոչ թէ 668, այլ 669 տարի: Սոյն յիշատակարանում ժամանակը տրուած է երեք կերպ. Կոստանդիանոսի 19-րդ տարի = Քրիստոսի ծննդեան 669 թիւը = ինչ որ պարբերաշրջանի 11-րդ տարին: Յատուկ նշուած չէ, թէ ինչ պարբերաշրջան է նկատի առնուած: Ուրեմն, դա պէտք է լինի ամենասովորական, ամենակիրառական պարբերաշրջանը, որ է Լուսնի՝ քաջ յայտնի 19-ամեայ շրջանը (Մեթոնի շրջանը): Այսինքն, խօսքը 19-երեակի 11-րդ տարուայ մասին է:

Ինչպէս իմ նախորդ յօդուածում ցոյց եմ տուել, Անանիան կիրառել է Անդրեասի 19-երեակը, որի առաջին լրումը եղել է Ապրիլի 4-ին (վերադիրը՝ ըստ Անանիայի՝ 9)²⁴: Մերձակայ տարիներից 19-երեակի սկիզբ է Գայոց 6Ե(105) տարին, որի վերադիրը Թ(9) է, եւ զատկական լրումն էլ՝ Ապրիլի Դ(4)-ին²⁵: Գաշուելով Գայոց 105-ը 19-երեակի առաջին տարի, այդ նոյն 19-երեակի 11-րդ տարին կը լինի Գայոց 115 թիւը (Չատիկը՝ Ապրիլի 18-ին): Այստեղ

²¹ Տես նոյն տեղում էջ 302:

²² Այլ առիթով ցոյց է տրուել, որ Անանիայի հեղինակած թուն ՀԼԲ բոլորակը ընդգրկել է Գայոց 29(ԻԸ)-560(ԸԿ) թուականները (տես Գրիգոր Բրուտեան, Անանիա Շիրակունցի ՀԼԲ բոլորակը ըստ հայերէն հնագոյն թղթեայ ձեռագրի, «Էքմիածին», Ա, 1998, էջ 125-143): Բնականաբար, Գայոց 11 թիւը այս բոլորակի նախնականում չի եղել: Այդուհանդերձ, քանի որ հրատարակուած բոլորակում պահպանուած են օրացուցային բոլոր օրինաչափութիւնները, ուրեմն, կարելի է այն կիրառել բոլոր տարիների համար:

²³ Տես Անանիա Շիրակացու մատենագրութիւնը (ԱԶ. Աբրահամեան), Մատենադարանի հրատ., Երևան, 1944, էջ 236:

²⁴ Տես Գրիգոր Բրուտեան, Անանիա Շիրակունցի ՀԼԲ բոլորակը ըստ հայերէն հնագոյն թղթեայ ձեռագրի, «Էքմիածին», Ա, էջ 125 - 143, 1998, էջ 140 - 141: Տես նաեւ Գրիգոր Բրուտեան, Անանիա Շիրակացու «խառնախորանը», Մայր Աթոռ Ս. Էքմիածին, 1998, էջ 57:

²⁵ Տես, օրինակ, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 267:

խօսքը Աթանաս Տարօնացու հիմնած Դայոց Մեծ թուականի մասին է, քանի որ յիշատակարանը գրուել է մինչև Անանիայի տոմարական բարեփոխութիւնը: Ուրեմն, Դայոց 115 թիւը = Փ. 666 թ. Յունիսի 13-ից մինչև Փ. 667 թ. Յունիսի 12-ը (Նաւասարդի 1-ից մինչ ւաւելեաց 5-րդ օրը), որով եւ այդ տարուայ մատիկն էլ Փ. 667 թ. Ապրիլի 18-ին է: Այս միջակայքի Յայտնութեան օրը Փ. 667 թ. Յունուարի 6-ն է: Սրանից էլ 669 տարի ետ հաշուելով կը գանք ն.Ք. 3 թուին (ն.Ք. 3թ. + Փ. 667թ. - 1 տարի = 669 տարի):

Ի դէպ, սրանով կարելի է որոշել նաեւ Անանիայի՝ այս յիշատակարանը գրելու՝ որով եւ՝ նրա Դայաստան գալու ժամանակը: Զանի որ նա խօսում է Զրիստոսի ծնունդից 668 տարի անցած լինելու մասին, ուրեմն, այդ ժամանակ տակաւին լրացած չի եղել Զրիստոսի ծննդեան 669 տարին, ըստ իր հաշուի: Ըստ այսմ էլ կ'ունենանք, որ յիշատակարանի գրութեան ժամանակն է Փ. 666 թ. Յունիսի 13-ից Փ. 667 թ. Յունուարի 6-ը միջակայքը:

Գալով քիզանդական կայսեր տարիներին, այստեղ ինչ որ շփոթ կայ: Նշուած ժամանակներում իրար ետեւից իշխել են համարեայ անուանակից երկու կայսրեր՝ Կոստաս Բ (կամ Կոնստանդ Բ)՝ 642 - 668 թթ. (ըստ որոշ աղբիւրների 641-ից), եւ ապա՝ Կոնստանդին Դ՝ 668 - 685 թթ.: Կոնստանդին Դ-ի տարիները սկսում են աստ նշուած՝ Զրիստոսի 668-ից յետոյ, որով եւ սա ընդունելի չէ: Ուրեմն, խօսքը Կոնստանդ Բ-ի մասին է: Սրա էլ 19-րդ տարին կը լինի 659 կամ 660 Փրկչական թիւը (նայած՝ սկիզբը 641-ի՞ց է հաշոււում, թէ՛ 642-ից): Այս թուերից եւ ոչ մէկը մեր թուականի հետ չի համընկնում: Դնարաւոր է, այստեղ ինչ որ աղաւաղում կայ: Փ. 666-ը այս կայսեր 25-րդ, կամ 26-րդ տարին է, որով եւ պիտի լինէր Իե, կամ ԻԶ: Սրանք էլ առանձնապէս յարմար չեն՝ աղաւաղուելով ժժ դառնալու համար: Մնում է մտածել, որ հաւանաբար, այստեղ գործ ունենք հետազայում արուած յաւելման (զուցե՛ լուսանցքից ներմուծման) հետ: Այսպէս թէ այնպէս՝ Շիրակունու այս յիշատակարանի վերլուծութեամբ հաստատում է նրա կողմից Զրիստոսի ծնունդը ն.Ք. 3 թուին դնելը, և ճշգրտում է նրա Դայաստան գալու ժամանակը՝ Փ. 666 թ. երկրորդ կիսամեակը:

Ստեփանոս Ասողկն էլ Յիսուսի ծնունդը տալիս է երկու կերպ. «Ծնանի Փրկիչն մեր Տէր Քրիստոս ի քառասուն երկու ամին Օգոստեայ թագաւորութեան եւ յերեսուն երկու ամին թագաւորութեան Դերովդեայ՝ ... ի հնգետասաներորդ ամին Տիբերեայ եւ ի հնգետասան Դերովդեայ գայ Յիսուս ի Յորդանան առ Յովհաննէ մկրտիլ ի նմանէ, եւ անտի սկիզբն առնէ ւաւետաւոր վարդապետութեանն իւրոյ արդեամբք եւ բանիւք: Եւ յիննետասներորդին Դերովդեայ եւ յիննետասներորդն Տիբերեայ կայսեր Յիսուս՝ օծեալն Աստուծոյ, ըստ մարգարէութեանցն որ զնմանէ, գայ ի չարչարանս»²⁶: Այստեղ տրուած են Օգոստոսի եւ Դերովդէսի տարիները: Օգոստոսի դարաշրջանը (երան²⁷) սկսում է նրա կոնսուլ դառնալու օրից՝ տրիումփիւրատի սկզբից, որ է ն. Ք. 43 թ. Օգոստոսի 1-ը: Դաշուելով ն.Ք. 43 թուից, Օգոստոս կայսեր 42-րդ տարին լինում է ն.Ք. 2 թիւը: Դերովդէս Մեծն էլ Յուդայի, եղովմի եւ Սամարիայի թագաւոր է եղել ն.Ք. 37 - 4 թթ., որով եւ նրա 32-րդ տարին էլ կը լինի ն.Ք. 6 թիւը: Սա էապէս տարբեր է ն.Ք. 2-ից (Օգոստոսի 42-րդից):

²⁶ Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական (աշխատասիր. Ատ. Մալխասեանց), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 21-22:

²⁷ *էրա* -aera բառն էլ մեկնւում է իբր ab exordio regni Augusti - «Աւգոստոսի թագաւորութեան սկզբից» (տես Կլիմիշին, նշ. աշխ. էջ 230):

Հնարարություն է, ուս աղբիւնք է այն բանի, որ Ասողիկը Օգոստոսի եւ Հերովդէսի ժամանակները որոշել է ժամանակագրական տարբեր կանոններով²⁸:

Մեզ հետաքրքրող խնդրի վերաբերեալ բաւական հարուստ նիւթ է տալիս Յովհաննէս Սարկաւազը:

Սարկաւազ վարդապետի ժամանակագրութեան մէջ ունենք.

«Եթէ կամիցիս յեւանելոյն Աղամայ ի դրախտէն գիտել զժամանակն. կալ ՌԵՂԸ(5198)²⁹ և զամս՝ որ ի ծննդեն Թրկչին ի վերայ բեր:

Արտի (խօսքը Ձորաբաբէլի օրօք Երուսաղէմի տաճարի նորոգման մասին է՝ հառեհի 2-րդ տարում - Գ.Բ.) մինչև ի ծնունդն Քրիստոսի՝ ՇԺԸ(518):

Միանգամայն՝ ՌԵՂԸ(5198):

Արտի մինչև ի հայ թուականին դիր՝ ՇԺԳ(553):

Ինն ամաւ զկնի հինգհարիւրեակն եղաւ՝ ի ծննդենէն՝ յետ ՇԿԲ(562) ամաց:

Ի մեղտութենէն մինչև ցքան ամեակն Կոստանդիանոսի՝ ամք Յ(300):

Ամտի մինչև ցհայ թուականն՝ ՄԻԴ(224):

Եւ ի քսան ամեն Կոստանդիանոսի մինչև ցերկուհարիւրեակին գիւտ յԱնդրեասայ՝ ամք ԻԳ(23):

Ամտի մինչև ցհայ թուականն՝ ամք Մ(200):

Ի քսան ամեն Կոստանդիանոսի մինչև ի դիր երկհարիւրեակին ԻԳ(23) ամք են՝ ՁԱ(81) թուականին հոռոմոց:

Հերովդէս այլազգի՝ ամս ԼԵ(35): Ի սորա ԼԲ(32) ամին ծնանի Քրիստոս:

Ի ծննդենէն Քրիստոսի ի հայ թուականն՝ ՇԾԳ(553):

Ի ծննդենէն Քրիստոսի ի Նիկիա³⁰ ժողովն՝ ամք ՅԻԳ(323)³¹:

Իր մի այլ աշխատութեան մէջ Սարկաւազը տալիս է. «...զի յորում աւուր ծնաւ Քրիստոս, ի նոյն աւուր, յետ Լ(30) ամի, ի Յորդանան մկրտեցաւ»³²:

Իր «Հակաբանութիւն Դնագիտական» երկում էլ Սարկաւազ վարդապետը գրում է. «Ձկնի³³ որոյ Օգոստոս, որ և Սեբաստոս Հոքտաւիոս, թագաւորէ ամս ՇԶ(56) և ամիսս Ձ(6), յորոյ ԽԲ(42) ամի ծնանի որդին աստուծոյ Յիսուս Քրիստոս ի Բեթղէմ Դրեաստանի»³⁴:

²⁸ Ի դէպ. Հերովդէսի մահուան տարին ներկայումս որոշուած է բաւական յուսալի կերպով, սակայն նրա իշխանութեան սկզբի որոշումը այնքան էլ յուսալի չէ, որով եւ Հերովդէսի տարիների վրայ հիմնուելը կարող է որոշ սխալի հանգեցնել:

²⁹ Հրատարակուած բնագրում այստեղ ՌԵԼԸ(5138) է, որ հարկ է ուղղել ՌԵՂԸ(5198): Բանն այն է, որ Սարկաւազի նոյն գործում մի քանի տող անց (նաեւ՝ այլուր) էլի տրուում է այդ ժամանակը, որ, փաստօրէն, Աղամից Քրիստոս տարիների թիւն է, բայց միւս բոլոր տեղերում այդ թիւը տրուած է ՌԵՂԸ(5198), որ նաեւ ներդաշնակ է Աղամից Քրիստոս տրուած միջանկեալ տարիների գումարին: Այդ թիւը նոյնն է նաեւ Սարկաւազի այլ գործերում: Հաւանական է, շփոթուել են Դ եւ Լ գրերը, որ լիովին հնարաւոր գրչական վրիպակ է:

³⁰ Նիկիոյ տիեզերական ժողովը եղել է 325 թուին: Այս ժողովի ժամանակը Սարկաւազի մօտ իր տեղում չէ, քանի որ սրանից յետոյ նա տալիս է տարիները մինչեւ Զաղկեդոնի ժողովը, որ իրար գումարելով, լինում է 150 տարի: Սրանով եւ, ըստ նրա, Զաղկեդոնի ժողովը լինում է Քրիստոսի ծննդեան 323 + 150 = 473 թուին՝ իրական ժամանակից՝ 451 թուից 22 տարի յետոյ:

³¹ Տես Յովհաննէս Սարկաւազ, էջ 131-132: Սէքսերտմը արուած է քաղուածաբար:

³² Նոյն տեղում էջ 139:

³³ Հրատարակուած բնագրում տրուած է *Ձկնի*, որ անիմաստ է. շտկել են *Ձկնի* ըստ իմաստի:

³⁴ Յովհաննէս Սարկաւազ, էջ 141:

Յովհաննեսի տոմարական Պատճենի մեջ էլ կայ. «Արդ՝ աստի մինչև ի նիսան ի ԺԷ(17) և յապրիլ ի Է(7) կատարի Զ(6) ամիս, որում առաքեցաւ Գաբրիէլ առ կոյսն Սարիամ յաւուր չորեքշաբթի. և աստի մինչև ի տրեթ ի ԻԱ(21) և յունուար Զ(6) կատարի Թ(9) ամիս և հինգ ար:»

Աստ ծնեալ յայտնի ի բանն աստուած յաւուր հինգշաբթուք: Եւ ի փետրուարի ԺԴ(14) տեառնըդառաջն կատարի»³⁵:

Արդ տեսնենք, թէ ինչ են տալիս այս տեղեկութիւնները: Այստեղ ունենք մի քանի բաւական յստակ ուղեմիջ տարեթուեր: Դրանք են՝ Դայոց թուականի դրուելը, կամ դրա տարեհաշուի սկիզբը, Անդրեասի 200-եակի սկիզբն ու վերջը, Էսսեան 500-եակի սկիզբը, Կոստանդիանոսի քսանամեակը, Դռամի 81 թուականը, Դերովդէսի 32-րդ տարին եւ Օգոստոս կայսեր 42-րդ տարին: Բացի այդ, տրուած է եւ անետման բուն օրը՝ Ապրիլի 7-ը՝ չորեքշաբթի, եւ ծննդեան բուն օրը՝ Յունուարի 6-ը՝ հինգշաբթի:

Վերոնշեալ տարբեր ուղեմիջ թուերի միջոցով Յիսուսի ծննդեան թուականն ըստ Սարկաւագի ստացում է տարբեր: Այսպէս. Կոստանդիանոս Անձը կայսր է դարձել 306 թ. Յուլիսի 25-ին: Այսինքն, նրա 20-րդ տարին կը լինի 25. 07. 325 թ.-ից մինչեւ 25. 07. 326 թ. միջակայքը: Դետեաբար, մկրտութիւնը՝ դրանից 300 տարի առաջ կը լինի 25-26 թուերին: Միւս կողմից էլ՝ մկրտութիւնից մինչեւ Կոստանդիանոսի 20-ամեակը 300 տարի է, և այնտեղից էլ մինչեւ Դայոց թուականը տրուած է 224 տարի, որով եւ մկրտութիւնից մինչեւ Դայոց թուականը լինում է $300 + 224 = 524$ տարի. ուրեմն՝ մկրտութիւնը 552 - $524 = 28$ թուին է: Եւ եւ. Դռամի 81 թիւը $248 + 80 = 328$ թուականն է (Փրկչ.), որ չի համակերպում այդ նոյն տարին Կոստանդիանոսի 20-ամեակը լինելուն (25-26թթ.- տես՝ վերը):

Աւելի լաւ չէ վիճակը նաեւ Սարկաւագի տուած՝ հենց բուն՝ ծննդեան թուականների դէպքում: Օգոստոսի 42-րդ տարին Ն.Զ. 2 թիւն է: Իսկ Դերովդէսի 32-րդը, ինչպէս վերը տեսանք, Ն.Զ. 6 թիւն է³⁶:

Ըստ Դայոց թուականի էլ Յիսուսի ծնունդը լինում է երկու տարբերակով: Դայոց թուականը հիմնուել է 551-ին, իսկ դրա թուահաշին սկսուել է 552-ից³⁷: Ըստ այսմ, եթէ նկատի ունենանք հիմնումը, կ'ունենանք Քրիստոսի ծնունդը 553 տարի - Փ. 551 թ. + 1 տարի = Ն.Զ. 3 թ.: Իսկ թուահաշուի սկիզբը ելակէտ ընդունելու պարագայում՝ կ'ունենանք Ն. Զ. 2 թիւը (Ն.Զ. 2 թ. + Փ. 552 թ. - 1 տարի = 553 տարի):

Աւելի յուսալի է Սարկաւագի մատուցած միւս տուեալներից օգտուելը: Ունենալով անետման եւ ծննդեան բուն օրերի ամսաթուերն ու շաբաթուայ օրերը, կարող ենք բաւական յուսալի որոշել Սարկաւագի նկատի ունեցած տարին (անետումը Ապրիլի 7-ին՝ չորեքշաբթի եւ ծնունդն էլ Յունուարի 6-ին՝ հինգշաբթի): Այսպէս. Յունուարի 6-ը հինգշաբթի է եղել Ն.Զ. 11, 5, Փրկչ. 1, 7 թուերին: Իսկ Ապրիլի 7-ը չորեքշաբթի է եղել Ն.Զ. 12, 6, 1, Փրկչ. 6, 17 թուերին: Ըստ այս տուեալների էլ ստացում է, որ Սարկաւագ վարդապետը Յիսուսի ծնունդը դնում է կամ Փ. 1 թուին, կամ էլ՝ Ն.Զ. 5 թուին (միւս տարիները յարմար չեն մի շարք նկատառումներով եւ շատ են հեռու Յովհաննէսի բերած այլ տուեալներին գոնէ մօտ լինելուց): Այս երկու թուերից եւ ոչ մէկը լրիւ

³⁵ Յովհաննէս Սարկաւագ, էջ 213:

³⁶ Տես նաև ծանօթ. 28:

³⁷ Դայոց Մեն թուականի հիմնման հանգամանքների եւ այդ օրացոյցի սկզբի ու բնոյթի մասին մանրամասն տես Գրիգոր Բրուտեան, Օրացոյց Դայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 30 - 96:

ներդաշնակ չէ Ռարկաւագի տուած միւս թուերին (որոշուած՝ ժամանակագրական զանազան տուեալներով): Ամեն դէպքում, սրանք ամենամօտն են այդ թուերին: Այս երկու թուերից «եւն ու մէկը ընտրելուն օգնում է Սարկաւագի մի այլ՝ յոյժ ուշագրաւ տեղեկութիւնը. «Լիմի ի ծննդեանն Զրիստոսի հայոց թուականն ԾԸ(508) և հոռովմն՝ ՄԶ(280)»³⁸:

Հարկաւ, այստեղ տրուած Հայոց թուականը մեր իմացածը չէ: Մեր իմացած՝ Դոռմի թուականն էլ չի յարմարում աստ տրուածին: Մեր իմացած Հայոց (Մեծ) թուականը սկսում է Փ. 552-ի Յուլիսի 11-ից, կամ Փ. 553-ի Յունուարից: Զիշենք, որ Փ. 560-ին էասեան 500-եակի³⁹ գիւտից յետոյ տոմարագէտների շրջանում շատ տարածուած է եղել ժամանակը 532-ամեակներով դէպի առաջ ու ետ հաշուելը: Ըստ այսմ, թուականները պարբերացուել են 532-ամեայ շրջաններով: Սիւս, հայ տոմարագէտների երկերում էլ պատահում են դէպքեր երբ 532-ամեակներով պարբերացուած է այս կամ այն թուականը: Սրա մի օրինակը ժամանակին տեսել ենք Անանիա Շիրակունու մօտ, երբ իր կազմած ԸԼԲ(532)-ամեայ բոլորակի սկիզբն ու վերջը նա տուել է Աղեքսանդրացուց թուականով, որի սկիզբը, սակայն, ետ է տարուած 532-ամեայ մի պարբերութեամբ⁴⁰: Ահա, այս նոյնը տեսնում ենք նաեւ Յովհաննէս Սարկաւագի վերոբերեալ թուերի պարագայում: Հայոց թուականն այստեղ կիրառուած է դէպի ետ՝ 532-ամեայ պարբերութիւններով: Այսինքն, Զրիստոսի ծնունդը դրուած է մեր իմացած Հայոց Մեծ թուականի սկզբին նախորդած 532-ամեակներից մէկի 508-րդ տարում: Պարբերաշրջանի տեսողութիւնից հանած 508 տարի՝ կը լինի 24 տարի (532 - 508 = 24): Հայոց թուականի առաջին տարին էլ 552 (կամ՝ ըստ Անանիայի բարեփոխման՝ 553) թիւն է: Դրանից (552-ից) 24 տարի դէպի ետ՝ կը լինի Փ. 528 թիւը, որ մեզ համար բնաւ յարմար չէ: Սրանից էլ 532-ամեայ մի պարբերութիւն դէպի ետ գնալով, գալիս ենք ն.Ձ. 5 թուին (Փ. 528 թ. - 532 տարի = - 4 թ.: եւ - 4 թ.⁴¹ = ն.Ձ. 5 թ.): Այսինքն, ըստ սրա, Սարկաւագը Զրիստոսի ծնունդը դրել է ն.Ձ. 5 թուին: Սա լաւ ներդաշնակում է նաեւ նոյն հեղինակի տուածին, որ ծննդեան օրը եղել է հինգշաբթի: Իրօք, ն.Ձ. 5 թ. Յունուարի 6-ը եղել է հինգշաբթի: Նոյն կերպ է եւ Դոռմի 280 թուականը: Սա էլ Դոռմի հիմնադրման թուականն է, հաշուած Դոռմի հիմնադրման երկրորդ հազարամեակի սկզբին (Փ. 248 թուին) նախորդած 532-ամեայ պարբերաշրջանի սկզբից: Իրօք, Փ. 248 թ. - 532 տարի = - 284 թ., որ է ն.Ձ. 285 թուականը⁴²: Այստեղից էլ հաշուած 280 թուականը, կը լինի ն.Ձ.

³⁸ Յովհաննէս Սարկաւագ, էջ 226:

³⁹ Զինգհարիւրեակ է կոչուել 532 տարիներ պարունակող պարբերաշրջանը: 532 տարի պարբերութեամբ կրկնում են Զատիկները եւ բոլոր միւս շարժական ու անշարժ տօները (այդպէս է միայն Յուլեան հին տոմարով, իսկ նոր Գրիգորեան տոմարի համար այդ պարբերաշրջանը կիրառելի չէ): Այս պարբերութիւնը ստացուել է իբր արտադրեալ Լուսնի 19-ամեայ եւ Արեւի 28-ամեայ շրջանների (19 x 28 = 532):

⁴⁰ Այս մասին տես Գր. Բրուտեան, Օրացոյց Հայոց, էջ 33-35:

⁴¹ Բացասական տարեթուեր կիրառում են տարիների՝ այսպէս կոչուած տեխնիկական, կամ աստղագիտական հաշուարկի համակարգում: Այդ տարեհաշիւը պատմական ժամանակագրութեան համակարգից տարբերում է նրանով, որ պատմական համակարգում բացակայում է զրո թուականը եւ ն.Ձ. 1 թուին անմիջապէս յաջորդում է Փ. 1 թիւը, մինչդեռ, աստղագիտական համակարգում առկայ է զրո թուականը եւ այստեղ -1 թուից յետոյ 0 թիւն է, եւ ապա նոր՝ Փ. 1 թիւը: Այս է պատճառը, որ այդ համակարգերից մէկից միւսին անցնելիս հարկ է գումարել կամ հանել 1 տարի:

⁴² Տես նախորդ ծանոթագրութիւնը:

5 թիւը, որ համընկնում է Դայոց 508 թուականով ստացուած տարեթուին: Սրան ներդաշնակ են նաեւ անտման օրուայ համար Սարկաւազի յայտնած տուեալները:

Մկրտութեան և յարութեան ժամանակներն էլ տրուած են Սարկաւազ վարդապետի այլ աշխատութիւններում: Այսպէս. «Մեկնութիւն Տումարիս Դայկազնեայ» աշխատութեան մէջ ունենք.

«Արդ՝ ի մկրտութեան տեառն բուն թուականն ՐՆԾ(5450), գնա գշրջանսն մնայ 6Լ(130), ած 6Զ(180) հանապազորդն, լինի 3Ժ(310) հոռոմ թուականն, ած ՄԻԸ(228), մնայ վեց հայոց թուականն, լրումն յապրիելի ԺԸ(18) և Լթներեակն երկու ի նիսան ի ԻԸ և Լթներեակն հինգ, ի քաղոց երեսուն և Լթներեակն երկու և աւրն հինգշաբաթ:

Ի խաչելութեանն աստուածն բանի ի բուն թուականն 6ԼԳ(133), հոռոմն 3ԺԳ(313), հայն հինգ, խաչելութիւնն յապրիել ԺԵ.Ն և Լթներեակն վեց, ի նիսան ի ԻԵ.Ն և Լթներեակն երկու, ի քաղոց ԻԸ, և Լթներեակն հինգ և աւրն ուրբաթ, որ յաւետարանն գրեալ է...»⁴³:

Այս շարադրանքից հետեւում է, որ Սարկաւազը Յիսուսի մկրտութիւնը դնում է Դայոց 6 թուականին, իսկ խաչելութիւնը՝ 9-ին: Այստեղ եւս, ինչպէս վերը բերուած օրինակում, *Դայոց թուական* ասուածը Դայոց Մեծ թուականն է, միայն՝ 532-ամեակներով պարբերացուած ու դէպի ետ կիրառուած: Ըստ այդպիսի Դայոց թուականի, Քրիստոսի ծնունդը 508 թուին էր դրել Սարկաւազը (տեսն վերը): Դայոց 6 թուականը կը լինի սրա յաջորդ 532-ամեակում՝ ծննդեան տարուց՝ 508-ից 30 տարի անց (508 + 30 = 532 = 6): Իսկ 9 թիւը կը լինի ծնունդից 33 տարի անց (508 + 33 = 532 = 9): Փոկչական թուականով կը լինի (ըստ Սարկաւազի) մկրտութիւնը՝ Փ. 26 թ., իսկ խաչելութիւնը՝ Փ. 29 թ.: Խաչելութեան օրուայ համար Սարկաւազ վարդապետը տալիս է. «խաչելութիւնն յապրիել ԺԵ.Ն... և աւրն ուրբաթ»: Լուսնի աւագ լրումն էլ հենց Սպրիլի 15-ին է, և իրօք, ըստ Յովհաննէսի կազմած ՇԼԲ բոլորակի, Դայոց 9(Թ) թուականի աւագ լրումը Սպրիլի 15(ԺԵ)-ին է⁴⁴: Ըստ այսմ էլ կը լինի յարութիւնը՝ Ապրիլի 17-ին կիրակի: Եւ իրօք, Փ. 29 թուի Ապրիլի 17-ը իսկապէս եղել է կիրակի, իսկ նոյն ամսի 15-ը՝ ուրբաթ:

Գալով մկրտութեան ժամանակին (օրուան), այս մասին էլ Սարկաւազ վարդապետից ունենք. «... և գտանել զաւր ծննդեանն հինգշաբաթոյ թուեա Լ(30) գիր և գտանեա զաւր մկրտութեանն կիրակէ»⁴⁵: Այստեղ մկրտութեան ամսաթիւը յատուկ չի նշուած, բայց մինչ այդ հեղինակը խօսում է ծննդեան տարուայ, ամսաթիւի եւ օրուայ մասին, որից և տրամաբանօրէն բղխում է, որ մկրտութեան ամսաթիւն էլ համարում է նոյնը, ինչ և ծննդեանը, իսկ 30 թիւ հանել է տալիս, զի այդքան է համարում Յիսուսի տարիքը մկրտութեան ժամանակ: Ըստ այսմ, ստացւում է, որ Յովհաննէս Սարկաւազը Յիսուսի մկրտութիւնը դնում է Փ. 26 թ. Յունուարի 6-իմ կիրակի: Եւ իրօք, Փ. 26 թ. Յունուարի 6-ը եղել է կիրակի:

Սարկաւազ վարդապետի աշխատութիւններում այլ տեղեկութիւններ եւս կան, որոնք այս, կամ այն կերպ կարող են օգտագործուել Քրիստոսի ծննդեան ժամանակի ճշդման համար, սակայն գոհանանք այսքանով, ամփոփելով, որ ըստ Յով. Սարկաւազի, Քրիստոսի ծնունդը եղել է Ե.Ք. 5 թ. Յունուարի 6-ին՝ հինգշաբթի, անետունն էլ դրանից առաջ՝ Ե.Ք. 6 թ. Ապրիլի 7-ին՝ չորեքշաբթի.

⁴³ Տես Յովհաննէս Սարկաւազ, էջ 234:

⁴⁴ Տես Յովհաննէս Սարկաւազ, էջ 191:

⁴⁵ Յով. Սարկաւազ, էջ 233:

մկրտությունը՝ 30 տարի անց՝ Փ. 26 թ. Յունուարի 6-ին՝ կիրակի, և խաչելությունը էլ՝ մկրտությունից 3 տարի անց՝ Փ. 29 թ. Ապրիլի 15-ին ուրբաթ (յալուբուրդ էլ՝ Ապրիլի 17-ին՝ կիրակի):

Ուշագուշակ են նաեւ Սարկաւազի ականաւոր աշակերտի՝ Սամուէլ Անեցու տուեալները:

Ձանգ առնելով մեջբերումները (տեղի սղութեան պատճառով), նշենք, որ Սամուէլ քահանան Յիսուսի ծնունդը դնում է Օգոստոսի 42-րդ տարում եւ Դերովդէսի 32-րդում: Դերովդէսի մահը դնում է Քրիստոսի 6 թուին եւ նոյն տարում էլ՝ Դերովդէս, Լուսիաս, Փիլիպպոս եւ Անթիպատրոս չորրորդապետները իշխանութեան սկիզբը: 15 թուին դնում է Օգոստոսի մահը եւ 16-ին՝ Տիբերիոսի գահակալման սկիզբը: 30-ին դնում է Յիսուսի մկրտությունը՝ Տիբերիոսի 15-րդ տարում, եւ Պիղատոսի կուսակալութեան սկիզբը, իսկ Տիբերիոսի 19-րդում՝ չարչարանքն ու յարուսիւնը⁴⁶: Ստացւում է, որ ըստ հռոմէական կայսրերի, Սամուէլ քահանան Յիսուսի ծնունդը դնում է Ն.Ք. 2 թուին, մկրտությունը՝ Փ. 28-ին, իսկ յարուսիւնը՝ Փ. 32-ին: Սիւս կողմից էլ, ըստ Դերովդէսի մահուան տարուայ՝ Յիսուսի ծնունդը պիտի եղած լինի Ն.Ք. 9 թուին (Դերովդէսի մահը՝ Ն.Ք. 4-ին = Յիսուսի 6): Ըստ Պիղատոսի տարիների էլ (Յիսուսի 30 = Փ. 26թ. Պիղատոսի 1-ին), Յիսուսի ծնունդը կը լինի Ն.Ք. 4-ին:

Այսինքն, Սամուէլ Անեցու մօտ էլ Յիսուսի ծնունդը դրուած է Ն.Ք. 9, Ն.Ք. 4, կամ Ն.Ք. 2 թթ. (կախուած նրանից, թէ ինչ ժամանակագրական համակարգով է տրուած): Քանի որ այստեղ յաւելեալ տուեալներ չունենք (ինչպէս Շիրակունու եւ Սարկաւազի պարագայում), ուստի եւ չենք կարող միարժեք ճշդել, թէ այս տարիներից որն է Սամուէլ քահանան համարել Քրիստոսի ծննդեան բուն տարին⁴⁷:

Կարելի է այստեղ բերել նաեւ այլ հայ մատենագիրների (Սիսիթար Այրիվանեցու, Յակոբ Ղրիմեցու եւ այլոց) տուեալները, սակայն սահմանափակուենք այսքանով, աւելացնենք միայն Ս. Խորենացու նորագիտ չորրորդ գրքի (ժամանակագրութեան) տուեալները:

«Եւ ի ծննդեմէն Քրիստոսի, մինչեւ ի չարչարանք նորին՝ ամբ ԼԲ»⁴⁸: Նոյն տեղում կայ նաեւ. «Օճանի Փրկիչն մեր եւ Տէր ի Խ երորդ երկրորդ ամի Աւգոստեայ. եւ թագաւորէ հրէից Դերովդէս՝ ամի ԼԵ, յորոյ Լ եւ Բ ամի թագաւորութեան ծնանի ի Բթղէմ Տէր մեր Յիսուս Քրիստոս: ... սկսեալ զքարոզելն ի ժէն ամի Տիբերի կայսեր, Յիսուս աւծեալն աստուծոյ ... զայ ի չարչարանսն յիննուտասաներորդ ամի թագաւորութեանն Տիբերի: ... ըստ վկայութեան Յովհաննու աւետարանչի»⁴⁹, որ յետ եւժ երորդ ամին Տիբերի

⁴⁶ Տե՛ս Սամուէլ Անեցի, էջ 52-53:

⁴⁷ Կարելի է թերեւս միայն զանց առնել ըստ Դերովդէսի ստացուած տարին, քանի որ, ինչպէս երեւում է համեմատութիւններից, Դերովդէսի ժամանակուայ համար հայ եեղիականների օգտագործած տուեալները ձապէս տարբեր են այսօր նրա համար ընդունուած թուականներից: Այս մասին տե՛ս նաեւ ստորեւ:

⁴⁸ Տե՛ս Արտաշէս Սաթուսեան, Սովսէս Խորենացու «Դայոց Պատմութեան» չորրորդ գիրքը, Երեւան, 1995, էջ 136:

⁴⁹ Յովհաննէս աւետարանչից մեզ հասած կանոնական գրքերի (Աւետարանի, Յայտնութեան և Թղթերի) ներկայ տարբերակում այսպիսի վկայութիւն չկայ: Ներկայումս այդ վկայութիւնը միայն Ղուկասի աւետարանում է: Դճարաւոր է, Խորենացու ձեռքին եղել է Յովհաննու Աւետարանի, կամ միւս գրքերից ինչ որ մէկի մի այլ տարբերակ, կամ Յովհաննու անուամբ մի այլ յօդնուածք, որ պարունակել է նաեւ յիշեալ վկայութիւնը: Դի բացառում նաեւ, որ այստեղ պարզ շփոթութիւն է:

կայսեր, երեքամեայ ժամանակս վարդապետութեան նորա լիալ վկայե»⁵⁰։ Քիչ անց էլ՝ «Տիբերիոս» ամս ԻԳ ... Ի ժԸ ամի տերութեան սորա չարչարեցաւ Քրիստոս»⁵¹։ Ընդհանրապէս, Տիբերիոսի 18-րդը անելի ճիշդ է, եթէ նկատի ունենանք, որ Տիբերիոսի 15-րդից հաշուած 3 տարի կը լինի 18-րդը, իսկ ըստ նոյն աղբիւրի, Յիսուս քարոզել է միայն 3 տարի (տես վերը)։ Այս տուեալներն ի մի բերելով, ստանում ենք, որ ըստ Մովսէս Խորենացու ժամանակագրութեան, Քրիստոսի ծնունդը Ն.Ձ. 2 թուին է (Օգոստոսի 42-րդ տարին), մկրտութիւնը՝ Փ. 28 թուին (Տիբերիոսի 15-րդը), իսկ չարչարանքն էլ՝ երեք տարի անց՝ Փ. 31-ին (Տիբերիոսի 18-րդը)։ Գալով Չերովդէսի տարիներին, պետք է ընդունենք, որ ինչպէս այս ժամանակագրութեան հեղինակը, այնպէս էլ միւս հայ մատենագիրները Չերովդէսի ժամանակի համար ունեցել են տուեալներ, որոնք եապէս տարբեր են այսօր ընդունուածից⁵²։ Այնպէս որ, Չերովդէսի տարիներով ստացուած ժամանակը այստեղ հաշուի չենք առնի։ Այժմ աղիւսակի տեսքով ի մի բերենք այն, ինչ ստացանք։

հեղինակ	Յիսուսի ծնունդը	մկրտութիւնը	յարութիւնը
Մովսէս Խորենացի	Ն.Ձ. 2 թ.	Փ. 28 թ.	Փ. 31 թ.
Անանիա Շիրակունի	Ն.Ձ. 3թ. Յունուա րի 6 կիրակի	Փ. 28թ. Յունուարի 6 երեքշաբթի	Փ. 31թ. Մարտի 25 կիրակի
Յովհ. Սարկաւազ	Ն.Ձ. 5թ. Յունուա րի 6 հինգշաբթի	Փ. 26թ. Յունուարի 6 կիրակի	Փ. 29թ. Ապրիլի 17 կիրակի
Ասողիկ	Ն.Ձ. 2 թ.	-	-
Սամուէլ Անեցի	Ն.Ձ. 2 թ., կամ Ն.Ձ. 4 թ.	Փ. 28 թ.	Փ. 32 թ.

Աղիւսակից տեսնում ենք, որ միասնականութիւն կայ միայն մկրտութեան թուականի հարցում (եւ բնական էլ է, զի դա գալիս է Ղուկասի անտարանի խիստ որոշակի տուեալից (Տիբերիոսի 15-րդ տարին), որ հիմք են ընդունել մեր համարեա բոլոր հեղինակները)։ Դեռ այստեղ էլ իր ընդունած թուականով միւսներից երկու տարով զատուում է Սարկաւազ վարդապետը։ Համեմատաբար համասեռ է (չհաշուած Սարկաւազի շեղումը) նաեւ յարութեան ժամանակը (Փ. 31 թ.)։ Այս պարագայում կարող ենք նոյնիսկ մտածել, որ դիտուող մէկ տարուայ տարբերութիւնը (31, կամ 32 թթ.) կարող է արդիւնք լինել վրիպակի (Տիբերիոսի 18-րդը շփոթմամբ դարձել է 19-րդ. ժԸ-ը՝ ժԹ)։ Սա այնքան էլ անհաւանական չէ, նկատի ունեալով ը և Թ գրերի որոշ նմանութիւնը։ Այսինքն, այս ենթադրութեամբ, կարող ենք համարել, որ այս կետում եւս Սարկաւազից զատ միւս բոլորի մօտ նոյն թուականն է՝ Փ. 31 թ.։

Գալով ծննդեան թուականին, այստեղ ունենք թուականների բաւական լուրջ տարամիտում։ Տարբեր հեղինակների մօտ Քրիստոսի ծնունդը դրուած է Ն.Ձ. 5-ից Ն.Ձ. 2 թթ. միջակայքում։ Այսինքն, Յիսուսի մկրտութեան եւ յարութեան համար հայ հեղինակները հիմք են ընդունել անտարանական տուեալները՝ Տիբերիոսի 15-րդ տարին եւ եռամեայ քարոզութիւնը, որով եւ ստացուել է թուականների համասեռութիւն։ Իսկ ծննդեան ժամանակը որոշելիս առաջնորդուել են տարբեր ելակէտային դրոյթներով, որով եւ ստացել են տարբեր թուականներ։

⁵⁰ Նոյն տեղում էջ 137։

⁵¹ Նոյն տեղում էջ 138։

⁵² Տես նաեւ ծանօթ. 47։

Ամեն դեպքում յստակ է մի բան. որ հայ հեղինակները Յիսուսի տարիքը խաչելու⁵³ ժամանակ համարել են ոչ պակաս 33-ից⁵³: Ի դեպ, սրանով էլ եապես տարբերում են հայկական քրիստոնեական թուականները Ղիոնիսիոսի ընդունածից, որում Յիսուսի տարիքը, փաստօրեն, ակամայ ընդունուել էր 31: Կարելի է, նույնիսկ հենց սա համարել պատճառը, որ հայկական քրիստոնեական թուականը երկու տարով անելի է ներկայումս ընդունուած Փրկչական (Ղիոնիսիոսի) թուականից: Սակայն սա հարցի պատասխանն է միայն առաջին (նույնառումային) թուականից: ճշգրիտ պատասխանն այն է, որ տարբեր հայ հեղինակներ տարբեր թուականներ են ընդունել Յիսուսի ծննդեան համար, որով եւ նրանց կազմած ժամանակագրութիւնները տարբերուել են իրարից: Սակայն, քանի որ դրանք բոլորն էլ կոչուել են նոյն կերպ (Քրիստոսի ծննդից), տեղիք են տուել հետագայ շփոթութիւնների, եւ այդ կերպ առաջացել են ժամանակագրական ցուցակներ՝ իրար չներդաշնակող տարիներով:

Սա նշանակում է, որ հայկական աղբիւրներում հանդիպող քրիստոնեական թուականի հետ գործ ունենալիս հարկ է ցուցաբերել զգուշաւոր մօտեցում եւ ըստ կարելւոյն ճշդել Քրիստոսի թուականով տրուած տարիները ժամանակային այլ տուեալներով: Անկասկած է մի բան. որ հայկական քրիստոնեական թուականը միշտ մեծ է մեր ներկայ Փրկչական թուականից: Տարբերութիւնը կարող է լինել 2 կամ անելի տարի: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ հայկական քրիստոնեական թուականը Փրկչականից մեծ է ընդամենը 1 տարով, ապա այս դեպքերում հնարաւոր է երկու տարբերակ. կամ ժամանակագրական շփոթութիւն, վրիպակ, եւ կամ էլ կարելի է մտածել, որ սոյն դեպքում Քրիստոսի ծնունդի փոխարեն նկատի է առնուած մարդեղութիւնը՝ անտումը, որ ծննդից ինն ամիս առաջ լինելով, ընկնում է դրա նախորդ տարուայ մէջ. դրանով եւ՝ մի տարով (դեպի մեզ) տեղափոխելով ծննդեան ժամանակը:

⁵³ Ամենաուշ թուականը Յիսուսի ծննդեան ըստ հայ մատենագիրների մ.թ. 2 թին է: Այս թուից մինչեւ խաչելութիւնը մ. 31-ին լինում է 32 տարի. որ նշանակում է, թէ դա Յիսուսի ծննդեան 33-րդ տարին է:

ԱՐՇԱԿ ՄԱՂՈՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅ ՌԵՎԵԿՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԵԿԸ

Քրիստոնեության առաջին դարերից ի վեր հայ ուխտավորներն այցելել են բոլոր նշանավոր սրբավայրերը՝ Երուսաղեմից ու Հռոմից մինչև Կոնստանդուպոլսի Ս. Հակոբ վանքը։ Այդ մասին տեղեկություններ պահպանել են թե՛ հայ, թե՛ օտար մատենագիրները։ Ըստ որում, գրական գրեթե բոլոր տեսակների մեջ կարելի է գտնել դրանց արձագանքները՝ վարդերից ու վկայաբանություններից սկսած, վերջապես գեղարվեստական ներկերով։ Արկածայից ուղևորությունների վերաբերյալ տպավորություններ, խոհեր, նկարագրություններ կգտնենք՝ ներհյուսված պատմիչների ներկերին, օրագրությունների մեջ։ Զիչ չեն և չափածո գրառումները այցելավայրի պատմության, ներկայի, ազգագրության, կենցաղի մասին (խաչատուր Թոխատցու «Պատմություն Վենետիկ թաղարին», Հակոբ րաի. Գրիգորենցի «Գովք Պրիթանիոյ»)։ Հատկապես ուշ միջնադարում գնալով շատախում են այս կարգի ուխտագնացություններին նվիրված բնագրերը, և միշտ չէ, որ հեղինակը ուխտավորներից է։ Շամախեցի նրկու Նդայր՝ Սահակը և Ասլանը, մեծ նրկուդածությամբ չբջել են Հայաստանի հյուսիս-արևելյան սրբավայրերում, այնուհետև գանկացել են գրավոր հիշատակ թողնել։ Սրանց խնդրանքով 1661 թ. Թովմա վ. Վանանդեցին գրել է «Բան չափնալ ի սրբազան տեղիս աշխարհին Հայոց» բավական ծավալուն բնթվածը։ Նա անձամբ չի եղել ներկայացվող սրբավայրերում և, բնականաբար, չէր կարող դրանք տեսանելի դարձնել ընթերցողին¹։

Այս տեսակետից հետաքրքրական է մեկ ուրիշ փաստ։ 1724 թ. նոյնմբերի 20-ին հայ և խույն ուխտավորների վարձած նավը այնպիսի վայրէջքում, և նրանք չեն արժանանում իրենց բաղձանքի իրագործմանը՝ Երուսաղեմը տեսնելուն։ Այդ մասին տեղեկանում ենք «Տաղ ՌՃՀԳ թվին Երուսաղեմայ ուխտատուքն ի ծովին ընկղմնայ նալին» ոտանավորից։ Միջերկրականում մատակսուղը պատել է նավը՝

Եւ ջրասույզ ընկղմնցաւ.

Հինկ, վնց հարիւր հոգիք մեռան

Քրիստոնէիք ու այլ ազգաւ²։

Տաղի մեջ չկա հույզի ու ապրումի կենդանություն, պատումը անտարբեր-հայնցողակն է, որով անհավանական է դառնում Հ. Ջյուրտյանի վարկածը, թե հեղինակը Մարտիրոս սրկ. կարենցին պիտի լինի, քանի որ «ինքը միակ ականա-տեսն էր այդ աղետին»³։ Սակայն ականատեսն իր ապրած սարսափները այդչափ շուտ չէր կարող մոռանալ։ Բանասերի աչքից վրիպել է մի այլ, առավել ակնհայտ հանգամանք՝ բանակապը, որ հուշում է, թե ո՛վ է հեղինակը. «ի Պրոխորոնէ»։ Ըստ նրկայթին սա Պրոխորոն Սիլխստրեցի վաթղապետն է, որ հայտնի է իբրև տաղերի հեղինակ⁴։ Սույն նշանագրությունը հավանական է և այնու, որ հակասություն չկա ժամանակի առումով։

¹ Տես «Ճաքուղ», 1860, տնորակ Ը։

² «Միոն», 1932, էջ 51։

³ Անդ, էջ 52։

⁴ Տես Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Խ. Դ, Եր., 1948, էջ 271։

**ԱՅՍ Է ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱԿՆԵՐԻ ԵՐԿՐԻ, ՈՐ ՏԵՍԵԼ Է
ԵՐՁՆԿԱՅԻ ՍԱՐՏԻՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԵՎ ԳՐԵԼ ՔԱՂԱՔՆԵՐԻ
ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ՏԵՍԱ ԻՍ ԱԶԲՈՎ,
ԵՎ ԱՅՍՊԵՍ ԵՐԱՎ**

Ես՝ Մարտիրոս, անվամբ միայն եպիսկոպոս, Երզնկայի, Սուրբ Կիրակոսի անապատից, Նորգեղակ գյուղից, որ վաղուց փափաքում էի գլխավոր սուրբ առաքյալների գերեզմանները և սուրբ Դակոբի գերեզմանը տեսնել: Եվ երբ ինձ՝ անարժանիս վիճակվեց արժանանալ նրանց տեսուն, քանի որ սիրտս մշտապես տենչում էր, քայքայ չէի կարող իմ սրտի խորհուրդը հայտնել ուրիշի,՝ 1489 թվականի հոկտեմբերի 29-ին դուրս եկա իմ վանքից, մեղավոր [հոգով]՝ հասա Ստամպոլ և Աստծու հաջողությամբ գտա մի նավ, մտա այնտեղ Վրթանես սարկավագի հետ:

1490-ի հուլիսի 11-ին Ստամպոլից ելանք և մի ֆռանկի նավ նստեցինք, հոկտեմբերի 1-ին հասանք Վենեժ, որ կոչվում է Վենետիկ, մեծ և փառավոր քաղաքը, որ ծովի մեջ է կառուցված: 74000 տուն է և խիստ փառավոր ու հարուստ քաղաք: Եվ քաղաքի մեջ կա մի մեծ եկեղեցի, որ 10000 մարդ է տեղավորում մեջը, և ճիշտ՝ զարդարված է ոսկով: Սուրբ Մարկոս Ավետարանչի եկեղեցին է, և երկու երգեհոն կա մեջը, և երկու թևավոր առյուծ է քանդակած ոսկուց: Քաղաքում նաև ուրիշ շատ եկեղեցիներ կան, և քաղաքի շուրջը շատ վանքեր կան՝ բոլորը ծովի մեջ կառուցած: Իսկ Սուրբ Մարկոս եկեղեցու առջև մեծ հրապարակ կա: Եվ [եկեղեցու] դռան վրա շատ բարձր չորս դեղին պղնձե ձի, քանդակած և կանգնեցրած՝ մեծ-մեծ, և մեկական ոտքերը վեր են բարձրացրել: Գարավայինը, ծովահայաց կողմը հացավաճառներն են: Եվ երկու մեծ սյուն են կանգնեցրել, մեկի վրա թևավոր առյուծի [արձան] է, իսկ մյուսին՝ Սուրբ Գևորգը^{**}:

Թագավորի պալատի ամբողջ պարիսպը ոսկով է զարդարած: Նաև շատ տեսակ-տեսակ բաներ կան, [այնքան], որ ո՛վ կարող է պատմել քաղաքի հրաշալիքները:

Եվ մնացինք 29 օր և մտանք մի նավ ու գնացինք 13-րդ օրը Անքոնիա, իսկ այնտեղից 30-րդ օրը^{***} գնացինք Հռոմ աստվածապահ մեծ [քաղաքը], ուր և սուրբ ու փառավորյալ ամենագովելի սուրբ մարմիններն են գլխավոր սուրբ առաքյալների՝ Սուրբ Պետրոսի ու Պողոսի: Եվ գնալով երկրպագեցինք ու մեղքերի թողություն խնդրեցինք մեզ և մեր ծնողներին, մեր երախտավորներին ու ողջերին: Եվ մնացինք 7 ամիս^{****} ու տեսանք բոլոր տնօրինական տեղերը: Տեսանք, որ սուրբ առաքյալների նշխարները Հռոմ քաղաքից դուրս են, հյուսիս-արևմտյան կողմը, փոքրիկ մի քաղաք գետը անցնում է այս երկու քաղաքի միջով, [և այդ քաղաքը] կոչվում է Սանթանկելո: Սուրբ Առաքելոց եկեղեցու [գլխավոր] դուռն արևելքից է: 7^{*****} բարձր ու վիթխարի դուռ ունի, և

^{*} [Ա] մեղաքար. [Բ] մեղմաքար:

^{**} Պիտի [ինի]՝ Ս. Թեոդորոս («Բագմավեպ», էջ 53):

^{***} 8:

^{****} 5 ամիս:

^{*****} 5:

միջին դուռը ծուլածո է, և մի փեղկը Սուրբ Պետրոսին է, իսկ մյուսը՝ Սուրբ Պողոսինը:

Հռոմի արևմտակողմը, Ներոն քաղաքի պալատի դիմաց, Սուրբ Պետրոսի խաչերաբլուրն վայրն է: Իսկ քաղաքի մեջ նրանց բանտարկության տեղն է: Եվ Հռոմից դուրս, շատ հեռու, Սուրբ Պողոսի գլխատման վայրն է, հարավային կողմը, իսկ քաղաքի մոտ կա այն տեղը, ուր Քրիստոս հանդիպեց Սուրբ Պետրոսին: Եվ քաղաքի ծայրին Սանճուան եկեղեցին է, ուր երկուսի գլուխներն են գտնվում՝ ամբողջ մարմնով: Եվ քաղաքի մեջ, հարավային կողմը, Գրիգոր Ալեքսանդացու զննանն է, այժմ եկեղեցի է: Ավելի առաջ [գնալով] քաղաքի մեջ Սանթալինա կա. այդ եկեղեցին 100 սրբերի նշխարներն են և այլ զանազան փառավորություններ: Հռոմ քաղաքի մեջ 2774* եկեղեցի կա և 8000 սրբի գերեզման՝ քաղաքում և դրսում: Եվ օրական 10-20** եկեղեցի է շրջում, մեծ ու փառավոր եկեղեցիներ, և ամեն օր այցելում էի գլխավոր սուրբ առաքյալների [եկեղեցին] և մեղքերի թողություն խնդրում: Ո՛վ կարող է լեզվով պատմել սուրբ եկեղեցիների և քաղաքի փառավորությունը: Եվ երեք անգամ ինձ տարան Պապի մոտ, և ինձ մեծ սիրալիրություն ու հոգատարություն ցույց տվեց, որ բոլորը զարմանում էին: Ամեն օր տանում էր ու հետս գրուցում:

1491 թ. հունիսի 9-ին ելանք Հռոմից, [նավարկեցինք] շատ օրեր և 46-րդ օրը հասանք Ղուդեշք ազգի աշխարհը, որ ալամաններն են: Գնացինք մեծն Կոստանցիա և այլ շատ քաղաքներ, անցանք Ըռին գետի եզերքով, գնացինք Պազլ մեծ քաղաք, և մեզ բռնեցին, թե՛ դուք լրտես եք: Բազում այլ քաղաքների միջով գնացինք Ֆռանկֆոռթ, ուր շատ հիանալի բաներ տեսանք: Այնտեղից շատ օրեր [ճամփորդեցինք], գնացինք Ֆրիբուլիս: Ասացին, որ 3000000 այգի կա այս քաղաքում, և մեզ մեծ պատվով հարգեցին: Այնտեղից՝ Ստրազբուլի, իսկ այնտեղից՝ շատ քաղաքներով բազում օրերում հասանք Կապլեր, ուր [նույնպես] շատ պատվեցին մեզ: Իսկ այնտեղից շատ օրեր Ըռին գետով գնացինք, հասանք Կոլոնիա մեծահամբավ քաղաք, որն, ասացին, 220000*** տուն է: Շատ մեծ ու զարմանալի քաղաք էր: Այնտեղ էր մոզերի թագավորների գերեզմանը: Եվ երեքի գլուխները գերեզմանների վրա [քանդակած] էր: Եվ այնտեղ կար 12000 սրբերի նշխարք, յուրաքանչյուրի գլուխը մի մեծ եկեղեցու մեջ է դրած, որ ամեն մարդ տեսնում է, իսկ մարմինները թաղած են: Մեկ ուրիշ եկեղեցի կա, խիստ գեղեցիկ, 24 սուրբ կույսերի մարմինները արկղով դրած, և այն եկեղեցին, ուր մոզերի թագավորների գերեզմանն է, պատկերված է դիմացից. Աստվածածինը շարքից առաջ է բերված և իր սուրբ արժանիքների համեմատ զարդարած, և մեր Տեր Քրիստոսը գրկին: Եվ մի թագ էր դրված գլխին՝ անգին գոհարեղենով ու մարգարտով զուգած, որ գին չունի: Հարցրինք եկեղեցու երեցին, թե սա ի՞նչ գին ունի, նա ասաց՝ 215000 ֆլորի է եղել ծախսը: Եվ Սուրբ Աստվածածնի սրտին մի մարգարտե խնձոր է պատկերած, մի ընկույզի չափ: Եվ շուրջը՝ 12 մարգարիտ, ամեն մեկը փոքր գլոթորի չափ: Մեջընդմեջ՝ 4 ալ, 2 լալ և 2 հակինք: Ամեն քարի մեծությունը մի գլոթորի չափ: Եվ Ավագ խորանի շուրջը 56 դեղին պղնձի գերեզման է պատրաստած և 6 գերեզման դեղին պղնձի ոսկով զարդարած, 365**** լուսամուտ ուներ, ամեն

* Ո. Գ. Լ. Կ:

** հնգնասան:

*** ՄՈՒ և ԻՂՈՒ:

**** Երեքհարյուր նոթանասունմիսինգ:

լուսամուտի երկարությունը 3 գիրկ է: Եկեղեցին 500 կամարի վրա է, բարձր ու ահեղ, և աշխարհում ինչ կա՝ բոլորը դռան կողմը դասավորած: Եկեղեցու բոլոր լուսամուտները զույմզույն ապակիով զարդարված են: Եվ զանգակատունը մի ամրոցի պես է, մեծ ու վիթխարի մի զանգ է կախած, որ 28 ձողով են քաշում: Նաև ուրիշ շատ եկեղեցիներ ու վանքեր կային, որ չկարողացա կամ քաղաքի և կամ եկեղեցու պատմությունը գրի առնել: Եվ այն քաղաքում մնացինք 22 օր, և մեզ խիստ պատվեցին: Ինչքան եկեղեցի (Ռտանք մեղքերի թողություն խնդրեցինք, և ապա ելանք մեծն Կոլոնիայից հոկտեմբերի 25-ին և բազում քաղաքներով հասանք թագավորների գերեզմանատուն-քաղաք, ուր ալամանների ազգիցն է: Այնտեղից բազում օրերում հասանք Սանթամարիս տ'Ալբս, ուր Սուրբ Աստվածածնի ամենօրինյալ շապիկն է: Եվ այնտեղ շատ տաք ջուր կա: Իսկ այն եկեղեցին, ուր Սուրբ Աստվածածնի ամենօրինյալ սուրբ շապիկն է, խիստ զարմանալի շինություն է, ամբողջ ոսկով զուգած, և 4 դեղին պղնձե սյուն է կանգնեցրած և ոսկած: Եկեղեցու մեջտեղը՝ մեծամեծ դեղին սյուներ, իսկ սյուների զլուխները՝ ոսկով զարդարած: Եվ մարգարտաշեն մեծ ոսկեզօծ մի սնդուկ կա, և մեջը Սուրբ Աստվածածնի ամենօրինյալ սուրբ շապիկը: Եվ այնտեղ մնացինք 18 օր, մինչև բացին, և արժանացանք տեսնելու և մեղքերի թողություն խնդրեցինք մեզ և մեր ծնողներին ու երախտավորներին: Դասասաց վարդապետներ կային, որ մեզ պատվեցին ու մեծարեցին մեծ հարգանքով:

Այնտեղից ելնելով՝ բազում օրեր բազում քաղաքներով անցանք, գնացինք մեծն Դունվես, որտեղ մատում է ալամանների թագավորը: Եվ այդտեղ մնացինք 11 օր: Այնտեղ է Քրիստոսի ամենազոր սուրբ թագավորի, մեր Տեր և Փրկիչ Դիսուս Քրիստոսի սուրբ դաստառակը, որ խաչելության ժամանակ կապեցին, ներկված էր Քրիստոսի սուրբ աստվածընկալ արյամբ, և արժանացանք սրա սուրբ տեսքին: Եվ մեղքերի թողություն խնդրեցինք:

Ելնելով այնտեղից՝ բազում օրեր, բազում չարչարանքներով, բազում քաղաքներով հասանք Ֆլամտրիա աշխարհ: Եվ լեզուն չգիտեինք հաղորդակցվելու: Եվ այնտեղից մեծ դժվարությամբ ելանք և բազում օրեր անց հասանք Ընկլուզաց աշխարհ: Նրանց լեզուն նույնաես չգիտեինք: Նրանք ևս ձկնակեր էին: Ի՞նչ մեծ ու ահեղ ձկներ կան այն ծովում: Դամատարած ծով է և սահման չունի: Այնտեղից դառնալով դեպի արևմուտք, բազում օրերում եկանք-հասանք Ֆրանցուզաց աշխարհ, Սանտոնիժ քաղաք: Այդ քաղաքը եպիսկոպոսների և թագավորների ու թագուհիների գերեզմանատունն է, շատ գեղեցիկ ու փառավոր քաղաք: Եվ շատ եկեղեցի կա: Եվ Ավագ եկեղեցին, ուր թագավորների շիրիմներն են, եկեղեցու ձախ կողմը չորս ձկան կող է դրած, ամեն կողը՝ 5 գիրկ երկարությամբ, և 3 թիզ չափեցի լայնքը, և ասացին, թե այս ծովում վիթխարի ծուկ կա: Մնացինք մի օր և այնտեղից մեկնելով՝ հասանք Փարիզ մեծահամբավ քաղաք, դեկտեմբերի 19-ին և կեսօրին մտանք քաղաք: Երեկոյան գնացինք մի հյուրանոց և հանգստացանք: Եվ մյուս օրը, վերջին ժամին, հասանք Ավագ եկեղեցի՝ մեծ, գեղեցիկ ու զարմանալի, որ մարդ լեզվով չի կարող պատմել:

Ավագ եկեղեցին ունի 3 մեծ դուռ. արևմտյան կողմը և մեջտեղի դռան երկու փեղկի մեջ Քրիստոսն է կանգնել, իսկ դռան վրա Քրիստոսը դատելու է մստել՝ զարդարված ոսկե զառեկով, իսկ երկու հրեշտակ աջ ու ձախ կանգնել են, և աջ կողմի հրեշտակը բռնել է այն սյունը, որ Քրիստոսին կապեցին, և գեղարդը, որով խոցեցին Քրիստոսի կողը: Իսկ ձախ կողմի հրեշտակը կանգնել է Սուրբ հաջը բռնած: Աջ կողմը Սուրբ Աստվածածինն է՝ ծնկաչոք, իսկ ձախ կողմը՝ Սուրբ Դովիաննեսը և Սուրբ Ատեփանոս Նախավկան: Առջևում բոլոր հրեշտակապետերն են ու բոլոր սրբերը: Հրեշտակներից մեկի ձեռքին կշեռք

կա, որով մառդկանց մեղքն ու վարձքն է կշռում, իսկ ծախ կողմը՝ փոքր-ինչ մեղքն է քաշել սատանան, և բոլոր դևերը՝ նրա հետ, իսկ մեղավոր մարդկանց շղթայել, դժիսք են տալու։ Եվ դժիսքը զարիտրելի է պատկերված. որ մարդ տեսնելիս սասանում է և սոսկում։ Քրիստոսի դիմաց սուրբ առաքյալներն ու մառգարեններն են, սուրբ հայրապետներն ու բոլոր սրբերը զանազան գույներով ու ոսկով զարդարած, և պատկերված է արքայությունը, որ մարդ տեսնելով փափաքում է ու փառավորվում։ Ավելի վերևում նկարված են 28 թագավոր՝ գլուխներին թագ, կանգնած են (կենդանի) մարդու մման։ Ավելի բարձր՝ Տիրամայր Սուրբ Աստվածածինը՝ ոսկեմախշ, գունագեղ, աջ ու ձախ կանգնել են սուրբ հրեշտակապետներն ի սպասարկություն։ Եկեղեցու լուսամուտներից ամեն մեկը մի կալի չափ է։ Երբ մտնում ես եկեղեցի, ծախ կողմը մի մեծ անտաշ վեճ է, ուր պատկերված է սուրբ Քրիստափորի՝ Քրիստոսն ուսին, ներքևում՝ սուրբ Քրիստափորի նահատակությունը։ Ավագ խորանի շուրջը Քրիստոսի տնօրինություններն են, և այլ բազում ու զանազան զարդանկարներ, որոնք չի կարող մարդ պատմել։

Քաղաքը խիստ զարմանալի ու մեծ է, և 2 գետ է մտնում մեջը և կեսն իսկ չի դուրս գալիս։ Եվ ո՞վ կարող է պատմել քաղաքի մեծությունն ու գեղեցկությունը։ Եվ Փարիզ մնացի 13 օր, այնտեղից մի ընկեր ևս գտնվեց Ատամպոշ քաղաքը (գնալու, այնտեղ) մնացի միայն 10՝ օր և գնացի Ուռան քաղաք՝ մեծամեծ չարչարանքներով, և գտա մի ֆռանկ սարկավագ, որ ընկերացավ մինչև Կաստիլիար քաղաք, իսկ այնտեղից՝ մեծն Փոթեր քաղաք։ Այնտեղ էր Քրիստոսի պատանքը, որ տեսանք։ Այլևս ընկեր չգտա, մենակ մնացի և ամենակարող Աստծուն և Սուրբ Դակոբի աղոթքին ապավինած՝ ոտքով ուղևորվեցի Փոթք քաղաք, և այնտեղից՝ Լուսինտա քաղաք, այդտեղից՝ մեծն Ունանտ, և մնացի 5 օր։ Եվ ելա-գնացի, բազում քաղաքներով հասա Կասկո-նիա, այնտեղից՝ Ապավինեա, իսկ այնտեղից՝ Կաստիլիա։ Բազում չարչարանքներով այդտեղից միայնակ, Աստծուն օգնական ունենալով, հասա Պայունա աշխարհ, ուր և քրիստոնյաները մեծ սիրով ընդունեցին ու պատվեցին չափից ավելի։ Եվ մնացի 6 օր և ընկեր չգտա, Աստծուն և Սուրբ Դակոբին ապավինած՝ բազում օրեր մեծ դժվարություններով հասա Պիսկայայի աշխարհ, որ ձկնակերների երկիր է, Պիսկայա քաղաքը՝ ծովի ափին։ Այնտեղից (գնացի) Սան Սեբաստիան, որտեղ հյուրատան տները՝ այր և կին, անչափ սիրալիր էին, ինձ պահեցին 5 օր այն քաղաքում։ Եվ 2-3 անգամ հրավերք արեցին, և այդ քաղաքացուց նման սիրուն մարդ չտեսա [այլուր]։

Այնտեղից բազում օրեր գնացի ծովի ափերը և ուր որ գնացի՝ խիստ պատվեցին։ Եվ անցա 5-6 քաղաք, բազում օրեր գնացի և հասա մեծն Փոթքընկալե և մնացի 4 օր, և միայնակ մեկնեցի, հասա Սանթանտեր և այնտեղից՝ Սանթաթեաս, այնտեղից՝ Սանթելանա, իսկ այդտեղից՝ Սանմիսան, ծովի ափին։ Եվ շատ սիրալիր էին մեր նկատմամբ։ Այնտեղից՝ Սանսավաթոր, այնտեղից՝ Պետաց քաղաք, իսկ այնտեղից՝ բազում աշխարհներ։ Աստված օգնական ունեի, շատ չարչարվեցի և նվաղա՜հ հասա ամենօրինայ և փառավորյալ տիեզերալույս տաճար և Սուրբ Դակոբի գերեզման, ուր սուրբ մարմինն է, Կալիցիա քաղաքում։ Գնացի-մտա սուրբ գերեզմանի մոտ, երեսիս վրա ընկա, երկրպագեցի և մեղքերի թողություն խնդրեցի ինձ և իմ ծնողներին ու երախտավորներին։ Բազում արտասուքով սրտիս փափազը կատարեցի։ [Այն] դրված է Սուրբ Սեղանի մեջ, դեղնապղինձ տապանում, և 3 կողպեքով փակած, և ինքը Սուրբ Սեղանի վրա քանդակված է մարդու կերպարանքով։

նստել է աթոռին, թագը գլխին, իսկ գլխավերևում փայտե զմբեթ է կապած: Եկեղեցին խաչածն է, մեծ ու փառավոր զմբեթով, և երկու կողմը՝ զանգակատներ: Եվ եկեղեցին 3 բաժին է, 206^{*} կամարի վրա, և 4 դուռ ունի: Դարավակողմի դռնից դուրս նույնպես շատրվան կա, և շուրջը ոսկերչանոցն է: Դյուսիսային դռնից դուրս նույնպես շատրվան կա: Դրանն ու փողերը այնտեղ են ներդրել և նստել են ու նշաններ, ուլունքներ, ամեն ինչ վաճառում են այնտեղ, ինչ որ փնտռես: Արևմտյան դռան առջև, ներքևում, նաև վերևը, աղբյուր կա: Եվ արևելյան դռան վերևը Քրիստոս նստած է աթոռին, Աղամից մինչև աշխարհի վերջը՝ ինչ որ եղել և լինելու է, ամբողջ նկարած է: Եվ ուրիշ անբավ վայելչություններ կան: Դ^{**} կարող է պատմել:

Եվ այնտեղ մնացի 84 օր, այլևս մնալ չկարողացա, որովհետև թանկություն էր: Խնդրեցի իմ մեղքերի թողություն, և ծնողներին ու բոլոր երախտավորներին: Եվ որտեղ Սուրբ Դակոբի մարմինն է՝ հաստ երկաթով լուսամուտ է շինած: Նաև ուրիշ բազմաթիվ փառավորություններ կան Սուրբ Դակոբում, բայց չկարողացա գրի առնել, առա Սուրբ Դակոբի օրհնությունը և ելնելով՝ դիմեցի աշխարհի ծայրը, Սուրբ Աստվածածին, որ Սուրբ Պողոս Առաքյալն իր սուրբ ձեռքով է կառուցել, որը ֆրանկները Սանթամարիա Ֆենիստեռնա են անվանում: Բազում չարչարանք և բազում վիշտ կրեցի ճանապարհին: Դանդիպեցի բազում վնասակար գազանների, հանդիպեցի նաև մի մեծ գազանի, որ ասացին, թե 20 հոգին երախից չի կարող անցնել, դու ինչպես ազատվեցիր: Եվ եկա-հասա Դոլանի աշխարհ, որտեղ նույնպես ձկնակերներ էին, և լեզուն չգիտեի, բայց խիստ պատվում էին և տնետուն տանում, զարմանում, թե՛ ինչպես ազատվեցիր գազաններից^{**}:

Շատ քաղաքներով եկա Դամատարած ծովի ափ, և լեզուն բոլորովին չէի հասկանում, բայց Պապի հանձնարարականի համար հարգում էին: Եվ եկա մի քաղաք, որտեղ մեծ գետ է հոսում: Ափն ի վեր, որ 68 կամար էր, կամուրջ էին կապել և անցել, հասել մեծն Վիլվադ, և այնտեղ մնացի 3 օր, այդտեղից ելա, 27 օր զննել և հասա Կենդարիա ամենօրինալ քաղաք, ուր և մեծ հարգանքով պատվեցին ինձ, և այստեղ մնացի 7 օր: Եվ գտա մի մեծ նավ, որն, ինչպես ասացին, 80000 դանթար (մոտավորապես 45 կգ. թրգմ.) բեռ ուներ, և աղաչեցի երեցներին՝ ասացեք, որ ինձ նույնպես առնեն նավի մեջ, այլևս չեմ կարող դիմանալ, ավուսնս վերջացավ: Նրանք զարմանում էին, թե «Այսքան երկրներ դու ինչպես կարողացար հետևակ անցնել»: Եվ զննեցին, նավի տիրոջը խնդրեցին, թե «Այս հայը հոգևորական է, առ նավը, քանի որ հեռու աշխարհից է եկել և չի կարող ցամաքով հետ դառնալ»: Կարողացին Պապի թուղթն ու լսեցին, և նավավարն ասաց. «Կառնեմ նավս, բայց դրան ասացեք, որ գիտեմա՛ն ես Դամատարած ծովով եմ զննում, իմ նավը վաճառական չի մտնում: Այսքան մարդիկ որ կան՝ նավիս ծառայողներն են: Մենք մեր կյանքից ձեռ եմք վերցրել, ապավինել ենք Աստծուն. եթե նախախնամությամբ մեր բախտը բերեց, Աստված մեզ ազատեց, չղջանցենք աշխարհը՝ լավ է, թե չ՝ Աստված գիտե: Այլ կողմով զնալու ճար չունի, թե դու համաձայն ես՝ շատ բարի: Եվ նավս, հացդ ու կերակուրդ, խումդ մի հոգա, նավի վարձը նույնպես քեզ»: Այն հոգևորականները պատասխանեցին. «Մենք ևս հոգի ունենք. դրա պաքսիմատը և այլ բաներ, որ Աստված պատրաստում է, մենք կհոգանք»: Եվ վերադարձան քաղաք: Եվ ժամերգության ժամանակ բոլորին հասկացրին, թե այս հայ

* մէկ:

** բնագրում վանքներէն. ուղղել ննք ըստ իմաստի:

հոգևորականը նալ է նստելու. ձեր երեխաների արևուն և ձեր հոգու համար նրան պաշար հավաքեցեք:

Աճափ բարիք բերին. ինչքան ուտեի՝ չէր վերջանա, և մտա նալ Նոր կիրակի, երեքշաբթի, և 67* օր շրջանցեցինք մայրցամաքը և եկանք աշխարհիս եզրը. Ամդալուզիա, այն քաղաքը, որ ծովի մեջ էր, և մնացինք այնտեղ 19 օր, որովհետև մեծ ալեկոծության հանդիպեցինք, և առագաստները պատռվեցին. եկան այնտեղ, շինեցին: Դա շատ գեղեցիկ քաղաք էր, փոքրիկ և բարելի: Այն տեղերից մեկների և զնացի Սանթամարիա Կատալուսի և այնտեղից՝ Լիպալիա, որտեղ տեսա թագուհուն, և հետ դարձա: Այնտեղից ելա, նավով 18 օրում հասա Մադրպացոց աշխարհ, որովհետև քամին հանդիպակաց էր, փոքորիկ էր, եկանք-հասանք Սալոպրինա: Ես այլևս նալ չմտա և ելա-մնացի այնտեղ 3 օր ու միայնակ մեկների Մադրիպացոց աթոռամիստ Կրանատ, որ բազուկին առել էր: Մեծ բարելի քաղաք է, և մնացի 10 օր ու ելա, 5 օրում հասա մեծն Ամանն, որտեղ Քրիստոսի դաստառակն էր, այնտեղից ելա-զնացի Պախա և այնտեղից՝ Յուվիտա, իսկ ապա՝ Սանստեֆան, այնտեղից՝ Պուրդուս, և այնտեղից՝ ՉՆչիլիա, որտեղ սև ցավ ստացա և մնացի 10 օր: Եվ պարոնը հանձնարարեց բուժորդին, մի քիչ բուժեցին, և այնտեղից [զնացի] Ալմանց և այնտեղից՝ Ֆալար և Մունդեզ, և այնտեղից՝ մեծն Սադիվա, որ 45000** տուն էր: Այնտեղ կրկին հիվանդացա և փորացավ եղա, և այն հոգևորականները մեծ սիրով ընդունեցին ու ինձ ծառայություն մատուցեցին. մինչև որ առողջացա և ելա-զնացի և 15-րդ օրը հասա մեծն Վալենցիա, որ 70000 տուն էր, մնացի 4 օր: Եվ այնտեղից զնացի 21 օրում Պարսալոն մեծ քաղաք, որ 90000 տուն էր, և մնացի 5-6*** օր: Եվ այնտեղից՝ Բրբնիա, և անցա Կարդալին աշխարհ, և զնացի 36 օր ու հասա Ցիցիլայի աշխարհ, և անցնելով շատ օրեր, բազում քաղաքներով՝ Ֆրանցոզաց աշխարհ, անցա Սիլանի դքսության աշխարհ և եկա աստվածապահ Ֆրկարոլ քաղաք: Եվ խիստ մեծ պատվով հարգեցին ինձ, 15 օր տնետուն մեծարելով. Աստված շեն պահե իրենց:

Եվ ելա-հասա մեծն Ալեքսանդրիա: Այնտեղից բազում օրեր եկա-հասա Շնվեզ քաղաք, եկա, որ նալ նստեի և զայի իմ աշխարհ: Բայց ծովը պղտոր էր, ալեկոծություն էր, չկարողացա նալ մտնել, ետ դարձա և շատ չարչարանքով շազում օրերում հասա Ուրվիթա, որ 2 ոսկով եզներ էին կանգնեցրած: Ելա, բազում քաղաքներով հասա Մոնթիֆիասկո և այնտեղից՝ Վիթերպո, և այնտեղից՝ բազում քաղաքներ, բազում օրեր եկա-հասա դարձյալ Հռոմ քաղաք, սուրբ գլխավոր առաքյալների ոտքը, 1496 թվականի փետրվարի 20-ին, Մեծ պահքին, մտա մեծն Հռոմ: Եվ ելա-հասա Սանթամարիա, Տլորեթ, և եկա Անջոնիա, մտա նալ և բազում փորձանքների հանդիպեցի, որ հոժարեցի մահվան, միայն թե այն վիշտը չկրեի:

* վաթսուներուրդ:

** շուսնուհինգ հազար:

*** վեց:

ՎԱՐՈՒՄՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

**ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՃԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՔԱՐԹԼ-ԿԱՆԵԹԻ ԹԱԳԱՎՈՐ ՀԵՐԱԿԼ ԵՐԿՐՈՐԴԻ ԵՎ ՎՐԱՅ
ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ
(1786-1792 թթ.)**

Իր գահակալության սկզբնական շրջանում և հետագա տարիներին Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսը (1780-1799) աշխույժ նամակագրական կապ է ունեցել Քարթլ-Կախեթի թագավոր Գերակլ Բ-ի և նրա ընտանիքի անդամների հետ: Գյուտ քահանա Աղանյանցը «Դիւան հայոց պատմութեան» Դ հատորում հրատարակել է Գերակլին ուղղված Ղուկասի 12 նամակ, ինչպես և Դարեջան թագուհուն, Գեորգի արքայորդուն, Անտոն Կաթողիկոսին հասցեագրված նրա երկու տասնյակ նամակներ: «Դիվան հայոց պատմության» նոր շարքի առաջին հատորում (աշխ. Վարդան Գրիգորյանի, հրատ. 1984 թ., Երևան) լույս են ընծայվել նույն անձանց ուղղված 23 նամակ և նամակների համառոտագրություն, որոնցից 14-ը ուղղված է Գերակլ թագավորին:

Ավելի է աշխուժացել Կաթողիկոսի նամակագրությունը Գերակլի հետ 1786-1796 թթ.: Ըստ մեր հաշվումների, որոնք այնքան էլ ճշգրիտ չեն, քանի որ կան պակասող մատյաններ, այդ թվականներին Ղուկասը վրաց թագավորին է ուղարկել քառասուն նամակ: Քիչ չէ նաև թագավորական ընտանիքի անդամներին առաքված նամակների թիվը: Դժբախտաբար, այդ նամակներն ամբողջությամբ չեն հասել մեզ, նրանց մի մասը պահպանվել է համառոտագրությունների ձևով, որոնք երբեմն համարյա ոչ մի տեղեկություն չեն հաղորդում: Օրինակ, 1786 թ. հունվարի 3-ին համառոտագրությունների մատյանում արձանագրվել է միայն այսքանը. «Թուղթ մի տաճկերէն առ Գերակլ արքայն, ի պատասխանի ընդ Գեօրկին բէկին գրեալ թղթոյն»¹:

Այստեղ կարելի է միայն ենթադրություններ անել թե՛ Գերակլի ուղարկած նամակի և թե՛ նրան տրված պատասխանի մասին: Համառոտագրությունը կազմող քարտուղարը երբեմն քիչ ավելի «պերճախոս» է դառնում և նամակին տալիս այսպիսի հակիրճ, բայց դարձյալ քիչ բան ասող բնութագրություն. «յաղագս որպիսութեան և սիրոյ», որն ավելի տանելի է, քան նախորդը: Նախ իմանում ենք, որ նրանց հարաբերությունները շարունակում են մնալ բարեկամական, և որ նրանք հետաքրքրվում են միմյանց որպիսությամբ:

Բայց հենց այնպես, միմյանց ձևականորեն հարգանք ու սեր փոխանցելու համար չէ, որ գրիչ էին վերցրել այդքան մեծ հեռավորության վրա ապրող այդ բարձրաստիճան անձինք, ուրեմն լինում էին ավելի կարևոր պատճառներ, որոնց մասին կարելի է երբեմն միայն կռահումներ անել այդ կարգի նյութերն ուշադիր ընթերցելու ժամանակ: Կան նամակներ, որոնք պահպանվել են և՛

¹ Մատուցի անվան Մատենադարան, ձեռ. 4481, էջ 170ա:

սևագիր ձևով, և՛ համառոտագրությամբ, որոնց մեջ շոշափված են բազմաթիվ ու բուզմաքմուխ նյութեր: Չնայած սևագրի առկայության, համառոտագրությունն ամենևին ավելորդ չի դառնում, քանի որ այնտեղ ճիշտ նշված է լինում նամակի յարադրման կամ առաքման ժամանակը, երբեմն էլ, որ շատ կարևոր է, նամակների փոխանակման դրդապատճառները, նամակաբերի կամ նամակատարի անունը, նրա ճանապարհորդության ուղղությունը և նպատակը, նամակի լեզուն կամ այլ հարցեր, որոնք ոչ միայն օժանդակող, այլև որոշ պայմաններում ոչ արհամարհելի կարևորություն են ստանում և նպաստում հարգերի առավել պարզաբանմանը:

Ի տարբերություն այլևայլ վայրերում գտնվող նվիրակների կամ հոգևոր առաջնորդների, որոնց Կաթողիկոսը պարբերաբար մանրամասն տեղեկություններ էր հաղորդում երկրի ընդհանուր կացության վերաբերյալ, Չերակլի հետ գրագրությունն ուներ գործնական և պաշտոնական բնույթ: Ղուկասը որոշակի իրադարձությունների մեջ կողմնորոշելով վրաց թագավորին, ակնկալում էր նաև նրա ազդեցիկ միջամտությունը կամ օգնությունը: Եվ այն պայմաններում սա շատ կարևոր էր, քանի որ շրջակա մահմեդական տիրակալները հաշվի էին առնում այն իրողությունը, որ ռուսական հովանավորությունը վայելող վրաց քրիստոնյա թագավորը մտերիմ է Չայոց Կաթողիկոսի հետ: Այդ բանը նկատի էր ունենում նաև Երևանի խանը:

Եվ այդպես, պարբերաբար, Ղուկաս Կարնեցին Չերակլ թագավորին քաջատեղյակ էր դարձնում Արարատյան դաշտում, ինչպես և շրջակա վայրերում տեղի ունեցած քաղաքական անցուդարձին, տեղեկություններ հաղորդում հնդկահայ գաղութներից ստացած նամակների ու լուրերի վերաբերյալ, որոնք չափազանց հետաքրքրում էին Քարթլ-Կախեթի տիրակալին: Այդ առումով շատ բնորոշ է 1786 թ. ապրիլին Չերակլին հասցեագրած Ղուկասի նամակը, որը գրավում է սևագրությունների մատյանի (ձեռ. 4501) երկու ընդարձակ էջ (էջ 1052-1053): Սա պատասխան նամակ է Չերակլի մարտի 14-ին գրած նամակի և մի գրության՝ «փուսուլայի»: Ղուկասն ավելորդ է համարում մանրամասն տալ երկրի ծանր վիճակի ընդհանուր նկարագրությունը, քանի որ այդ ամենն այլ աղբյուրներից իայտնի է թագավորին՝ «իմացեալ իսկ է մեծութիւն ձեր»: Բացի այդ, Չերակլի մարդկանցից մեկը՝ «հարազատ ծառայն քո՝ Թախկայ բէկն», պետք է զեկուցի ամեն բանի մասին: Կաթողիկոսի ամենակարևոր խնդրանքն այն է, որ դեպի հարավ արշավող լեզգիները հեռանան այլ ուղղությամբ և վնաս չպատճառեն Չայոց երկրին. «Լիապէս իմն հոգ տարցիս, որ իցէ թէ գազանքն այնոքիկ անօրէնք թարց վնասատուութեան տառապակիր երկրիս անցցեն և կորիցեն և փչասցին իսկ, որոյ վասն և մեք աղօթօղ եմք»²:

Այնուհետև նա գրում է Չնդկաստանի Մադրաս քաղաքից հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Շահամիր Շահամիրյանի ուղարկած քարտեզի և գրքերի մասին, որոնք դեռ իրեն չեն հասել: Նամակի վերջում, որը հավանորեն ավելացվել է մի քանի օր անց, նկարագրված է լեզգիների նահանջը, 500 ծիավորներով Աշտարակ մտնելը, մարդկանց գերեվարումը և

² Ձեռ. 4501, էջ 1052:

այլն: Վերջում Ղուկասը խնդրում է «ի տերութենեղ զկատարեալ հոգս իմն առնել խնդրի վասն տառապակիր երկրիս և սրբոյ Աթոռոյս»³:

Նույն ապրիլ ամսին Ղուկասը երկու պատասխան նամակ է գրել Յերակլին, երկուսն էլ պարսկերեն, մեկը Յովսեփ Արղությանի եղբոր՝ Բեջանի, մյուսն էլ Թակղի բեկի հետ, որը հավանորեն պաշտոնական գործով կրկին ժամանել էր Էջմիածին⁴:

Հաջորդ նամակի ուղարկման պատճառը Յերակլի առողջական վիճակն էր: 1786 թ. մայիսի 6-ին Ղուկասը գրել է թագավորին. «թ լուաք, զի տկարացեալ ես և առողջացեալ շնորհիւն Աստուծոյ, Տէր տացէ վերստին կատարեալ առողջութիւն»⁵:

Եթե վրաց պատմաբանները փորձեն ստեղծել Յերակլ թագավորի կյանքի ու գործունեության մանրամասն տարեգրություն, ապա չեն կարողանա հաջողության հասնել առանց Ղուկաս Կարնեցու գրագրությունների, որովհետև նրա նամակներում արձանագրված են վրաց թագավորի ու նրա ընտանիքի անդամների ոչ միայն քաղաքական գործունեության, ռազմական արշավանքների, ուղևորությունների մասին ուշագրավ տեղեկություններ, այլև կենցաղային բնույթի բազմաթիվ մանրամասնություններ (հարսանիքներ, ծնունդներ, հիվանդություններ, մահեր), որոնց Կաթողիկոսը ժամանակին արձագանքել է ոչ միայն գրավոր ձևով, այլև հաճախ իր ներկայացուցիչներին ուղարկել Վրաստան: Հետևաբար այդ բնույթի նրա թողած նյութերը հետաքրքրական են ու միանգամայն արժանահավատ:

1786 թ. Յերակլը և Ղուկաս Կարնեցին փոխանակել են երկու նամակ, որոնց բովանդակության վերաբերյալ կարելի է միայն գուշակություններ անել: Մայիսի 16-ի նամակից իմանում ենք, որ Յերակլը Ղուկասի խնդրանքով տեղեկություններ է հաղորդել իրենց վիճակի մասին. «յաղազս զեկուցման որպիսութեանն իւրոյ և մերս հարցման»⁶: Մյուսը, որ գրվել է հաջորդ օրը՝ մայիսի 17-ին, արդեն սովորական ձևակերպում ունի՝ «Դարձեալ թուղթ խաթրահարցական առ Յերակլ արքայն, ի պատասխանի ընդ Գլխաբեկին գրեալ թղթոյն»⁷:

Հինգ օր անց, մայիսի 22-ին, դարձյալ անհրաժեշտություն է առաջացել պատասխանել թագավորի մի նամակին, որն Էջմիածին էին բերել դեպի Խոյ ուղևորվող վրաց արքունիքի հայազգի պաշտոնյաներ՝ Սուլխան Դիվանը և Միրզա Միսայելը: Մի երկու բառով պատճառաբանված է Հաղպատի վանքի կապակցությամբ կոնդակ չտալու հարցը. «քանզի յայսմ բարեսպառ միջոցիս և խառնակութեանց տեղեացն ամենից երկմտիմ, զուցէ թէ անպատիւ լինի գորիմութեան թուղթսն մեր, և ինքեանք ևս չչափեցեն»⁸:

Համառոտագրությունների մատյանում զրանցված մի նամակից տեղեկանում ենք, որ 1786 թ. հուլիսի սկզբներին Ղուկասը նամակ է ուղարկել Յնդկաց

³ Նույն տոմարում, էջ 1053:

⁴ Ձմեռ. 4481, էջ 177ա:

⁵ Նույն տոմարում, էջ 178ա:

⁶ Նույն տոմարում, էջ 178բ:

⁷ Նույն տոմարում:

⁸ Նույն տոմարում, էջ 179բ:

եղերում նվիրակ եփրեմ վարդապետին, որի մեջ հանձնարարություն կա Դերան Թագավորի Զնդկաստան առաքվող ներկայացուցչի մասին. «Ե ապա լանձնարարութիւն վասն Յովսէփին (զոր Դերակլ արքայն յղեր այժմ յայն կողմունսն) առ ի ծանօթ առնել յայն կողմանց»⁹: Այս կարևոր գրանցումից տեղեկանում ենք Զովսեփի՝ նույն ինքը վրաց արքունիքում հայուրապետի աշտոնում ունեցող Զովսեփ Դինիբեկյանի մասին, որը Զերակլի հանձնարարությամբ մի քանի ամսվա մեկնելով Զնդկաստան՝ հանդիպումներ է ունեցել Սարգսի հայրենասիրական խմբի ղեկավար Շահամիր Շահամիրյանի հետ, իր հետ բերելով նրա նամակները և հրատարակած կարևոր գրքերը¹⁰:

Հայտնի է, որ այս ժամանակ Զերակլը Զովսեփ Դինիբեկյանի հետ Զնդկաստան էր ուղարկել Լոռին Շ. Շահամիրյանին նվիրելու մասին կազմված հրովարտակը: Դրանից բացի, Թագավորը իշխանական կոչում էր շնորհել Շ. Շահամիրյանին: Զովսեփի այդ ուղևորությունը կապված էր հրովարտակները Զնդկաստան տանելու հետ, ուստի անհրաժեշտ է եղել ստանալ Կաթողիկոսի հանձնարարական նամակը¹¹:

Համառոտագրություններից հայտնի է դառնում նաև, որ այս ժամանակ Զերակլը աշխույժ կապերի մեջ էր խոյի խանի հետ և այնտեղ էր ուղարկում իր մարդկանց, որոնք բերում կամ տանում էին նաև Ղուկասին հասցեագրված կամ նրա հանձնած նամակները: Այդպիսի մի նամակ էլ բերել էր Զովհաննես անունով մեկը, «որ մարդս զնաց ի կողմունսն Խօյու ըստ հրամանի տեառն իւրոյ, և ահա վերադառնայ առ առաքօղսն իւր, ընդ որում և զրէ սրբազան Վեհապետն զթուղթս այս» (սեպտ. 10-ին 1786 թ.)¹²: Սեկ տարի անց, 1786 թ. մայիսի 6-ին, նույն ձևով նամակատարի դեր է կատարում նաև խոյից վերադարձող պրն. Բեջանը, Զ. Արղությանի հարազատ եղբայրը, որ ծառայում էր վրաց արքունիքում¹³:

Զերթական նամակի շարադրման առիթը կապված էր դժբախտության հետ. մահացել էին Զերակլի ավագ դուստրը և թոռը: Այդ կապակցությամբ Ղուկաս Կարսեցին 1786 թ. հոկտեմբերին «Թուղթ մխիթարութեան» է ուղարկում Զերակլ արքային, թագուհուն, արքայորդի Գեորգինին, Դավիթ Սարգարին (Զերակլի փեսային)¹⁴:

1786 թ. հոկտեմբերի 20-ին Սելիք Ավետիքին (Թիֆլիս) գրած նամակից հայտնի է դառնում, որ Ղուկասը փոքր-ինչ ուշացրել է ցավակցական նամակների ուղարկումը, քանի որ ճշգրտված տեղեկություններ դեռ չէր ստացել. «Իսկ այժմ մինչ ստուգիւ իմացաք, ահա զամենայն զբաղմունս ի բաց արկեալ, զմխիթարութեան գրեանս գրեցաք առ օրհնեալ արքայն և առ որդին Գեորգին խանն և առ թագուհին և առ սարդարն, և հանդերձ ընծայիւք ինչ յղեցաք

⁹ Ձեռ. 4481, էջ 183ա:

¹⁰ Վ. Ռ. Գրիգորյան, Նոր տնդկություններ Հովսեփ Դինիբեկյանի մասին, «Պատմա-քառասիրական հանդես», 1979, 1(84), էջ 103-112:

¹¹ Նույն տնդում, էջ 183ա:

¹² Նույն տնդում, էջ 187ա:

¹³ Նույն տնդում, էջ 206:

¹⁴ Նույն տնդում, էջ 189ա:

ծեռամբ հոգևոր որդւոյն մերոյ՝ Մարտիրոս խոհեմամիտ վարդապետին հասանել առ նոսա»¹⁵:

Նույն նամակի մեջ Ղուկասը հայտնում է, որ լուր է հասել այն մասին, թե հաշտութիւնը Յերակլի և Ախլցխայի փաշա Սուլէյմանի միջև «ոչ է ի գլուխ եկեալ», ուստի խնդրում է ճշտել և «գստոյգն իմն որպիսութիւն գրեսցես մեզ շուտով»¹⁶:

1787 թ. մարտի 25-ին Յերակլ թագավորն իր ներկայացուցիչ Ձաքարիա բեկին երկու անգամ ուղարկում է Սպահան՝ Աղա Մուհամադ խանի մոտ: Վերադարձին նա տարել էր Յերակլին հասցեագրված Ղուկասի նամակը¹⁷:

Մեզ հայտնի չէ, թե ի՞նչ առաքելությամբ էր Ձաքարիա բեկը մեկնել վրաստանի վրա հարձակման ծրագրեր մշակող Աղա Մուհամադ խանի մոտ, բայց գիտենք, որ այդ բանակցություններն արդյունք չունեցան, և ներքինի խանի հրոսակները մի քանի տարի անց գրավեցին և ավերեցին Յերակլի մայրաքաղաքը: Հաջորդ օրը ևս առիթ կար Յերակլին նամակ գրելու, քանի որ քյարիմ անունով մի պարսիկի ձեռքով «որպիսածանոյց» նամակ էր ստացվել թագավորից¹⁸: Միաժամանակ Ղուկասը պատասխան նամակ է գրում արքայորդի Գեորկի խանին (մարտի 28-ին)¹⁹:

Տարբեր վայրերում ապրող հայերը երբեմն այս կամ այն ազդեցիկ մարդու միջնորդությամբ կամ էլ անձամբ դիմում էին Կաթողիկոսին՝ իրենց ազնվական ծագման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ ստանալու համար: Այդպիսի դիմումներ էլ կատարվում էին Յերակլ Բ-ի կամ նրա որդու միջնորդությամբ: Այսպես, 1787 թ. մայիսին նսնուսեցի Սարգիս և Հակոբջան աղաները դիմել էին Կաթողիկոսին «յադագս ազնիւ գալոյն իւրեանց... գվկայական և զշնորհաւորական թուղթ» ստանալու խնդրանքով²⁰: Քանի որ Յերակլ թագավորն էլ լավել էր նրանց այդպիսի վկայական (որն, ի դեպ, ամենևին ձրի չէր լինում), Կաթողիկոսը հարկադրված տալիս է պահանջված վկայականը, «որով իս առաւել հաստատեսցին»²¹:

1787 թ. դեկտեմբերին Յերակլը հայերեն նամակով դիմել էր Կաթողիկոսին մի մտերմիկ համձնարարությամբ. մահացել էր միրզա Գեորկինի հայր Ռուստամը, իսկ Գեորկին «յերևան էր յուսումն դպրութեամբ պարսից»²²: Թագավորը Ղուկասից խնդրում է Գեորկինին կանչել Էջմիածին, հայտնել հոր մահվան մասին, մխիթարել ու սփոփել նրան: Նման խնդրանքով Կաթողիկոսին դիմել էր նաև Յերակլի որդի Վախթանգը²³, Միրզա Միսայելը²⁴ և ուրիշներ: Ղուկասը մեծ տակտով կատարում է նրանց խնդրանքը և տեղյակ պահում վրացիներին (տե՛ս 1787 թ. դեկտեմբերին գրած նամակը /վավ. հմր. 2/):

¹⁵ ՁԵՌ. 4501, էջ 986:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ ՁԵՌ. 4481, էջ 201բ:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 206ա:

²¹ Նույն տեղում:

²² ՁԵՌ. 4501, էջ 1248, 1249:

²³ ՁԵՌ. 4481, էջ 231ա:

²⁴ Նույն տեղում:

Ղուկասը, ինչպես տեսանք, ուշադիր հետևում էր Ախալցխայի Սուլեյման փաշայի և Չերակյ թագավորի միջև բանակցությունների ընթացքին, որը նաև նոր էր համարում Անդրկովկասի քաղաքական վիճակի կայունացման և ուժեղ ալ ուղղությամբ կենտրոնացնելու համար: Երբ ի վերջո հաշտություն է կնքվում, Ղուկաս Կարենցին 1788 թ. դեկտեմբերի 11-ին նամակ է գրում Բաղրամյորին: «Թուղթ առ Չերակյ արքայն Վրաց, ուրախութիւն ի յաջողմունս նորա, մինչ խաղաղացաւ ի յօսմանցւոց՝ հաշտութիւն առնելով առ նոսա և զօրս յոեաց ի կողմն Գեանջայու առ միւս թշնամիսն»²⁵: Միաժամանակ Ղուկասը շնորհավորում է Չերակլի որդի Անտոնի Կաթողիկոս դառնալը: Այս կապակցությամբ նա նամակներ է ուղարկում նաև վրաց Դարեջան թագուհուն²⁶ և անձամբ «նորոգ օծեցեալ կաթողիկոսին Վրաց Անտոն որդին արքայի Չերակլայ»՝ հույս հայտնելով, որ «զանխարդախ սեր քո և զխսկական բարեկամութիւն, զոր ունիս առ սուրբ Գահս Միածնաէջ և առ մեզ, այսուհետև ևս քան զևս յաւելցես և առ մերայինսն, որք են ընդ հովանաւորութեամբ ձերով և հարազատը տէրութեան ձերում»²⁷:

1790 թ. հունվարի 4-ին Յ. Արղությանին հասցեագրած նամակում Ղուկաս Կարենցին հաղորդում է հետաքրքրական տեղեկություններ Կարսի փաշայի հետ Չերակլ Բ-ի ունեցած զինված ընդհարման մասին: Բանն այն է, որ Կարսի փաշան հրաժարվում էր վերադարձնել Վրաստանին պատկանող անասունների հոտերը: Չերակլը ուժի է դիմում՝ «զաւար ինչ տանիլ ետ ի Կարսայ»: Դրա փոխարեն Կարսի փաշայի մարդիկ հարձակվում են Կարինից եկող վրաց լարավանի վրա: «ըմբռնեցին և զայլ ինչ մանր վնասս գործեցին»: Չերակլը կատարում է հաջորդ քայլը. «Ի Գեանջայ զօսմանցւոց ուղտս և ըմբռնել ետ և ի Կարսայ ևս կրկին զքանի գիւղորայս յաւարի առնուլ ետ»: Գործին խառնվում է «Տայոց հնացեալն», այսինքն Ախալցխայի Սուլեյման փաշան, որը «աւուրբք ոչ դադարեաց և յաւարառութեանցն Վրաստանու, վասն որոյ՝ և Պարոնն /Չերակլը-Վ. Գ./ թոյլ ետ երկրացւոցն զվրեժ առնուլ, որք, որպէս լսեաք, քանիցս զաւար բերէին անտի»: Այնուհետև պատմվում է Չերակլի փոխգործողությունների, ավար և գերիներ բերելու, վերադառնալու և ապա Արցախ գնալու համար Ղազախ ժամանելու մասին: «Գեանջայ ընդ իշխանութեամբ նորա է, բայց Արցախու իշխողն ի յամառութեանն կայ՝ զՂազախսն առ ինքն ունելով»²⁸:

Ինչպես տեսնում ենք, վիճակը բավականին բարդ է, և Ղուկասը նամակի մեջ, որքան հնարավոր է, ձգտում է բացատրել կացությունը: Այստեղ, անշուշտ, չի կարելի չհիանալ նրա շարադրանքի հակիրճությամբ և մի քանի բառով ստեղծված խճճված իրադրությունը հստակորեն բնութագրելու կարողությամբ:

Այսպես, շարունակությունը ևս, որ շատ կարևոր է, տրվում է մի քանի լակոնիկ ու արտահայտիչ պարբերությամբ. «Եւ խղճալի Մելիքագունքն ի Գեանջայ կան: Երևանցիք ևս խոովեալք ընդ Բայազետոյ մովպետին, և զբազում վնասս գործեալ առաւել առ մերայինսն՝ թէ անդ և թէ աստ, այժմ իբր

²⁵ Ձեռ. 4501, էջ 1387:

²⁶ Նույն տմողում, էջ 1282:

²⁷ Նույն տմողում, էջ 1283:

²⁸ Նույն տմողում, էջ 1528-1529:

թե հաշտ են, բայց ոչ ամենևին»։ Շարունակությունը ևս նույն ոճով է և միանգամայն գուրկ լավատեսական որևէ հիմքից. «Այլև՝ Ղարադաղու իշխողն եկեալ ի վերայ Նախիջևանու, և տեղւոյն իշխողն, օգնութեամբ երևանցւոց, վանեալ զնա հալածեաց»։ Տուժում են դարձյալ հայերը, թալանվում են նրանց վանքերն ու եկեղեցիները։ «Բայց ո՛հ ցաւոյս, շարունակում է պատմել Ղուկաս Կարնեցին, զի Ագուլեաց հռչակաւոր վանքն սրբոյն Թովմայի Առաքելոյն ասպատակեցաւ ի թշնամեացն և ամենևին դատարկեցաւ յամենայն իրաց թէ՛ յեկեղեցականաց և թէ՛ յարտաքսականաց, զի զպահեստն ևս գտեալ կողոպտեցին և բազում աւերս են գործեալ, որ ոչ անկանի ընդ գրով, և այլ որպիսութիւնք դառինք անախորժք լսելոյ, և իմանալոյ»²⁹։

Այս նույն ժամանակներին է վերաբերում (1790 թ. փետրվար) Զերակլի խնդրանքը Ղուկաս Կարնեցուն, որպեսզի ժողովարարության կոնդակ տրվի Ռուսաց երկիր զմացող խելթութեանցի տեր Սովսես քահանային։ Դրանից բացի Կաթողիկոսը «Ձբաշքօրդ մի ևս շնորհեաց ի թողուլ նոցա զհնքն ի ներս՝ այսինքն ի Դաշտարխան»³⁰։ Այս մասին հայտնելով Զերակլին՝ Ղուկասը 1790 թ. փետրվարի 15-ի մամակով (վավ. հմր. 4) նշում է, որ կատարել է նրա հաջորդ խնդրանքը՝ նյութական օգնություն ցույց տալ Ղալաչու քրիստոնյա գերիների ազատության համար։ Այդ նպատակով նա 50 թուման էր տվել Ղալաչու քեդիսուդաներին՝ Բահատուրին, Սարուխանին և Ջաղուն։ Նա նորից հիշեցնում է գերի ընկած եզդիների հարցի մասին և ընդգծում, որ նա ընդառաջի նրանց ցանկությամբ, առավել ևս հայերն էլ կարող են տուժել դրանից. «զի ազգն մեր ըստ մեծի մասին ընդ ձեռամբ նոցա է և երթևեկն անպակաս։ Եւ թէ ի մենք բարեկամութիւն չտեսանիցեն, չարաման և վնասական լինին մեզ և մերայնոցն։ Վասն որոյ որովհետև խնդրեալ էին և մեք ի յօրհնեցելոյդ խնդրեցաք, զի մի անպատասխանի մնայցենք առ նոսա»³¹։

Նույն օրը, 1790 թ. փետրվարի 15-ին, Ղուկասը մեկ այլ մամակ է գրում Զերակլ Բ-ին (վավ. հմր. 5), որը վերաբերում է Սուղնու Ս. Գևորգ վանքին ու նույն գյուղի բնակչությանը³²։

Ղուկասի մամակներում դարձյալ շոշափվում է վրացիների մոտ եղած գերի եզդիների հարցը։ Կաթողիկոսի միջնորդությամբ Վանա Ահմեդ փաշան Զերակլին սկզբում առաջարկում է 20-30 թումանի փրկագին, բայց հետո բարձրացնում է զինը մինչև 100-130 թումանի³³։

Ինչպես նշեցինք, Զերակլ թագավորը և նրա որդիները հաճախ էին դիմում Կաթողիկոսին այս կամ այն անձին կամ կրոնական հաստատությանը ժողովարարական կոնդակներ տալու խնդրանքով։ Դրանք մեծ մասամբ բավարարվում էին։ Բայց երբեմն Կաթողիկոսը ստիպված էր մերժողական պատասխան տալ, քանի որ այլևայլ տուրքերով ու հարկերով, եկեղեցական բազմապիսի վճարումների ծանր բեռան տակ կքված աշխատավորներն այլևս չէին կարողանում օժանդակություն ցույց տալ Կաթողիկոսի կնիքը կրող ժողովարարական

²⁹ ՁԵՈ. 4501, էջ 1529։

³⁰ ՁԵՈ. 4481, էջ 313ա։

³¹ ՁԵՈ. 4501, էջ 1534-1535։

³² Նույն տեղում, էջ 1441-1442։

³³ Նույն տեղում, էջ 1843։

կոնդակ քերողներին, և Ղուկասը հարկադրված էր լինում մերժել անգամ Չերակլ թագավորին: 1792 թ. հուլիսի 25-ին Չերակլ Բ-ին տված պատասխան նամակում նա գրում է, թե «Վասն երիցու ունեմն առ տալ նմա շրջաբերական կոնդակ, առ որ թե դմա յառաջնմէ եմք տուեալ ըստ խնդրոյդ, այլևս տալն օգուտ չէ»³⁴:

Ղուկաս Կարմեցին բազմաթիվ նամակներ է փոխանակել Գեորգի արքայաորդուն՝ ապագա վրաց թագավորի հետ: Դրանց մի մասի վերաբերյալ մեր տվյալները դարձյալ խիստ սահմանափակ են, քանի որ պահպանված են միայն համառոտագրությունների ձևով («Թուղթ սիրոյ և խաթրահարցական»): Բայց լինում էին նաև ավելի ընդարձակ նամակներ, որոնք վերաբերում են ամենի լուրջ և կարևոր գործերի: Այս տեսակետից հետաքրքրական են Գեորգիի հետ փոխանակված այն նամակները, որոնք վերաբերում են Սխալցխայի Սուլեյման փաշայի հետ Լոռիում հաշտության բանակցություններ վարելու ժամանակներին³⁵: Գեորգին ևս խառնված էր Չաղպատի առաջնորդ նշանակելու գործին և անպայման ուզում էր նպաստած լինել Դավիթ եպիսկոպոսին առաջնորդ նշանակելուն³⁶:

Ղուկաս Կարմեցին նամակագրական կապ ուներ նաև շրջակա վայրերի իշխողների՝ Երևանի, Նախիջևանի, Խոյի խաների, Կարսի, Կարիքի, Մուշի, Բայազետի, Սխալցխայի փաշաների, Շորաօյալի, Մաղսաբերդի, Դիարդինի, Թոփրախդալայի բեկերի, ինչպես և Կարիքի մաքսապետի ու նրա սառաֆների հետ, ձգտում էր լավ հարաբերություններ պահպանել և նրանց օժանդակությամբ քիչ թե շատ ապահով վիճակ ստեղծել նրանց տիրույթներում ապրող հայ բնակչության համար: Բացի այդ, երկրորդ պլանի վրա չէր էջմիածնի վանքի շահերի պաշտպանության խնդիրը, որովհետև պարբերաբար մեծ քանակությամբ եկեղեցական հարկեր ու տուրքեր էին գանձվում այնտեղի հայերից, մշտապես նվիրակներ, ինչպես և յուզահավաքներ ու մատաղացու ժողովուրդներ էին մեկնում այդ վայրերը, և նրանք կարիք ունեին իշխողների բարյացակամ վերաբերմունքի ու պաշտպանության:

Չարկ է նշել, որ Ղուկասը շատ ուշադիր էր վերոհիշյալ իշխանավորների նկատմամբ, երբեք չէր ուշացնում սիրո և խաթրահարցական նամակները, խնամքով ու ճշտությամբ կատարում էր նրանց խնդրանքները, նվերներ էր ուղարկում և ձգտում այլ ծառայություններով ոչ միայն բնականոն հարաբերություններ պահպանել, այլև մտերմություն խաղալ նրանց հետ: Եվ ստեղծված ծանր պայմաններում այդ բանն իրեն մշտապես արդարացնում էր: Իրենց հեթոն, նրանցից ոմանք երբեմն կարիք էին զգում օգնության և դիմում էին նրան՝ վստահ լինելով, որ Վեհափառը կկարողանա օգտակար լինել նրանց: Այսպես, երբ Վանում մահանում է Թամուր փաշան, նրա պաշտոնի հավակնորդ Աիմեղը դիմում է Ղուկասին՝ խնդրելով, որ Կ. Պոլսի ազդեցիկ հայերի միջոցով նպաստավոր լինի իր նշանակմանը: Ղուկասը նամակ է գրում պոլսեցի մեծահարուստ հայերին և կատարում Աիմեղի խնդրանքը՝ հույս

³⁴ ՁԱԹ. 4481, էջ 433թ:

³⁵ ՁԱԹ. 4501, էջ 974:

³⁶ Նույն տեղում, էջ 133տ:

ունենալով, որ պաշտոնի անցնելուց հետո նա բարի աչքով կնայի իր տիրույթներում ապրող հայերի վրա³⁷:

Վերը նշված անձանց Ղուկասը սովորաբար գրում էր պարսկերեն կամ թուրքերեն, բայց երկու դեպքում էլ համառոտագրության մեջ նշվում էր «տաճկերեն»: Նամակների սևագրությունները, որ կատարում էր վանքի մոլլան, չեն պահպանվել, և դրանց մասին բացառապես պատկերացում ենք կազմում համառոտագրություններից, որոնց մեջ նշվում էր մեծ մասամբ նամակի ուղարկման շարժառիթը, եթե պատասխան նամակ է, ապա ո՞վ է բերողը և հետո ո՞ւմ հետ և ե՞րբ են ուղարկվել նամակը, անպայման նշվում է ընծայի մասին: Ղուկասը չէր մոռանում շնորհավորել նոր նշանակվածներին, և անխուսափելի էր նաև այս կապակցությամբ ուղարկվող նվերը, որը լինում էր դրսից ստացված ապրանքներից (կտորեղեն, ժամացույց) կամ տեղական մթերքներից (բրինձ, գինի, օդի, քացախ, բամբակ և այլն): Սահմեդական տիրակալները հաճախ չէին ուզում ցույց տալ, որ խախտում են Ղուրանի պատվիրանները, իսկ Ղուկասն էլ, որքան հնարավոր էր, փափկամտորեն ձևացնում էր, թե ինքը ոչինչ չի հասկանում, բայց մշտապես կատարում էր նրանց խնդրանքները: Օրինակ, 1786 թ. մարտի 14-ին Նախիջևանի Ջաֆար-ղուլի խանին մի քանի լիտր հին գինի է ուղարկում և հատուկ շեշտում «ի հարկաւորութիւն և պէտս ինքեան ի ժամու տկարութեան»³⁸:

Շատ գործնական բնույթ ունեին նրա կապերը Շորաօյալի Ղահրաման բեկի հետ: Վերջինս նրան պարբերաբար լուրեր էր ուղարկում լեզգիների շարժման և մտադրությունների մասին: Չէր անտեսվում նաև տնտեսական հարցը: Այսպես, նամակներից մեկից տեղեկանում ենք, որ բեկը լուր է ուղարկել գարու մասին, որը վաճառվում էր սոմարը 5 դուրուշով. «Եթէ կամիս, մարդ յղեա, գի բերցեն»: Իհարկե, ուղարկվում են մի քանի բեռնակիրներ՝ Դակոբ վարդապետի գլխավորությամբ (1786 թ. հունվարի 26-ին)³⁹:

Նամակներ և նվերներ ուղարկելիս Ղուկասն ուշադիր էր, ծգտում էր չանտեսել կամ չմոռանալ կարևոր անձանց: Նամակ էր գրում, օրինակ, Կարսի փաշային, անպայման գրություններ ու ընծաներ էր ուղարկում նաև ղափիხանահային, աֆանտիզատաներին, Չարխան օղլուն, Մաղզաբերդի Ալի բեկին, Մահմադ բեկին⁴⁰:

Ղուկաս Կարնեցին Դերակլ թագավորից մշտապես լուրեր էր ստանում լեզգիների շարժման մասին: 1791 թ. նոյեմբերի 18-ին նա շնորհակալություն է հայտնում թագավորին «Կասն լեզկեաց համբաւոցն, զոր ծանուցեալ էր մեզ ի [զ]գուշութիւն»⁴¹: Սիաժամանակ թիֆլիսահայոց հոգևոր առաջնորդին և գործակալին հասցեագրած մի գրությամբ Ղուկասը կարգադրում է Դերակլին տալ 100 թուման⁴²: Ընդհանրապես զգացվում է, որ թե՛ այս ժամանակ և թե՛

³⁷ Նույն տնդում, էջ 1442:

³⁸ Ձեռ. 4481, էջ 175բ:

³⁹ Նույն տնդում, էջ 170ա:

⁴⁰ Նույն տնդում, էջ 170բ:

⁴¹ Նույն տնդում, էջ 416: ՏՄՍ նաև 1791 թ. դեկտեմբերին Ղուկասի գրած նամակը՝ «Ընդդռնակալութիւն վասն միամիտ աթննոյն գմեզ ի կողմանէ լեզկեացն և զգուշացութեանն» (Ձեռ. 4481, էջ 416):

⁴² Նույն տնդում, էջ 339:

հետագայում Հայոց Կաթողիկոսը ձգտում էր նյութական օգնություն ցույց տալ Հերակլին, որը ստեղծված իրադրության մեջ միակն էր, որ կարող էր զսպել չորս կողմից սպառնացող մահմեդական ուժերին:

Հարկ է նշել, որ Երևանի խանի հետ նամակների փոխանակությունը այնքան էլ աշխույժ չի եղել այն պարզ պատճառով, որ էքմիաժինը շատ մոտ էր Երևանին, ամեն կարևոր բան փոխանցվում էր սուրհանդակների միջոցով, բանավոր ձևով: Բացի այդ, դեպքերի բերումով Կաթողիկոսը երբեմն ամիսներ շարունակ Երևանում էր լինում, ամենական հանդիպումներ ունենում խանի ու նրա մերձավորների հետ, ուստի, բնականաբար, նամակագրությունը նրանց միջև հասել էր ավագագույնի: Այնուամենայնիվ, կարիք է եղել մի երկու անգամ գրավոր դիմել Մահմեդ խանին: Մի անգամ 1786 թ. հունվարի 28-ին՝ Խոյի խանի սպանության կապակցությամբ⁴³, մյուսը՝ մեկ ամիս անց (1786 թ. փետրվարի վերջին) հարցում է կատարվել լեզգիների վերաբերյալ⁴⁴:

Ղուկաս Կարենցին այն դժվարին, խռովահույզ ժամանակներում շրջակա վայրերի իշխողների և հատկապես Հերակլ Բ թագավորի հետ իր կապերի շնորհիվ կարողացավ շատ թե քիչ տանելի ապահով վիճակ ստեղծել հայ ազգաբնակչության, հոգևոր հաստատությունների ու նրանց սպասավորների համար: Այդ կապերը իրականացվում էին, իհարկե, նաև գրագրությունների միջոցով, որոնք երբեք չընդհատվեցին Հերակլի թագավորության տարիներին և շարունակվեցին նրա հաջորդի՝ Գեորգի ԺԲ-ի ժամանակ: Վրաց թագավորական ընտանիքի անդամների հետ կապերը ավելի էին մեծացնում էքմիաժնի հեղինակությունը հատկապես Երևանի տիրակալների աչքում, քանի որ վերջիններս որոշ ժամանակ հարկային կախման մեջ էին Ռուսաստանի հովանավորությունը վայելող վրաց պետությունից: Կաթողիկոսի այդօրինակ քաղաքականությունը միանգամայն արդարացրեց իրեն Աղա Մուհամադ շահի կործանիչ արշավանքների ժամանակ, երբ Արևելյան Հայաստանի մի զգալի մասը զերծ մնաց արշավող իրդսակների վայրագությունից ու ավերումներից:

ՎԱՎԵՐԱԳԻՐ N° 1

1786 թ. ապրիլ - Թուրք առ Հերակլ արքայն Վրաց, ի պատասխանի թղթոյն նոյա ի մարտի ԺԴ (14) գրեցելոյ և փութուլայից ինչ այլով գրեցելոյ՝ շնորհակալութիւն: Եւ վասն նոր խառնակութեանց երկրիս և վնասուցն սրբոյ Աթոռոյս և բարձման պատճառի նոցին ի միոյ: Եւ վասն Ախլցխայու յորջացեալ լեզկեացն խնդիր՝ քանալ ընդ այլ կողմամբ անցուցանել: Եւ վասն Շահամիրի առ սա գրեալ և առ ինքն հասեալ թղթոյն, թէ ահա լոյցալ⁴⁵:

Յորմէ ժամանեցիս աստուածային առատածիր օրհնութիւնն և ամենակեցոյց ողորմութիւն և նախախնամութիւնն, հանդերձ քրիստոսական սուրբ ողջունիւ, և

⁴³ Նոյն տնդում, էջ 170ա:

⁴⁴ Նոյն տնդում, էջ 175ա:

⁴⁵ 1786 թ. ապրիլին Ղուկաս Կարենցին Հերակլ թագավորին գրել է նրկու նամակ, որոնց համատեղագրությունները տմս Մատենադարանի 4481 ձեռագրում (էջ 177ա): Կարծում ենք, որ այս նամակը նրանցից մեկի սևագրությունն է:

նույնաչափ սրբոյ Տեղւոյս զօրացուցիչ շնորհիւն, և մերս յորդագոյն սիրով և բազմատենչ կարօտիս ի վերայ գերադոյ սիրելւոյ մերոյ և ցանկալւոյ հոգւոյս և ճշմարիտ բարեկամիդ և խնամածուիդ սրբոյ Աթոռոյ մերոյ աստուածախօրի, քրիստոսասէր և բարեպաշտ, խաչապսակ և նոյնազօր, առատիմաստ և հանճարամիտ օրհնեալ մեծի արքայիդ Դերակլայ: Եւ աստուածապահ տան քում և նոյնապարզ օրոյնց քաղազարմից, և համայն ընդ բարի հովանեալ քով հովանաւորելոցն մեծամեծաց և փոքունց խնդալ ի Տէր յարազուարժ ցնծութեամբ: Ամէն: (Շնորհք)⁴⁶:

Եւ ընդ սիրալիւր ողբունի օրհնառաք թղթոյս, ծանուցումն լիցի բարեպաշտութեան ձերում: Զի սիրամիչ թուղթ ձեր, գրեցեալն ի մարտի ԺԴ (14), ժամանեաց առ մեզ: Եւ զփոխուլայսն ևս միջնորդութեամբ մէջիք Աւետիքին գրեալ, ընկալաք և ծանեաց զմիտան, որք ի զօրութիւն մեզ էին: Եւ վասն տիրաբար և խնամողօրէն հոգալոյդ վասն մեր, կարի յոյժ շնորհակալեցաք զբարեսէր օրհնեալ արքայիդ մեծ: Զոր ամենախնամ Աստուած օրհնեացէ և զօրացուցէ, խնամեացէ և պաշտպանեցէ, փրկեացէ յամենայն հոգեկան և մարմնական վտանգից՝ հանդերձ իւրապարզ և քաղազարմ օրոյնց և բնաւիք քոյայնովք, և պահպանեցէ ընդ հովանեալ արոյն իւրոյ սրբոյ ի խաղաղութեան և ի բարեկարգութեան, և շնորհիւ կենարար սուրբ խաչին զթշնամիսն ձեր հալածականս արասցէ՝ ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ, և ի փառս անուան իւրոյ հօգորի, և ի բերկրութիւն մեզ հարելոցս ամենակերպ վշտիւք և նշտակրութեամբք:

Իսկ զնոր խառնակութիւնս երկրիս և զաւերութիւնսն ի պատճառս զմիմեամբք անկանիւր բնակչացն, իմացեալ իսկ է մեծութիւն ձեր: Զորոց երկուց կողմանցն ևս վնասեցաւ սուրբ Աթոռն մեր, զի հակառակօղքն միմեանց մի զկնի միոյ զնալով անդ բազմութեամբ և առանց արգելանաց, ի մերքոյ գտանեցեալ ապրուստսն ի մէքն կերեալ վատնեցին և զանդեայսն ևս ի յանդոյն յափշտակեցին և փչացուցին՝ որպէս հարազատքն քո և սիրելիքն մեր ևս աչօք իւրեանց տեսիմ⁴⁷: Այլ Աստուծոյ ողորմութեամբն պատճառն այսց եղելութեանց, որ և զայլևայլ իրս շատ էր յառաջացուցանելոց, ըստ որում ի չարեաց ոչ ծանծրանայր, ահա բարձաւ ի միջոյ առ բարեբախտութեան օրհնեալ արքայիդ: Զորոյ որպէս վերբանալն ի կենաց և այժմ գիա՞րդ զոյն երկրականացս, հարազատ ծառայն քո՝ Թախկայ բէկն ծանուցեալ է, կամ ծանուցէ լիապէս մեծութեան ձերում: Բայց թող զայսպիսի նեղութիւնս և զվնասակրութիւնս, զորս մշտապէս կրենք, է մեզ առաւելապէս մաշիչ անօրէն լէզկեաց անդ ի յԱյլցիտայ գոյն: Եւ առ այն օգնութիւն և մխթարութիւն մեր նախ յԱստուծոյ և ապա ի բարեպաշտութենէդ լինիլ յուսամբք: Ըստ որում բազմիցս են յառաքացեալք ի խնամածութենէ քումմէ առ մեզ բարեշնորհութիւնք: Ուրեմն ի փառս Աստուծոյ և ի սէր սրբոյ Աթոռոյս, յաւանչ իմն հոգ տարցիս, որ իցէ թէ զազանքն այնոքիկ անօրէնք թարց վնասաւորութեան տառապակիր երկրիս անցցեն և կամ կորիցեն և փչացին իսկ, որոյ վասն և մեք աղօթօղ ենք այնպէս լինիլ:

⁴⁶ Կաթողիկոսական նամակների սկզբնամասերը հաճախ նդարփակում էին քարեմադ-թություններով, որոնք սկսվում էին «Շնորհք» բառով: Սևագրությունը կատարող քարտուղարները մեծ մասամբ բավարարվում էին փակագծերի մեջ գրելով միայն այդ բառը, մաքրագրող քարտուղարները պարտավոր էին քաղել փակագծերը (տես օրինակ, Ռուսաց կաթողիկոսի Նկատելիմա Բ-ին Ղուկաս Կաթողիկոսի 1780 թ. հոկտեմբերին գրած նամակը («Հիւան հայոց պատմութեան», հ. Դ, էջ 46):

⁴⁷ Խոսքը վերաբերում է Երևանի Մահմուդ խանին թշնամի մի քանի ցեղերի ապստամբության ժամանակ ստեղծված քաղաքական խառը իրավիճակին (տես ձև. 4501, էջ 20ք): Այդ հարցի մասին տես նաև «Հիւան հայոց պատմութեան», հ. Ա-Բ, էջ 9, Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դ. վերջում, Երևան, 1958, էջ 122-124):

Դարձեալ և զայս ծանիցէ մեծութիւն ձեր, զի ի Դնդկաց Սատրապսու Շահամիր աղայէն յառաջ քան զայս թուոյ ի բնեալ ի ձեռս մեր, գրեցեալ առ յարգութիւն ձեր: Բայց զի աւանդ ինչ ևս էր յղեալ նա առ Տուղայու առաքնորդ Մկրտիչ վարդապետն, որ են մի աշխարհացոյց հայերէն և չափ Դայաստանեայց, մի պատմութիւն Նատրդուլի թագաւորին Պարսից և մի հատ կարգադրութիւն որոցն Սատրապսու քաղաքին: Եւ այնոքիկ դեռնա մեզ չէին հասեալ, վասն որոյ պահեցաք զայն թուոյ քո առ մեզ, իբր զամիսս երկու, որպէս զի այնք ևս հասցին և ի միասին յղեսցուք: Այլ վասն խառնակութեանց կողմանցն այնոցիկ տակաւին այժմ ևս ոչ հասին: Իսկ մեր զայն թուոյն ձեր այլևս պահել առ մեզ անպատեհի համարելով, ահա յղեցաք առ պատուականութիւն Ձեր:

Եւ արդ, այժմ խնդրեմք ի բարեպաշտութենէ աստուածազօր արքայիդ օրհնելոյ, զի զճշմարիտ սէրդ և ի սրտէ հոգացողութիւնդ և խնամածութիւնդ, որ առ սուրբ Գահն մեր քրիստոսաւք և առ աղօթօրջս վասն կենաց քոց, մի պակասեցուցես, այլ ևս անցմամբ և առաւելութեամբ ունելով զնոյն, յայս դառնացեալ և չարաշատ ժամանակիս բարոյք հովանաւորութեամբ աստուածապարզ և տէրութեանդ մխիթարեսցես զանմխիթարութիւնս վշտազնելոցս յամենայնի, որոյ փոխարէն և դու ի յամենախնամէն Աստուծոյ պաշտպանեալ մխիթարեսցիս յարածամ ի բարեկարգութեան և ի խաղաղութեան վայելելով զկեանս քո՝ հանդերձ ամենիւք, որք քոյք են և ընդ քն:

Ողջ լեր ի Տէր և յանձնեցեալ ի զօրութիւն հրաշագործ սրբոյ խաչի նորին ի յուրախութիւն մեզ: Ամէն:

Գրեցաւ ի ՌՄԼԵ (1786) թուոյս և ի յայրիլի..., ի յերևան յանապատիս մերում:

Դարձեալ զայս ևս ծանիցէ բարեպաշտութիւն ձեր, զի ըստ գրեցելոյդ վասն զալստեանն անօրէն լեզկեացն, մինչ ամենայն երկրականօքս ժողովեալ կայաք աստ, ի յայրիլի ԻԸ (28) եկեալ նոքա ընդ մէջ Բամբակաժողոտ և Սպարանու, անցին և զնացին ի յեզր ծովուն Գեղամայ և անտի անցին ի Գեանջայ: Այլ ի յանցանելն նոցա ԵԸ (500) ձիաւորք եկեալ էին ի յԱշտարակ և ի գիւղականացն զմին սպանեալ և զԺԲ (12) անձինս գերեալ և տարեալ զողորմելիսն: Ահա ողորմութեամբն Աստուծոյ փոքր մի ապահովեցաք յերկիւղէն նոցին և յապազայն ևս խնամոցն Տեառն լիցուք յանձին: Եւ ամենայն բնակիչքն երկրիս դարձան ի բնակութիւնս իւրեանց, և միարանք մեր զնացին ի սուրբ Աթոռն, և մեք ևս զնալոյք ենք: Բայց ի յանգլուխ և յանդուզն երկրականացս ոչ սակաւ նեղիմք և վնասիմք, որոց աւերառիթ արարմունքն յայտնի է մեծութեան օրհնեալ արքայիդ: Ուրեմն ի տէրութենէդ զկատարեալ հոգս իմն առնել խնդրի վասն տառապակիր երկրիս և սրբոյ Աթոռոյս: Կրկին ողջ լեր ի Տէր: Ամէն:

Սաշտոցի անվան Սատեմադարան, Չեռ. № 4501, էջ 1052-1053

Շարունակելի

ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*Բանասիրական գիտությունների թեկնածու***ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ****ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԻ ՄՈՌԱՅՎԱԾ****ՆԱՄԱԿԻ ՄԱՍԻՆ**

1915 թվականի վերջերին Բաֆվի «Արև» թերթի խմբագրության մոտ կանգնած մի խումբ մտավորականներ որոշում են հրատարակել միօրյա թերթ՝ նվիրված հայ որրերին: Ընտրվում է խմբագրական հատուկ մարմին, որի մեջ մտնում են Ս. Արարատյանը, Դ. Անանունը, Ա. Գյուլխանդամյանը, Ն. Մառը և Ս. Հակոբյանը: Սկզբում որոշում են թերթը հրատարակել տեղի մտավորականների ուժերով, բայց «նկատելով, որ սա լինելու է ի նպաստ հայ որրերի, հետևաբար գործը ընդհանուրի սեփականություն համարելով», աշխատակցելու են հրավիրում «հայ գրագետներին անխտիր»: Իսկ թերթից ստացված ամբողջ գումարը պետք է հատկացվեր հայ որր գաղթականներին:

Թերթն անվանում են «Նվեր որրերին», և առաջին ու միակ համարը լույս է տեսնում Բաֆվում նույն թվականի դեկտեմբերի 9-ին, որին սիրահոծար կերպով իրենց մասնակցությունն են քերում Վահան Տերյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, քմիշկ Լևոն Աթաբեկյանը, Կարա-Մուրզան և ուրիշներ:

Այստեղ «Հեից ու նորից» ընդհանուր խորագրի տակ տպագրվում է նաև Խրիմյան Հայրիկի մի նամակը, որն ուղղված էր Բաֆվի Մարդասիրական ընկերությանը: Այն գրվել է 1878 թվականի նոյեմբերի 15-ին Կոստանդնուպոլսում:

Նամակը Մարդասիրական ընկերության արխիվից հայտնաբերել և հրապարակել է պատմաբան Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան):

Խրիմյան Հայրիկը, դիմելով Բաֆվի Մարդասիրական ընկերությանը, հայտնում է, որ քնիկ վանեցի Նազարեթ անունով մի անձնուրաց և հայրենազներ մարդ, որին ինքն անձամբ շատ լավ նանաչում է, ութ տարի առաջ Վանի մոտ մի նավթի հանք է գտել և մեծ դժվարությամբ թույլտվություն ստացել Թուրքիայի կառավարությունից՝ տնօրինելու այն: Եվ որովհետև նման «ձեռնարկությունը», Խրիմյան Հայրիկի կարծիքով, Նազարեթի «ուժին հետ անհաւասար է», ուստի խնդրում է Մարդասիրական ընկերությանը, որպեսզի վերջինս օգնության ձեռք մեկնի նրան:

Նամակագիրը վստահ է, որ «մեր հայրենեաց զարգացման և յառաջագիտութեան համար» հիմնված ընկերությունը, «որ Մարդասիրական անունը կը կրէ, երբեք չեմ կարծէր թէ խտրէ՛ Վասպուրականի հայն»: «Մանաւանդ, շարունակում է Խրիմյանը, երբ նկատէ՛ թէ այսպիսի մի ձեռնարկութիւն մեր ժողովրդի նիւթական կեանքը քարտէկու»:

Խրիմյան Հայրիկը իրավացիորեն գտնում է, որ «Միայն մտաւորական զարգացումն քաւական չէ, այլ պետք է մտքին հետ հաց պատրաստել հայրենեաց կարօտ որդիներուն»: Եվ կոչ է անում «արուեստով և նարտարապետութեամբ» բացել «մեր հայրենեաց» «անբաւ հարստութեան աղբիւրներին» «խցուած ակները»:

Հակառակ խրիմյան Հայրիկի այս հույսին ու լավատեսությանը, Մարդասիրական ընկերության խորհուրդը, ինչպես վկայում է Դավիթ Անանունը, նամակի վրա մակագրել է. «Առ այժմ թողնում առանց պատասխանի»:

Այժի առաջ ունենալով Հայ Յեղափոխական Դաշնակցության նշանավոր դեմքերից Սիմոն Վրացյանի «Հայրիկից մնացած որևէ նշխար սուրբ է ու նվիրական բոլորիս համար» ազնիվ պատվիրանը, ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում խրիմյան Հայրիկի այդ նամակը, որն ավելի քան 80 տարի առաջ տպագրվելով մամուլում, հետագայում մոռացվել ու չի վերահրատարակվել:

«ԱՌ ԲԱՐԵՐԱՐ ԵՒ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՆՈՐԶԻ Ի ԲԱՔՈՒ

Լսելով արդեն Ձեր Մարդասիրական ընկերության սուրբ և բարի նպատակ, որոց հիմն և սկզբունք Անետարանի քարոզած վարդապետությունն է, կը վստահիմ աներկբայապէս սոյն յանձնարարութիւնը գրել առ Ձեզ:

Բնիկ վանեցի պ. Նազարէթ, որ ինձ քաջ նախածանօթ հայրենեաց անձնանութր մի անձն է և որ այժմ այդ կողմ հասած է իւր ձեռնարկութիւնը իրագործելու համար: Այդ անդով վաստակատու մշակը գրեթէ ութ տարի կը լինի, որ վաճաշ մօտ տեղերում մի նաւթի հանք գտած է և յաջողեցէր է արտօնութիւն ստանալ թուրքիոյ կառավարութիւնէն բազում աշխատութեամբ. այս մասին համար լիովին տեղեկութիւն կարող էք ստանալ իրմէն: Ուստի կը խնդրեմ, որ Ձեր Մարդասիրական ընկերութիւնը օգնական ձեռք կառկաւէ դորան. վասն զի այս ձեռնակութիւնը իր ուժին հետ անհաւասար է. և արդէն Ձեզ քաջայայտ է, թէ մեր հայրենեաց որդիքներ պատերազմի երեսէն մեծամեծ աղէտներ կրելով անկարող են օժանդակել պսպիսի ձեռնարկութեան:

Իսկ դուք, որ մեր հայրենեաց զարգացման և յառաջադիմութեան համար հիմներ էք այդ ընկերութիւնը, որ Մարդասիրական անունը կը կրէ, երբէք չեմ կարծէր թէ խտրէք վասպուրականի հայն: Մանաւանդ երբ նկատէք թէ պսպիսի մի ձեռնարկութիւն մեր ժողովրդի նիւթական կեանքը բարրուողելու: Միայն մտաւորական զարգացումն բաւական չէ, այլ պէտք է մտքին հետ հաց պատրաստել հայրենեաց կարօտ որդիքներուն: Մեր հայրենեաց հարստութեան աղբիւրներ անբաւ են. բայց խցուած են մորա ակներ. պէտք է արուեստով և ճարտարապետութեամբ բանանք այդ ակները:

Այսչափ գրելով կը յուսամ՝ որ սոյն յանձնարարութիւնը վստահապէս ընդունիք յօգուտ հայրենեաց և ի փառս ձեր մարդասիրական ընկերութեան:

Մնամ աղօթանուէր Ձեզ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

1878. Մոյեմբերի 15

Ի. Կ. Պոլիս»



ՄԵՏ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄՈՌԱՑՎԱԾ ԷԶԵՐԻՑ

Հովհաննես Հովհաննիսյանի «Տոչորված ավերակ Հայրենաց սիրով» տողով սկսվող բանաստեղծությունը շատ հետաքրքիր պատմություն ունի: Այն գրվել է

1899 թվականին: Գրելու շարժառիթը Թիֆլիսի հանրահայտ ներսիսյան դպրոցի հիմնադրման 75-ամյակին նվիրված հանդիսություններին:

Հայտնի է, որ ներսիսյան դպրոցը հիմնադրվել է 1824 թվականին: Նրա հիմնադիրն էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Աշտարակեցից, որի անունով էլ կոչվել է դպրոցը: Հանդիսավոր քաջումը տեղի է ունեցել նույն թվականի դեկտեմբերի 1-ին, որը կատարել է Մոսկվայից որպես տեսուչ իրավիքված քանաստեղծ ու մանկավարժ Հարություն վարդապետ Ալամդարյանը:

Իր անցած 75 տարիների ընթացքում ներսիսյան դպրոցը վիթխարի դեր է խաղացել մեր ժողովրդի կրթական-մշակութային կյանքում: Կրթաշխարհ տվել է հազարավոր շրջանավարտներ, որոնցից շատերը հետագայում դարձել են գիտություն, գրականության, արվեստի, ժողովրդական կրթության և առողջապահության տարբեր բնագավառների ճանաչված դեմքեր:

1899 թվականի մայիսի 21-ին մեծ շուքով ու հանդիսավորությամբ նշվել է ներսիսյան դպրոցի 75-ամյակը: Հանդիսության ընթացքում, Ներսես Աշտարակեցու համար հոգեհանգիստ կարդալուց, Գևորգ սրբազանի նախնիք և մի շարք ուրիշ միջոցառումներից հետո, ընթերցվել են քաղամաթիվ շնորհավորական ուղերձներ, որոնք ստացվել էին մի շարք հոգևորական գործիչներից, տարբեր ֆաղանների դպրոցներից, թերթերի, ամսագրերի խմբագրություններից, ներսիսյան դպրոցի հեռավոր ու մերձավոր ճախյին սաներից:

Այդ օրը Գևորգյան ձեմարանի, նրա տեսչի և ուսուցիչների անունից չափաճ ուղերձի ընթերցմամբ հանդես է եկել նաև «Արարատ» հանդեսի խմբագիր Գարեգին վարդապետը (Գարեգին արքեպս. Հովսեփյան): Այդ ջերմ ուղերձ-քանաստեղծության հեղինակը Հովհաննես Հովհաննիսյանն էր:

Քանաստեղծությունն անվերնագիր է և առաջին անգամ տպագրվել է 1900 թվականին «Լուսա» հանդեսի Բ գրքում (էջ 372), «Ներսիսյան հոգևոր դպրոցի 75-ամյակը» հոդվածում, ուր նկարագրված է դպրոցի հանդիսությունը:

Հովհաննիսյանը, քարձր գնահատելով «ամայի մեր անդաստանում» ներսիսյան դպրոցի խաղացած դերը, այն համեմատում է «հեռու նրագի» հետ.

Եվ ինչպես մի հեռու նրագ օվկիանոս

Վհատած ճավորդին ցամաք է հանում,

Նույնպես դու ամայի մեր անդաստանում

Շունչ տվիր, սիրտ տվիր ամենքին, ծաղկոց:

Այս քանաստեղծության մասին շատ տարիներ հետո, 1949-ին, Հովհաննես Հովհաննիսյանի մահվան 20-ամյակի առիթով նրա՝ Գևորգյան ձեմարանի սան, հետագայում նրանի պետական համալսարանի պրոֆեսոր Ավետիք Տեր-Պողոսյանը իր ուսուցչի մասին գրած հուշերում շատ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում: Նրա վկայությամբ փաստորեն քանաստեղծությունն ունեցել է «Ծաղկոց» վերնագիրը:

Ավետիք Տեր-Պողոսյանը վկայում է նաև, որ ուղերձ-քանաստեղծության տակ եղել են ձեմարանի բոլոր ուսուցիչների ստորագրությունները: «Լուսայում» քաղակալում են այդ ստորագրությունները:

Ավետիք Տեր-Պողոսյանը պատմում է, թե ինչպես Հովհաննես Հովհաննիսյանի մահվանից երկու տարի առաջ մի հանդիպման ժամանակ իր ուսուցչին հիշեցրել է, որ այդ քանաստեղծությունը չկա նրա մոտ «ոչ մի հրատարակության մեջ»: «Այ տղա՛, ես այս քանաստեղծության մասին բոլորովին մոռացել եմ»: «Եթե այդպես է, վրա բերի ես, և եթե դրա սևը չունեմ ձեր թղթում, կգտնեմ «Տարագի» համարներից մեկում՝ հորեկյանի կապակցությամբ «Տարագն» ամսիչապես

տպագրել էր» (տե՛ս «Ժամանակակիցների հուշերը հայ դասական գրողների մասին», 1975, Երևան, էջ 112):

Հուշագրողը, իր հուշերը գրելով ավելի քան երկու տասնամյակի հեռավորությունից, շփոթել է ոչ միայն բանաստեղծության տպագրության տեղը, այլև՝ ժամանակը. այն տպագրվել է ոչ թե «Տարագում», այլ՝ «Լումայի» Բ գրքում (էջ 372), ոչ թե 1899, այլ՝ 1900 թվականին, ինչպես արդեն ասվել է «Ներսիսյան հոգևոր դպրոցի 75-ամյակը» հոդվածում:

Վլադիմիր Վարդանյանը, որ կազմել, առաջարանը գրել և ծանոթագրել է «Հովհաննես Հովհաննիսյանը ժամանակակիցների հուշերում» (Երևան, 1980) գիրքը, ուր գետեղել է նաև Ավետիք Տեր-Պողոսյանի «Հովհաննես Հովհաննիսյան» հուշերը, ծանոթագրության մեջ (էջ 225) խոսելով վերը նշված բանաստեղծության մասին, գրում է. «Մեզ չհաջողվեց հայտնաբերել նշված բանաստեղծությունը թե՛ մամուլում և թե՛ Հովհաննիսյանի ձեռագրերում: «Տարագում», ինչպես նշում է հուշագիրը, չի տպագրվել»:

Ի դեպ, Վ. Վարդանյանը թյուրիմացաբար կարծում էր, թե Ավ. Տեր-Պողոսյանի «Հուշերը տպագրվում են առաջին անգամ» (էջ 222): Մինչդեռ իրականում այդ հուշերը առաջին անգամ տպագրվել են 1975 թվականին «Ժամանակակիցների հուշերը հայ դասական գրողների մասին» գրքում (էջ 99-116): Հիրավի, եթե Վ. Վարդանյանին հայտնի լիներ այս գիրքը, ամուշտ իր կազմած հուշերի գրքում կգետեղեր նաև հայտնի իրավաբան Գրիգոր Զուբարի (Զուբարյան, 1888-1962) Հովհաննես Հովհաննիսյանի մասին գրած շատ հետաքրքիր հուշերը (էջ 116-124):

Ահա Հովհաննիսյանի այդ բանաստեղծությունը, որ «Լումայում» տպագրվելուց հետո մոռացվել ու դուրս է մնացել ինչպես բանաստեղծի կենդանության ժամանակ, այնպես էլ նրա մահից հետո լույս տեսած բոլոր ժողովածուներից:



*Տոչորված ավերակ Հայրենեաց սիրով՝
Յավերով քեզ երկնեց վեճ Հոգին, ծաղկո՛ց.
Եվ վերածնության ոսկի հույսերով
Փայտիայեց քեզ, սիրեց կաթոգին, ծաղկո՛ց:*

*Եվ ինչպես մի հեռու ճրագ օվկիանոս
Վհատած նավորդին ցամաք է հանում,
Նույնպես դու ամայի մեր անդաստանում
Ծունչ տվիր, սիրտ տվիր ամենքին, ծաղկո՛ց:*

*Գարնանային բուրմունքով լցրիր հայ աշխարհ,
Կենսատու գորության նոր աղբյուր դարձար.
Եվ անմահ՝ հող փառքի արևը պայծառ
Քո գլխին միշտ շողա խնդազին, ծաղկո՛ց:*

ԱՎ. ԻՍԱՀԱԳԱՆԻ ՄԻ ՓՈԶՐԻԿ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավետիֆ Իսահակյանի այս փոքրիկ թարգմանությունն առաջին անգամ տպագրվել է 1900 թվականին, Թիֆլիսի «Տարագ» հանդեսի «Պարիզի մոդաներ» հավելվածում (թիվ 1, էջ 6):

Այն, ինչպես վերնագրին է հուշում, թարգմանված է իսպանական մի երգից, քայց թե ի՞նչ երգից, հայտնի չէ: Կասկածից վեր է, որ այն ժողովրդի կողմից շատ սիրված երգ է եղել՝ տոգորված թախծոտ տրամադրություններով և միանգամայն համահունչ բանաստեղծի այն ժամանակվա խոհերին ու մտածումներին, երգ, ուր արծարծվում էր կյանքի ու մահվան հավերժական թեման:

Դժբախտաբար, ինչպես երևում է ընդհանուր վերնագրից, երգն ամբողջությամբ չի թարգմանված, թեև միաժամանակ համոզված ենք, որ հիմնականը, այնուամենայնիվ, ասված է:

«Պարիզի մոդաներ»-ում տպագրվելուց հետո, այս թարգմանությունը հետագայում մոռացվել ու չի գետնից հեղինակի երկերի ժողովածուներում: Այն դուրս է մնացել նաև «Ավետիֆ Իսահակյան (1875-1957)» կենսամատենագիտությունից (Երևան, 1976):

Ահա այդ թարգմանությունը.

ՍՊԱՆԱԿԱՆ ՄԻ ԵՐԳԻՑ

- Երեկ սիրում էի,
Այսօր տանջվում.
Վաղն էլ կրմեռնեմ:
Այսօր և վաղը,
Երեկ շա՛տ լավ էր...

ԳԵՎՈՐԳ ՎՐԹԱՆԵՍՅԱՆ

Մուսա լեռան հուշահամալիրի տնօրեն,

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ-80

(Վաճառականների մասնակցությունն այս հերոսամարտին)

Ութ տասնամյակ է մեզ բաժանում Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ալեքսանդրապոլի ու Ղարաքիլիսայի հերոսամարտերից, որոնք հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից են, ուր արտահայտվեցին ժողովրդի ապրելու և հարատևելու ամսասան կամքը, ազգային գոյության պայքարի մրա մնալառ հնարավորությունները:

1917 թ. ձմռանը Կովկասյան ռազմաճակատի կազմալուծման հետևանքով թուրքական հնարավոր արշավանքի հաջողությունը սպառնում էր ոչ միայն ոչնչացնել ռուսական միաճումներն Անդրկովկասում, այլև ֆիզիկական մահ բերել հայ ժողովրդին: Սարսափելի էր Հայաստանի վիճակը 1918 թ. մայիսին: Գաղթականություն, սով, ամիշխանություն, գումարած՝ ֆիզիկական բնաջնջման ստույգ սպառնալիք: Հենց այդ ժամանակ վրաց մեմշևիկները, համաձայնության գալով գերմանացիների հետ, Վրաստանը դնում են Գերմանիայի հովանավորության տակ: Իսկ մուսավաթականները անջատողական բանակցություններ են վարում թուրքերի հետ, ամեն կերպ աջակցում նրանց և անհամբեր սպասում թուրքերի գալու, որպեսզի նրանց օգնությամբ իրենց տիրապետությունը հաստատեն Անդրկովկասում:

Այդ ժամանակ Հայաստանը մնում է մեծակ հարձակվող թշնամու գերակշիռ ուժերի դեմ-հանդիման: Ահա այսպիսի պայմաններում թուրքերը մախապատրաստվում, կենտրոնացնում են իրենց ուժերը՝ թուրքական բանակի 38-րդ հետևակային դիվիզիան, խայտաճամուկ, մուլեզին, վայրենի ռուքով շարժվում է դեպի Արևելյան Հայաստան, հատկապես մկատի ունենալով, որ հայկական բանակը սակավամարդ է, Սարդարապատից անցել է լույ մահացի ճամապարհ, հոգնած է, հյուծված ու հուսալքված: Վատ էր գեմքի, զինամթերքի վիճակը և:

Խախտելով 1917 թ. դեկտեմբերի 5-ին երզնկայում կնքված ռուս-թուրքական զինադադարը, 1918 թ. փետրվարի 10-ին հարձակման անցնելով՝ շուրջ երկու ամսում գրավում են Երզնկան, Էրզրումը, Սարդարապատը: Ապրիլին գավթում են Կարսի մարզը, որը Բրեստի դաշնագրի համաձայն, բուլշևիկները գրչի մի հարվածով սիրահոծար գիշում են թուրքերին: Սակայն թշնամին ձգտում էր ավելի առաջանալ: «Դուք տեսնում եք, որ ճակատագիրը (Թուրքիային) գլորում է արևմուտքից արևելք,- Բաթումի կոնֆերանսի ժամանակ (1918 թ. մայիս), դիմելով հայկական պատվիրակությանը, ասել է երիտթուրքական կուսակցության հայտնի գործիչ Վեֆիթ փաշան:- Մենք հետաքեղ ենք Բալկաններից... Բայց պետք է տարածվենք արևելքում: Այնտեղ մեր արյունն է, մեր կրոնը, մեր լեզուն: Մեր եղբայրները Բաքվում են, Դադստանում և Ադրբեջանում: Եվ դուք, հայեր, մի կանգնեք մեր ճամապարհին» («Բանքեր Հայաստանի արխիվների», հմ. 1, 1990, էջ 31):

Սարդարապատի ճակատամարտը տեղի ունեցավ 1918 թ. մայիսի 21-28-ը, հայկական զորամասերի, աշխարհազորայիների օգնությամբ, և թուրքական

գորաբաճակի միջև, Սարդարապատ կայարանի (այժմ՝ քաղաք Արմավիր) շրջակայքում: Թուրքերը վայրենաբար ձերխոծելով Արարատյան դաշտ՝ 1918 թ. մայիսի 21-ին առանց կռվի գրավում են Սարդարապատ կայարանը և համաճում գյուղը, ապա՝ Գեջլում (այժմ՝ Մրգաշատ) և մոտենում Ղափջուին (այժմ՝ Եղեգնուտ կիսակայարան): Նրանք հավատացած էին, որ հայերի կողմից այլևս դիմադրության չեն հանդիպի և մի քանի օրվա ընթացքում կգրավեն ամբողջ Հայաստանը: Թուրքական կառավարությունը ծրագրել էր ոչ միայն վերազավթել Արևմտյան Հայաստանը, այլև Եվանել Արևելյան Հայաստանը, ամբողջ Անդրկովկասը և վերջնականապես բնաջնջել հայ ժողովրդին, Ալեքսանդրապոլի, ապա Սարդարապատի ու Բաշ-Ապարանի վրայով մտնել Երևան: Մամավանդ՝ մայիսի 15-ին Ալեքսանդրապոլի անկումով հայկական մայրաքաղաքը կտրվել էր Թիֆլիսից: Սկսվում է ժողովրդական տարերային պատերազմը թուրքական արյունաբերու զավթիչների դեմ, բնական կամ արհեստական ամրություն չունեցող Սարդարապատի հարթավայրում: Թուրքական զորախումբը (հրամանատար՝ Թադուր Շևքի փաշա) բաղկացած էր 36-րդ հետևակային դիվիզիայից, մեկական հարվածային և սակրավորների զուամրտակից, կորպուսային հեծյալ գնդից, 1500 հոգիանոց քրդական հեծելազորից, հրետանային մարտկոցից, որն ուներ 40 թնդանոթ:

Հայկական զորքերի Երևանյան խմբավորումը (հրամանատար՝ գեներալ Մ. Սիլիկյան) կազմում էին 2-րդ հրաձգային դիվիզիան (առանց 7-րդ և 8-րդ գնդերի), 3-րդ հետևակային բրիգադը և 2-րդ հեծյալ բրիգադի առաջին գումղը: Հայկական զխավոր ուժերը (հրամանատար՝ գնդապետ Դ. Փիրումյան) կենտրոնացվեցին Սարդարապատի ուղղությամբ հարձակվող թուրքական բանակի դեմ, իսկ մյուսները փակելու էին Բաշ-Ապարանից դեպի Երևան շարժվող թուրքական 9-րդ դիվիզիայի ճանապարհը: Նախաճի տեղ չկար, Երևանն էր, Սյունիքը, Արցախն ու՝ վերջ, կդադարեր այլևս մեր փոքրիկ երկրի հազարամյակներից եկող երթը...:

Կողքից և Իգդիրից թուրքական 5-րդ և 12-րդ դիվիզիայի հարձակումը կանխելու համար պայթեցվեցին Արաքս գետի վրայի Կարակալայի և Մարգարայի կամուրջները, համախմբվեցին տեղական ուժերը: Ազգովին բնաջնջման վտազը դաժնկյալ սրի պես կախված էր մեր գլխին: Պետք էր միական, ազգովի ուղքի ելնել, դիմադրել ազգակործան թշնամուն, որն օժազար շարժվում էր դեպի Հայաստանի սիրտը: Սարդարապատը բախտորոշ գոյամարտ էր, հայ ժողովրդի կենաց և մահու կոիվը: Մեկ օրվա ընթացքում հայ ժողովուրդը հիմնովին կերպարամափոխվում է՝ դառնում միաձույլ ու միական: Ուղքի են ելնում հայ ժողովրդի բոլոր դասերն ու դասակարգերը, հոսանքներն ու կուսակցությունները: Այս ինքնապաշտպանական հերոսամարտի մասնակցում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը, Էջմիածնի հոգևորականները, հատկապես Ընթարանի տեսուչ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Էրզրումի առաջնորդ Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաքայանը, Եզնիկ, Դանիել և Թադեոս վարդապետները: Երկու եկեղեցականներ, խաչը ձեռքներին պահած, ընկնում են զորքի առաջ և հրամանատար գնդապետ Պ. Փիրումյանի հետ միասին մրանց առաջնորդում դեպի իմացյալ մահ: Իսկ Գարեգին և Զավեն եպիսկոպոսները մայիսի 22-ի վաղ առավոտյան ձի հեծած գնում են Էջմիածնի մոտակա Հայի Զեյվա և Քյորփալու գյուղերը: Վերջինս որպես Էրզրումի առաջնորդ Երզնկայից միգչև Արարատյան դաշտ հաճախ էր եղել ռազմաճակատի առաջին գծերում, զգացել էր վառողի հոտը, իսկ Գարեգին եպիսկոպոսը առաջին անգամ էր կռվի դաշտ գնում: Նրա զենքը

խոսքն էր: Հայրենաւոր հոգեւորականը կարողանում էր ոգևորել ունկնդիրներին: Նա ոգեշնչում էր խոսքով դիմում է զինվորներին, քացատրում թշնամու ամողորձությունը, վտանգի մեծությունը, օգնական ուժի և մահաճշի ուղիների յիականատար ռազմակայությունը, հաղթելու կամ հայրենիքի սրբազան հողի վրա մեղմելու միակ պատվաբեր հնարավորությունը: Նա Մահապարտներ է անվանում հայ պատվաբեր հնարավորությունը: Նա Մահապարտների գունդ և ժողովրդին ու նրա զորքին, 5-րդ գունդը վերանվանում Մահապարտների գունդ և նրան հրդվեցնում կովի դուրս գալ անվախ ու ամմահամբ: Իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսը, անտեսելով ամեն տեսակ խորհրդատուներին, որոնք մահաճշի ուղի էին մատնացույց անում նրան, հաստատ ու աներեր քայլով հուսադրելով էմենցին, վեհապալից իջնում է Մայր Տաճար՝ հայոց Աստծուն վերողջելու ավանդական «Տէր ողորմեան»: Մայր Տաճարի զանգերը դողանջում են: Շուտով նրանք ձայնակցում են էջմիածնի վանքերի, ապա մոտակա գյուղերի բոլոր եկեղեցիների զանգերը: Նույն օրը զանգահարությունը տարածվում է ամենուրեք, և մայիսի 22-29-ը, ութ օր շարունակ, Արագածի երկու լանջերից մինչև Արաքս և Սարդարապատից մինչև Սևան, գիշեր-ցերեկ անդադար դողանջում են բոլոր եկեղեցիների զանգերը: Մահապարտու, հուժկու, հանդիսավոր ահագնազը զարթեցնում, զգաստացնում էր բոլորին, խանդավառում ամենքին համեստ զոհողության և հերոսական անձնագոհության: Միաբանները ոտքի են ելնում: Նրանք, հորդոր կարդալով, ետ են դարձնում մահաճշողներին, հուսահատվածներին և կովի գնալու կոչ անում տղամարդկանց: Եզնիկ, Դանիել և Թադեոս վարդապետները ոչ միայն հորդոր են կարդում, այլև անձնական օրինակ ցույց տալիս: Աղթամարա վանքի միաբանության անդամ Դանիել վարդապետը քաջ կովոդ և հայտնի մշահաճիգ էր: Վանի ինքնապաշտպանության ժամանակ նա քաղաքամիջի հատվածում հայերի նվաճած միջոցների գլուխը բարձրացած՝ իր դիպուկ կրակով հնձել է թուրք թնդանթաճիգներին:

- Պատանդներդ հագեք ու եկեք իմ ետևից,- հայտարարում էր նա ամենքին: Երեք վարդապետներն այդ օրը իրենց առաջնորդությամբ դեպ Սարդարապատի վրա կովի են տանում 500 պատանդավորների, որոնք միջնադարյան կրոնական պատերազմների մարտիկների անձնագոհությամբ կովում էին Մահապարտների 5-րդ գնդի աջ թևում, թշնամու վրա արձակած ամեն մի զենակի հետ երգելով այդ ժամանակ տարածված «Անտեր մնար Հասան Ղալեմ, մեռնի էնվեր փաշի բալեն» երգը:

1918 թ. մայիսի 22-ին անցնում են ընդհանուր հարձակման և գրավում Սարդարապատը: Անհավասար, արյունալի մարտից հետո կոտրում են թշնամու դիմադրությունը, որը չարաչար պարտություն է կրում բոլոր ռազմաճակատներում և մեծ կորուստներով խուճապահար փախուստի դիմում (15-20 կմ), որը քարոյահոգեբանական վիթխարի մշահակություն ունեցավ հայ զինվորի համար, և նա հավատաց իր ուժին ու զորությանը: Մայիսի 22-ին, երբ մարտը դեռ մոտ էր վերջացել, երբ թիկունքի առաջին համեստ նվերների գնացքը հասնում է Սարդարապատ՝ երկարաճիգ, հուժկու, հանդիսավոր ու սարսաղեցիկ սուլոցներով ազդարարում ժամանումը, հոգեբանական մեծ մշահակություն է ունենում այն: Պարտված ու մահաճշող թուրքերն ավելի են սարսափում՝ կարծելով, որ հայերի նոր համալրում ժամանեց:

Երկաթգծից հյուսիս Եզնիկ, Դանիել և Թադեոս վարդապետների առաջնորդած պատանդավորները գործում էին 5-րդ գնդի հետ միշտ համերաշխ և կովի հենց ընթացքում, գնդի հատկապես կրտսեր սպայության ցուցումով, երեք-չորս հոգով կցվեցին առանձին ջոկատներին:

Մայիսի 23-ին, երբ Սարդարապատի առաջին հաղթանակի լուրը խանդավառել էր մահ Դիլիջան արավիցած Ալեքսանդրապոլի հայ զորքին, Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, որը, որպես գաղթականության զգուշ արտակարգ հանձնաժողովի մախագահ, գտնվում էր Ղարաքիլիսայի շրջանում, գեներալ Գամալյանի հետ գործի են անցնում Դիլիջանում: Մեսրոպ Եպիսկոպոսը, Սարդարապատի օրհնակը վկայակոչելով, շունչ ու ոգի է ներշնչում կազմալուծված հայ զորքին և Գարեգին Եպիսկոպոսի մահն կովի առաջնորդում մրան: Գեղապետ Բել-Մամիկոնյանի հրամանատարությամբ հայկական զորախումբը մայիսի 24-ին վերադառնում է Ղարաքիլիսա և առաջ շարժվում դեպի Համամլու: Այդ առթիվ գեներալ Նազարբեկովը մայիսի 28-ին իր կոչի մեջ ասում է. «Թվում էր, թե ամեն բան կորած է և մեր մեզ թշնամուն մնում էր մի բան - շարունակել առաջխաղացումը հայկական երկրի խորքը... Աստծու ողորմությամբ Երևանյան քաղաքի զորքը, որի դեմ թուրքերը մոյմպես, չմայելով զինադադարին, հարձակման էին դիմել, չտատամվեց և ետ մղելով հակառակորդի հարձակումը, ինքը հարձակման դիմեց և երկու օրվա կովի մեջ ետ շարտելով թուրքերին, ներկայումս հետապնդում է մրանը:

Երևանյան զորքի հաղթանակը ոգևորում է Ալեքսանդրապոլյան զորքի զինվորներին, կազմում են վաշտեր, բատալիոններ ու գնդեր, որոնք շտապով ետ են դարձել, ունենալով միայն մի միտք ու մի թաղծանք - հաղթել կամ մեռնել» («Հորիզոն», 1918, մայիսի 28, թիվ 100, գեներալ Նազարբեկովի կոչը):

Մայիսի 24-ին մասնակի փոփոխություններ են տեղի ունենում: Գրաված դիրքից թշնամուն ճակատային գրոհով դուրս շարտելու՝ խիզախ գեղապետ Պ. Փիրումյանի և մյուս զորամասերի մայիսի 25-ին ձեռնարկած փորձը թեև հաջողություն չունեցավ, բայց հայերը չհուսահատվեցին: Այս աստեղային պահին, միակամ, միաձուլյալ ոտքի ելավ ոչ միայն մահն ու արորը դաշտում թողած ուսմիկ ժողովուրդը, այլ մահ սարկավագն ու քահանան, վարդապետն ու կաթողիկոսը, զգուշացն հասավ եզրինների առաջնորդ Ջհանգիր աղան իր 300 հեծյալ ջոկատով, լեզենդար գնդապետ կարո Ղասաբաշյանը (մույն ինքը՝ Հասան Փաշան) իր 600-700 հոգիանոց գումարտակով: Նրա հետ էր ռազմա-ճակատի հրամանատար Դ. Փիրումյանի ավագ որդին՝ փոխգնդապետ Միքայելը: Նրանք երկուսով մայիսի 27-ին Կոչ և խըզմաուր (Արագած) գյուղերից շրջանցիկ զորաշարժով թշնամուն հարվածում են թիկունքից, մրա շարքերը երերում են, ասկյարները, խուճապի մատնված, չգիտեին դեպի ուր դարձնեն իրենց հրամոթների փողերը: Այսպիսով, թիկունքից հանկարծակյան համազարկերով Հասան Փաշայանի քաջերն էին շշմեցրել, ճակատից էլ, ճանապարհին ամեն ինչ շարղելով, առաջ են շարժվում Պողոսբեկ Փիրումյանի Մահապարտները...:

Թուրքերին թիկունքից (Թալինից) հարվածում է մահ Պանդուխտի (Միքայել Սերյան) մշեցիներից կազմված 300 ձիավորների ջոկատը: Այստեղ էլ տեղի են ունենում արյունալի մարտեր: Ծամր կորուստներ կրելով (միայն մայիսի 22-28-ին արդեն տվել էին 3500 սպանված)՝ թուրք զորաքանակի մնացորդները խուճապահար ու անկանոն փախչում են Ալեքսանդրապոլ: Հայ ժողովրդի աշխարհագրայինների մասնակցությամբ, մայիսի երկրորդ կեսին մրանը լուրջ կորուստներ են պատճառում ոչ միայն Սարդարապատի, այլև Համամլուի, Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի շրջաններում: Թուրքերն Ալեքսանդրապոլ մտնելիս սպառնացել էին, «շքերթով» հասնել Երևան, սակայն Սարդարապատում շքերթը վերածվեց հուղարկավորության թափորի: Թուրքական բանակը կորցնում է սպանված ու վիրավոր ավելի քան 7000 զինվոր ու սպա: Ճակատամարտն ավարտվում է հայերի լիակատար հաղթանակով: Փաստորեն հանում հայ ժողովրդի

հարատևման ու ազատության, հերոսաբար դիմադրելով թուրք ջարդարարների, Սարդարապատի մարտիկները պատերազմում են այն սև ուժերի դեմ, որոնք պատրաստվում էին Երևանի վրայով ցետվել Անդրկովկաս՝ Գալատև ունենալով առյուծ մեջ խեղդել Բաքվի կոմունան, տիրաճալով մահ Բաքվի Գավթին, որի կառիքն օդ ու ջրի պես գգում էր թուրք-գերմանական դաշնությունը: Բայց այդպես չեղավ: Նրանք չհասան իրենց գերագույն մպատակին և չկարողացան շարունակել իրենց երթը դեպի Միջին Ասիա:

Հայ աշխարհագրայինների հետ այս քախտորոշ հերոսամարտին մասնակցում են հետագայում Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, սովետական բանակի գեներալներ Ա. Վարդանյանը, Գ. Բ. Զալախյանը, երիտասարդ գրող Ակսել Բակունցը, լեզվաբաններ Ա. Ղարիբյանը, Գր. Ղափանցյանը, մաթեմատիկոս Բ. Բախթրյանը և ուրիշներ:

Այո՛, մարդկային պատմության մեջ լինում են պահեր, ճակատագրական պահեր, երբ իրար են գումարվում պատմական փորձն ու անճախադեպը, ժողովրդական-մարդկային իմաստությունն ու գերմարդկային խիզախումը, և ամօրինակ այս կուտակումներով ստեղծված ահռելի լարումից, ինչպես խավարի մեջ պայթած կայծակի շառափից, լուսավորվում են ժամանակն ու տարածությունը: Այսպիսի պահերին են լուծվում սովորական պայմաններում անլուծելի թվացող հարցերը, մեկնեց պարզվում-ընդգծվում է անսկիզբ ու անվախճան ճանապարհը՝ անցյալի, այսօրվա և գալիքի ընդգրկումով: Աստեղային պահեր են այսօրինակ ճակատագրական պահերը:

Հայ ժողովրդի հազարամյա պատմության աստեղային ժամը Սարդարապատի ճակատամարտն է, 1918 թ. մայիսյան այն հրեղեն շաբաթը, որ կործանման եզրին կանգնած ազգի համար դարձավ վերածննդի սկիզբ, գոյատևման ու ազգապահպանության խարիսխ:

Ոմանք ասում են, թե Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ալեքսանդրապոլում այս կամ այն կուսակցությունը կամ զինվորական գործիչը շատ դեր է կատարել: Իրականում այդպես չէ: Այն ժամանակ, ինչպես բոլոր ժողովուրդները, մերը նույնպես ուներ սոցիալ-քաղաքական մի քանի շերտեր՝ կուսակցություններ: Խնդիրն այն է, որ Սարդարապատում ուղիք ելան ոչ թե ոմանք, այլ ողջ ժողովուրդը, մերառյալ ողջ հոգևոր դասը: Կողք-կողքի կովեցից հայ գյուղացին, զինվորը, բանվորն ու բանաստեղծը, պապն ու թոռը և քաջագուն տիկնայք Հայոց աշխարհի՝ ինչպես Ավարայրում, Ձիթավում, Մամազկենրտում: Իսկ ողու կամավորները խռոնցից իրենց արյունը հայ աշխարհագրայինների արյանը: Ի՞նչ խոսք մեծ ու փոքր դերի մասին: Ով մասնակցել է Սարդարապատի կամ մյուս կռիվներին՝ Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում, Երևանի մատույցներում, մասնակցել է իր ոգու և ազգային սրբազան պարտքի թելադրանքով:

Ով մասնակցել է՝ մա հերոս է:

Հազար փա՛ռք հերոսներին:

Ժողովուրդը արժանից է մատուցում պատմական ճակատամարտի հերոսներին: Դրա առհավատչյան է Արմավիրի մարզում, շրջկենտրոնից 10 կմ հեռու, ոչ բարձր թլրակի վրա կառուցված անգուգական հուշահամալիրը, որն արդեն 30 տարի դարձել է համաժողովրդական մվիրական տոների հավաքատեղի...:

Աշխարհի բոլոր ծագերից եկած հազարավոր զբոսաշրջիկներ այսօր կարող են շրջել Սարդարապատի ճակատամարտի հիշատակը հավերժացնող հուշարձանախմբի տարածքում, ազգագրության թանգարանի մոտով, լուսավոր սրահներում: Թվում է, թե ուր որ է կհնչեն հաղթականարների զանգերը, քարե

արծիվները կթափահարեն թևերն ու Սարդարապատի երկնքում կլսվի հերոսների մարտակոչը...

... Եթե Հայաստանում ձեր հյուրընկալները ձեզ ասեն, թե գնում եմք ճակատամարտ, մի շփոթվեք: Ժողովուրդն այդ բառն արտասանում է մեծ հպարտությամբ՝ խոսքը Սարդարապատի մասին է...:

Թանգարանի մերսի ու դրսի մորոզման, ողջ շրջապատի ծառատնկման աշխատանքների ծախսերը հոգում է ՀՀ պաշտպանության մախարարությունը: Իսկ մոր ճշմանված տնօրենը՝ Ա. Մարգարյանը, ուժ ու եռանդ չի խնայում, որ ամեն ինչ լավ կատարվի:

Հուշահամալիրում մայիսի 28-ին տեղի ունեցավ մեծ տոնահանդես, գումարվեց գիտական միստ, զանգակատան մոտ ելույթներ ունեցան գեղարվեստական տարբեր համույթներ, մեծաթիվ երգիչ-դերասաններ, ասմունքողներ, կատարվեցին բազմաբնույթ արարողություններ: Տոնահանդեսին մասնակցեցին տասնյակ հազարավոր մարդիկ հանրապետության մայրաքաղաքից, մյուս քաղաքներից, մարզերի աշխատավորության, կառավարության ներկայացուցիչներ:

Այո՛, Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի փորձությունների միջով էր, որ հայ ժողովուրդը հասավ ազգային վերածննդի ու վերակերտումի, որոնց արդյունքն ու պսակումը այսօրվա ազատ ու անկախ Հայաստանն է:

ԲԱՆԱՐԵԿ ՄԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳՍԵՐՈՎ ՏԱՌԱՊՅԱԼ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ

(ԶԱՔԱՐԻԱ ՔԱՀԱՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ)

Հայոց աշխարհի ֆաղաֆներում ու գյուղերում եղել ենք ազգեր, գերդաստաններ ու տոհմեր, որոնք իրենց բնատուր շնորհով, խելով, հմտությամբ ու նախաձեռնությամբ պահել ու զարգացրել են մշակույթի, գիտության այս ու այն բնագավառները, պահել ու շենացրել են բնակավայրեր և պայքարել դրանց գոյատևման համար: Նրանց շառավիղները մինչև հիմա էլ շարունակում են իրենց ապուսպների ավանդները, թեև ժամանակին, ոչ ճիշտ ֆաղափական ու գաղափարական ֆարոգչության պատճառով, նրանք հալածվել ու դուրս են վտարվել: Բայց ուր էլ որ նրանք հանգրվանել են, մնացել են իրենց բարձրության վրա: Հասարակությունը դա հասկացել է, բայց ոչինչ անել էր կարող տիրող դաժան բռնադատության պայմաններում: Ջարմանալի զուգադիպությամբ նրանք վտարանդության մեջ էլ իրենց աշխատասիրությամբ կարողացել են կրթություն ստանալ և պիտանի լինել ոչ միայն իրենց ընտանիքին, այլև ողջ հայությանը:

Այդպիսի գերդաստաններից մեկն է Պառավաֆար (Տավուշի շրջան) գյուղի Ապրեսյան տոհմը: Շրջանում և Ղազախ-Քոփուզ աղբյուրանական գյուղերում նրանք հայտնի են ԽԱՋԵԻՆԱՆՔ մեծարանքի անվանումով: Դա նրանք նվաճել են ի սկզբանե: Սակայն դժբախտություն է, որ Տավուշ աշխարհի ներկա սերնդի նախնիների պատմությունը դարեր ի վեր ընդհատվել է: Միայն որոշ պատմական աղբյուրներից և բանավոր հիշատակությամբ հիշվում է անցյալ դարի սկզբներից կամ, լավագույն դեպքում՝ 18-րդ դարի վերջներից: Եվ այսպես, Քաթու (այժմ՝ Պառավաֆար) գյուղում 1820-ական թվականներին Ապրես Ապրեսյանի նախաձեռնությամբ Հախում գետի վրա, գյուղին մոտ, կառուցվել է զույգ ֆարանի մի ջրաղաց, որը մոտակա գյուղերի բնակչությանը սպասարկելով, մեծ եկամուտներ է բերել Ապրեսյաններին: Պետական պատմական արխիվում պահվող մի վավերագրի համաձայն շրջանի գյուղերի բնակչության ցուցակները՝ ներկայացնելու հետ ուս հաշվառում նշել է նաև, թե տվյալ գյուղը ֆանի ջրաղաց և անասուններ ունի, որպեսզի դրանցից եկամտահարկեր գանձվեն: Ապրես Ապրեսյանը օգնել է նաև հարևան հայ ու թուրք-թաթ գյուղերի բնակչությանը: Նրա ավանդները շարունակել են իր որդիները՝ Արսենը և Առուստամը: Մյուս գյուղերում ևս կառուցվել են ջրաղացներ: Նրանք հիմնել են այգիներ, պահել անասուններ և դարձել ունեռ: Պահել են վարժով աշխատողներ: Արանից էլ կոչվել են խազեխանք:

Առուստամի մահից հետո այդ հսկա գերդաստանի կառավարման պարտք ընկնում է Սեդրակ որդու վրա, որը, ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո, իր գիտելիքներով քարվոժ վիճակում է պահում ընտանիքը և ճապաստում Ղազախ-Շամշադիի գարգացմանը: Նա 1896 թ. ֆեհանա է ձեռնադրվել և անվանակոչվել

¹ Հայաստանի պետական պատմական արխիվ, ֆոնդ թիվ 83, ցուցակ թիվ 1, գործ թիվ 8, 1817 թվական:

Զաֆարիա² : Այս մասին մեզ նաև գրել է նրա որդին՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Հրանտ Ապրեսյանը, 1980 թ. սեպտեմբեր 15 թվակիր նամակում :

Ի դեպ, քանի որ հիշատակեցի՜նք փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Ապրեսյանի մասին, ապա հարկ ենք համարում նրա հետ մեր ունեցած գրույցներին ու նամակներին անդրադառնալ, որոնք և բնորոշում են այդ գերդաստանին և հատկապես քահանա հորը : Նա մի նամակում գրում է, որ իրենք վեց եղբայր ու մեկ քույր են եղել : Քույրը մահացել է փոքր տարիքում, իսկ եղբայրները ապրել են : Սակայն սրանց ևս դառը նակատագիր է բաժին ընկել : Նա մի գրույցի ժամանակ ասաց : «Սուրբ Գևորգի և Կարապետի մարգարային կոմիտեի առաջին հերթին՝ 1937-ին» : «Դերեհիկը Դոնի Ռոստովի մարգարային կոմիտեի առաջին ֆարտուղարն էր և մեզ սովամահությունից փրկելու նպատակով Իջևանից 1924 թ. տեղափոխեց իր մոտ, քանի որ հորս սկսել էին հալածել որպես հոգևորականի : Ամեն ինչից զրկել էին գյուղում, իսկ Ղազախում, ուր նա հայկական եկեղեցու սպասավոր-ղեկավարներից էր, թուրքերը դուրս էին արել 1918 թ. : Այս բոլորի պատճառով հայրս տեղափոխվել էր Իջևան մեր ընտանիքով» : Մյուս եղբայրը գոհվել է երկրորդ աշխարհամարտի ժամանակ : Քաղաքական հալածանքներից է գոհվել նաև Անդրանիկը : Գրող և հրապարակախոս Վահրամը մահացել է 1974 թ. : Նա բազմաթիվ ռուսներին գրքերի ու հոդվածների հեղինակ է : Հայրենի եզերքից հեռանալու պատճառով Ապրեսյանների գեներով հարուստ տղաները օտարացել են : Դրա վաղ օրինակներից է փոքր եղբայրը՝ Ստեփանը : Վերջինս Պրազայում հրատարակվող կոմունիստական միջկուսակցական «Պրոլետի միրա ի սոցիալիզմ» հանդեսի խմբագրության պատասխանատու աշխատող էր : Այս հանդեսը լույս էր տեսնում 35 լեզուներով : Ստեփանը տիրապետում էր 50 լեզուների, և նա մեծ դեր էր կատարում այստեղ : Հրանտ Ապրեսյանը մի գրույցի ժամանակ խիստ դժգոհեց նրանից. «Թեև շատ լեզուների է տիրապետում, բայց հայերենը սրա մոտ ու ընտանիքում հարգի չէ : Հակառակ հորս ցանկության, բոլորս ամուսնացել ենք օտարազգի աղջիկների հետ : Դե՛, այն ժամանակներում այլ կերպ էլ լինել չէր կարող : Ապրում էինք նրանց շրջապատում³ : Բոլորս՝ ողջ գերդաստանով գիտական կոչումներ ու պաշտոններ ունենալով, բայց հայություն չի մնացել : Տարիներով իրար երես չենք տեսնում : Ստեփանը Մոսկվայում լինելու դեպքում կ'ենս՝ Յոդիկը, նրան մի կերպ, հագվել բերում է մեր տուն : Նրա հիշեցնում եմ մեր լեզուն, մեր հայությունը, մեր հոր հավատը, հայապահպանությունը, մեր սերունդների նակատագիրը, նա կարն պատասխանում է. «Դե՛, հիմա դա ո՞ւմ է պետք...» : Ես նեղանում եմ, բայց ի՞նչ կարող եմ անել : Եվ այսպես մեր հիանալի հայրենասեր, հայապաշտ հոր շահավիղները հեռանում են իրենց արմատներից :

Հ. Ապրեսյանը պատմեց, որ մայրը շուտ է մահացել, իսկ հայրը՝ Տեր Զաֆարիան, մահացել է 55 տարեկան հասակում Նոր Նախիջևանում և այնտեղ էլ թաղվել է. «Դա շատ ծանր քաղաքական ու տնտեսական ժամանակներ էին, - մի նամակում գրում է նա, - մենք Հայրիկին հայրենի Պառավաֆար գյուղ տեղափոխել չէինք կարող : Գերեզմանոցը գտնվում էր Ռոստովի և Նոր Նախիջևանի միջև : Նոր քաղաքները ընդարձակվեցին, գերեզմանոցը հողին հավասարեցրին :

² «Նոր դար», 1896, 30 մարտի, թիվ 55 :

³ Հ. Ապրեսյանի առաջին կինը ճուլնպես այլազգի է եղել : Հետո նա ամուսնացել է երևանցի արվեստագետ-երաժիշտ Յոդիկի հետ : Նրա տղաները ճուլնպես կարևոր պաշտոններ են զբաղեցնում :

Դե՛, այն ժամանակ կործանում էին ամեն մի հնութիւն: Եվ այդպես կորալ հորս մարմինն ամփոփող մի բուռ սուրբ հողը»:

Զաֆարիա ֆախան Ապրեսյանը ժամանակի զարգացած մարդկանցից էր: Հոգևոր առաջնորդ լինելուց բացի, դասավանդել է Ղազախ ֆաղափ թեմական դպրոցում⁴: Նրա սաներից մի ֆանիսը հետագայում դարձել են հայ մշակույթի երախտավորներ:

Զ. Ապրեսյանը ժամանակին աշխատակցել է «Նոր դար», «Մշակ», «Տարազ», «Հասկ» և այլ պարբերականների: Դա առիթ է հանդիսացել, որ նա լինի շատ վայրերում և հոգվածներ գրի: Եղել է նաև Վրաստանի և Իմերեթի թեմի Ղազախ-Շամշադինի եկեղեցական գործակալը: Նա բազում շփումներ է ունեցել Թիֆլիսի հայ մշակույթի շնորհաշատ երևելիների՝ Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Արշակ Ագապյանի, Հարություն ձուղուրյանի, գորավար Անդրանիկի և այլոց հետ: 1905-1906 թթ. խառնակ տարիներին Հովհ. Թումանյանը, ապավինելով Զ. Ապրեսյանի վստահությանը, լինում է Ղազախ-Շամշադինի գյուղերում հայ-բուրժ-թաթ ազգաբնակչությանը խաղաղության կոչով դիմելու, և մի ֆանի գիշեր մնում է Թաթլու գյուղում, Ապրեսյանների հարկի տակ: Այս մասին իր նամակում գրել է Հ. Ապրեսյանը: Կարծում ենք, որ այս գյուղում պետք է գտնել այն տունը, ուր գիշերել է հանճարեղ Թումանյանը, և հուշատախտակ փակցնել:

Զաֆարիա ֆախան Ապրեսյանի կենսագրության մեջ յուրօրինակ տեղ են գրավում նրա գրած հոդվածները, որոնցում նա արտահայտել է իր հոգու ցավն ու տառապանքը հայրենի գավառի գյուղերում կատարվող կենցաղային, սոցիալական անարդարությունների դեմ: «Խավարի թագավորությունը»⁵ հոդվածում ներկայացնում է Թաթլու գյուղում կանանց ծննդաբերության ժամանակ տատմանների տգիտության գոհ դարձողների, կլինիկական մանկան վիճակում գտնվողների անգիտաբար հողին հանձնելու և այլ նման դեպքեր: Նա կոչ էր անում գյուղացիներին՝ նման ավելորդ գոհերից խուսափելու համար դիմել Ղազախ ֆաղափ փորձված բժիշկ պ. Աղասարյանի օգնությանը: Նա հոգվածն ավարտում է. «Այսպիսի դեպքերի ականատես լինելով, մարդ ակամայից ընդունում է, որ գյուղացիք իրենց տգիտությամբ իրար կոտորում, ոչնչացնում են կամ թաղում են մեծ մասամբ կենդանի մարդիկ: Եվ ո՞վ կարող է իմանալ, թե գյուղական բնակչության որքան մեծ տոկոսն է ի զուր մեռնում»⁶ բժշկական ամենատարրական օգնության բացակայության պատճառով: Եվ դեռ որքան դարեր պիտի սափեն, որ աշխարհիս վրա տիրապետի միմիայն բնական մահը»: Մեծ հոգու տեր հոգևորականին դեռ իր ժամանակին հուզել է ավելորդ գոհեր չտալու պրոքրիմը:

Մի այլ հոդվածում քարժրացնում է անօրինական ամուսնությունների պրոքրիմը, որը խիստ բացասական դեր է կատարում ապագա օրինավոր ընտանիքներ կազմելու վրա: Այդ մասին է գրել «Թաթլու. Շամշադինի վիճակ»⁶ հոդվածում: Նա դեմ էր անժամանակ ամուսնություններին, երբ ամուսնացնում են ծնողների ստիպմամբ 14 տարեկան տղային 10-11 տարեկան աղջկա, կամ 20 տարեկան տղային 12 տարեկան աղջկա հետ, որոնք հետագա անխորժուրդությունների, քաժանությունների տեղիք են տալիս: Նման ամուսնությունները միայն

⁴ «Գրական թերթ», 1981, 9 հունվարի, թիվ 2:

⁵ Խավարի թագավորությունը: «Նոր դար», 1901, 8 հունիսի, թիվ 85:

⁶ «Նոր դար», 1894, 27 հունվարի, թիվ 14:

անձնական շահ ու եկամուտներ ստանալու համար են կատարվել: Տեր Զաֆարիան իր իսկ նկարագրած խավարի բազավորության մեջ մի հիանալի լուսատու ջահ էր կենտրոն չափ մեծ ճանապարհի վրա, ուր հանգրվանում էին երևան-Թիֆլիս-Բաֆու, Տավուշ և այլ երկրների մեծ ու փոքր պաշտոնյա երթևեկողները:

Նրան էին դիմում ամենաբազմազան հարցերով հայ ու քուրճ բնակիչները, և նա առանց խորականության բոլորին պատասխանում էր: Նրա դերը շատ մեծ էր նոր ձևավորվող Ղազախ ֆաղափ հոգևոր ու գրական⁷ մշակութային կյանքում: Նրան հուզել են նաև հայկական եկեղեցիների, վանքերի ու հնությունների նակատագրերը: Մի այլ հոգվածում սրտի անհուն ցավով բողոքում է Ղազախ-Շամշադիների պատմա-նարտարապետական հուշարձանների, վանքերի, տաճարների, գյուղական աղոթատների ու եկեղեցիների անմխիթար, ավերակ վիճակի և անմատչելի ճանապարհների համար⁸: Այն ժամանակ Շամշադի-Ղազախ գավառը շատ մեծ ընդգրկում ուներ: Այն իր մեջ ներառում էր Շամխորից մինչև Աղստաֆա գետերը, Կուր (Քուր) գետից մինչև Միափորի լեռնաշղթաները: Այսուհանդերձ, բոլորի մասին գրելով, անդրադառնում է Շամշադիների հայկական գյուղերի եկեղեցիներին. «...Թաթուխներ երկուսն են, բայց կես չարժեն: Թովուզինը փվելու վրա է, Բարդ գյուղինը՝ փլված, Նավուրինը՝ թշվառ դրության մեջ, Մոսես գյուղինը՝ գետնափոր (նորը հագիվ ավարտեցին)»:

«Տեղեկատու»⁸ վերնագրով հոգվածում գրում է, որ Ղազախ ֆաղափում Ալեքսանդր Զադեթյանի միջոցներով նորակառույց հայկական եկեղեցուն մի քանի տասնյակ հայեր, մեծահարուստներ ինչ նվերներ են տվել. որպեսզի եկեղեցին բնականոն աշխատանքի հունի մեջ մտնի, քանզի ներքին արդուզարդը, կահավորանքը պակասում էր: Ինչու է նշված հայկական եկեղեցին, քանի որ մեծահարուստ Ա. Զադեթյանի միջոցներով էր կառուցվել նաև մահմեդական մզկիթը և ոռոսական եկեղեցին: Թեև այդ ֆաղափը կառուցում էին հայ մեծահարուստները և համարում էին հայկական ֆաղափ, բայց ժամանակի ընթացքում այն անցավ քուրճերին, և հայ բնակչությունը դուրս եկավ: Վերջին բնակիչ հայերը լինեցին 1989 թվականին:

Խրիմյան Հայրիկի կոնդակով Ա. Զադեթյանը իրավունք էր ստացել մահմեդական հետո թաղվելու այդ եկեղեցու գավթում⁹: Եվ երբ նա մահանում է, նրան թաղում են կոնդակին համապատասխան: Մինչև 1989 թ. Ղազախ ֆաղափի եկեղեցին կանգուն էր: Նրանից հետո մեծ տեղեկություն չունենք (Բ. Մ.):

Զաֆարիա ֆահանա Ապրեսյանը «Տեղեկատու» հոգվածում անվանական մի ցուցակ է ներկայացնում, թե ով որ գյուղից կամ ֆաղափից ինչ է նվիրել: Նշված է նաև տողերիս հեղինակի ազգակիցներից Շամիր Մելյանի անունը¹⁰, որը

⁷ «Նոր դար», 1901, 12 հունիսի, թիվ 116: Եվ պետք է ավստոսանով նշել, որ մինչև հիմա Տավուշը ճանապարհ չունի, որ կարողանա դուրս գալ այդ յոթ սարերի ու լեռների մեջ պատսպարված կղզյակից: 1919-20 թթ. սկսված Իծաֆար-Գանձաֆար ճանապարհի շինարարությունը չի ավարտվել:

⁸ Տեղեկատու: «Նոր դար», 1901, 12 մայիսի, թիվ 79:

⁹ Զուղուրյան Հ., Ալեքսանդր Զադեթյան: (Մահախոսական): «Մշակ», 1916, 29 սեպտեմբերի, թիվ 216:

¹⁰ Շամիր Ամիրխանի Մելյանը (ծնվ.՝ 1878, մահը՝ անհայտ է) մուլնափա Ներսիսյան դպրոցն էր ավարտել: 1918-1920 թթ. եղել է Կարմիրի շրջանի գավառապետը, ապա անցել է Իրան: Հետագա ստույգ նակատագիրը անհայտ է:

հեղեղեցում է նվիրել խաչվառ և րացման հանդիսության առթիվ՝ դրամ: Նվերների ընդհանուր արժեքը կազմել է 1.300 ռուբլի: Հոգվածում ճշվում է, որ դեռ նվիրատվությունները շարունակվում են:

Զաֆարիա Բահանա Ապրեսյանը պատմվածքներ է տպագրել «Հասկեր» և այլ պարբերականներում: Մեծ վերելում ճշեցի՞նք, որ նա դասավանդել է նաև Ղազախի դպրոցում և հիանալի մանկավարժ է եղել: Մտահոգվել է հայ մանուկների կրթության հարցերով: Ձեռք է մեկնել այն երեխաներին, ովքեր շնորհալի էին, միջնորդել է, որ ընդունվեն Բիֆլիսի Ներսիսյան կամ այլ դպրոց: Հսկայական դեր է կատարել իր երեխաների կրթության ու դաստիարակության գործում: Նրա աչքից չի վրիպել որդիների աշխատասիրությունը, գիր ու գրականությամբ զբաղվելու նրանց ձգտումը: Հրանտ որդու առաջադիմության առթիվ գրում է. «Խրախույս-ուղերձ Հրանտին» քանաստեղծությունը, որը թեև գեղարվեստական առումով խիստ կաղում է, բայց հատկանշական է, որ սրտի ահուկ կարոտի ու հիացումի հայրական խոսք է ու որդուն սպասվող ապագայի գուշակություն: Այն գրել է 1922 թ. հունվարի 13-ին, երբ հալածանքի ենթարկվելով պատսպարվել էին Իջևանում, իսկ որդին արդեն ուսանում էր Երևանի Շոթաբայ Պետական համալսարանում և «Խորհրդային Հայաստան» օրաթերթում հոգվածներ էր տպագրում Հրանտ Նորունի գրական ծածկանունով: Ահա վերջին՝ 18-րդ ֆառատողը.

Հաղթանակ հզոր ուշ, թե անագան,
Կտանես ըստույգ ուժով սեփական,
Հպարտ եմ քեզնով, որդիակս իրեկան,
Հանճար իմ Հրանտ, քոնքն է ապագան¹¹ :

Բիչ է պատահում, որ հայր ու որդի այդպես հասկանան իրար, ինչպես հասկացել են այս ընտանիքում: Տեր Զաֆարիայի խրախուսանքը որդիներից ոգևորել է, և նրանք հասել են իրենց ձգտածին:

Նրան հուզել է գավառի դպրոցների անբարեկարգ, ուսուցման ու կրթության անմխիթար վիճակը, բնակչության զանգվածային անգրագիտությունը, կնոջ իրավունքների պաշտպանությունը¹²: Երբ 1912 թ. ճշվում էր հայկական տառերի գյուտի 1500 և գրքի տպագրության 400-ամյակները, նա «Գրական, թե դպրոցական ֆոնդ»¹³ հոդվածում պահանջում էր կատարել հանգանակություն և նպաստել, որ այս խոշոր ազգային միջոցառումները հաջող անցկացվեն, օգնեն դպրոցների դրությունը բարելավելու, լավ, որակյալ մանկավարժներով ապահովելու, գրականության տպագրությունը բարձրացնելու և գրքեր ու պարբերականներ գյուղերին ու դպրոցներին առափնու համար: Հայապահպանության, մայրենի լեզվով կրթություն տալու հարցերը մշտապես եղել է նրա ուշադրության կենտրոնում:

Բայց նրա ամենամեծ ցավն ու տառապանքը հայրենի գավառի պաշտպանությունն էր թուրք ու քաթ ավազակաբարձ ցեղերից: Նրա արածը կատարյալ հայրենասիրություն էր: Բահանաների ուղեկցությամբ լինում էր հայկական գյուղերում և որտեղ հոգևոր հովիվներ չկային, եկեղեցական արարողություններ կատարում: Նա խիստ մտահոգված էր թուրքական գյուղերի շրջապատման մեջ

¹¹ Բանաստեղծության ձեռագրի մեկ օրինակը պահպանվում է մեր արխիվում (Բ. Մ.):

¹² Լուծման կարոտ մի հարց: «Հովիվ», 1908, թիվ 25, էջ 391-393: Ստորագր.՝ Գործակալ Ղազախի ա. մ. Զաֆարիա Բահ. Ապրեսյանց:

¹³ «Մշակ», 1912, 3 օգոստոսի, թիվ 189:

գտնվող հայկական գյուղերի բնակչության համար: Հատկապես Կուր գետի ափին գտնվող հնագույն Կոզեմ գյուղի, քանի որ քաղաքի չկար, և նրանք գալիս էին Քավուզ և Վերին Կարմիրաղբյուր գյուղերից: Որդին՝ Հրանտը, պատմում էր, որ հայրը շրջագայելիս գինված էր լինում: Գավազանն այնպես էր սարքված, որի մեջ սուսեր էին տեղադրված: Զինով ճանապարհորդելիս գիշերները շները հարձակվում էին, և նա սուսերով պաշտպանվում էր: Պարզ է, որ եթե հարկ լիներ, դրանով նաև ավազակներից կպաշտպանվեր: Սակայն նրանք քաղաքի վրա հազվադեպ էին փորձում ձեռք բերել:

Չափազանց հետաքրքրական է «Կոզեմ գյուղը»¹⁴ վերնագրով հոդվածը: Նրա գրչի տակ հանում է գյուղացի իր պատմական փառավոր անցյալով, ժամանակի ծանր սոցիալ-տնտեսական վիճակով և ապագա վառ հեռանկարներով, եթե կգտնվեն մարդիկ, որոնք օգնության ձեռք կմեկնեն փրկելու նրա ժողովրդին թուրք ու թաթ հարստահարիչներից, կեղեքող ու թալանող հարևաններից: Կարծեք թե այս հոդվածը գրվել է ոչ թե դարասկզբին, այլ 1980-88 թվականներին: Պատմությունը նույնությամբ կրկնվում է, միայն այն տարբերությամբ, որ հենում մարդիկ կարողացել են կռվել ու մնալ իրենց գյուղում, իսկ այս անգամ Կոզեմ գյուղը լրիվ հայաթափվեց, և նրա հազարավոր հեկտար բերրի վարելահողերն ու այգիները, արտառվայրերն ու անտառները Կուր գետի գյուղի տարածքի ամբողջ հոսանքով մնաց թուրքերին: Մի տարածք, որ ինչպես գրում է Ջ. Ապրեսյանը, կարող էր կերակրել ողջ Ղազախ-Շամշադինի հայ բնակչությանը: Նա կոչ էր անում հայերին վերադառնալ և ապրել այդ եղբմական վայրում, ուր ձմեռ չէր լինում, ուր կային նաև հսկայական վայրի այգիներ՝ խաղող ու բուլգ, տանձ, խնձոր, ընկույզ և այլ պտղատու ծառեր ու թփեր: Դրանք էլ իրենց նախնիների տնկած այգիների մնացորդներն էին:

Տողերիս հեղինակը Տավուշի շրջանային «Այգաբաց»¹⁵ թերթում հոդված է տպագրել, որ շրջանի ղեկավարությունը պետք է տեղ հատկացներ Կոզեմցիների համար, որպեսզի նրանք չգրվեն, այլ հավաք ապրելով պահպանեն իրենց յուրօրինակ քարառը¹⁶, կենցաղը, սովորությունները: Այսօր մենք իսպառ կօրցրինք դրանք: Հիմա էլ ուշ չէ, կարող մարդիկ, իշխանությունները պետք է այդ բանն անեն: Նպատակահարմար է Տավուշի Հախում կամ Խնձորուտ գետերի հոսանքներն ի վեր, ուր կան փայտամշակման արտադրամասեր իրենց շենքերով ու բնակարաններով, հատկացվեն նրանց ապրելու, հատկապես Հախում գետի հոսանքում Քարագյուղ կոչված տարածքում, Շխմուրադ հայտնի վանքի հարևանությամբ: Այստեղ կարելի է և զարգացնել այգեգործությունը և մարդկանց համար պայմաններ ստեղծել՝ ապրելու: Դա պայմաններ կստեղծի նաև վանքը վերակառուցելու համար: Դա արդեն մի նոր Ա. Ջաղեթյանի՝ մեր օրերի մեծահարուստի գործ է: Նման հայրենասերներ միշտ էլ գտնվել են: Սա նաև հնարավորություն կստեղծի, որպեսզի նրանք, հարմար պահ լինելու դեպքում, վերադառնան իրենց հայրենի գյուղը, գյուղ, որի պատմությունը գալիս է դարերի խորքից: Նրա անունը հիշատակվում է 11-12-րդ դարերում: Նդել է հայտնի շերամապահությամբ և տարանցիկ առևտրական նախապարհ-հանգույց: Գյուղի

¹⁴ «Մշակ», 1912, 29 օգոստոսի, թիվ 190:

¹⁵ Մելյան Բ., Կոզեմ գյուղը: «Այգաբաց», 1991, 15 հունիսի, թիվ 47:

¹⁶ Բաղրամյան Ռ., Կոզեմի քարառը: ՀԱՀ, հտ. 5, էջ 686: Տե՛ս նաև նույն հեղինակի համանուն գիրքը, Ե., 1981 թ.:

մոտ կար հսկայական հայկական գերեզմանատուն. որի հին շիրմաքարերից մեկի վրա արձանագրված էր 1611 թվական: Իր հայրենի եզերքի հոգսերով տառապող հոգևորականը կոչ էր անում, որ այդտեղ բնակչությունը խտացնեն, որպեսզի դրանով գյուղը փրկեն ադրբեջանցիներից: Մինչև 1923 թ. այդ և էլի մի քանի գյուղ թեև խորհրդայնացումից եետո անցան Ադրբեջանի տարածքը, բայց Հայաստանի կազմի մեջ էին մտնում, իսկ Գյումրաշը դարձյալ Ադրբեջանին գրեցին 1927 թ.: Դա ներկայիս Ալիքեյով գյուղի տարածում էր, տարածք, որից 5-6 տարի է, գնդակոծում են Տավուշի Այգեպար, Ներքին կարմիրադրյուր և այլ գյուղերը: Ուրեմն պետք է հասկանալ, որ Ջաֆարիա քահ. Ապրեսյանը դեռ այն ժամանակ հասկանում էր, թե ինչ է կատարվելու: Եվ Գորաշենցիները իրավունք չունենին լեռն իրենց դաշտավայրի գյուղը, հողը, այգիները և բարձրանալու ու բնակվելու ներկա տեղում՝ սարերի գլխին:

Լինելով վրաստանի և Իմերեթի հոգևոր գործակալը, նա տեսնում էր բազում անարդարություններ, որոնք արատավորում էին հոգևորականի բարձր կոչումն ու արժանիքները: «Տնորհներ»¹⁷ հողվածում նկատում է, որ հավատացյալները հիմա դժվարությամբ են ընդունում դա, և պահանջում է, որ քահանաները նյութականից նորից անցնեն բարոյական մորմերին: Մի այլ հողվածում նա ֆեոդալատում է այն բարձրաստիճան հոգևորականներից, որոնք կաշառով անարժանքներին հոգևոր կոչումներ են շնորհում¹⁸: Այս հողվածին արձագանքում են շատերը, այդ թվում և՛ արձակագիր Հարություն քահանա ձուղուրյանը: Նա, պաշտպանելով Ջ. Ապրեսյանի տեսակետները, պահանջում է պատասխանատվության կանչել նման կերպ վարվողներին¹⁹:

Ղազարը մի հանգուցային ֆաղա էր ամեն մի ճանապարհորդի համար, և պարզ է, որ առանց Ջ. Ապրեսյանի հետ հանդիպման, անցնել չէին կարող, իսկ ինքը ոչ միայն տեղյակ էր լինում, այլև անմիջական մասնակիցը: Եվ դրանք նա լուսաբանում էր Թիֆլիսում տպագրվող լրագրերում, հավիտենությանը հանձնելով մեր պատմության մութ ու լուսավոր իրադարձությունները: Դրանցից մեկն է «Գևորգ Ե Կաթողիկոսը Դիլիջանում»²⁰ հողվածը: Իսկ «Ի հիշատակ Ալեքսանդր Ջաղեթյանի»²¹ խորագրով հողվածում ներկայացնում է Ղազարի հայկական, մուսուլմանական և ռուսական եկեղեցիների կառուցման հովանավոր Ա. Ջաղեթյանի մասը և հուղարկավորությունը: Մեծարանքի խոսք է ասում այդ գերդաստանի²² մասին, որոնք իրենց միջոցները չեն խնայում բարեգործություններ կատարելու համար՝ պապը՝ Մկրտիչը, որդին՝ Ալեքսանդրը, և հիմա էլ նրանց որդի Գրիգոր Ջաղեթյանը 180 ու է տվել դպրոցի չֆավոր երեխաների ուսման վարձ: Դրանով նա նպաստել է, որ շատ շնորհալի երեխաներ դույս չմնան դպրոցից:

17 «Նոր դար», 1901, 16, 20, 23 մարտի, թիվ թիվ 47, 49, 52:

18 «Հովիվ», 1906, թիվ 10, էջ 152-154:

19 ձուղուրյան Հ., Պարզև ստորագրում է հոգևորականի կոչումը: «Հովիվ», 1906, թիվ 24, էջ 375-377:

20 «Մշակ», 1912, 6 հունիսի, թիվ 121:

21 «Մշակ», 1916, 29 նոյեմբերի, թիվ 287:

22 Ջաղեթյանների գերդաստանը սերվում է Ադրբեջանի Դաշխանի շրջանի Բանանց գյուղից: ՀԱՀ, հտ. 2, էջ 271:

Գրել Զաֆարիա Բահանա Ապրեսյանի մասին և չեիշել նրա մյուս որդուն՝ Վահրամին, խիստ սխալ կլինի: Վահրամը բազում վեպերի, պատմվածքների, հրապարակախոսական հոդվածների հեղինակ է: Նրա «Ժամանակը չի սպասում» վեպը երեք անգամ հրատարակվել է: Սակայն ինչպես Վահրամը, այնպես էլ մյուսները գրում են ռուսերեն կամ այլ լեզվով, և հայ ընթերցողը նրանց մասին ոչինչ չգիտի: Եվ հակառակ այդքան մեծ հայրենասեր հոգևորական հոր՝ ճյուղերը հեռացել են հայութունից, իրենց սկզբից, արմատներից: Երևի անգամ մոռացել են գեղեցիկ, հրաշալի Տավուշ աշխարհն ու պապերի Պառավաֆար գյուղը, գյուղ, որը դարեր շարունակ դեմ-հանդիման կանգնած մեր դարավոր թշնամու դեմ, մեր մի կտոր հողն ու դրանով հայրենի եզերքն է պաշտպանում: Պաշտպանում է և նրանց ապուսպպերի անյունն ամփոփող մի բուռ սուրբ հողն ու շիրմափարերը, որպես հավերժության խորհրդանշներ այդ տարածքի համար:



ԽԱՉԻԿ ԲԱՂԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ**ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆՑ**

(Ծննդյան 140 և մահվան 50-ամյակի առթիվ)



Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի երախտավորներից է եղել նաև նրա նախկին սան և ապա՝ դասախոս ու վերատեսուչ, րեղմնավոր բանասեր ու քառարանագիր ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը, որն իր հրկարամյա կյանքի ընթացքում (ապրած 90 տարիներից 70-ը) գիտնականի անխոնջ գործունեությամբ ու մեծ եռանդով հսկայական ծառայություն է մատուցել հայագիտությանը: Նա իր բանասիրական բազմաթիվ հետազոտություններով, հոդվածներով, գրախոսություններով ու թարգմանություններով մեծ նպաստ է բերել հայ մշակույթին ու գիտությանը: Իսկ նրա «Հայերեն քաջատրական քառաբանը», որ աննախագեղ հրևույթ էր, հայերենագիտության մեջ, բավական էր, որ ամանց փառք ապահովեր հեղինակին:

Ստեփան Սարգսի Մալխասյանցը ծնվել է 1857 թ. հոկտեմբերի 25-ին Ախալցխա քաղաքում, դերձակի ընտանիքում: 1871-ին ավարտելով տեղի ծխական դպրոցը՝ նույն տարին ընդունվել է 1874-ին ավարտել է Ախալցխայի ռուսական գավառական դպրոցը:

1874 թ. 17 տարեկան պատանին խանդավառությամբ ընդունվում է Գևորգ Դ մեծագործ Կաթողիկոսի կողմից ելմնադրված նորարաց Ճեմարան (այն հետագայում կոչվեց նույն Կաթողիկոսի անունով): Այստեղ սովորելու չորս արդյունավետ տարիների ընթացքում ուսման բարձր առաջադիմությունն ցուցաբերած և շնորհալի վարձագիծ ունեցող Ե լսարանի սան Ստեփանոսը վեհափառ Հայրապետի կողմից գործուղվել է Սանկտ Պետերբուրգ՝ հայագիտության մեջ խորանալու և բարձրագույն կրթությունն ստանալու նպատակով:

1878-ին, որպես ազատ ունկնդիր, Մալխասյանցն ընդունվում է Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-սանսկրիտ բաժանմունք՝ աշակերտելով հայտնի հայագետ, աղբյուրագետ ու պատմաբան պրոֆեսոր

Քերտվրե Պապանյանին: Հիշեցման կարգով ասեմք, որ Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Քերտվրե Պատկանյանը այդ համալսարանի արևելյան լեզուների ամբիոնի վարիչն էր, և նրա շնորհիվ էր, որ հայ բանասիրությունը ռուսական միջավայրում դարձել էր համակողմանի ուսումնասիրության առարկա, ձևավորվել էր հայագիտության պետերությունը՝ դպրոցը (Ն. Մառ, Ն. Ադոնց, Հ. Օրբելի, Ա. Գրեյն, Կ. Կուսիկյան, Քր. Հովհաննիսյան, Կ. Կարապետյան և ուրիշներ): Միաժամանակ վարելով Պետերբուրգի գրաֆննչական ատյանի հայկական հրատարակությունների գրաֆննչի պաշտոնը՝ նա մեծապես նպաստել է Ռուսաստանում հայկական մամուլի, գիտական ու գեղարվեստական գրականության հրատարակմանն ու տարածմանը:

1881-ին Մալխասյանցը, վատառողջ լինելու և նյութական ծանր պայմանների մեջ գտնվելու պատճառով, թողել է համալսարանը և շարունակել թարգմանություններով ու գիտությամբ զբաղվել: 1887-ին էփսոսոն կարգով ֆննությունն հանձնելով վերընդունվել է համալսարանի նույն ֆակուլտետ, արդեն որպես առկա (ստացիոնար) ուսանող, և այն ավարտել 1889-ին՝ ստանալով գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նույն թվականին էլ Մալխասյանցը վերադարձել է հայրենիք ու անցել մանկավարժական աշխատանքի՝ նախ իր ծննդավայրի Կարապետյան և Եղիազարյան դպրոցներում որպես ավագ տեսուչ, ապա՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որտեղ դասավանդել է 20 տարի՝ 1890-1910 թթ. (1903-1906 թթ. եղել է նաև տեսուչ): Այստեղ աշխատելու տարիներին, մանկավարժական աշխատանքին զուգահեռ, Մալխասյանցն արդյունավետ կերպով զբաղվել է նաև գիտական աշխատանքով: Մի շարք գիտական աշխատությունների ու հոդվածների հետ Ներսիսյան հոգևոր դպրոցի աշակերտների համար գրել է «Դասընթաց հայոց մատենագրության պատմության» (1899), իսկ 1900 թ. առանձին գրքով (214 էջ) հրատարակել է Ներսիսյան հոգևոր դպրոցի 75-ամյա գործունեության պատմությունը, որտեղ մանրամասնաբար շարադրում է հայ մեծ երախտավոր Ներսես Աշտարակեցի Կաթողիկոսի նախածնունդով 1824 թվականին բացված հայոց ուսումնարանի պատմությունը, որը մինչև 1836 թ. աշխարհիկ բնույթ էր կրում, այն միայն 1837-ին վերաբացվեց որպես հոգևոր սեմինարիա և անվանվեց Խրիմադրի անունով: Այս գրքում Մալխասյանցը մեծ գովեստով է խոսում դպրոցի առաջին տեսուչ Հարություն Ալամդարյանի, նրան հաջորդած Գ. Պապանյանի, Պ. Շանշյանի, Ստ. Նազարյանցի, Մ. Մադիսյանի և շատերի մասին: Գրքում է նաև այդ դպրոցում սովորած, այդտեղ դասավանդած շատ նշանավոր գիտնականների, գրողների, պետական գործիչների և ընդհանրապես մշակույթի շատ երախտավորների մասին (Խ. Աբովյան, Ստ. Նազարյանց, Պ. Պոռչյան, Ղ. Աղայան, Հ. Թումանյան, Դ. Դեմիրճյան, Հայկ Բժշկյան, Ա. Միկոյան և շատ ուրիշներ):

1910-1914 թթ. Մալխասյանցը Թիֆլիսի Հովնանյան Օրիորդաց դպրոցի տեսուչն էր, նաև մատենագրության, լեզվի ու գրականության դասատուն:

1914-1915 ուսումնական տարում արդեն բազմափորձ մանկավարժն ու անվանի գիտնականը հրավիրվում է Էջմիածնի Գևորգյան ձեմարան՝ որպես վերադասուչ և մալրենի լեզվի ու մատենագրության դասախոս: Նա նոր կարգուկանոն է հաստատել ձեմարանում, բարելավել է ուսանողների ու դասախոսների սոցիալ-տնտեսական պայմանները: Նա որակապես փոխել է նաև դասավանդման վիճակը՝ ձեմարանի առաջադեմ դասախոսների հետ (Մ. Արեղյան, Գ. Ղափանցյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Հովսեփյան և ուրիշներ) գրել է ձեմարանի նոր կանոնադրությունը և կազմել տվել առարկայական նոր ծրագրեր:

Հայտնի է, որ 1917-ի դեկտեմբերի 21-ին փակվում է Գևորգյան ձեմարանը, և դասախոսներն սկսում են դեգերել՝ նոր աշխատանքներ որոնելու: Մալխասյանցը վերադառնում է Թիֆլիս ու տեսչի պաշտոնով աշխատանքի անցնում Գայանյան Օրիորդաց վարժարանում:

1920 թ. Մալխասյանցը վերջնականապես տեղափոխվում է Հայաստան, երկու տարի պաշտոնավարում հայրենի Ախալխալի գիմնազիայում, որից հետո մեկ տարի դասավանդում Գյումրու նորարաց առաջին համալսարանում, բայց գիտական աշխատանքները շարունակելու ներքին մղումն ու քառարան ստեղծելու բուռն ցանկությունն ավելի են հրապուրում կյանքի ճՕ-ամյակը թևակոխած գիտնականին, և նա թողնում է մանկավարժական աշխատանքն ու, ինչպես ինքն է գրում, սկսում լուրջ կերպով զբաղվել իր մեծ ծրագրի իրագործմամբ. ձեռնամուխ է լինում իր քառահատոր բացատրական քառարանի փարտագրման ու կազմության աշխատանքներին:

1940 թ. Մալխասյանցին *honoris causa* (առանց դիսերտացիա պաշտպանելու) շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1943-ին ընտրվել է Հայաստանի նորարաց ակադեմիայի հիմնադիր կազմի անդամ:

Ակադեմիկոս Ստեփան Մալխասյանցը Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ էր, և նրա մահվան կապակցությամբ, որը տեղի ունեցավ 1947 թ. հուլիսի 21-ին, խոր վշտով ցավակցություն են հայտնել Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ջորեֆյանը, Էջմիածնի Հոգևոր ձեմարանի տեսչությունը, դասախոսական կազմն ու ուսանողությունը, ինչպես նաև «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, որի հիմնադրման օրվանից՝ 1944 թ., Մալխասյանցը եղել է նրա անխմբ աշխատակիցը: Ամսագրում մահախոսական է տպագրել նաև նրա առաջին սաներից մեկը¹:

Ժամանակակիցների վկայությամբ Մալխասյանցը վարվեցողությամբ չափազանց մեղմ էր, բնավորությամբ՝ բարի ու մարդամոտ, շատ համեստ էր ու աշխատասեր. նրա ասելով «շատ ընդունակ մարդիկ բեղմնավոր չեն եղել, որովհետև կենդանոցն առաջ կամ չեն ունեցել, իսկ կենդանացումը աշխատողի ուժերը կրկնապատկում է»²: Բարձր գնահատելով մեծ գիտնականի մարդկային կերպարը՝ պրոֆեսոր Ռուբեն Զարյանն իր հուշերում պատմում է, որ Մարտիրոս Սարյանն այն դիմանկարիչներից էր, ովքեր քննդդին ենթարկում էին խորագույն ֆենության, ըստ որում, գրեթե միշտ թափանցելով նրա հոգու խորքերը՝ տեսնելու այնտեղ մութ կետ կա՞, քե ոչ: Ու եթե հայտնագործում էր, չէր նկատում: «... Եվ մարդկային խառնվածք, թափնված մտքեր ու կրքեր կարդացող այդ վարպետին չհաջողվեց գեթ մի մութ անկյուն գտնել իր հերթական «գոհի»՝ Մալխասյանի հոգեկան աշխարհի խորշերում... և նկարեց նրան: Գնացե՛ք պատկերասրահ և մի անգամ էլ դիտեցե՛ք Ստեփան Մալխասյանի դիմանկարը.

Սրբի է նման»³:

Նրա գիտական բարեխղճության և գրածի նկատմամբ խիստ պատասխանատու լինելու վերաբերյալ ակնհայտոր գիտնական Մանուկ Աբեղյանն ասել է, թե Մալխասյանցի գրածը այլևս խմբագրման կարիք չէր գգում⁴:

¹ Տե՛ս «Էջմիածին», 1947, թիվ 5:

² Ռ. Զարյան, Հուշապատում, գիրք 1-ին, Նրևան, 1975, էջ 318:

³ Նույն տեղում, էջ 325:

Ստ. Մալխասյանցն իր ժամանակի թերևս ամենաբեղուն մտավորականներին մեկն է եղել. դեռևս էջմիածնում սովորելու տարիներին, մինչև կյանքի վերջը, նա թղթակցել է ժամանակի հայկական գրեթե բոլոր թեթերին ու ամսագրերին՝ թվով 20-ից ավելի, տարեկան տպագրելով 5-6-ից մինչև 15-18 հոդված ու տեղեկատվություն՝ չհաշված մեծագրություններն ու ֆառահատոր քաղաքական րառա-րանը: Նրա հրատարակած գիտական հոդվածների, գրախոսությունների, տարբեր հորելյանների կապակցությամբ տպագրած հրապարակումների, ժամանակի հայագիտությանը հուզող հարցերի վերաբերյալ տարբեր խմբագրություններին ուղարկված նամակների և այլ կարգի հոդվածների թիվն անցնում է 200-ից: Եվ իզուր չէ, որ դեռևս ուսանող Մալխասյանցի մեջ շատերը տեսել են ապագայի խոստումնալից գիտնականին:

Հայագիտության բնագավառում Մալխասյանցը հիմնականում չորս կարևոր ուղղություններով է զբաղվել՝ բանասիրություն, թարգմանություն, լեզվաբանություն և բառարանագրություն: Դրանց զուգահեռ նա նաև հայտնի լրագրող էր: Նա իր լրագրողական մկրտությունն ստացել է «Արարատ» ամսագրի 1878 թվականի 4-րդ և 5-րդ համարներում տպագրած երկու հոդված-ներով: Եվ այսպես 50 տարի շարունակ, մինչև 1919 թվականը, երբ փակվեց ամսագիրը: Այնուհետև «Էջմիածին» հանդեսի հրատարակման հենց առաջին համարից (1944 թ. հունվար) Ստ. Մալխասյանցը դարձավ նրա մշտական թղթակիցն ու ջերմ երկրպագուն:

Մալխասյանցի լրագրողական երախայրիքը՝ «Ինքնախոս ծայնագիր» վերնագրով, լույս է տեսել «Արարատի» 1878 թ. թիվ 4-ում: Այդ թվականներին բուժման նպատակով Փարիզում եղած ժամանակ նա ներկա է եղել երկու կարևոր իրադարձությունների, որոնց մասին էլ գրել է իր առաջին հոդվածները: Առաջինում պատմում է ամերիկացի գիտնական Թոմաս Էդիսոնի պատրաստած առաջին ծայնագրիչ սարքի մասին, որը փորձարկվել է 1878 թ. մարտի 11-ին Փարիզի Գիտությունների ճեմարանում և փաստորեն ժամանակակից ծայնագրման ու տեսագրման հզոր սարքավորումների հիմքն է հանդիսացել: Այդ պարագային սարքը սովորաբարից պատրաստված գլան է եղել՝ ծայրին սուր ասեղ, որի միջոցով բերանին դուրս եկող հնչյունը օդի տատանման շնորհիվ հաղորդվել է արճեն քարակ թիթեղին և մեկ ուրիշ հատուկ սարքի միջոցով վերադարձվել արդեն հնչյունային տեսքով: Հոդվածն ավարտվում է այսպես. «Եթե ծայնագիրը Ե դարում լիներ, այլևս վեճի տեղիք չէր մնար այսօր, թե Սուրբ Մեսրոպ մեր միջակ տանը»⁴, Բ, Գ, Դ եւ այլն, ինչ տեսակ կը հնչէր, բառական էր միայն գլանը դարձնել... Մէկ խօսքով, սա լուսանկարին հետ՝ մարդի մարմնաւորութիւնը կ'անմահացնէ»⁵:

Երկրորդ հոդվածում («Արարատ», 1878, թիվ 5) ականատեսի աչքերով պատմում է նույն թվականի մայիսի 1-ին Փարիզում՝ Սենայի աջ և ձախ ափերին կայացած ամենաշեղ աշխարհահանդեսի քաղման մասին, որտեղ իրենց քաղմարնույթ ազգային ստեղծագործություններով, նաև գիտական նվաճում-ներով մասնակցել են աշխարհի քաղմաթիվ ազգեր ու ժողովուրդներ: Հայերը մասնակցել են Փարիզի ազգային գրադարանում պահվող իրենց ձեռագրերով ու հնատիպ գրքերով, որոնք չափազանց մեծ հետաքրքրություն են առաջացրել:

⁴ Նույն տեղում, էջ 319:

⁵ «Արարատ», 1878, թիվ 4, էջ 148:

Մալխասյանցի բազմաթիվ լրագրական հոդվածներից հիշատակենք ևս մի երկուսը, որոնք այսօր էլ կրթադատիարակչական մեծ արժեք ունեն։ Նա «Արտքատի» 1898 թ. թիվ 2-ում տպագրում է «Պրոֆեսոր Մառի կարծիքը վրացոց» ընդդեմ հայոց ուղղած վեճի մասին» շատ արժեքավոր հոդվածը, որտեղ գրում է, որ վրաց բանաստեղծ Ակակին (նույն ինքը՝ Մերեթելի - Խ. Բ.) հայերի մասին մի ստահեղ ու անհեթեթ հոդված է գրել, որտեղ աղֆատամտորեն հայտարարել է, որ ինքը թե «արդի հայերը ազգային անուն չունեն, ազգային պամուքյուն չեն ունեցել մինչև Հայոց Նկեղեցու բաժանվելը Ուղղափառ Նկեղեցուց, իսկ Հայաստանի հեռագույն ժամանակների մասին հայոց պատմագիտների հաղորդածները լոկ միայն առասպելներ են»։ Մալխասյանցը գրում է, որ պրոֆեսոր Մառը բազմաթիվ փաստերով ու օրինակներով հիմնավորապես հերքում է Ակակինի՝ գրելով, որ «նման հայացքը ոչ նոր է և ոչ էլ անծանոթ հայերին» և ապացուցում է, որ մինչև 10-րդ դարը վրացիները իրենց գործերը հայերենից են թարգմանել, ինչպես, օրինակ, «Մուշանիկի վարքը», «էլ չենք ասում, որ նրանց այբուբենն էլ Մաշտոցն է հեղարել, եթե ոչ էլ՝ ապա այն հայոց այբուբենի օրինակով է կազմվել... Նթե հայերը չէին եղել, վրացիների պատմությունը ծածկված պիտի լիներ մութ խավարով»⁶, գրում է Մառը։

Մալխասյանցը խիստ ուշադիր է եղել հայ մշակույթի, գիտության ու դրանց երախտավորների հետ կապված իրադարձությունների նկատմամբ և իր հոդվածներում հաճախ է հանդես եկել նման հարցերի ու տարելիցների լուսարանմամբ։ Օրինակ՝ իր սիրելի կրթօջախի՝ Գևորգյան ձեմարանի 25-ամյա տարեդարձի առթիվ Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» թերթի 1899 թ. երկու համարներում հանդես է եկել ընդարձակ հոդվածով⁷։ Նույն թերթի 1911 թ. օգոստոսի 26-ի համարում մի գեղեցիկ հոդված է տպագրել Մխիթարյան Միաբանության հիմնադրման 100-ամյակի առթիվ՝ «Համակրելի հորելյան» վերնագրով։ Իսկ մեկ տարի հետո, 1912 թ., նույն տեղում և ուրիշ հանդեսներում մի քանի հորելյանական հոդվածներ է գրել հայերեն առաջին գրքի տպագրության 400-ամյակի և ազգային այբուբենի գյուտի 1500-ամյակի առթիվ։ Ահա այդ հոդվածներից մեկի խոսույն վերնագիրը՝ «Որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ»⁸։ Հայրենական պատերազմի թեժ տարիներին, 1943-ին, հայկական ակադեմիայի հիմնադրման վերաբերյալ «Ողջույն նորածին հայկական ակադեմիային»⁹ հոդվածով հանդես է եկել «Սովետական Հայաստան» օրաթերթում։ Եվ բազմաթիվ նման հոդվածներ։

Պետք է հատուկ ընդգծել, որ Մալխասյանցի լրագրական տիպի հոդվածները միայն նկարագրական և տեղեկատվական բնույթ չեն կրում. նրա հոդվածներն ավելի շատ տեսական և բանավիճային բնույթի են, որոնցում նա հաճախ բանավիճում է գիտնականների ու տեսաբանների հետ, առաջ քաշում նոր թեզեր ու վարկածներ, որոնք նոր բանավեճերի տեղիք են տալիս։ Այսպես՝ «Ե՞րբ են հայերն ընդունել քրիստոնեությունը» հոդվածում ակադեմիկոս Մալխասյանցը բանավիճում է մի քանի տեսաբանների ու պատմաբանների հետ, որոշ վերապահումներով մտնելով նաև Օրմանյանի տեսակետին։ Հիմք ընդունելով Մ. Խորենացու և Ագաթանգեղոսի պատմությունները՝ մաթեմատիկական բազմաթիվ նշգրտում-

⁶ «Արտքատի», 1898, թիվ 2, էջ 75-78:

⁷ «Մշակ», 1899, թիվ 177 և 178 (սեպտեմբեր 24-25):

⁸ «Մշակ», 1912, թիվ 227 (հոկտեմբեր 13):

⁹ «Սովետական Հայաստան», 1943, թիվ 241 (նոյեմբեր 27):

Ներով, խորագրին ստուգաբանություններով ու վերլուծություններով, գրում է. «... խորենացում տվյալներն անկասկածելի հիմք ընդունելով՝ մեզ հասնում ենք հետևյալ նիշտ եզրակացություններին՝

1) Ըստ խորենացում Տրդատը թագավորել է 263 թվին.

2) Հուսավորիչը Հայրապետական Աթոռին է նստել Տրդատ թագավորի 17-րդ տարում, այսինքն՝ 279-ին.

Ուրեմն՝ քրիստոնեությունը Մ. հորենացում ժամանակագրական տվյալներով հաշվելով, Հայաստանում իբրև պետական կրոն, ընդունվել է փրկչության թվականի 279 տարում»¹⁰ (ընդգծումը իրենց է - Խ. Բ.):

Բանավիճանին մեկ ուրիշ հոդվածում՝ «Հավերժացման արժանի հորեյլանց», նվիրված էջմիածնի հիմնադրման 500-ամյակին, Մալխասյանցը ճշգրտելով քերում է Մայր Աթոռի՝ տարբեր ժամանակներում տարբեր տեղերում հանգրվանելու ստույգ տվյալները.

Հայոց Հայրապետական առաջին Աթոռը հիմնադրվել է 280 թ. Վաղարշապատում, այնուհետև՝ 485 թ. տեղափոխվել է Դվին, 928 թ.՝ Աղթամար, 1116 թ.՝ Մոսի, և Կարմիր վանք, 1149 թ.՝ Հռոմկլա, 1292 թ.՝ Կրիկիայի թագավորանիստ Սիս քաղաք, և վերջին անգամ՝ 1441 թ.՝ Նորից Վաղարշապատ:

Հոդվածի վերջում Մալխասյանցն առաջարկում է Ազգային-եկեղեցական ժողովում նորընտիր Կաթողիկոսի՝ Գևորգ Ջորեբջյանի գահակալության հետ նշել նաև Հայրապետական Աթոռը Ս. էջմիածին տեղափոխելու 500-ամյա հորեյլանց (այդ ժողովը տեղի ունեցավ 1945 թ. հունիսի 16-22-ին)¹¹:

Ընթերցողը Մալխասյանցի մեկ ուրիշ հոդվածից կիմանա, որ Մառը 1902 թ. Սինա վանքում հայտնաբերել է «Ազաթանգեղեայ պատմութիւն, վարք եւ պատմութիւն Սրբոյն Գրիգորի» գիրքը՝ արաբական թարգմանությամբ, որը նա հրատարակել է ռուսերեն 1905 թ.: Իր հոդվածում Մալխասյանցը զուգահեռական ֆնեություն է ենթարկում երկու տեքստերը, համախ փնեում Մառի հետ՝ հենվելով Փավստոս Բուզանդի վրա, որի մասին ինքը հոդված է գրել դեռևս 1896-ին, Վիեննայի «Հանգես ամսօրեայ»-ում¹²:

Մեծ հետաքրքրությամբ է կարդացվում նրա «Մաշտոցի ծագման մասին» քանավիճանին հոդվածը. որտեղ Գիտությունների ակադեմիայի անդամ քեզմնավոր գիտնականը, Նորից վկայակոչելով Բուզանդին, հակադրվելով Օրմանյանին ու Մանուկ Աբեղյանին, Մաշտոցի տոհմաձագի մասին առաջ է քաշում հետևյալ վարկածը, որ Մաշտոցը Վրթանես Կաթողիկոսի որդի Հուսիկի թոռն է՝ Վրիկի (Վարդանի) որդին, իսկ Վրիկը Պապի որդին է. Պապի եղբայրը Աթանգեղեսն է, սրա որդին՝ Ներսեսը, Ներսեսի որդին էլ Սահակն է¹³:

Մեկ ուրիշ հոդվածում անվանի քանասերը քանավե՛նի մեջ է մտնում աշխարհաեղեակ գիտնական Հրաչյա Անառյանի հետ և պատասխանում նրա «Հայկական» Գ-ում առաջադրված հարցերին՝ կապված պատմահայր Մովսես Խորենացու անձի և գործի, ինչպես նաև դրանց թվականների հետ¹⁴:

¹⁰ «էջմիածին», 1944, թիվ 1, էջ 26:

¹¹ «էջմիածին», 1945, թիվ 5, էջ 43-45:

¹² «էջմիածին», 1946, թիվ 11-12, էջ 24-34:

¹³ «էջմիածին», 1946, թիվ 2-3, էջ 55-58:

¹⁴ Տեղեկագիր ՀԱՍՈ ԳԱ հաս. գիտ., 1946, թիվ 11-12, էջ 3-8:

Իսկ Մալխասյանցի «Գրիգոր Նարեկացի» ընդարձակ հոդվածը, որը նրա ծրագրած «Հայոց հին գրականության պատմություն» գրքի մի գլուխն է, բանասիրական մանրաբանական ուսումնասիրությունն է «մեր առաջին մեծ բանաստեղծի կյանքի և գրվածքի *սրբապան հրաշագործ Կորյունյան*» (իր բնորոշումներն են - խ. Բ.) մասին: Այստեղ տարեց ու քաղաքորդ գիտնականը, չխնայելով իր գիտելիքներն ու լեզվական կարողությունները, շատ պատկերավոր կերպով է ներկայացնում Նարեկացուն՝ նրան համարելով «մի առավոր ածղահա», իսկ նրա գործը՝ «բառերի մի վարպետ հեղեղ»: «Նա՝ Նարեկացին, իր այս ֆերթվածը նկատում է իրրև խուկ, որ յուր բուն թախծության հրով այրելով, կամփ բուրվառով մատուցում է Աստծուն»¹⁵:

Բանասիրություն. Իր երկարամյա գիտական գործունեության ընթացքում անդրադառնալով հայագիտության քաղաքիկ կնոռոտ հարցերի՝ Մալխասյանցը մեծապես նպաստել է դրանց լուծմանը. անհրաժեշտության դեպքում բանավիճել է տարիներով, մինչև որ կատարել է հիշտ հզրահանգումներ: Դեռևս Պետերբուրգում առկորելու տարիներին Մալխասյանցը 1885 թ. լույս ընծայեց առաջին լուրջ ուսումնասիրությունը՝ Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ) «Պատմութիւն տիեզերական»-ը՝ գիտական քննարկով ու ծանոթագրություններով: Գիտական երախայրիքը ճանաչելի դարձրեց հեղինակին ու ոգևորեց նրան, երիտասարդ ուսումնասիրողը սկսեց իրար հետևից հրատարակել հին մատենագրական հուշարձաններ՝ ուշագրավ ծանոթագրություններով ու պարզաբանումներով: Այսպես, երկու տարի հետո նա լույս ընծայեց Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» և «Թուրք առ Վահան Մամիկոնեան» երկերը: Ավելի ուշ լույս տեսավ Սեբեոս եպիսկոպոսի պատմությունը, սրան հաջորդեց Ամիրդովլար Ամասիացու «Օգուտ քձկութեան» աշխատությունը՝ բոլորն էլ ծանոթագրություններով ու մեկնություններով:

Առանձնակի արժեք ունեն հայ պատմիչների երկերի նրա աշխարհաբար քարգմանություններն ու ծանոթագրությունները: Նրա անմիջական նախաձեռնությամբ ու գործնական մասնակցությամբ դարասկզբին ստեղծվեց «Պատմագիրք հայոց» մատենաշարը (Ազաթանգեղոս, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի): Մալխասյանցը աշխարհաբար քարգմանեց և հազարավոր ընթերցողների սեփականությունը դարձրեց Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի «Հայոց պատմութիւն» աշխատությունները՝ բանասիրական մեկնություններով ու մանրամասն ծանոթագրություններով:

Ահա թե ակադեմիկոս Ի. Ի. Մեշյանինովը ինչպես է գնահատում Մալխասյանցի այս քննութի գործերը. «Էրեմնց նշանակությամբ քացառիկ բոլոր այդ աշխատություններում Ստ. Մալխասյանցը հանդես է գալիս որպես հսկայական բանասեր: Նա ոչ միայն գրականագետ է, այլև մեծագույն լեզվաբան: Հրատարակելով ու ծանոթագրելով քննարկները՝ նա խորանում է նրանցում ռգտագործված լեզվական նրբագույն վերլուծության մեջ»¹⁶:

Չափազանց հետաքրքիր է «Խորենացու առեղծվածի շուրջը» բանասիրական աշխատությունը, որում Մալխասյանցը անհերքելիորեն հաստատեց, որ Խորենացին 5-րդ դարի պատմիչ է. դրա ապացուցման քաղաքիկ փաստարկներից մեկն էլ

¹⁵ «Էջմիածին», 1947, թիվ 5-Ձ, էջ 31-42:

¹⁶ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Բանասիրական հետազոտություններ, կազմեց և ծանոթագրեց՝ Ա. Մադոյան, Երևան, 1982, էջ 4:

Շուշանիկի «Վարփ» հայերենից վրացերեն թարգմանված լինելու Մալխասյանցի անհերքելի ապացույցն է:

Մալխասյանցի մոֆի կուռ տրամաբանությամբ, գիտական հարցերն ու երևույթներն անսխալ ճնշելու, պատմական փաստերը ճիշտ գնահատելու և դրանց ժամանակագրական կարգը մաթեմատիկական ճշգրտությամբ որոշելու կարողությունների մասին շատերն են վկայել: Բերենք այդ կարծիքներից մեկը: Աշխարհահռչակ գիտնական ակադեմիկոս Հրաչյա Անադյանը, ցերեպ լինելով ակադեմիայում կայացած Մալխասյանցի գեկուցումներից մեկին, գրում է. «Հայկական ակադեմիայի առաջին ընդհանուր ժողովում մեր բազմահմուտ հայագետ և հայկական ակադեմիայի իսկական անդամ Ստ. Մալխասյանցը մի բազմաթիվ անգամ ելույթ ունեցավ հայոց ամենահին պատմագիրների մասին և մաթեմատիկական ճշմարտությունների մասին իրարից բխեցնելով՝ որոշեց նրանց գրության թվականը»¹⁷:

Մալխասյանցը հայագիտության մեջ ճանաչված է նաև որպես **թարգմանիչ**: Նա ոչ միայն գործարից աշխարհաբար թարգմանեց մեր պատմիչների գործերը, այլև բազմաթիվ թարգմանություններ կատարեց օտար լեզուներից, ռուսերենից, ցանկ ուսերեն: Դեռևս 80-ական թվականներից նա թարգմանում էր Վիկտոր Հյուգոյի բանաստեղծությունները, որից հետո անցավ ավելի մեծ գործերի. թարգմանեց Վիլյամ Շեքսպիրի «Լիր արքան», «Մակբեթը», Գ. Էրսերի «Մարդ եմ» ստեղծագործությունը, ապա ռուսերեն թարգմանեց Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի «Զամբուր», ինչպես նաև Սեբեոսի «Հայոց պատմությունը» և ուրիշ շատ գործեր:

Լեզվաբանություն.— Ձևայած հայ հին մատենագրության ու բանասիրական ուսումնասիրությունների բնագավառում ունեցած մեծ վաստակին, Մալխասյանցն ավելի շատ ճանաչված է որպես **լեզվաբան**: Նա հայ լեզվաբանական մոֆի խորիմաստ ուսումնասիրողներից մեկն է: Իր ֆերականագիտական հետազոտություններում Մալխասյանցն անդրադարձել է հին հայերենի, հայոց լեզվի պատմության, համեմատական ֆերականության, ինչպես նաև ժամանակակից հայերենի մի քանի կննդոտ ու բանավիճակին հարցերի: Նախ իր ծանրակշիռ խոսքն է ասել հայոց լեզվի ցեղակցության, հայերենի բազմաթիվ ստուգաբանությունների, աշխարհաբարի ուղղագրության ու հոլովների, հայերենի տաղաչափության և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

Լինելով հմուտ գրաբարագետ՝ Մալխասյանցն իր «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» (Թիֆլիս, 1891 և 1910) և «Գրաբարի համաձայնությունը» (Թիֆլիս, 1892) գրքերում ոչ միայն հանգամանորեն ճնշության է առել դասական գրաբարի ամբողջական ֆերականությունը (որը բարձր է գնահատել ֆրանսիացի հայտնի հայագետ Անտուան Մեյեն), այլև «Համաձայնություն» գրքի ներածական բաժնում տեսական բազմաթիվ հարցեր է ճնշել: Այսպես՝ լեզուն համարելով ազգը բնորոշող տարրերից ամենակարևորը, նա մայրերնի լեզուն դիտում է իրեն «ազգերի գոյության պատվանդան», իրեն կենսական անհրաժեշտություն, առանց որի ազգը ձուլվում է այլ ազգերի ու ժողովուրդների մեջ, և լեզվի զարգացումը Մալխասյանցը սերտորեն կապում է ժողովրդի զարգացման, նրա մշակույթի, պատմության ու սոցիալ-տնտեսական կյանքի հետ:

¹⁷ Տե՛ս Հր. Անադյան, Բանասիրական ուսումնասիրություններ, կազմեցին՝ Ա. Մադոյան, Ա. Տեր-Ստեփանյան, Երևան, 1976, էջ 201:

«Լեզվի զարգացումը հետևանք է ժողովրդի զարգացմանը՝ մտավորապես և տնտեսապես»¹⁸:

Մալխասյանցն իր ժամանակի մեծ լեզվաբանների նման (Հյուբերման, Մեյե, Անադյան) ընդունում էր հայերենի հնդեվրոպական լեզու լինելու փաստը. «...Հայերենը, որ առաջ է եկել հնդիկ-եվրոպական մայր լեզվից և քույր է հունարենին, պարսկերենին, կելտերենին, սլավոներենին և այլն, ամենաեին և ամենազարգացած լեզուներից մեկն է... ճա հասել է վերին աստիճանի զարգացման, գրեթե այժմյան ֆրանսերենին հավասար...»¹⁹:

Ընդունելով նախալեզվի գոյությունը՝ Մալխասյանցն ընդունում էր նաև գրարարից առաջ հայ բարբառների գոյության վարկածը և Անադյանի նման պնդում, որ չկա լեզու, որ չունենա իր բարբառները: «Հայերենը նախագրային շրջանում նույնպես ունեցել է իր բարբառները» գրում է Մալխասյանցը, որոնց մասին պատմական հիշատակություններ չլինելու պատճառով հավաստի տեղեկություններ չունենք: Տնտեսական ու քաղաքական, աշխարհագրական մասնատվածությունը, կտրվածությունը արագացրել են բարբառների գոյացումը, նրանց հետացումը միմյանցից, նպաստել են այդ բարբառների ինֆուզիոն զարգացմանը»²⁰:

Իր երկարամյա մանկավարժական աշխատանքով, ինչպես նաև քաղաքիվ հոդվածներով ու գրախոսականներով Մալխասյանցը մեծապես նպաստել է մայրենի լեզվի զարգացման, հարստացման և այն անաղարտ պահելու շնորհակալ գործին: Նա վճռականորեն պայքարում էր օտարաբանության դեմ և ամենուրեք կոչ էր անում հայերենը գերծ պահել օտար ու անհարկի խնդումներից ու փոխառություններից: Բնավ չանտեսելով աներաժեշտ փոխառությունների կարևորությունը լեզուների զարգացման գործում, հայրենասեր լեզվաբանը հայտարարում էր, թե այն ժողովուրդը, որը ցանկանում է պահպանել իր ինֆուզիոնությունը, պետք է սիրի, փայփայի, պաշտպանի իր լեզուն, հոգ տանի նրա մշակման, հարստացման համար, պայքարի օտարամուլների դեմ, ազգային լեզուն օտար, անհարկի ներմուծումներով խնդելու դեմ:

Հայտնի է, որ 10-ական թվականներին քանավե՛ն ծավալվեց աշխարհաբարի հոլովների վերաբերյալ. այն սկսեց Մ. Արեղյանը իր «Աշխարհաբարի հոլովները» հոդվածաշարով, որոնք պարբերաբար լույս էին տեսնում «Արարատ» ամսագրի 1908 թվականի 1-8 համարներում: Սու. Մալխասյանցն անմիջապես արձագանքեց դրան իր «Հայցական հոլովը աշխարհաբարի մեջ» հոդվածով («Նոր դպրոց», 1908, թիվ 1): Արեղյանը պատասխանեց դրան «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (վաղարշապատ, 1908) աշխատությամբ: Մալխասյանցն ի պատասխան հանդես եկավ իր ավելի ընդարձակ հոդվածով՝ «Դարձյալ հայցական հոլովը» («Նոր դպրոց», 1909, թիվ 11-12):

Մ. Արեղյանը, լինելով գերմանական լեզվաբանական դպրոցի երիտֆրականական ուղղության հետևորդ, փրականական իրողությունները բնականաբար առավելությունը տալիս էր ձևին. այդ պատճառով էլ աշխարհաբարի տրական և հայցական հոլովները ձուլում էր ուղղականին ու սեռականին՝ աշխարհաբարում թողնելով հինգ հոլով, իսկ Մալխասյանցը ձևը չէր անջատում բովան-

¹⁸ Սու. Մալխասյանց, Գրաբարի համաձայնություններ, Թիֆլիս, 1892, էջ 7-8:

¹⁹ Նույն տեղում, էջ 9-10:

²⁰ Նույն տեղում:

դակությունից՝ ավելի կարևոր համարելով վերջինս. այդ պատճառով էլ նա աշխարհաբարոյւմ՝ պահում էր յոթ հոլով: Մալխասյանցի այս տեսությունը որդեգրեցին պրոֆեսորներ Ա. Ղարիբյանը, Գ. Սևակը և մյուս լեզվաբանները մինչև 1967 թվականը, երբ նորից առաջ եկավ նույն բանավեճը՝ *հինգ, թե յոթ*, և մոտ մեկ ամիս տևող այդ չափազանց հետաքրքիր բանավեճը, որին մասնակցում էին ոչ միայն լեզվաբաններ ու ուսուցիչներ, այլև ֆիզիկոսներ, ինժեներներ, բժիշկներ, շինարարներ, տնտեսագետներ, ուսանողներ, ավարտվեց այն բանով, որ բուհական դասագրքեր մուտք գործեց հիմն հոլովը. որը դպրոցական դասագիրք մտավ միայն վերջին տարիներին:

Մալխասյանցի բանավեճը, սակայն, միայն եղովմեքի հարցով չի ավարտվում: 10-ական թվականներին հսկայական բանավեճ էր ծավալվել նաև հայերենի ուղղագրության վերաբերյալ, որին մասնակցում էին շատ գրողներ, ուսուցիչներ, արվեստագետներ և ժողովրդի գրագետ խավը: Այդ տարիներին հայ մամուլը՝ «Արոտ», «Մշակ», «Նոր դպրոց», «Արարատ», «Արձագանք», «Մուրճ» և այլն, հեղեղված էր ուղղագրության շուրջ ծավալված բանավեճային հոդվածներով, իսկ Մալխասյանցը բանավեճի պարագլուխն էր: Դեռևս 1910 թ. «Արոտի» թիվ 1-2-ում լույս տեսած «Մի հնչյունին մի գիր» հոդվածն ուղղված էր Ղազարոս Աղայանի՝ «Մուրճ», «Տարագ», «Աղբյուր» հանդեսներում տպագրված հոդվածների դեմ, որտեղ Ղ. Աղայանը պահանջում էր *վ* տառի փոխարեն ամենուրեք գրել *ւ* տառը՝ անցնել միայն *հինսագրության*, մինչդեռ Մալխասյանցը պահանջում էր *վեվագրություն*, այսինքն՝ մեկ հնչյունին մեկ գիր և ոչ երեք՝ *ւ, վ, ու, լաւ, վատ, նուէր, պատիւ, ծով* այլ՝ *լավ, վատ, նվեր, պատիվ, ծով* և այլն: Ապա «Մշակ» թերթի 1910 թ. թիվ 19-20 էջերում Մալխասյանցը հանդես եկավ Մենելիշյանի տեսակետների դեմ՝ գրելով «Ուղղագրական թյուրիմացություն» խիստ ֆնտադատական հոդվածը: Նույն թերթի հաջորդ համարներում բանավեճի մեջ մտավ Լեռնի հետ՝ նրա հոդվածներին պատասխանելով «Վեվագրության շուրջը» հոդվածով²¹:

1913 թ. հոկտեմբերի 14-ին էջմիածնում հայերեն գրերի գյուտի 1500 և հայ տպագրության 400-ամյակին նվիրված համագալին մեծ հանդեսին հայերենի ուղղագրության հարցերի վերաբերյալ ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս Արեղյանը (զեկուցումը շատ երկար լինելու պատճառով Մալխասյանցին և մյուս բանաստեղծներին ձայն չի տրվում), և «դրանով վերջանում է ուղղագրության օրը»²²: Այդ լուրջությունը ձգվում է մինչև 1922 թվականը, երբ մարտի 4-ին Հայաստանի լուսժողովում հրատարակում է նոր ուղղագրության վերաբերյալ դեկրետը, որից հետո նորից բանավեճ ծավալվեց, նորից հոդվածներ գրվեցին թեր ու դեմ: Մալխասյանցի նման անհանգիստ ու անհանդուրժող մարդը չէր կարող անտարբեր մնալ այդ բարեփոխումների որոշ դրույթների նկատմամբ և իր նկատառումները հրատարակեց «Կարմիր աստղ» լրագրի 1922-ի թիվ 98-ում՝ «Հայոց լեզվի ուղղագրության ոեֆորմի մասին» վերնագրով: Իսկ 1924-ին «Մարտակոչում» ավելի ընդարձակ հոդվածով հանդես եկավ Արեղյանի դեմ²³.

21 Տե՛ս «Մշակ», 1910, թիվ 49, էջ 2-3, և թիվ 52, էջ 1-2:

22 Տե՛ս Ս. Գյուլստեղյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Ե., 1973, էջ 310:

23 Տե՛ս «Մարտակոչ», 1924, թիվ 291, էջ 2, և թիվ 295, էջ 2-3 (գրախոսական):

որը նրան պատասխանեց 112 էջանոց մի գրքով՝ «Ուղղագրական ուղեգիր» խորագրով:

Քառարանագիր. - Իր բազմաթիվ ու բազմաբնույթ ուսումնասիրություններում Ստ. Մալխասյանցին փառք ու պատիվ բերողը, նրա ստեղծագործությունների գլոսյորոնները հայերեն քառարանական բառահատոր քառարանն է, որը դարերի պատմություն ունեցող հայ եւրոպայի քառարանագիտության մեջ նախորդը չունեցող կոթողային աշխատություն է: Թեև քառարանով էիմանակամում սկսել է լրջորեն զբաղվել 1922 թվականից, բայց դեռևս դարակցի է. նա իր սերն արտահայտել քառարանների նկատմամբ. իր քառարանագիտական տեսական հայացքներն ու քառարանագիրներին ուղղված դիտողություններն արտահայտել է իր գրախոսություններում:

Դեռևս 10-ական թվականներին Մալխասյանցը մտադիր էր քառարան ստեղծել, որը, ըստ նրա, ազգի ֆաղափաթության վկայությունն է: Նրա համոզմամբ, յուրաքանչյուր ժողովրդի զարգացման ցուցանիշը, նրա մշակույթի ամենավաղ արտահայտությունը լեզուն է: Ըստ Մալխասյանցի, լեզվի քառապաշարի հետազոտությամբ կարելի է պատկերացում կազմել ամեն մի ժողովրդի ֆաղափաթության ու զարգացած լինելու մակարդակի մասին: Նա փաստաբանով է նշում, որ մենք չունենք մեր լեզվի նախագրային շրջանի քառարաններ, որոնք մի կողմից կհարստացնեն մեր քառագանձը, մյուս կողմից ցույց կտաին մեր ազգի զարգացման ընթացքը: Նա գրում է. «Եթե հնարավոր լիներ հայոց լեզվի այնպիսի մի բազմաբառային քառարան կազմել, որի յուրաքանչյուր հատորը պարունակելիս լիներ յուրաքանչյուր դարում լեզվի մեջ գործածված բոլոր բառերը, սկսած Քրիստոսից առաջ 8-րդ դարից մինչև մեր օրերը, այդ 27 հատորները միմյանց հետ համեմատելիս մենք կկարողանայինք ճշգրիտ գաղափար կազմել, թե որ դարում ազգը ինչ բանում ինչ առաջադիմություն կամ հետադիմություն է արել և որ դարում որ ազգի ազդեցության է ենթարկվել... Բայց այդպիսի քառարան Քր. հետո՝ ունենալ չենք կարող»²⁴: Այնուհետև նա ավելացնում է, որ 5-րդ դարից հետո կարելի է յուրաքանչյուր դարի համար քառարաններ կազմել և դրանց միջոցով ուսումնասիրել ազգի ֆաղափաթությունը և կրած ազդեցություններն ընթացքը: Ահա թե ինչու ինքը ձեռնամուխ եղավ այդ դժվարին ու ազգամկեր գործին:

Մինչև իր ֆաղափաթորը կազմելը, Մալխասյանցը քառարանագրության փորձ արդեն ուներ. դեռևս Թիֆլիսում աշխատելու տարիներին նա մասնակցում էր ուսու-հայերեն իրավաբանական առձեռն քառարանի կազմության աշխատանքներին. Տիգրան Հովհաննիսյանի, Մանուկ Աբեղյանի և Արշակ Կուսիկյանի հետ այդ քառարանը կազմվում և հրատարակվում է 1919 թ. Թիֆլիսում «Հայփաստ» հրատարակչության կողմից:

1919 թ. երբ Հայաստանի առաջին անկախ Հանրապետությունում օրվա խնդիր էր դարձել բոլոր պետական հիմնարկների ազգայնացումը և գործավարությունների հայեբնացումը, առաջացել էր ինչպես թարգմանական, այնպես էլ քառարանական քառարաններ կազմելու խիստ անհրաժեշտություն, և այս ուղղությամբ քավական աշխատանքներ ծավալվեցին: Դրա առաջնելը հիշյալ քառարանն էր, որին հետևեցին ռազմական, բժշկական, շինարարական,

²⁴ Ստեփան Սարգսի Մալխասյանց (Բիբլիոգրաֆիա), Ներածականը՝ դոկտ. պրոֆ. էդ. Աղայանի, Երևան, ԳԱ հրատ., 1982, էջ 15:

հրկաթուղային, տնտեսագիտական և այլ մասնագիտական բառարաններ, որոնց մի մասի կազմությամբ մասնակցել կամ խմբագրել է Ստ. Մալխասյանցը:

Ճիշտ է, մինչև Մալխասյանցի բառարանը հայ բառարանագրությունը գրեթե բոլոր տեսակի բառարանների հարուստ փորձ ուներ՝ «Նոր Հայկազյան», «Առնետ», Հր. Անառյանի *Արմատական, Գավառական, Անձնանուններ*, Ջախջախյանի, Նորայր Բյուզանդացու *Թարգմանական բառարաններ* և էլի ուրիշ շատ բառարաններ կային. բայց այդ եղածները ընդգրկուն չէին և ամփոփում էին լայնքների մի շրջանի բառապաշարը: Օրինակ, «Նոր Հայկազյան» և Փեշումալյանի բառարանը ընդգրկում են միայն գրաբարի բառապաշարը, իսկ միջին հայերենի և աշխարհաբարի բառապաշարը ներկայացնող բառարաններ չկային: Այս տեսակետից Մալխասյանցի բառարանն իր տեսակի մեջ առաջինն էր, որն ընդգրկում է գրաբարի, միջին հայերենի, նոր գրական լեզվի (իր արևելահայ ու արևմտահայ տարբերակներով), հին և նոր փոխառյալ, ինչպես նաև բարբառային բառերը: Եղած բառարանների նյութերին Մալխասյանցն ավելացրել է նաև նոր և նորագույն մատենագրության բառերը: Այսպիսով, հավաքելով հայերենի 1500 տարվա բառապաշարը՝ մեր մատենագրության սկզբից մինչև 1940-ական թվականները, Մալխասյանցը կազմեց 2380 տպագիր, եռասյուն էջերից բաղկացած ֆառահատոր բացատրական մի բառարան (520 տպագիր մամուլ), որը պարունակում է հայոց լեզվի բոլոր շրջանների, նաև բառարանագրված բարբառների թվով 120 հազար բառահոդված և դարձվածային միավոր:

Մալխասյանցն իր բառարանը կարևորում է հատկապես երկու տեսակետից.

1. «Գործնականում նա ամեն մի գործածողի միջոց է տալիս գտնելու իրեն հետաքրքրող բառը և ծանոթանալու նրա նշանակությանը՝ մանրամասնորեն: Այս կողմից ներկա բառարանը պետք է փոխարինե բոլոր լույս տեսած հայերեն բառարանները միասին վերցրած և ավելի լայն չափով ու մանրամասնորեն»²⁵:

2. «Քանի որ լեզուն մտքի արտահայտիչն է բառերի միջոցով, ուստի հայերեն լեզվի բառազանձի միատեղ հավաքումը բովանդակում է այն բոլոր մտքերը, գաղափարները, գործողությունները, առարկաները, որոնցով ապրել է հայ մարդը, կամ որոնք մատչելի են եղել նրան ավելի քան 1500-ամյա ժամանակաշրջանում, ուրեմն տալիս են ընդհանուր գաղափար նրա կուլտուրական, տնտեսական, բարոյական և այլ զարգացման»²⁶:

Ինչպես երևում է, Մալխասյանցն ավելի կարևոր է համարում իր բառարանի բանասիրական արժեքը:

Մալխասյանցի բառարանում մանրամասնորեն նշված են ընդգրկված 120 հազար բառերի նշանակությունները. բացատրված են դրանց իմաստները, բերված կամ իր կողմից կազմված են համապատասխան օրինակներ, նշված են նաև թառագոսագործման ոճերը, ըստ հնարավորին տրված է որոշ բառերի ծագումը, որի համար հիմք է հանդիսացել Անառյանի «Արմատական», իսկ բարբառային բառերն ու դարձվածները բացատրելիս նա օգտագործել է Սահակ վարդապետ Ամատունու «Հայոց բառ ու քան» և Անառյանի «Գավառական բառարանը»:

Բառերի բացատրությունից հետո Մալխասյանցը բերում է նաև նրանց հոմանիշները, եթե բառն ունի հակահիշներ՝ նաև դրանք: Բառարանի արժանիքներից մեկն էլ այն է, որ բառի տարբեր իմաստները տրվում են ժամանակագրական կարգով՝ տալով նախ հին, ապա՝ նոր իմաստները:


²⁵ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հտ. 1, էջ Է, Երևան, 1944:

²⁶ Նույն տեղում::

Բառարանի արժեքն ավելի է բարձրանում, երբ ամեն բանի բերականական նշումներից ու օրինակներից հետո բերվում են տվյալ գլխաբառով կազմված բառակապակցությունները և հատկապես ժողովրդական թևավոր խոսքերն ու դարձվածները. սա բառարանի համար մեծ հարստություն է: Ահա այսպիսին է բառարանի ընդգրկումը: Երկար տարիների տվեալն աշխատանքով ստեղծված այս բառարանը լույս տեսավ Մեծ հայրենականի տարիներին (1944-1945 թթ.) և արժանացավ Խորհրդային Միության Պետական մրցանակի: Երկրորդ տպագրությունը կայացավ Բեյրութում 1955-56 (լուսատիպ):

Մայիսսյանցն իրավամբ իր գործը համարել է մի նոր լիակատար բառարանի սկիզբը: Այդպես էլ եղավ. ինչպես «Նոր Հայկազյան» և եղած մյուս բառարանները հիմք են հանդիսացել Մայիսսյանցի ֆառահատոր բացատրականի համար, այնպես էլ այս բառարանը հիմք հանդիսացավ իրենից հետո կազմվող ու հրատարակվող բառարանների համար ինչպես ԳԱ Հր. Անադյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած ֆառահատորի (սրա լրացուցիչ՝ հինգերորդ հատորը ընթացքի մեջ է), այնպես էլ ակադեմիկոս Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի», որը մինչև այժմ եղածներից ամենահարուստն է. այն պարունակում է 135.600 բառ և 11.000 դարձվածային միավոր:

Հայ բանասիրության պատմության մեջ իր գիտական քեղմնավոր գործունեությամբ Ատ. Մայիսսյանցը կմնա իբրև հայագիտության անխոնջ մշակ ու ժողովրդի հոգևոր մշակույթի մեծ երախտավոր:



ԳՐԱԿԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

(«Պօղոս Արզումանեան» հիմնադրամը)

Այսօր դարավերջ է: Դժուար է վերլիշել հեռավոր քաղաքներից: Իսկ ահա Տիկին Սիրանուշ Արզումանեան-Մեծատուրեանի համար յիշողութիւնը ապրած դժուարին կեանքի անբաժան ընկերն է: Վերջին տարիներին աւելի յանախ է մա իր ամուսնու՝ Արմէն Մեծատուրեանի հետ գալիս սիրելի դարձած Պուէնոս Այրէսի հին, անշուք մասնակցիստ եւ յիշում հեռավոր, արեւոտ այն օրը, երբ հղբօր հետ, որք, անօգնական մանուկներ, առաջին անգամ ոտք դրեցին հիւրընկալ Ամերիկայի հարաւի այս ափը: Եւ երբ եղբայրը մահացաւ 1979-ին, քոյրն առանձին խորութեամբ զգաց արտաքինից արդէն անհրապոյր մահացողի դժոխական ուժը: Ինչո՞ւ... Որովհետեւ այս աշխարհում տարաբախտ մարդկանց փրկութեան կայան է պէտք, ինչ իրենց համար դաժաւ Պայրէսի մտահանգիստը: «Բարութեան շողը արդէն փրկութիւն է: Պէտք է կայան լինել, փրկութեան կայան», յիշում էր եղբոր՝ Պօղոս Արզումանեանի խօսքերը:

Եւ եղան: Մարդու, ժողովրդի՝ երկրի՝ ու մասն անհատութեան:

... Դեկտեմբերի տապը այս քաղաքում մարդկանց նետում է սրնարաններ: «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» վարժարանի երկամիայ տնօրէն Պետրոս Հանեանի հետ մեք էլ յայտնում ենք Արմենիա փողոցից ոչ այնքան հեռու, կանաչների մէջ բաղուած սրնարանում, ուր շատ հայերի կարելի է հանդիպել: Մի փոքր անց մեզ մօտենում է պարզ հագնուած մէկը եւ անբռնաբար քաղաքավարութեամբ ներկայանում՝ Արմէն: Արեւելահայ խօսքս եւ առօրեանութիւնս սրում են նրա ուշադրութիւնը անձիս վրայ:

- Պետրոս, ըլլա՞յ թէ Հայաստանէն եկած ըլլայ բարեկամդ: Մանօթացո՞ւր, խնդրեմ:

Անդանի շուրջ ծաւալուող գրոյցից ինքս ինձ անմիջապէս պարզում եմ, որ գրուցակիցս նշանաւոր Արմէն Մեծատուրեանն է, որի մասին Երեւանի բարձր աստիճաններում խօսում էին ընդհանուր յարգանքով. ազգային բարեդար, արգենտինեան հայ գաղութի երեւելի մարդկանցից մէկը, որը, որքան թոյլ է տալիս նախնական տպաւորութիւնս, ի տարբերութիւն շատերի, հայերէնին կատարելապէս է տիրապետում, չի ընդգծում իր դիրքը, նախընտրում է պարզ շփումները: Լսել էի, որ յագեցած աշխատանքային առօրեայ ունի: Ի՞նչ մեղքս բացեմ, պատկերացնում էի նրան փողկապով, «կոնկուած», բռնորդ հատ-հատ ընտրող, ծանրութեթեւ անող: Աւելի՛ն, չէի էլ եամարձակուել ծրագրել նրա հետ հանդիպում, ժամանակ չի գտնի...

- Պետրոս, պարոնը դպրոց եկե՞ր է:

Հարցը, հաւանաբար, անակնկալ էր բարեկամիս՝ Պետրոս Հանեանի համար: Ես էլ, ի՞նչ թաքցեմ, սկզբում այնքան էլ լաւ չհասկացայ ակնարկը:

- Ձե՞ր դպրոցի մասին է խոսքը,- ինքս էլ իմ հերթին հարցով խնճեցի Պետրոսին, քանի որ նա քաջ գիտեր իմ շփումների, այցելութիւնների շրջանակը:

- Ո՛չ, Սուրէ՛ն,- ասաց անօրէնը եւ փոքր-ինչ յապաղումով աւելացրեց,- բանն այն է, որ Պուէնոս Այրէսի մէջ տեսակ մը դպրոց կայ, որ հայկական է, սակայն միայն տեղացիներ կը սարվին հոն: Եւ դուք հոն չ'ես եղած:

- Այսի՞նք:

Պատասխանի փոխարէն Պետրոսն արագ կողմնորոշուողի հոգեբանութեամբ շրջուեց դէպի Արմէն Մեծատուրեանը:

- Դուք ե՞րբ ի վիճակի կը լինէ՛ք: Կը կարծեմ, ուշանալն անկարելի է այլեւս, հայրենիքէն եկած մեր հիւրին ժամանակը սուղ է: Երկու թէ երեք օրէն պիտի վերադառնայ:

- Սա պահուստ արեւստուորը կառքս կը շտկէ: Կէս ժամ վերջ պատրաստ կը լինի: Այն տոնն ես մեկնեմ, քառասուն վայրկեան վերջ հոս կ'ըլլամ: Հինգ իմ կառքովս ալ կ'երթանք: Յարմա՞ր է:

Ասելն ու սեղանից վեր կենալը մէկ եղաւ:

Հակառակ իմ նկատելի անհանգստութեան (որոշ պայմանաւորութիւններ ունէի, որոնց կարգադրումն իր վրայ վերցրեց Պետրոս Հանեանը), սպասումի ժամանակն աննկատ անցաւ, քանի որ բարեկամս իր հանդարտաբարոյ բնաւորութեամբ այդ քառասուն րոպէների ընթացքում էապէս մախապատրաստեց ինձ՝ պատմելով Պուէնոս Այրէսի հայ-արգենտինեան դպրոցի մասին:

Այն հիմնադրուել է ուղիղ երեսուն տարի առաջ, 1968 թուականին, երբեանկալիշատակ Պօղոս Արզումանեանի նիւթական ջանքերով, որ մինչ այդ կեանքի էր կոչել քաղաքի կենտրոնում վեր խոյացող Ապրիլեան նահատակների յուշարձանը՝ արգենտինահայութեան ազգային-քաղաքական համախմբման խորհրդակցիչը: Երկու մտայնացումներն էլ ինքնատիպ էին, յուշարձանը արթուն յիշողութիւն էր, նահատակուած ծնողների, Արեւմտեան Հայաստանի ոգեկոչութեան գտնուած առարկայացում, իսկ մախկրթարանը կոչուած էր դառնալու տարագիր հայութեան երախտագիտութեան արտայայտութիւնը՝ Արգենտինա երկրին եւ ժողովրդին, որ պատսպարել, լիարիւն կեանքի պայմաններ է ստեղծել տասնեակ հազարաւոր խնկանքների համար, որոնց մէջ էին եւ իրենք՝ ֆոյր եւ եղբայր, որոնց մէջ էր, բնականաբար, եւ Արմէն Մեծատուրեանը: Տեղական պատկան իշխանութիւնները շնորհակալութեամբ գնահատեցին նուիրաբերումը եւ դպրոցը կոչեցին «Հայ-արգենտինեան»: Այն այժմ Պուէնոս Այրէսի հանրակրթական բարի համարում ձեռք բերած ուսումնական հաստատութիւններից է:

Պետրոս Հանեանը պատմում է, որ դպրոցի նկատմամբ հիմնադիրների ուշադրութիւնը տասնեակ տարիների մէջ չնուազեց, ընդհակառակը, զօրացաւ: Եւ ինքս դա տեսնելու հնարաւորութիւնը կ'ունենամ: Նախ, Մեծատուրեան ամուսինների ճշդեցին ընտանեկան աւանդոյթի ուժ ձեռք բերած քարեգործութեան իրաւական կարգավիճակը՝ հիմնելով «Պօղոս Արզումանեան» հիմնադրամը՝ յիշատակի յանրժաջման գրաւակներ: Այնուհետեւ դպրոցում ստեղծեցին «Խաչիկ Արզումանեան» գրադարանը: Իսկ 1993-ի Յունիսին, հայրենիքի անկախացումից յետոյ, բացեցին շէնդ, ընդարձակ մարզասրահ, որ կոչեցին մէկ տարի առաջ իրենց այցելած եւ նոր շինութեան հիմնաքարը դրած Հայաստանի Հանրապետութեան առաջին Նախագահի՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի անունով: Հիմնադրամը շարունակաբար հոգում է դպրոցի հերթին յարգարման եւ նորոգման հետ կապուած ծախսերը:

Անկեղծ ասած, ես, որ մախապէս լսել էի դպրոցի մասին, այն աւելի շատ դիտում էի յարգանքի պարզ մի վկայութիւն, ինչպիսին կարելի է տեսնել աշխարհի՝

շատ երկրներում, այդ թույլ՝ նաև Հայաստանում: Իրականությունը վեր էր սպասածիցս: Իրականության մէջ երբ ուտ դրեցի նախասրահ, ես դպրոցը չէ, որ տեսայ, այլ՝ մարմնաւորուած անմնացորդ նուիրումը: Պատին հսկայական հայաստանեան համայնապատկերն է՝ ընդհուգում Երարատի եւ Խոր Վիրապի տեսարաններին: Դպրոցի արգենտինացի տնօրնուհի Մագդալենա Դոս Սանթոսը պատմում է, թէ ինչ յիշարժան օրեր են իրենց եւ աշակերտութեան համար Մայիս 28-ը, Ապրիլ 24-ը, Սեպտեմբեր 21-ը կամ մշակոյթի ամիսը, որոնք շուրջ եւ աւանդաբար նշում են իրենց հայ համերկրացիների ներկայութեամբ: Նա ասում է, որ եթէ ժամանակ ունենայինք եւ լսէինք դպրոցական երգչախմբի հայկական կատարումները՝ «Էրեբունի-Նրեւան», «Կենաց երգ», «Հայեր, միացէ՛ք», չէինք հաւատա, որ հայեր չեն այդ աշակերտները: Հայ չկայ, ճի՛շդ է, այստեղ, բայց հայի տեսանկի շուշ կայ: Այստեղ թեւծում է Պօղոս Արզումանեանի իրականացած երգը...

Անհանգիստ մարդ է Արմէն Մեծատուրեանը: Երբ ես դպրոցում դա նկատեցի, Պետրոս Հանեանը փորձեց տալ իր բացատրութիւնը.

- Իսկ այլ կերպ հնարաւոր է: Ինքդ ապա նայիր, օր չկայ, որ նոր նախաձեռնութիւն մը, նոր խիզախ մտայղացում մը կերպով մը ներսէն անհանգիստ չընէ սա մարդը: Ա՛յ, այժմ այ, երբ այլեւս հայրենիքը անկախ դարձած է, սա վարժարանին անունը վճռած է վերակոչելու «Հայաստանի Հանրապետութիւն»: Ինք այդ առիթովը փաստաթղթերը կը պատրաստէ: Եւ գիտե՛ս՝ ինչո՞ւ:

Գիտե՛մ: Այդ մէկը, Պետրո՛ս սիրելի, գոնէ գիտեմ:

1993 թուականի Սեպտեմբերին «Պօղոս Արզումանեան» հիմնադրամը հանդէս է գալիս նոր նախաձեռնութեամբ, որը, որքան մեզ յայտնի է, դեռ «նմանակը» չուցի, երկրորդում է: Տէր եւ Տիկին Մեծատուրեանները հաստատում են նոր եայ-արգենտինեան դպրոց, այս անգամ արդէն՝ Նրեւանում: Այստեղից էլ ծագում է վարժարանների վերանուանակոչութեան խնդիրը. Նրեւանինը՝ «Արգենտինայի Հանրապետութեան», Պուէնոս Այրեսինը՝ «Հայաստանի Հանրապետութեան»: Երկու այս դպրոցները մեր ազգային բարեբարների փայփայած, սիրասուն գաւակներն են, իւրատեսակ յուսալի կամուրջ երկու բարեկամ երկրների միջեւ, հիմնադրամի ազնիւ բազում գործերից ամէնից նուիրականը, քանի որ կապում է ոչ միայն երկրները, այլեւ, եւ սա առաջին հերթին պէտք է շեշտել, հարիւր հազարի հասնող արգենտինեան համայնքը՝ մայր հայրենիքին:

- Վարժարանները ազգային լինելութեան՝ կրկնի վրայ բաց դռներն են, վերադարձին, արդէն կառքի մէջ, ասես ի միջի այլոց, ընդգծեց Արմէն Մեծատուրեանը եւ լռեց՝ դեկն աւելի ամուր սեղմելով պարզուած ափերի մէջ:

Ձեմ կարող ասել, թէ այդ լուսիւնը ինչո՞վ էր պայմանաւորուած. Պուէնոս Այրեսի փողոցներում երթեւեկութեան կուտակումներով, թէ՛ կնոջ եւ իր ծնողների անհնարին երազին նմանօրինակ լուծում տալու բաւարարութեամբ, որն արտաճնապէս չի երեւում, բայց որը սերունդներ է կապում: Միայն կարող եմ ասել, որ այդ լուսիւնը ճշդով չէր: Լուսեան մէջ պատմութիւն կար, լուսեան մէջ յուշ կար:

Ազգային մեր այս երկու բարեբարների մասին ինչ էլ խօսելու լինես, վարժարանային հոգը կամ ճօթը առաջնայինն է լինելու: Սակայն դա չի նշանակում, թէ մեծընթաց ուրիշ քայլեր արուած չեն: Նրեւի մեծ «հասցենք» միայն թուարկել:

Ութսունական թուականները «Պօղոս Արզումանեան» հիմնադրամի ինքնահաստատման տարիներն էին, բայց արդէն հայաստանեան երկրաշարժը

գորաշարժի և ստուգութեան ենթարկեց նրա կարողութիւնների և սրտի ծայնի համամասնութիւնը: Աղետահարներին՝ օժանդակութիւն, աւերած Հիւսիսային Հայաստանին՝ վերակառուցման իրատես ծրագիր, ահա՛ հիմնադրամի բերած շօշափելի աւանդը, որը նա վեր դասեց ֆաղափական այլազան նկատառումներից՝ շեշտադրելով հայրենի ժողովրդին ծառայելու, գորավիզ կանգնելու ազնի շանը, ինչով նաև օրինակ հանդիսացաւ դեռևս տառաժնոյսների մէջ դեգերող որոշ հայ մեծատունների համար:

Հայաստանի անկախացումից յետոյ Արմէն Մեծատուրեանը իր ելմանութեան (արեւմտահայերէնի՛ն բնորոշ նշանակութեամբ) բարեգործական մեծածաւալ և բազմաճիւղ մշակութիւնը գլխաւորապէս կապեց Հայաստանի կառավարութեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերի հետ: Նախ, Պաւլոս Արեւի կենտրոնի Դիագնոզ Զորքէի իր շէնքից, ի հա՛րկէ, պատշաճ նորոգումից յետոյ, տրամադրեց հրաշալի յարկարածին Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան համար:

- Գիտե՞ս, թէ սիրտս ինչպէս կ'ուռի, երբ ամէն առտու կու գամ աշխատանքի և կը տեսնեմ Հայաստանի գերբն ու ծածանող գրօշը մայրաքաղաքիս ամէնէն քանուկ պողոտաներէն մէկուն վրայ: Մենք այստեղ Հայաստանի մէջն ենք՝ Հայաստանէն ամենաեռուտը կղզեակին մէջ քանուած...

Սրանք Արմէն Մեծատուրեանի բարձրաձայն խոհերն են: Բայց, ի հա՛րկէ, ոչ միայն նրանք: Մարի Մանուկեան վարժարանի հայերէնի լաւագոյն ուսուցչուհիներից Մարգրիտ Քոչակն աւելի վաղ պատմում էր, թէ ինչպէս երկու աշակերտներ՝ Լուիսն ու Դիէգոն, որոնց հայերէնը քաւական թոյլ էր, 1993-ի վերջաւորութեան ամբողջ օրով փախել էին դասերից (ի դէպ, էական տարբերութիւն կայ մեր և նրանց մօտ «դասից փախչելու» հասկացութիւններում, նրանց համար դա քացառիկ դէպք է) և «աննպատակ» շրջել դեսպանատան մերձակայքում: Ուսուցիչները չգիտէին, անհանգիստ էին: Մինչդեռ դեռահասները այդտեղ, Դիագնոզ Զորքէի վրայ, հայերէնի ու հայկականի ամէնից գլխաւոր դասն էին իւրացնում: Դրանից յետոյ նրանք կտրուկ առաջադիմեցին. նրանց մէջ ինչ-որ մի բան էպէս փոխուել էր: Ուսուցիչների գնահատականը միանշանակ էր՝ «Ասոր համար մենք պարտական ենք «Պօղոս Արզումանեան» հաստատութեան: Ասիկա դաս մըն էր բոլորիս համար: Մենք ալ փոխուած էինք»:

Իսկ «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» վարժարանի ուսուցչուհիներից Սօսէն, խոհուն ժպիտն աչքերին, յուշում է հաստատութեան նշանախօսը՝ «Հայաստանի՛ հետ, Հայաստանի՛ համար» և անկացնում.

- Պարո՛ն, տարբեր ենք մենք ես և աւաճում, տարբեր ենք մեր հայեացքներով, տառապանքով, անճանական նկարագիրներով, սիրո՛ւլ անգամ, բայց սա նշանախօսին տակ բոլորս կը մեկտեղուենք: Ա՛յ թէ ո՛րն է սա մարդկանց գործօն հայրենասիրութիւնը:

Այո՛, հայրենասիրութիւն, բայց ոչ նեղ, այլ լայն արժեքափոլ: Ազգային բարերար Արմէն Մեծատուրեանը չմոռացաւ, որ այդ ամէնի հետ մնում է Արգենտինայի Հանրապետութեան ֆաղափացի, ինչի վկայութեանը հղաւ նրանի դպրոցի առջև արգենտինացիների ազատութեան խորհրդանշիչ դարձած Խոսէ դէ Սան Մարթիի քրոնզէ դիմաճանդակի (ինդիմակ՝ ֆանդակագործ Ռուրէն Բաթոնի) գետնդրումը 1993-ի Հոկտեմբեր ամսին: Այդ օրերին տեղի թերթերից մէկը գրեց. «Նիւթական կարելոր ներդրումով կատարուած այս նախաձեռնութիւնը անշալտան նիւթական տարողութիւն չունի, անշուշտ, որքան՝ անոր բարձրական ու խորհրդանշական արժէքը, իբրեւ Հայաստանի և Արժանքին բարեկամութեան ամրապնդում ու սերտակցութիւն»: Իսկ ահա՛ Արգենտինայում Հայաստանի

Հանրապետության երիտասարդ դեսպան, պատմաբան Վահան Տեր-Ղևոնդեանը արժանի բացման ուռթի մասնաւորապէս ընդգծեց. «Սա առաջին դէպքն է, երբ Հայաստանում տեղադրուում է յուշարձան՝ ի պատիւ մի այլ երկրի ազգային եկրոսի: Եւ պատահական չէ, որ դա հենց երեք ժողովուրդների ազատարար Սան Մարքինն է»:

Արդիւնաւէտ եղան 1996-ի Մայիսին, այն ժամանակ դեռեւս ԼՂՀ Նախագահ Ռոբերտ Գոշարեանի հետ Արմէն Մեծատուրեանի շփումները, որոնց շնորհիւ պարզ դարձան հենց նոր խաղաղ հուն մտած Ղարաբաղի հոգսերը, որոնք թիթեւացնելու նպատակով «Պօղոս Արզումանեան» հիմնադրամը, ի նպաստ տնտեսական եւ շինարարական խիզախ ծրագրերի, մեծագումար յատկացումներ արեց: Երբ նա համակարգիչներով գինում էր Երեւանի «Արգենտինայի Հանրապետության» իր հովանաւորեալ դպրոցը, նախապէս արդէն համակարգչային սարքեր էր նուիրել Ղարաբաղեան մէկ դպրոցի:

Արգենտինահայ համայնքի պատույ խնդիրը դարձաւ պատերազմից աւերուած Մարտակերտի շրջանի Վաղուհաս գիւղի տները վերականգնման հսկայածախս ծրագիրը, որը ձեւաւորուեց Հիմնադրամի ծիրի մէջ, ինչը գլուխ բերելու գործում մեծ էր Արմէն Մեծատուրեանի անձնական նախաձեռնութիւնը: Թերեւս դրա համար նոյն 1996 թուականին «Սարդարապատ» տեղական թերթի աւանդական մրցոյթում նա հուշակուեց համայնքի տարուայ մարդ:

1996 թուականի Օգոստոսին հովուապետական այցով Արգենտինա էր մեկնել Գարեգին Ա Ամինեյան Հայոց Կաթողիկոսը, որը հրաշալի գիտէր հիմնադրամն ու նրա նախանձախնդիրներին: Բանն այն է, որ դեռ տասնամեակներ առաջ, ընդառաջելով Հայոց գոյգ Կաթողիկոսների՝ Լիբանանի քաղաքական տագնապից տարիներ շարունակ աղէտահար մնացած հայ գաղութին սատար կանգնելու յորդորին, «Պօղոս Արզումանեան» հիմնադրամը կատարել էր յիսուն հազար դոլարի նուիրատուութիւն ժողովրդական լայն խաւերին, նրանց առօրեայ կարիքներին՝ հենց Կիլիկիայի կաթողիկոսութեան միջոցով, ընդ որում՝ վերջին յատկացումը, խան հազար դոլար, կատարել էր 1988-ին, դարձեալ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետի միջոցով: Ի դէպ, սփռուած հայութեան շրջանում մշակութային նշանակալի դերակատարութիւն ունի «Պօղոս Արզումանեան» հիմնադրամը, որի հովանաւորչական ջանքերով հրատարակուել են Վենետիկի Միխիթրեան Միաբանութեան անդամների, ինչպէս նաեւ Լոս Անճելըսի իայ գրողների մի շարք հայագիտական, աստուածաբանական եւ գեղարուեստական աշխատութիւնները:

Վերադառնալով, սակայն, Վեհափառ Հայրապետի այցին, որի ժամանակ Մեծատուրեան ամուսինները հանդէս եկան նոր, հրաշալի նախաձեռնութեամբ, «Պօղոս Արզումանեան» հիմնադրամն ստանձնեց Հայաստանի մէջ Աշտարակի Կարքի գիւղի Ս. Աստուածածին եկեղեցին վերակառուելու լայնածաւալ աշխատանքը՝ ի նշանաւորումն Հայց. եկեղեցւոյ հիմնադրութեան փառահեղ 1700-ամեակի: Ընդ որում ծրագրուած է եկեղեցու դիմացի ընդարձակ տարածութիւնը, շուրջ 5000 քառակուսի մետր, վերածել հանրային հրապարակի՝ անհրաժեշտ բոլոր յարդարում-կանաչապատումներով հանդերձ, իսկ նախկին գիւղական մշակութային ընթերցասրահը դարձնել առաջնորդարան եւ նրան կից բացել նոր գրադարան: Այսպիսով, մենք կ'ունենանք ոչ միայն վերակառուցուած պատմական եկեղեցի՝ համաձայն եւ հարազատ ճարտարապետական նախնական մտադրացումին, այլեւ Կարքին կը քարեմորոգուի՝ ունենալով Վահան Թէքեանի անուան դպրոցին կից պուրակ, հրապարակ եւ մշակութային օջախ:

Իրենց կատարած յաջորդական բարերարություններով հայրենիքին սատար կածեցնելու, «Հայաստան» հիմնադրամին էապես աջակցելու, ծառայելու համար Տեր Ե. Տիկին Մեծատուրեանցները արժանացել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի «*Բարերար անդամներ*» պատվոգրին, որը կախում է «Պօղոս Արզումանեան» հիմնարկության գյուսեցնեակի աչքի ընկնող տեղում:

Նեցց նման մարդկանց շնորհիւ է, որ խտանում են արգենտինահայ ազգային գործիչների շարքերը, մարդիկ, որոնց համար հայրենիքից վեհ գաղափար կամ նուիրում չկայ: Հրաշալի էր արտայայտուել Հայոց Հայրապետը 1996-ի Օգոստոս 7-ին հիմնարկության պատույն անկերոյթին: Յուզումով ոգեկոչելով Պօղոս Արզումանեանի յիշատակը՝ նա իր խօսքն ուղղել էր նրա գործը շարունակող նուիրեալներին, «Ազգին ու հայրենիքին, Ա. Էջմիածնին Եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին մատուցած իրենց ծառայութիւնների համար Տեր Ե. Տիկին Արզումանեան-Մեծատուրեան արժանացած են «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» Եւ «Կիլիկիեան Ասպետ» բարձրագոյն շքանշաններուն: Ի՞նչ ընեմ, հարազատե՛րս, երբորդ Եւ աւելի բարձր շքանշան չկայ: Սրբալոյս Միստոնի կաթսայի այս քիւրեղապակեայ վերարտադրութիւնը կը ձգեմք իբրեւ մնայուն մեր օրհնութիւնը»:

Մեզ կը մնայ փոքրիկ յաւելում անել՝ «Եւ ժողովրդի մնայուն սերը որպէս շնորհակալութիւն»:

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Բանասիրական գիտութիւնների դոկտոր

ՄԱՁԼՈՒՄ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՔՈՅՐԵՐԸ

Անցեալ տարի նորից ուխտաւորներ եկան Ստամբուլից: Կարպիս Ուղուրլեանի ղեկավարած խմբի մէջ տարեցները գերակշռում էին այս անգամ: Եթէ Պարգեւ Ճիմէզեանին Հայաստանը հետադարձում էր տնտեսութեան զարգացման իրական հեռանկարով, եւ տրամաբանական էր թուում յետպատերազմեան Գերմանիայի հետ տարուող զուգահեռը, քանի որ նա նգնաժամից դուրս գալու ելքերի եւրոպական փորձն էր շեշտադրում, պատրաստ բերելու նաեւ անձնական փորձառութիւնն ու նպաստը, ապա դաշնակեանութեան վալանթին Մազլումը կարծես հասել էր երազի ու կեանքի զգայական խաչմերուկին, որտեղ երազը արուեստի ու մեծ սպասումի մարմնաւորումն էր, իսկ կեանքը՝ իրական Հայաստանը, ինչի ընկալումը դեռ երազից ամբողջապէս չի պոկուել:

Այսօր դիմեցէք ցանկացած պոլսահայի՝ Մազլումների մասին հարցումով:

- Ֆիմն կը հարցնէ՞ք թէ՞ փոքր փոքր՝ Վալանթին:

Անշուշտ նաեւ իմն է: Ճանաչելը քիչ է, գնահատում են: Մտաւորական շրջանակներում անմիջապէս կը փորձեն նշել, թէ իրենցից կամ ծանօթներից քանիսն են մասնագիտական դասեր առել փոքրերից, որոնց արուեստագիտուհի լինելը նշանակում է պահ խամրում է, քանի որ սաների յիշողութեան մէջ արթնանում է նրանց համար առաւել կարեւորագոյնը՝ Մազլում փոքրերը ուսուցչուհիներ են: Իրականութեան մէջ, ի հարկէ, այդպէս չէ, արուեստում խաղացած նրանց դերը աւելի քան էական է եւ դիմորոշ, սակայն պոլսական իրականութիւնը պարզապէս ունի իր միւս, անթափոց երեսակը, եթէ գրագէտ ես, եթէ ծառայում ես ազգային մշակոյթին, անկախ քո ցանկութիւնից, ակամայ արդէն ուսուցիչ ես: Շնորհներդ, գիտելիքներդ, բարոյագէտ աշխարհի քո համակարգը դու պարտաւոր ես փոխանցելու համայնքի նորահաս սերնդին:

Ազգային լինելութեան այլ գաղտնիք չունեն Մազլում փոքրերը: Նրանց մէջ, անտարակոյս, նաեւ իմն են մարդուն, գնահատում են գործն ու նուիրումը եւ, ինչ խօսք, սիրում են ուսուցչին: Վերաբերմունքի այս երեք յատկանշաներից թանկագինը Մազլումների համար եղել է սէրը: Քոյրերից կրտսերը՝ Վալանթինը, որն արդէն մօտեցում է ինքնորոշ տասնամեայ հանգրուանին, վկայում է, որ սէրը գալիս է նաեւ իմն եւ նուիրումին իբրեւ հետեւանք, իբրեւ անձանձիր աշխատանքի, ապա վաստակի դիմաց արդիւնք, իբրեւ հունձք, որին արժանի է մշակը: Այս խօսքերից յուզւում է նա, կերկրուն է դառնում ձայնը, այս ամէնը առաջին հերթին դիտում է հասցեագրուած Ֆիմին, նրան, որ մահացաւ ուղիղ տասը տարի առաջ, 1988-ին, ութսունը բոլորելուց յետոյ: Յուզւում է Վալանթինը, որովհետեւ քոջ մահից միայն ինը տարի անց է կարողանում կատարել նրա մէկ պատուէրը՝ Սուրբ Էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսին յանձնել Ֆիմի աշխատանքը՝ Բրամսի իւղանկարը: Գարեգին Առաջինը յայտնում է իր գոհունակութիւնը, յանձնարարում այն պատկերասրահի ցուցադրութեան համար: «Եթէ միայն Ֆիմին ո՛ղջ ըլլար...»,- մըմնջում են Վալանթինի շուրթերը:



Ստամբուլահայ նորագոյն մշակոյթի պատմութեան մէջ առանձնաշատուկ է Մազլում փոքրերի դերը: Երկու արուեստագէտներ, երանգապնակի գոյները

ամբողջացնող երկու նուիրական դեմքեր՝ Ֆիմի և Վալանթին: Երաժշտութեան և կերպարուեստի, գրականութեան և թարգմանութիւնների մէջ հմտացալով՝ նրանք ստեղծեցին իրենց իւրայատուկ կղզի, հմայի, ներգործութեան իրենց դաշտը:

Ֆիմի Մազլումը ծնունդ է 1807-ին, Վալանթինից մեծ է երկու տարով: Երկուսն էլ մանկութիւնն անցկացրել են Պոլսի Պագր գիւղ արուստանում (ի դէպ, այստեղ է ծնունդ նաեւ «Մարմարա»-ի փառաբանած խմբագիր Ռոպէր Հատտեհեանը, ի հա՛րկէ, նկատելի «ուշացումով», շուրջ երկու տասնամեակ յետոյ): Քոյրերը յաճախել են ծննդավայրի հայկական Պէգազեան վարժարան, գոհ են, անլից՝ երջանիկ իրենց բաժին հասած ուսուցիչներից՝ Յակոբ Օշական (Զինադադարի շրջանից), Պետրոս Ատրուցի, որ յետագային պիտի տեղափոխուէր Կեդրոնական՝ տնօրէնի ևսնգամանքով, Խաննեան, Քիւրթեհեան և ուրիշներ, որոնք որսացել են գեղեցիկ արուեստների նկատմամբ աղջնակների կայծը, մշակել խօսքի, գոյնի և երաժշտութեան ընկալունակութիւն:

Հոգածու ծնողները խորացնում են զաւակների ֆրանսերէնի իմացութիւնը, ինչից յետոյ բացում են դիւթիչ փարիզի կրթական դռները: Ֆիմին յաճախում է «A. B. C.» և Սորբոնի համալսարանական դասընթացներ, ուսանում և երկու տարի աշխատում նկարչուհի Անդրէսի արուեստանոցում: Այդ ընթացքում աւարտում է նաեւ «Իրիկնային արուեստների» իգական վարժարանը: Ստամբուլ վերադարձը նշանաւորում է Համալսարան վալլուն մուտքով, որտեղ մասնագիտանում է ֆրանսիական լեզուագիտութեան, արուեստների, կրօնի և Բիւզանդայի պատմութեան մէջ: Այդ ընթացքում քիչ է նկարում, անլի շատ արտանկարում է՝ գորացնելու ձեռքը, և նետում գրական-խմբագրական ասպարէզ: Երեսնական թուականներից նրա պատմութեան գրքերին, արուեստին վերաբերող հանաչողական թերթի-գրութիւններին և այլազան թարգմանութիւններին կարելի է հանդիպել «Հայ կին», «Նոր լուր», «Մարմարա», համեմատաբար անլի ուշ՝ նաեւ «Ժամանակ» և «Քուլիս» պարբերականներում: Արդիւնաւէտ աշխատակցում է լիբանանահայ «Այգ» օրաթերթին:

Ֆիմի Մազլումի խանդավառագին աշխարհն է գրականութիւնը: Քրոջ անմիջական ջանքերով իննսունական թուականներին առանձին հատորներով լոյս են տեսնում ժամանակին պոլսահայ մամուլի մէջ սփռուած նրա խորհրդածութիւնները կերպարուեստի նշանաւոր գործիչներ Պ. Պիկասոյի, Ա. Թուլուզ-Լօթլէի, Վ. Վան-Գոգի, Մ. Շագալի, Գոյայի մասին «Երանգապակի անմոռանալի վարպետներ» ենթախորագրի ներքոյ, որոնք կերպով մը նաեւ իր ուսուցիչներն էին, ինչպէս նաեւ եւրոպական գրականութեան և պատմութեան սիրելի դարձած դեմքերի մասին յուզիչ, ուսանելի ակնարկները, որոնք երեսուն էին հանում գրական հանաչողութիւն և գեղարուեստական մտածողութեան անուրանալի շնորհ: Կ'ուզեցայիմք մասնաւորել Ա. Էդգար Պոյի, Ա. Դոդէի, Մ. Սքիւարտի, Զ. Ռեկամիէի, Ու. Զերչիլի, արժանական աների և տերերի մասին տրուած յայտնի և անյայտ էջերը, ուսուցիչներին վերաբերող երախտագէտ գրութիւնները: Կրտսեր քոյրը մասնաւոր խնամքով էր վերաբերում Ֆիմիի արձակ բանաստեղծութիւններին և ընտիր թարգմանութիւններին՝ Պ. Բուրժէից, Է. Հեմինգուէյից, Ա. Յվայգից, Վահէ Քաչայից, Եւէլ Դայանից և ուրիշներից: Քրոջ կազմած գրքերից յիշատակենք «Անձր և անցք» (1995), «Նոր քաղաք» թարգմանական հատորը (1994), «Բանախօսութիւններ» անյուսկնոտ խորագրով, սակայն ստեղծագործական ինքնատիպ ձեռագիր բերող հատորը (1955), ուր Ֆիմին երեսուն է գեղարուեստական հայեացքով, մայրենիի և ֆրանսերէնի բարձր տիրապետումով, մշակութային-կրթական ազնիւ շահագրգռութեամբ:

Նպատակասլաց, ընդգրկում էր նաև երիտասարդ Վալանթինի ուսումնառութեան ծրագիրը եւ Ֆրանսիայում, եւ Ստամբուլ վերադարձին: Փարիզում նա աւարտում է *Ecole Normale de Musique*-ի դաշնամուրի բաժինը՝ առաջնորդ ունենալով կատարողական արուեստի այնպիսի փայլուն դեմքեր, ինչպիսիք են Ն. Բուլանժէն, Ժ. Դանդելոն, Լ. Լելիե, Կորթոն եւ այլք: Ընդհանուր զարգացման պահանջը տանում է նրան Սորբոնի համալսարանի գրական դասընթացներին, ինչը օգնում է իրեն գտնելու երաժշտական յոյզերի աշխարհը բառերով վերակազմաւորելու գաղտնիքը, իր իսկ արտայայտութեամբ: Ստամբուլ վերադարձին, 1939 թուականից ի վեր, ինքնահաստատման ճգնումը տանում է նրան համարձակ քայլի: դիմում է արդիւնաւէտ մեծահամերգների: Նշանակալից էր այն ժամանակներում գրեթէ եզակի իր որակի մէջ Ստամբուլի սիմֆոնիկ նուագախմբի հետ տուած համերգը, Միլիեֆոսեանի խմբավարութեամբ, ուր Վալանթին Մազլումը կատարում է Է. Գրիգի դաշնամուրի կոնցերտը: Վաղամեռիկ տաղանդաւոր ցութակահար Նոուարդ Մարկոսեանի հետ մասնակցում է բազմաթիւ նուագահանդէսների: Կատարողական բարձր հնչումով են առանձնանում Վ. Մազլումի տարաբնոյթ համերգները Ստամբուլում թէ Փարիզում: Քչերն են այսօր, ի հա՛րկէ, յիշում յիսունական թուականներին նրա վարած կոնցերտը ռեսիթալները՝ թուրքական ձայնասփիւռով տասը տարի շարունակ, արեւմտեան երաժշտութեան նուիրուած «հինգշաբթիների» մեկնական յայտագրերը, որով հանդէս էր գալիս նոյն շրջանում տեղի հեռուստատեսութեամբ՝ Ստամբուլի նարտարագիտական Համալսարանի պատուէրով: Բարի եւ ամբողջ յիշատակներ է արթնացնում հեռաւոր 1951 թուականի ժնեւի միջազգային մրցանակաբաշխութիւնը, որտեղ հայազգի դաշնակահարուհին իրաւունք է նուաճում հանդէս գալու եզրափակիչում ուժեղ մրցորդների հետ:

Այս ամէնի մասին խօսում են վկայագրերը, գրքերը, մրցանակները, իսկ լինքը ոչինչ չի ասում: Թրբոուն ծայրը չէ այստեղ էականը, պէտք է ջանաս հասու լինել ներաշխարհից եկող կանչին, թէ ինչ նախադրեով է այս ամէնը սիրտը հպարտութեամբ լցնող կենսագրութիւն դարձել: Սա՛ է ապրուած կեանքը: Կեանք, որ շարունակւում է նոր չափումներով՝ ամբողջ մէջ եւ անձանձիր անձնաճանաչութեան եւ կատարածի վերիմաստաւորման, վերաթելւորման անդուլ ճիգի մէջ: Օսմանլիյի վրայ գտնուող իր տանն եմ: Լուռ է, երբ նայում եմ յուշերը ալեկոծող լուսանկարներին, պատկերներին, բոլոր սենեակների պատերից մեր զրոյցին իր ներկայութիւնը պարտադրած Ֆիմիի նկարներին, թերեւս Վալանթինը լուռ չէ, ներքին զրոյցի է բռնուել անցած ժամանակի հետ, զրոյց, որ միայն սկզբում է անուստանելի ինձ, ինչպէս անտես ժամանակը, բայց որ աստիճանաբար մօտենում է, բացում իր ծալքերը, դառնում սիրելի: Մօտենում եմ նրա դաշնամուրին: Փակ է: Ուշադրութիւն եմ դարձնում, փոշին նոր է վերցուած, մաքրամաքուր է, տեսնես՝ ի՛նչ յաճախականութեամբ է այժմ նուագում: Կամ՝ նուագո՛ւմ է:

Այժմ, երբ վաղուց վերադարձել եմ Երեւան, յանախ եմ մտաբերում իմ այցը այդ խելացի ծեր կնոջը: Այն ժամանակ քիչ էր մնում խնդրելի՝ ինչ-որ մի բան նուագելու: Չասացի: Լա՛ւ արեցի, թէ պիտի պնդէի: Չգիտեմ: Օգոստոսեան այդ օրը ինքը բացեց երաժշտական նորագոյն հզօր սարքերի համեմատութեամբ հնատիպ, պարզունակ, բայց դրանով իսկ կրկնակի թանկ ու պահի համար գտնուած նուագարկիչը, եւ է. Գրիգի հանրածանօթ հանդիսաւոր հնչիւնները սենեակում տարածուելին մտերմիկ արտիստութեամբ: Հիմա կարելու չէ, թէ ում կատարումն էր այդ: Չեմ էլ յիշում: Կարելուք արուեստի ներգործութիւնն էր, այն պատրանքը, որին մենք երկուսս էլ այդ պահին լռելիայն տրուեցինք: Ուժի՛, երիտասարդութեան՝

նուագահանդեսն էր դա, որ պիտի յիշեցներ իր երբեմնի փառահանդեսը՝ Միլիենտիսեանի նուագախմբի հետ: Գուցէ այսօր ձեռքի անցկատ դաւանան դողը թոյլ չէր տալու բարձր զգացողութիւնը վերապրելու համար, ինչը ինձ նման մէկը կարող էր եւ չհասկանալ: Այն յարմար միջոցը չէր տիրապետող զգացումի թարգման լինելու ճանապարհին: Ահա թէ ինչու նա իմաստնաբար ընտրում է իր անցեալ ժամանակը՝ նուագարկիչի օգնութեամբ: Նշանակում է, նա եւ ես ընտրում եւ նախընտրում ենք պատրանքը: Եւ ես զգում եմ, առաջին անգամ իմ կեանքում, որ ես պիտեի փորձելով ժամանակի պաճը, ցանկանում եմ ես բերել կորովի հնչիւններ ինչպէս արդար իշխանութիւնը:

Մենք ամէնքս ցանկանում ենք մեր երիտասարդութեան ժամանակը: Վալանթին Մազլումը րացառութիւն չէ:

Ի՜նչ լաւ է, որ ինքը դաշնամուրին չմօտեցաւ:

Իսկ ժամանակի աղօրիքը անողոք «նշդապահութիւն» ունի: Երազի նման է թոյում մեզ սահմանուած ժամանակը՝ սպառնալով կորստեան արահետները վրայ փոշիացնել սահող-անհետացող յուշերը: Այս կենսական զգացողութիւնից էլ ծնունդ է առել Վալանթին Մազլումի «Երազի նման...» ոչ ստուար կազմով գիրքը 1993 թուականին, ուր գետեղուած են պատմութեան «նշդ» նամբորդական-խոհազրական ճօթեր, փարիզեան ուսանողական շրջանի տպաւորութիւններ:

Յիմի եւ Վալանթին Մազլումները նոր երանգ են յաւելում պոլսական նորագոյն մշակույթի պատմութեանը: Նրանք իրենց հարուստ կեանքը վերախմբագրելու կարիքը չունեցան, եթէ-նրի արդարացումների եւ շտկումների չգնացին, ապրեցին այն, ինչ տալիս է Աստուած: Նրանք տուեցին այն, ինչ արարումի երջանկութեան, ներըմբռնումի հետ կարող է աղերսուել: Գեղեցիկի հետ:

Այս ամէնը պարզ մի անուն ունի՝ վաստակ: Իսկ գնահատութիւնը նոր-նոր առաջին ֆայլերն է անում:

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ
Բանասիրական գիտութիւնների դոկտոր



ՄԱՆՆԱԿԱՆ ԹՈՒՆՆԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԹՈՒՆՆԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ԸՆԾԱՐԱՆՈՒՄ

1998 թ. մայիսի 28-ին Գևորգյան Հոգևոր ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության անկախության 80-ամյակին՝ նախագահությամբ Գերաշնորհ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պողոսյանյանի: Ներկա էին նաև միաբաններ Ամբիկյան:

Երգչախմբի կողմից Հայաստանի Հանրապետության հիմնի ու ճեմարանի քայլերգի կատարումից հետո, բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի տեսուչ Հայկազուն Ծ. վարդապետ Նաջարյանը:

Հանդիսության ընթացքում ուսանողները կատարեցին մի շարք հատկանշական երգեր, կարդացին քանադատեղծություններ, քանախոսությամբ հանդես եկավ ճեմարանի դասախոս Կրմ. Ավետիս Հարությունյանը:

1918 թ. մայիսի 28-ի Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծումն ու հիմնադրումը մեծապես կապված է Սարգսրապատի ճակատամարտում հայ ժողովրդի տարած մեծ հաղթանակի հետ: Սարգսրապատի ճակատամարտը հայ ժողովրդին, իր բազմադարյան գոյապայքարի քառուղիներում, ևս մեկ անգամ փրկեց ֆիզիկական ընաջնջման վտանգից, հային հայ պահեց՝ հասցնելով մինչև մեր ժամանակները, մինչև այսօր: Անցած 80 տարիների ընթացքում այս հաղթանակի ոգին մշտապես ուղեկցել է հային: Այսօր, երբ մեր անկախ հանրապետությունում բոլոր պայմանները կան էլ ավելի փառաբանելու հայ ազատատենչ ոգին, Հայաստանի տարրեր վայրերում, սկսած Բաշ-Մալաբանից, Դարբասիիսայից մինչև Երևան ու Սարգսրապատ, մեծ շուքով տոնվում է այդ հաղթանակի 80-ամյակն ու առաջին հանրապետության ստեղծումը:

Նորինդանշական է, որ վերաբացված Գևորգյան ճեմարանի տեսուչ Հայկազուն Ծ. վարդապետ Նաջարյանն իր բացման խոսքում բոլորին հորդորեց իրենց մեջ վառ պահել այն հաղթական ոգին, որը տիրում էր Սարգսրապատում մարտնչող զինվորների սրտերում: Մենք հպարտ ենք, որ 80 տարիներ հետո այդ ամենը հիշելու, արտահայտելու և այսօր մեր իրավունքը պաշտպանելու առիթը մեզ է՝ ընձեռված: Մյուս պահ խորհենք, փորձենք զննհատել այն դասը, որ քաղում ենք անցյալից՝ Սարգսրապատի ճակատամարտից: Այս պայմաններից, որ արված են մեզ այսօր, որքանով ենք կարողանում օգտվել և դրանք օգտագործել ի նպաստ մեր գործերի՝ իբրև ճեմարան, իբրև ապագա հազարակամներ, իբրև Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորներ:

Մենք այսօր ոչ թե փառք ու պատիվ պիտի փնտրենք անցավոր ու ժամանակավոր երևույթների մեջ, այլ, ներշնչված մեր սուրբ հայրերի կեցվածքով, կարողանանք ոգեշնչվել ու օրինակելի սպասավորները լինել մեր Եկեղեցու և ժողովրդի: Կյանքի այն ոսկե շղթան, որ քայքայման վտանգի տակ էր և ամբապնդվեց Սարգսրապատի հերոսամարտով, այսօր մենք ևս շարունակենք, որպեսզի հայ ժողովուրդն իր քրիստոնեական խաղաղ ու ստեղծարար աշխատանքով կարողանա ապրել նաև երբորդ հազարամյակում:

Փակման խոսքով հանդես եկավ Գերաշնորհ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պողոսյանյանը, որը Սարգսրապատի ճակատամարտում տարած հաղթանակն իր կարևորությամբ համեմատեց Ավարայրի հետ: Նա հայ ժողովրդի զավակներին նահատակությունը նկատեց իբրև սուրբ հաղորդություն Զրիստոսի հետ:

ՀԱՄԱՐՁՈՒՄ

Այս տարիի Հայ Առաքելական եկեղեցին Համբարձման տոնը նշեց մայիսի 21-ին: Այն ողջ քրիստոնեական աշխարհը նշում է Ս. Հարության տոնից 40 օր հետո, հինգշաբթի օրը:

Համբարձումը մեր ժողովրդի կողմից առավել սիրված տոներից մեկն է: Հավատի, հույսի ու սիրո հաղթանակի, խնդության ու բերկրանքի տոն է Համբարձումը:

Հայ եկեղեցու Ուսանողական Միությունը այս տարիի Համբարձման տոնին ուխտագնացություն էր կազմակերպել դեպի Օաղկեզմանց ու Սաղմոսավանք:

Ծաղկեզմանքը գտնվում է Արայի լեռան կենտրոնական մասում և ուխտավայր է եղել հնուց ի վեր, որովհետև, համաձայն արևելա-քրիստոնեական տարածված ավանդության հայկական ժողովրդական տարբերակի, այստեղ է թաղված Պալիազոնիայում նահատակված կույս Ս. Վառվառան: Այն մի փոքրիկ քարանձավ է, ուր ուխտավորները զալիս են վառելու իրենց մոմն ու աղոթելու՝ սրտի խոսքն ուղղելու Աստծուն: Քարանձավի քարե ելուստներից անընդ-հատ ջուր է կաթում: Ավանդությունն ասում է, որ դրանք սուրբ կույսի արցունքներն են: Մի այլ ավանդությունն այդ քրին բուժիչ հատկություններ է վերագրում: Դարերից ի վեր այստեղ ուխտի է եկել ժողովուրդը՝ նշելու Համբարձման տոնը: Այս տարի ևս բացառություն չեղավ: Սուրբ Վառվառայի այրը լուսավորվեց ուխտավորների վառած բազմաթիվ մոմերով:

«Տե՛ր Յիսուս Քրիստոս, քո սուրբ վկայիդ՝ Վառվառայի անունով կոչուած այս սուրբ վայրի մէջ քեզի ուխտի եկած՝ ամբողջ սրտով կաղաչեմ...», - այս բառերով ՀԵՈՒՄ-ի անդամները Արայի լեռան բարձունքում առ Ստված աղոթք արեցին:

Այնուհետև ուսանողական խումբը, որի կազմում, բացի ՀԵՈՒՄ-ի անդամներից, ընդգրկված էին ՃԱՆ ԵՊՀ Ստվածաբանության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողները, խառնվեց Հայաստանի տարբեր մարզերից եկած ժողովրդի հետ ու կարճատև գրույցների ընթացքում բարեկամացավ նրանց հետ: Միջօրեին ուխտավոր-ուսանողները Օաղկեզմանքին հրաժեշտ տվեցին եկեղեցական կարճ արարողություն կատարելով, որի ընթացքում երգեցին «Առաւօտ լուսոյ» և օրվան հատուկ «Համբարձաւ Տէրն մեր յերկինս» շարականները, որոնք ընդմիջվեցին ուխտավորների չորս աղոթքներով, որոնք թխեցին երիտասարդ սրտերից: Նախապես կազմված հայտագրի համաձայն ուխտավորները Սաղմոսավանք ժամանեցին ժամը 14.00-ին՝ ճաշելու և տոնելու Համբարձումը ըստ հայկական սովորության: Սաղմոսավանքը գտնվում է Արագածոտն մարզի (Աշտարակի շրջան) Սաղմոսավան գյուղում՝ Ծաղկեզմանքի ձորի հանդիպակաց կողմում: 13-րդ դարի ամենաշքեղ տաճարներից մեկն է Սաղմոսավանքը: Վաճական համալիրում են գտնվում Ս. Սիոն եկեղեցին, գավիթը, գրառուներ, Ս. Աստվածածին եկեղեցին և բազմաթիվ խաչքարեր: Հնագույն է համարվում Ս. Սիոն եկեղեցին, որը կառուցել է իշխան Վաչե Վաչուտյանը 1215 թվականին:

Գուրախություն ուսանողների՝ Սաղմոսավանքում սկսվել էին վերանորոգչական աշխատանքները:

Համբարձման օրը Սաղմոսավանքի շրջակայքում ժողովրդական տոնահամբություն էր: Երևանից ժամանել էին մի քանի ազգագրական խմբակների երեխաներ, մի խումբ մանուկներ մանկապարտեզներից ու դպրոցներից: ՀԵՈՒՄ-ը որոշել էր ուսանողների հետ կատարել Համբարձման ավանդական «Ջան գյուլումները», վիճակ հանել, պահել ջրով պուլիկն ու հետո տղաներին ստիպել, որ գտնեն, բայց այդ փոքրիկներն արդեն ամեն ինչ պատրաստել էին: Նրանց

խանդավառությունը փոխանցվեց բոլորին: Ուսանողները երգում էին ու ապրում ժամուկների հետ: Նույնիսկ մայիսյան փոփոխական եղանակը չընկճեց փոքրիկներին: Նրանց մեկնելուց հետո ուսանողները խումբ-խումբ մատեցին կանաչ խոտի վրա և հանգիստ պայմաններում վայելեցին այն սքանչելի ներդաշնակությունը, որ բնությունը ուման տոնական օրերին տալիս է զգայուն և խոհական սրտերին:

Սթենադին ԳեՌԻՄ-ի նորաստեղծ երգչախումբը, Գալոթ սարկավազի ղեկավարությամբ, Երեկոյան ժամերգություն կատարեց Սաղմոսավանքում: Շուրջ 80-ամյա լուսթյունից հետո Սաղմոսավանքում կրկին հնչեցին «Խոնարհեցո Տէր զունկն քո եւ լուր ինձ» և «Սարեցո զիս Տէր ի մարդոյ չարէ» սաղմոսները, իսկ «Սուրբ Աստուած» և «Տէր ողորմեա» երգերի մեղեդիները կենդանություն հաղորդեցին վանքի սառած պատերին: Ժամերգությանը նախագահեց ԵՊՊ Աստվածաբանության ֆակուլտետի ղեկան Գեր. Տ. Շափե արքեպս. Աճեմյանը, իսկ աղոթասաց քահանան Քրիստոնեությունը Դայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների հանձնախմբի գրասենյակի գործադիր նախագահ Գեր. Տ. Մեսրոպ արքեպս. Աշխյանն էր: Ուխտագնացության ողջ ընթացքում ուսանողների հետ էր նաև ԳեՌԻՄ-ի իռզևոր խորհրդատու Գեր. Տ. Տաթև արքեպս. Սարգիսյանը: Սրբազան հայրերը ողջունեցին այս ձեռնարկը և հույս հայտնեցին, որ նման միջոցառումները դեռ կշարունակվեն: Այդ օրը Միությունը շատ բարեկամներ ձեռք բերեց: Դամբարձման այս ձեռնարկի մասին ուսանողների կարծիքներից եզրակացնում ենք, որ ներկաների համար առանձնապես արժեւորվեց բնության հետ հաղորդակցվելը, խաղաղության ու ներդաշնակության հաստատումը և, որ ամենակարևորն է, մասնակցությունը Դայ եկեղեցում կատարվող Օխակատարություններին:

*Ավագյան Անահիտ
Փանոսյան Արմինե*

ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՀՈՂԻ ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄԸ

1888 թվականի մայիսի 31-ը կոչված է պատմական օր լինելու համայն հայության համար, քանզի Հոգեգալստյան մեծաւքանչ տոնի օրը Արցախի ազատագրված Բերձոր (նախկին Լաչին) քաղաքում վեր խոյացավ նորակառույց Ս. Համբարձման դողտրիկ եկեղեցին։ Առաջին անգամն է հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ, երբ հայր եկեղեցի է կառուցում ազատագրված հողի վրա՝ իր արյան հետ խառնելով նաև սրբալույս մյուռոնի սրբարար հեղումը։

Եկեղեցին կառուցվեց համեմատաբար կարճ ժամանակահատվածում՝ Բերձորի կառավարիչ Ալեքսան Հակոբյանի գործոն օժանդակությամբ և Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարզե եպիսկոպոս Մարտիրոսյանի օրհնությամբ։

Մայիսի 30-ի երեկոյան Պարզե սրբապանի նախագահությամբ և Արցախի թեմի հոգևոր դասի մասնկացությամբ տեղի ունեցավ եկեղեցու խաչերի օծման արարողությունը։



Եկեղեցու ընդհանուր տեսքը
աշխատանքներն ավարտելուց առաջ

Մայիսի 31-ին, Բերձորի ողջ ժողովրդի և մոտակա գյուղերում վերաբնակված մեր հայրենակիցների խանդավառության պայմաններում, տեղի ունեցավ եկեղեցու խորանի և Ա. Սեդյանի օծման արարողությունը՝ ձեռամբ առաջնորդ սրբապանի, որին հաջորդեց Ս. Պատարագի սրբապան արարողությունը։ Այս առիթով սրբապան Հոր Հրավերով Բերձոր էին ժամանել Սյունյաց

Թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը, Դամասկոսի Թեմի կաթողիկոսական փոխանորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Սարգիսյանը, Մայր Աթոռի միաբաններ Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահյանը, Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանը և Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը՝

Ս. Պատարագին ներկա եղավ նաև ԼՂՀ ավագանին՝ նախագահ Արկադի Ղուկասյանի գլխավորությամբ, ինչպես նաև պատվավոր հյուրեր Հայաստանից և Սփյուռքից՝

Իր քարոզի մեջ սրբազանը շեշտեց պահի պատմական կարևորությունը և հորդորեց բերձորցիներին՝ չեն ու կենսունակ պահել հավատքի այս օջախը՝

Բերձորի մերազնյա ժողովուրդը եկեղեցու կառուցումով ձեռք բերեց այն անասան վստահությունը, որ քաղաքի ազատագրումը վերջնական է և եկեղեցու դոյուքյունը ամենահիմնական երաշխիքն է այս բնակավայրի հետզհետե զարգացման ու շենացման՝

ՈՒՂՂԱԹԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՄԱԺՈՂՈՎՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ

Մայիսի 7-13-ը Դամասկոսի մերձակա Մաարատ Սեյդնայա գեղատեսիլ վայրում Հանգրվանած ասորական Ս. Եփրեմ Հոգևոր ձեմարանի շենքում տեղի ունեցավ Ուղղափառ (Բյուզանդական և Արևելյան) Եկեղեցիների Նախահամաժողովյան Հանդիպումը, որի նպատակն էր միասնաբար պատրաստվել ԵՂՊ Համաժողովին, որը գումարավելու է ս/թ. դեկտեմբերին Զիմբաբվեի Հարարե մայրաքաղաքում:

Հանդիպման հովանավորն էր Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Իգնատիոս Զաքա Ա Իվասը՝ իր կողքին ունենալով Անտիոքի Հույն Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն Իգնատիոս Դ Հազիմին:

Հանդիպման իրենց ներկայացուցիչներն էին ուղարկել գրեթե բոլոր Ուղղափառ Եկեղեցիները՝ բացի Վրաց և Սերբ Ուղղափառ Եկեղեցիներին:

Հանդիպումն իր տեսակի մեջ եղակի էր, քանի որ, առաջին անգամը լինելով, Ուղղափառ Եկեղեցիների երկու ընտանիքները (Բյուզանդական և Արևելյան) միասնաբար փորձում էին պատասխանել իրենց հուզող հարցերին և միասնական դեմքով հանդես գալ ԵՂՊ գալիք Համաժողովում:

Հանդիպումը բացվեց Իգնատիոս Զաքա Ա Իվաս և Իգնատիոս Դ Հազիմ Պատրիարքներին ողջույնի խոսքով: Երկու Հայրապետներն էլ շեշտեցին էկումենիկ շարժման մեջ առավել ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը՝ ի մասնավորի նաև ԵՂՊ շրջանակում: Անկախ վերջին շրջանում ծագած լուրջ ճգնաժամի, որի արդյունքը եղավ Վրաց Եկեղեցու դուրս գալը ԵՂՊ-ից, որին ուզում են հետևել նաև Սերբ, Բուլղար և Նույնիակ Ռուս Եկեղեցիները, Ուղղափառ Եկեղեցիները կոչված են իրենց վկայությունը բերելու մյուս քրիստոնյա եղբայրներին և վերարժևորելու ու վերախմբագրելու իրենց մասնակցության ձևն ու եղանակը ԵՂՊ կառույցներում:

Հանդիպման ընթացքում մասնակիցները ստիպված եղան անպայմանորեն անդրադառնալու ապրիլի 29-ից մայիսի 2-ը Սեյանիկում կայացած Ուղղափառ (Բյուզանդական) Եկեղեցիների Հանդիպման արդյունքներին, որն արտացոլված էր Համատեղ Հաղորդագրության մեջ: Վերջինիս մեջ, անդրադառնալով իրենց հարաձուլ դժգոհության պատճառներին, Ուղղափառ Եկեղեցիները վերջնադիր էին ներկայացնում ԵՂՊ Գործադիր մարմիններին և անդամ Բողոքական Եկեղեցիներին՝ հակառակ դեպքում ԵՂՊ կազմից դուրս գալու որոշումով:

Սույն հաղորդագրությունը կանխորոշեց Հանդիպման ողջ ընթացքը: Պետք է ասել, որ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները իրենց դժգոհությունն արտահայտեցին այն բանի հանդեպ, որ մյուս ընտանիքի ներկայացուցիչները իրենց դրել են կայացած փաստի առջև՝ առանց հաշվի առնելու իրենց կարծիքը: Ապա հաջորդական քննարկումների ընթացքում հաստատվեց, որ բոլոր Ուղղափառ Եկեղեցիները ԵՂՊ անդամակցության արդյունքներից դժգոհելու լուրջ պատճառներ ունեն, սակայն դա չի կարող արդարացնել ԵՂՊ լքելու որոշումը, քանզի բոլոր Ուղղափառ Եկեղեցիները կանգնած են միջեկեղեցական կապեր հաստատելու և ժամանակի հիմնահարցերին պատասխանելու հրամայականի առջև:

Հանդիպման ընթացքում ստացվեց նաև ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի ատենապետ Կիրիկիտ Կաթողիկոս Արամ Ա-ի նամակը՝ ուղղված բոլոր Ուղղափառ Եկեղեցիների պետերին, որով, հաշվի առնելով ներկա կացությունը, առաջարկում էր Ուղղափառ և Թողոքական ներկայացուցիչներից ստեղծել խառն Աստվածաբանական Հանձնաժողով, որն առաջիկա հունիսի 22-24-ը կարող էր հանդիպել ժնեում և լուծել Բրիտանիայի Եկեղեցու այս երկու մեծ ընտանիքների միջև ծագած տարաձայնությունները:



Համդիպման մասնակիցները

Հանդիպման մասնակիցներն իրենց համաձայնությունն արտահայտեցին ատենապետի առաջարկի նկատմամբ և, մեկ անգամ ևս շեշտելով էկումենիկ շարժման մեջ մասնակցելու իրենց հանձնառությունը, որոշեցին վիճելի հարցերի քննարկումը թողնել Հանձնաժողովի առաջիկա նիստին:

Քննարկման ենթարկվեց նաև Համաժողովի նշանաբանը, որի մասին տեղի ունեցան զեկուցումներ:

Ժողովի օրերն ուղեկցվեցին առավոտյան և երեկոյան ժամերգություններով: Մասնակիցներն առիթ ունեցան այցելելու Դամասկոսի և շրջակայքի վանքերը, եկեղեցիներն ու տեսարժան վայրերը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր լիարժեք մասնակցությունը բերեց սույն հանդիպմանը: Հայ Եկեղեցուց հանդիպմանը մասնակցեցին Ուկրաինայի թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Դամասկոսի Կաթողիկոսական փոխանորդ Տ. Սեպուհ եպս. Աարգիսյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջնեկեղեցական հարցերով օգնական Տ. Միքայել Ժ. վրդ. Աջապահյանը, Կիրիկիտ Կաթողիկոսության էկումենիկ հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Նարեկ Ժ. վրդ. Ալեմեղյանը և օր. Մանուկ Բոյաջյանը:

Մ. Մ. Վ. Ա.

ՓԻԹՐ-ԲՈՌԻԹԵՆԵՅՅ**ԵՀԽ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ****ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ****50-ԱՄՅԱԿ ԵՎ 8-ՐԴ ԱՍԱՄԲԼԵԱՆ****ՆՎԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ****ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ, ԵՀԽ-Ը ԵՎ ԳԱԼԻՔ ԱՍԱՄԲԼԵԱՆ
(ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ)****Ի սկզբանե.**

1920 թ., Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի /ԵՀԽ/ կազմավորումից բավականին առաջ, Տիեզերական Պատրիարքարանը «Քրիստոսի Եկեղեցիներից ամենուրեք» խորագրով մի շրջաբերական գիր հղեց: Դա մի կոչ էր Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների գլխավոր Պատրիարքարանի կողմից՝ ուղղված բոլոր քրիստոնյա եկեղեցիներին՝ հաղթահարել կասկածներն ու ամփոստափությունը և զարկ տալ համագործակցությանն ու ընկերակցությանը՝ ամտենելով դավաճաբանական տարբերությունները: Շրջաբերական գիրը կոչ էր անում գործնական քայլեր կատարել Եկեղեցիների հարաբերություններն ավելի սերտացնելու գործում, ներառելով նաև մեր փոխհարաբերությունների ստեղծումը և Եկեղեցու կյանքի լայն սպեկտրով փոխանակումները: Այս գործնական առաջարկներից մեկը մի «լիզայի» կամ «ընկերակցության» ստեղծումն էր, ինչպես վերջին շրջանում ստեղծված Միացյալ Ազգերի Կազմակերպությունը:

Այսպիսով, ուղղափառները 20-րդ դարում սկիզբ առնող «Եկումենիկ շարժումների» կենտրոնական ուժն էին և նպաստում ու աջակցում էին այն բոլոր շարժումների ձևավորմանն ու շարունակմանը, որոնք հետո, 1948 թ., միավորվելու էին՝ ստեղծելու Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը:

Շրջաբերական գրից միայն 7 տարի անց ուղղափառ պատվիրակությունը 1927 թ. Լոզան քաղաքում տեղի ունեցող Հավատի և Կարգի Ուխտի Առաջին Համաշխարհային Կոնֆերանսին մերկայացրեց մի պաշտոնական հայտարարություն: Կոնֆերանսի ժամանակ Եկումենիկ շարժման «աստվածաբանական» թեև՝ ուղղափառները, հայտնեցին, որ մինչ իրենք եկել և մասնակցում էին՝ «ոգեճնչված անկեղծ սիրտ զգացմամբ և ըմբռնմամբ հասնելու փափագով», նրանք ցավով ու ափսոսանքով հասկացան, որ պաշտոնական հաղորդումների հիմնավորումները անհարիր, անհամատեղելի էին Ուղղափառ Եկեղեցու ինքնըմբռնմանը: Այդ պատճառով էլ իրենք հարկադրված էին ձեռնապահ մնալ քվեարկությունից:

Ուստի, հենց ամենասկզբից էլ Ուղղափառներն Եկումենիզմի հետ այնպիսի փոխհարաբերություններ են ունեցել, որոնց բնորոշ են եղել թե՛ խանդավառությունն ու անհանգստությունը, թե՛ խրախուսանքն ու քննադատությունը և թե՛ ուրախությունը, հրճվածքն ու վիշտը, տխրությունը: Այս պարադոքսի բացատրությունը տալու համար օգտակար կարող է լինել իմ՝ Ուղղափառ քրիստոնյայիս կողմից մեզ ներկայացնելը:

Ո՛վքեր են ուղղափառները.

«Ուղղափառ» բառը, որը ծագել է հունարեն «ուղիղ, ճշմարիտ հավատ, համոզմունք», կամ «ուղիղ, ճիշտ փառք» բառերից, բնութագրում է տեղական ինքնավար Եկեղեցիների այն երկու խոշոր ընտանիքներին, որոնք հաճախ կոչվում են «Արևելյան» և «Օրիենտալ», և որոնք իրենց համարում են Քրիստոսի ու մորա առաքյալների կողմից հիմնած վաղ Եկեղեցու շարունակական հետևորդները: Այդ երկու ընտանիքները Ե դարում խստորեն քննադատել են միմյանց աստվածաբանական, քաղաքական և մշակութային հարցերի շուրջ: «Արևելյան Ուղղափառ» Եկեղեցիները պատմականորեն գտնվում են Փոքր Ասիայում, Հուստանանում, Ռուսաստանում, Բալկաններում և Միջին Արևելքում: Իսկ «Օրիենտալ Ուղղափառ» Եկեղեցիները պատմականորեն գտնվում են Հայաստանում, Փոքր Ասիայում, Միջին Արևելքում, Հնդկաստանում, Եգիպտոսում և Եթովպիայում: Միմյեկեղ Էկումենիկ շարժմանը մասնակից ժողովուրդների ավելացման հետ միասին, ուղղափառ ազդեցությունը զգացվում է ամբողջ աշխարհում:

Մեզ համար կարևոր են ուղղափառ Եկեղեցու հիմնավորք սկզբնավորությունները ոչ միայն այն պատճառով, որ դրանք հիմնավորք են: Մենք՝ ուղղափառներս, հավատում ենք հավատի, ուսմունքի և այն ընդհանրության շարունակականությանը, որ եղել է Քրիստոսյան Եկեղեցու հիմնադրումից ի վեր, և հավատում ենք, որ այն շոշափելի է և եթական տեղայնացման: Երբ Նիկիո Հանգամակի մեջ խոստովանում ենք մեր հավատքը «Մի՛ Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցու» հանդեպ, մենք դիտում ենք մեզ որպես այդ Եկեղեցին: Մենք չենք սահմանափակում ողջ ճշմարտությունը, ողջ եկեղեցական իրականությունը կամ Սուրբ Հոգու ողջ գործունեությունը միայն Ուղղափառ Եկեղեցում: Մենք հավատում ենք, որ պատմական պառակտումները, որոնց պատճառով էլ աշխարհում քրիստոնեությունն այսօր այնքան նկատելիորեն տարանջատված է, այն պառակտումներն են, որոնք գալիս են ուղղափառության «ուղիղ հավատից»: Այս առիթով շատ բան ասելու կարիք կա, քանզի ամենամեծ դժվարությունը մերկայացնում են ուղղափառների և ոչ-ուղղափառների, ինչպես նաև ուղղափառների և էկումենիկ հաստատությունների միջև բախումները:

Եկեղեցին, Եկեղեցիները և ԵՀԽ-ը.

«Էկումենիկ» բառը ծագել է հունարեն «oikoumene» բառից, որը մշանակում է «ամբողջ տիեզերքը»: «Էկումենիկ» մշանակում է տիեզերական: Ու թեև «oikoumene» բառը գերիշխում է ԵՀԽ-ի լեզվում ոչ թե մատնանշելու ԵՀԽ-ի լուգոն, անդամ Եկեղեցիները մեկնաբանում են այն տարբեր կերպով: Եթե ավելի պարզ ասենք, քրիստոնյա Եկեղեցիները իրենց ավանդություններով, ինչպես որ գոյություն ունեն այսօր՝ Բողոքական, Կաթոլիկ, Ուղղափառ, միասին կազմում են Տիեզերական Եկեղեցին: Մյուս կողմից, մենք՝ ուղղափառներս, նույնացնում ենք Ուղղափառ Եկեղեցին Տիեզերական Եկեղեցու հետ: Ուստի, Ուղղափառ Եկեղեցու մերսում հավատի և եկեղեցական կյանքի շուրջ հարցերում ակնհայտ համաձայնությունը հենց այն է, ինչը պիտի բաժանեն մյուս Եկեղեցիները, եթե միասնություն և համերաշխություն է ձեռք բերվելու: /Հոռոմի կաթոլիկներն ընկալում են իրենց Եկեղեցին և եկեղեցական միասնությունը նույն կերպ /:

Այնուամենայնիվ, մեկ անգամ ևս մշեմք, որ ուղղափառները չեն սահմանափակում իրենց սեփական Եկեղեցու ճշմարտությունն ու շնորհը: Մենք ունենք որոշակի այլ ընդհանրություններ քրիստոնյա ավանդույթների հետ /իմչպես օրինակ՝ Սուրբ Երրորդությունը, մեկ Աստված, հավատն առ Հիսուս Քրիստոսը՝ որպես մեր Տերը և Փրկիչը/ և այն ստեղծագործական մույնացումների հետ միասին առ այն, թե ինչն է մեր հավատի մեջ և մեր կյանքում, որ մաս այսօր մեզ որպես քրիստոնյա զատում է, և թե ինչն է էկումենիկ շարժմանը մեր մասնակցության պատճառը: Մինչդեռ «Տիեզերական» կամ «Էկումենիկ» Եկեղեցու երկու հիմնական հասկացությունների միջև լարվածությունը մինչև սրտի խորքը վիրավորական է ժամանակակից էկումենիզմի մախաձեռնության համար: Թեև ձևակերպումները մեծ ուշադրությամբ են կատարվում ԵՀԽ-ի ծրագրային գործունեության բոլոր փաստաթղթերում, սկսած նրա սկզբնավորումից, դեռևս շարունակում են լինել տարածայնություններ, անտարբերություններ, չնշելով մաս ապատեղեկատվությունը /ուղղափառ և ոչ-ուղղափառ խմբերի կողմից, որոնք արտաքուստ թշմամբար են տրամադրված ԵՀԽ-ին/՝ առկա լարվածության շուրջ:

Ճգնաժամային ժամանակներ.

Ուղղափառ Եկեղեցիների և ԵՀԽ-ի փոխհարաբերությունների միջև այժմ ճգնաժամային վիճակ է տիրում: Լարվածությունների, որ կարծես աճում են վերջին տարիներին, ևս մի ցավալի դրսևորում էր Վրաստանի Ուղղափառ Եկեղեցու կողմից իր անդամության դադարեցումը ԵՀԽ-ին 1997 թ. մայիսին: Առանց բացառության, բոլոր Ուղղափառ Եկեղեցիներն այսօր լռորեն մտածում, խորհում են ինստիտուցիոնալացված էկումենիզմին իրենց մասնակցության քննության և նպատակի մասին:

Ուղղափառ իրավիճակը.

Շատ դժվարություններ են առաջանում՝ կապված քաղաքական ասպարեզում եղած վերջին իրադարձությունների հետ: Կոմունիզմի անկման հետևանքով ոչ միայն աճել են կրոնական ու խղճի ազատությունն ու հնարավորությունները, որոնք էլ առաջնորդում են դեպի հոգևոր մթնոլորտի և եկեղեցական կյանքի վերածնունդը, այլ մաս դեպի մացիոնալիզմն ու ատելությունը օտարերկրացիների նկատմամբ, ինչն էլ խոչընդոտում է էկումենիկ ջանքերն ընթանալու ընդունակությանը: Արևմուտքի ուղղափառների մոտ այլ նկատառումներ կարող են կասկած կամ թշմամբություն հրահրել միջքրիստոնեական համագործակցության ուղղությամբ: Գերազանցապես Ուղղափառ երկրներից վերաբնակիչները և իհարկե, ոչ-ուղղափառ երկրներից մորադարձներն են երբեմն սահմանում իրենց ուղղափառ ինքնությունը: Այս բոլորին պետք է ավելացնել մասնավորապես աշխարհում զգացվող ֆունդամենտալիզմի աճը:

Մարդորսության խնդիրը.

Որոշ ուղղափառներ մույնացնում են էկումենիկ շարժման մեջ ցերեքավոր մարդորսության մեղքերին թողություն տալու հետ: Նրանք կարծում են, թե քանի որ էկումենիզմը ենթադրում է տարբեր քրիստոնյա Եկեղեցիների նկատմամբ

ընթացելու ընդունակություն, ուստի ենթադրում է նաև հավանություն տալ միսիոներներ առաքելու սովորությանը գլխավորապես ուղղափառ երկրներ՝ «ոչխարներ գողանալու» (մարդոտության – խմբոր.) կամ էլ ուղղափառությունն չալլ կրոնի դարձնելուն: Փաստորեն, քանի որ մարդոտությունն իր բնույթով հակաէկոմենիկ ջանք է, ԵՀԽ-ը բազմիցս դատապարտել է նման գործելակերպը:

ԵՀԽ-ի մթնոլորտը.

Ընդհանուր առմամբ շատ ուղղափառներ գնալով դժվարացում են իրենց մի գծի վրա դնել այն ամենի հետ, ինչը նրանք ընկալում են որպես ԵՀԽ-ի բնույթ և օրակարգ: Երբ աստվածաբանական, սոցիալ-քաղաքական կամ բարոյագիտական թեմաներ են քննարկվում, ոմանք զգում են, որ ըստ էության հանդուրժելի բազմազանության սահմանափակումներ չկան: Օտտերի կարծիքով, թեև ԵՀԽ-ը չի առաջադրում կամ թելադրում իր քաղաքական նկատառումները, փաստացի մղում կա ավելի պահպանողական, բարոյական կամ աստվածաբանական դրության միջոցով ստիպել դիմացինին ամցնել պաշտպանության: Պաշտամունքի արարողությունները էկոմենիկ միջավայրում կարող են այնպիսի բնույթի խիստ հակում ունենալ, որ բոլորովին խորթ են ուղղափառ զգացողություններին: Ընդհանուր առմամբ, ԵՀԽ-ի ուղղափառ մասնակիցները զգում են, որ մի շարք գործոնների շնորհիվ իրենք փոքրամասնություն են, երբեմն մուլմիսկ՝ յուրահատուկ ուշադրություն մերկայացնող խումբ՝ բողոքական խիստ մեծամասնության մեջ:

Համեմատության համար հարկ է մշել, որ ելնելով ոչ-ուղղափառների հեռանկարից ԵՀԽ-ում, մենք՝ ուղղափառներս, և մեր ծրագրելիք գործողությունները կարող են թվալ խորտակիչ, ծրագրերը խափանող, խոչընդոտող: Մեր կողմից մեր ինքնության հաստատումն ու մուլմացումը Տիեզերական Եկեղեցու հետ կարող է թվալ ամբարտապան, մեր աշխատանքային ոճը՝ անհամապատասխան, հակասական և ոչ բնական, իսկ մեր գործելակերպն ու մտածողությունը՝ թաքմված, ծածուկ ինքնաքննադատություն:

Միայն ուղղափառները չեն, որ ճաշակում են նկարագրաձև լարվածություններն ու անհանգստությունները: Սակայն ուղղափառներն ամենապարզ կերպով սահմանելի մարմինն են խորհրդի անդամ այն Եկեղեցիների թվում, որոնք ևս որոշ չափով ճաշակում են այդ բոլոր լարվածությունները և, դեռ ավելին, ճաշակում են միճև և այն աստիճան, ինչպես շատ Եկեղեցիների դեպքում, որ նրանց անդամությունն իսկ սպառնալիքի տակ է դրվում:

Վճռորոշ համագումար.

Եթե հիմա ճգնաժամային ժամանակներ են ԵՀԽ-ի հետ Ուղղափառ Եկեղեցու ընդհարման առումով, ապա ԵՀԽ-ի գալիք՝ Ը համագումարը, որը գումարվելու է այս տարվա ընթացքում Հարարեում, կլինի վճռորոշ իրադարձություն: Նման իրադարձությամբ ընձեռնված ընկերակցության, եղբայրության և ճոր հայտնագործությունների հնարավորության հետ միասին, հնարավոր է նաև, որ բոլոր վերը շարադրված մտահոգություններն ու անհանգստությունները խորանան: Ինչպես անցած առաջիկաների ժամանակ, այս անգամ ևս արդարությունները օտարացման առիթ կտան և կհեռացնեն միմյանցից: Նորից չի լինի

հաղորդության միասնական տոնակատարություն. ուղղափառ հասկացողությամբ հաղորդության խորհուրդը /դիտվելով որպես հավատի մեջ միասնության բարձրագույն արտահայտություն/ արգելում է կիսել այն ոչ-ուղղափառների հետ, և սա կրկին բոլոր կողմերին ցավ պատճառող առիթ կհանդիսանա:

Հարարեի համագումարը կկազմակերպի մահ «Փաղարե» /մշամակում է՝ հավաքատեղի, ժողովատեղի/ կոչվող մի բաց ֆորում: Համագնական է, որ շատ ուղղափառների համար դժվար կլինի ըմբռնել և գնահատել առկա անհամապատասխանություններն ու խնդիրները: Քանի որ ԵՀԽ-ը չի կարողանում համաձայնվել «Փաղարե»-ի առաջարկների հետ, համագումարի և ԵՀԽ-ի գործունեության ծրագրի միջև տարբերությունն այնքան էլ պատրաստակամորեն չի ըմբռնվի: Այս ոլորտում դժվարություններն արդեն ծայր են առել: Որոշ Եկեղեցիներ, օրինակ, խստորեն են արձագանքել ընդդեմ ԵՀԽ-ի կողմից «Փաղարե»-ի առաջարկների վավերացման:

ԵՀԽ-ի ամենավերջին գործունեության ծրագրի հաղորդագրությունը, որ վերնագրված է «Դեպի համընդհանուր փոխըմբռնում և ԵՀԽ-ի կանխատեսումներ», թվանդակալից և խորիմաստ մի փաստաթուղթ է, որն արտացոլում է մահ ԵՀԽ-ի՝ բոլոր մակարդակներում ծավալած գործունեության վրա ազդեցություն ունեցող վերակառուցման գործընթացը: Այդ գործընթացը վստահությունն ու հավատ է ընծայում և միջոցներ ձեռք առնում, որոնք կքննարկվեն և կընդունվեն ասամբլեայի ընթացքում, և կարող է հաստատել փոխադարձաբար առավել ընդունելի փոխհարաբերություններ Ուղղափառ Եկեղեցիների և ԵՀԽ-ի մյուս անդամների միջև:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ. Ուրախություններն ու տխրությունները.

Ուղղափառները կմասնակցեն գալիք ասամբլեային Հարաբերում հուլյսի ու ըմբռնելու ընդունակությամբ, համաձայնության, քարեհաճ վերաբերմունքի ու քննադատության զուգորդմամբ, խանդավառությամբ ու սարսափի այն պարահոգսով զուգորդմամբ, որն, այժմ գիտենք, այլևս նորություն չէ: Սակայն գիտենք մահ, որ լարվածություններն այժմ գազաթմակետին են հասել:

Ինչու՞ մնալ.

Ելնելով մկարագրած մտայն պատկերից, բնականաբար կարող է հարց առաջանալ, թե արդյոք իմ կարծիքով Ուղղափառ Եկեղեցին պե՞տք է մնա խորհրդի անդամ: Պատասխանն է՝ այո: Քրիստոնյաների չիակատար միասնությամբ, համախմբվածությամբ ուղղված աշխատանքը սուրբ աշխատանք է: Եթե անգամ մենք՝ ուղղափառներս, մերառնում ենք Տիեզերական Եկեղեցին մեր Եկեղեցու դավանաբանության ընդհանրության մեջ, ապա ամբարշտություն կլինեք չնայել մեր Եկեղեցու սահմաններից դուրս՝ տեսնելու, հաստատելու և մերգրավելու այն ամենին, ինչն իրական է, ճշմարիտ ու գեղեցիկ, այսինքն՝ այն ամենն, ինչ կապված է Քրիստոսի հետ: Մենք բոլորս Աստծու առաջ պատասխանատվություն ենք կրում՝ փնտրել ու տեսնել, թե մեր քրիստոնեական պառակտվածության մեջ ինչն է, որ հետևանքն է լոկ մեր տարաձայնությունների, թյուրիմացությունների և պատմա-մշակութային գործոնների, և թե ինչն է, որ

պետք է դիտարկել աստվածաբանության ու կյանքի մակարդակներով: Այս ամենը որոշ չափով կարելի է անել առանց ԵՀԽ-ի: Սակայն ԵՀԽ-ը այն միակ, եզակի միջոցն է, ամենահասկանալի գլոբալ ընկերակցությունը, որ մենք ունենք:

Ուղղափառները հաճախ մոռանում են, թե ինչքան են իրենց Եկեղեցիները նյութապես շահում ԵՀԽ-ից կամ նրա միջոցով ցուցաբերված օժանդակությունից: Բացառությամբ այս առօրյա, սակայն, նշանակալից փաստի, մեր շփումն այլ քրիստոնյաների հետ նպաստում է մեր Եկեղեցու կյանքի այսօր այնքան անհրաժեշտ վերազարթոնքին: Երբ գալիս ենք մասնակցելու միջքրիստոնեական ֆորումների, գիտենք, որ մեր կրած ձախողումները տեսադաշտում են: Եվ ինչքան էլ մենք չուզենանք ընդունել շատ կետեր, որոնք կամոնավորապես ընդգրկված են ԵՀԽ-ի սոցիալ-քաղաքական և բարոյական-բարոյագիտական գործունեության օրակարգում, պետք է մեր օրակարգում ևս ավելի կենտրոնական տեղ գտնեն:

Ուղղափառ Եկեղեցու և ԵՀԽ-ի փոխհարաբերություններում առկա են հույսեր ու արոքլեմներ, սակայն թող այդ փոխհարաբերությունները ինքնավստահորեն ու համարձակորեն, ազնվությամբ ու բարի կամքով շարունակվեն, հարատևեն:

ՍՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԸ

Սք. Աստվածածիժ վանքը Հույն Ուղղափառ Եկեղեցու թեմական կենտրոնը /միտրոպոլիս/ է ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգի Նորթ Ֆորթ Մայքս քաղաքում: Վանքը գտնվում է Հյուսիսային և Հարավային Ամերիկայում Հույն Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Գերաշնորհ միտրոպոլիտ Պասիոսի եմիփորոնի /Ռովանավորության/ տակ: Հիմնվել է 1978 թ. Առաջնորդ Ամդրեի օրհնությամբ, իսկ 1991 թ. Փալմ Բիչ շրջանից տեղափոխվել է մոր նստավայր՝ Լի շրջան: Վանքում իրենց հոգևոր ծառայությունն են իրականացնում երեք երկարասքեմ արքեպիսկոպոսներ, վարդապետ Զոնը՝ վանքի վանահայրը, Հայր Մարկը՝ մատակարարը, և Հայր Զորջը՝ լուսարարը:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՄԻԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՀԱՎԱՏՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Վանքի կողմից պլանավորվող և իրագործվող ծրագրերի մասին պատմում են Սրբազամ Հայրերը.

«**Միասին ի Զրիստոս**» ծրագրի նպատակն է օգնել պատանիներին՝ դիտել բոլոր մարդկանց իբրև «Աստծու պատկեր» (ԾՆՆԴ. ԻԶ 27): պատանիներին հնարավորություն է տրվում կատարել տարբեր աշխատանքներ Սք. Աստվածածին վանքի կողմից կազմակերպվող ծրագրերում, ինչպես օրինակ՝ աշխատելն ընդհանուր պարտեզում, մոմաձուլարանում, սննդի կետերում, մեղվաբուծական աշխատանքներում, անօթևանների համար ծրագրերում: Այն աշխատանքներին զուգընթաց մրանք մաև մասնակցում են ամենօրյա աղոթքներին, հաճախում կրոնի հատուկ դասընթացների, ուսումնասիրում բյուզանդական երգեցողության ակումբները: Վանքի ծավալած գործունեությանը մասնակից դառնալով, տղաները հոգևոր ծառայության ուղղություն են ստանում և զարգացնում իրենց մեջ ուղղափառ ինքնությունն ու անհատականությունը:

1991 թ. Նորթ Ֆորթ Մայքս տեղափոխվելուց ի վեր, Աստված կամեցավ, որ երիտասարդները գամ մեզ մոտ՝ վանք, քանի որ մրանք հոգիները կարոտ են հոգևոր օրինակի: Մենք այդ երիտասարդներից կերտում ենք գործուն, հաստատուն քրիստոնյաներ: Նրանցից շատերը, մեծանալով և հեռանալով մեր միջավայրից, մեզ հաղորդակից են պահում իրենց կյանքին: Գուցե դա այն պատճառով է, որ մենք միշտ հիշում ենք մրանք մեր աղոթքներում: Վերջերս 20-ամյա մի երիտասարդ այցելեց մեզ՝ պատմելու, թե ինչպես է ընթանում իր ուսումնառությունը Ֆլորիդա նահանգի համալսարանում, որտեղ նա սովորում է ուսաց լեզուն՝ կրոնական բնույթի մյուսեր թարգմանելու և Եկեղեցու կյանքին ավելի ակտիվորեն մասնակցելու համար:

Մեր վանքի Ռովանավորումին՝ Սք. Մարիամ Աստվածածինը, մայրական սիրով լսել է մեր աղոթքները՝ օգնել գտնելու մեր պատանեկան ծրագրերի ծավալման համար անհրաժեշտ աղբյուրներ: Մի շարք անձնավեր ամհատներ և հասարակական կազմակերպություններ տարիներ շարունակ օժանդակել են մեզ:

**Շարունակվում է հոգևոր բնույթի հին
աշխատությունների թարգմանությունը.**

Փառք Հիսուս Բրիտանիան, որ գործություն տվեց մեզ ավարտել այն 89 աղոթքների թարգմանությունը, որոնք, սկսած ԺԵ դարից, չէին տպագրվել և որոնք երբեք անգլերեն լեզվով մատչելի չէին եղել: Այժմ կիսով չափ թարգմանել ենք գլխավոր սրբերի տոներից կատարվող եկեղեցական ծեսերի և պատարագների տեքստերը, «Անպատագիմտայից» (Յոթանասնից) թարգմանել ենք Սաղմոսաց Գիրքը, տարբեր առիթներով արտասանվող աղոթքների տեքստերը և վաղ քրիստոնեական շրջանի շատ այլ եզակի գանձեր: Ի տարբերություն շատ հոգևոր տեքստերի, մեր անգլերեն թարգմանություններն ընդգրկում են մեծ մանրամասն խորագրեր այն մասին, թե ինչպես են այդ ծեսերը կատարել:

Երջանկաճիշատակ Ամդոն Սրբազանը, մեր վանաձորը՝ Վարդապետ Ջոնին պատվիրել էր կիրառել իր աստվածատուր լեզվական կարողությունները հագուտ Եկեղեցու: Մենք ուրախ ենք, որ մա հնազանդվեց այդ պատվիրանին և օգնեց մեզ միավորել մեր ջանքերն այն միանձն վանականների և միանձնուհիների ջանքերի հետ, որոնք մեր Փրկչի ծննդյան Գ դարից սկսած աշխատել են կենդանի պահել ու պահպանել Նրա «ուղիղ հավատքը» փառաբանող փաստաթղթերն ու վավերագրերը: Մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի այն, որ այդ հնազանդությունը գալիս է Սրբազանից, որն աշակերտել է Նեկտարիոս Մեծին, Ռուսաստանի Օպտինա մենաստանում: ԺԺ դարում Օպտինա մենաստանը մի կենտրոն էր, որը հրատարակում էր քրիստոնեական շրջանի հոգևոր, հայրաբանական և ճգնակեցական աշխատություններ, որոնք մինչև օրս էլ մեծ ազդեցություն են գործում հազարավոր մարդկանց կյանքի վրա:

Մենք անգլերեն ենք թարգմանում հուճարեանից և սլավոներենից, ինչպես նաև սերբերենից, ուկրաիներենից, ֆրանսերենից և արաբերենից: Ծնոդհակություն Աստծուն մեր մկատմամբ իր շնորհների համար: Վանաձայր Ջոնը կիրառում է լեզուների իր իմացությունը մեծ աշխարհի բոլոր ծայրերից այստեղ այցելող ուխտավորների հետ շփվելիս, քանի որ խոսում է իտալերեն, գերմաներեն, հունգարերեն, իսպաներեն և կրեոլերեն:

Ինչպես հաճախ պատահում է մեր հոգևոր կյանքում, Աստված մեզ ցույց է տալիս, որ մենք ճիշտ քայլեր ենք կատարում: Այս դեպքում Նա մեզ առաքեց բարեպաշտ ուղղափառ մի գույզի՝ Միլո և Մարի Լու Չելովիցներից, ովքեր թարգմանական աշխատանքներից օժանդակելու համար մվիրեցին մի մոր համակարգիչ, սքաներ և լազերային տպիչ:

Այդ աշխատությունները հրատարակելու և դրանք Ուղղափառ Եկեղեցու անգլիախոս հավատացյալներից մատչելի դարձնելու, ինչպես նաև մեր տպագրական կարիքները հոգալու համար ամհրաժեշտ է գտնել վեհաձայն բարերարներ: Հայր Մարկի համար մի լրացուցիչ համակարգիչի կարիքն ունենք, որով անգլերեն թարգմանությունները կհարմարեցվեն բյուզանդական երաժշտությանը:

**Մի ասա քո մտքում, թէ՛ «իմ ուժով և ձեռքի պորութեամբ
են տիրացել ես այս մեծ հարստութեան», այլ յիշիր քո
Տէր Աստծուն, որովհետև Նա է քեզ ուժ տալիս այդ
հարստութեանը հասնելու համար**

/Երկրորդ Օրենք Ը 17-18/

Յուրաքանչյուր սերնդի մեջ էլ կան մի բոլոր անհատներ, որոնք, արտահայտելով իրենց աստվածավախությունն ու հավատն առ Աստված, հանդես են գալիս իբրև քրիստոնեական բարեգործության ու կարեկցության հեմարաններ: Չնայած նրանց վեհաձեռնությանը և ամենուր մնալու ցանկությանը, Աբ. Աստվածածին վանքը ցանկանում է հրապարակալ շնորհակալություն հայտնել այն չորս առատաձեռն բարերարներին, որոնք աջակցում են մեզ մեր ձեռնարկներում: Մեր վանքի անշարժ գույքը գրավից ազատելու նպատակով Միլո և Մարի Լու Չելովիցները և Գրեգ ու Ջեթի Իզմերը միասին վանքին տրամադրեցին 80.000 ԱՄՆ դոլար:

Մի քանի շաբաթ առաջ մեր վանք այցելեց մի ուխտավոր, որն ուներ Աբ. Նիկողայոսի հրաշագործ սրբապատկերից ծորացող ամուշահոտ խեժ /զմուռ/ և հենց այդ սրբապատկերի մի գեղեցիկ մամրամկարի ընդօրինակությունը: Ուխտավորը խնդրեց հատուկ արարողություն կատարել Ընդհանրական եկեղեցու Դ դարի այդ եպիսկոպոսի համար, որը մասնակցել էր քրիստոնեական աշխարհի առաջին Էկումենիկ սինոդին և օգնել հիմնելու Նիկիո Հանգամակը, բանավեճի մեջ էր մտել Արիոս և Սաբելիոս հերետիկոսների հետ՝ հարցաքննելով նրանց Աստվածության բնույթի մասին, ձևավորել է քրիստոնեության վարդապետությունն այնպես, ինչպես որ այն մեզ է հասել այսօր: Աբ. Մովսես Մարգարե եկեղեցում արարողությունից 40 ժամ անց այդ արժեքները մեզ նվիրաբերվեցին: Թող Աստված օրհնի այդ անհատներին իրենց ամշահախնդիր սիրո համար:

Ֆինանսական դժվարությունները հաղթահարելուց և մեր 1-2 ակր տարածությամբ հողակտորը գրավից ազատելուց հետո, փափագում ենք գնել լրացուցիչ հողակտոր վանքի շրջակայքում և այնտեղ հիմնել պարտեզ՝ առավել կարիքավոր ընտանիքներին սննդամթերքով օգնելու, մեղվաճեղք և ջերմոցն ընդարձակելու, վանականների համար խցեր կառուցելու, ինչպես նաև մեզ մոտ գալու ցանկություն ունեցող մարդկանց օթևան տալու և կանանց մեծաստան կառուցելու համար:

Օգնություն սովյալներին.

Շատերն այս փառամ բուսականությամբ, արևադարձային վայրը կհամարեն դրախտ երկրի վրա: Սակայն մույնիսկ արմավենին ունի սովեր և «...կարիքավորներն անպակաս են լինելու երկրի վրայ» /Երկրորդ Օրենք ԺԵ 11/: Մարդկության հանդեպ իր ունեցած սիրո հետ մեկտեղ, մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեզ մոտ է ուղարկել հարյուրավոր կարիքավոր տղամարդկանց, կանանց և երեխաների, որոնց կարիքները պետք է հոգալ: Մարմնական կարիքները բավարարելուց հետո, մարդիկ հոգևոր լույսի կարիք են զգում: Այն ամենն, ինչի համար մենք կարող ենք աղոթել, այն է, որ մեր նվաստ անձի օրինակով կարողանանք հոգևոր սնունդ տալ այն փնտրողներին:

Ամեն շաբաթ սնունդ հայթայթելու համար հարյուրավոր անհատներ և ընտանիքներ են գալիս վանք: Որպեսզի նրանք կարողանան սովորել ինքնուրույն ապրել և իրենց կարիքները բավարարել, մշակել ենք տարբեր ծրագրեր: Դրանք ընդգրկում են ընդհանուր հողամասը, մատան-մթերամոցը, ջերմոցը, թռչնաֆերման և մեղվաճեղքը:

Ընդհանուր հողամասում մարդիկ մասնակցում են տունկին, ցանքին, քաղհանին, հունձքին, բերքահավաքին: Սովի դեմ մտահոգության կրթական

կազմակերպությունը ապահովել է սերմերով և տեխնիկական առումով գիտակ մասնագետներով: Հայր Մարկը և Հայր Զորջը գտել են ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ, որոնք ձեռք են բերելու իրենց սեփական հողամասերը, առաջարկում են գործիքներ, սերմեր և աշխատանքների դեկավարում:

Բացի ընդհանուր հողամասից, վաճառի տարածքում գտնվող ամբարը վերանորոգվել և վերածվել է մառան-մթերանոցի: Անցյալ տարի մեր վեհաձմ թարե-րարներից ֆինանսական մվիրատվություն ստացանք՝ գնելու մի ընդարձակ սառնարան: Փրկության Բանակի մի թուփույր հոգում է առողջապահական և բժշկական կարիքները և մերգրավում մարդկանց համապատասխան ծրագրերի մեջ:

Պահածոյացված մթերք ենք ստանում թագմաթիվ աղբյուրներից՝ կազմակերպություններից, խմբերից, ամհատներից, շատերն օրական գալիս և իրենց ունեցած սննդամթերքից ամհատույց տրամադրում են մեզ: Սակայն, չնայած դրան, մեր պահարանը հաճախ դատարկ է լինում, և մենք ի վիճակի չենք լինում կերակրել օտար մարդկանց: Վերջերս մեզ մոտ եկավ մի երիտասարդ կին իր փոքրիկ որդու հետ: Ամուսինը, թմրամոլության մատնվելով և կնոջ բոլոր խնայողություններն ու ունեցվածքը վատնելով, լքել էր ընտանիքը: Կնոջն էին մնացել բառացիորեն հագի հագուստները: Մենք խիստ վշտացանք, քանի որ չուներինք ոչ՝ մանկական սնուցիչ, ոչ՝ էլ հիգիենիկ միջոցներ, սակայն արեցինք հնարավորը՝ օգնելու կնոջը:

Զերմոցային մեր ծրագիրը կանցվել է ջերմոցը կառուցելու, ոռոգման հնարավորությունները ապահովելու և բույսերի ու սածիլների աճեցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների թացակայության պատճառով: Հուսով ենք, որ ծրագրի ֆինանսավորումից և ավարտից հետո կկարողանանք աշխատանքով ապահովել երիտասարդ մարդկանց և սովորեցնել այգեգործական հմտություններ՝ միաժամանակ նպաստելով, որ նրանք համոզվեն, որ կյանքում կայունության կարելի է հասնել աղոթքով, հավատով, բարի գործերով և մեր Արարչի հետ հաղորդակցվելով: Հայր Մարկն այժմ զբաղված է Լի օկրուգի մանկական, երիտասարդական և ընտանեկան խորհրդակցական կոմիտեում, ինչպես նաև սաղմնային և մանկական մահացության վերաբնկման կոմիտեում:

Սր. Աստվածածին՝ «ուրախությունը բոլոր նրանց, ովքեր տխրում են».

Մեր վանքում գտնվող ռուսական սրբապատկերի ծագումն անհայտ է, սակայն այս տիպի ամենավաղ սրբապատկերը հայտնաբերվել է Կիևի մեծաստանի մոտ եղած մի հիվանդանոցի եկեղեցում՝ կառուցված ԺԺ դարում: Ըստ ավանդության, մի քանի հրաշագործ բուժման դեպքեր են կապված այս սրբապատկերի հետ: Հիվանդանոցի դռնապանը ժամանակ առ ժամանակ գիշերով տեսնում էր մի տիկնոջ հիվանդանոց մտնելիս, իսկ հաջորդ առավոտյան որևէ հիվանդ բուժված էր լինում: Երբ դռնապանը հարցնում էր արեց այդ հիվանդներին իրենց այցելուի մասին, նրանք պատասխանեցին, թե չգիտեին նրա ով լինելը, և երբ հարցրել էին անունը, նա պատասխանել էր. «Ես ուրախությունն եմ բոլոր նրանց, ովքեր տխրում են»: Մի անգամ դռնապանը, հետևելով տիկնոջը, մոտեցավ մի հիվանդ վանականի սնարի և, տեսնելով Աստվածածնի սրբապատկերը վանականի մահճակալի գլխավերևում, հասկացավ, թե ով էր նա: Միմյև առավոտ

վանականը ապաքինվեց: Սրբապատկերի տոնակատարության օրը Ռոկոսեմբերի 24-ը/նոյեմբերի 7-ն է, և Ռիմնվել է այդ տոնը 1648թ.: Այդ նույն թվականի հեծց այդ օրը Մոսկվայի Պատրիարքի քույրը բուժվեց այն քանից հետո, երբ Սբ. Աստվածածինը պատվիրեց մրան մի քահանա Ռաավիրել և խնդրել մրան աղոթք արտասանել եկեղեցում կախված այս սրբապատկերի առաջ:

Այս սրբապատկերում պատկերված են զանազան ցավերով ու վշտերով տառապող մարդիկ, որոնք մի ճար են խնդրում, և Ռեշտակնեբն ուղարկվում են օգնելու նրանց: Աստվածածինն աչ ձեռքում բռնել է մի գայիսոն՝ իբրև գերագույն իշխանության խորհրդանիշ, իսկ ձախ ձեռքով Ռաց է առաջարկում՝ իբրև դրախտային կեդրակուր: Նա այն դուռն է, որի միջոցով Քրիստոսն իջավ երկրի վրա՝ մարդեղանալու, իսկ Աստվածածինն այս մկարում պատկերված է մարդկանց մոտ: Նրա շնորհիվ կարելի է զգալ դրախտի շողը, իսկ մկարում պատկերված դրախտային ծաղիկների գրավչությունը երկրի վրա ոչնչի հետ համեմատելի չէ: Սրբազան Անդրեան իր պատվիրանում՝ նվիրել մեր վանքը Սբ. Աստվածածնին՝ «որախությանը բոլորի, ովքեր տխրում են», գուշակել էր, որ այս սրբապատկերում պատկերվածները կզան մեզ մոտ՝ օգնության: Ուստի խնդրում ենք աղոթել, որ մենք արժանի լինենք հոգալ բոլորի կարիքները, ում Սբ. Աստվածածինն ուղարկում է մեզ մոտ, քանզի մա է թափառականի սփոփանքը, սովյալիմ սնունդ տվողը, ոտնաձարվածի ու ճնշվածի պաշտպանը, զառամյալիմ ու տկարիմ օգնության հասնողը, մերկիմ ու ցրտահարվածիմ հագուստ տվողը, Ռիվանդիմ բուժողը, անհավատի մերկությունը ճանկողը և հալածվողի, բանտարկյալի, սովյալի, օտարականի, աղքատի ու տառապյալի ուրախությունն ու սփոփանքը:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇՆՈՒՄ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆՎԻՐԱԿ ՀԱՅՐ ՖԻԼԻՊ ՍԹՈՐՐ
ՎԵՆԹԸՐԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ**

1998 թվականի մայիսի 5-ին, երեքշաբթի, Ադրբեջանի Հանրապետության մայրաքաղաք Բաքու կատարած այցելության ընթացքում Մայր Աթոռում Քենթրբերիի Արքեպիսկոպոսի նվիրակ Հայր Ֆիլիպ Սթորր Վենթըն այցելեց Բաքվի Հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որը գտնվում է քաղաքի կենտրոնական մասում, հին քաղաքի արտաքին պարսպից դուրս՝ այգու շարակից:

Մեր ընթերցողներին հիշեցնենք, որ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում էր թաղված դարասկզբի մեր եկեղեցու մեծագույն հոգեւորականներից Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը: Ի՞նչ է հայտնում մեզ Հոգեշնորհ Հայրը:



Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի տապանաքարը

Ինձ չհաջողվեց գտնել հետքեր մեր տապանաքարից, որը գետնից բարձր էր այն վայրում, որն այժմ խոտածածկ մի տարածություն է: Այնտեղ չկային նաև այլ գերեզմանաքարեր (դատելով լուսանկարներից և իր խոսքերից՝ կարծում ենք, Հայր Ֆիլիպը ճիշտ տեղում չի փնտրել Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի գերեզմանը: Սակայն կարծում ենք, նաև չի բացառվում գերեզմանի պղծված լինելու հանգամանքը):

Ձեռքով արտաքին պահպանված տեսքին, եկեղեցին ներկայումս ցավալի տեսարան է ներկայացնում: Եկեղեցու ներսը ամբողջապես այրված է՝ պատերն ու առաստաղը հրդեհից սևացած: Արտաքին պատերը նույնպես կրում են հրդեհի հետքերը, որի ծուխը դուրս կողմից սև հետքեր է թողել նաև լուսամուկների և դռների բարավորներից: Հյուսիսային արտաքին պատի վրա եղած հայկական խաչերը փերված են, իսկ զանգակատան

արևմտյան կողմում գտնվող ցուցանակը ակնհայտ կերպով տեղաշարժված է: Որոշ պատուհաններ շարված են, իսկ մյուսները ծածկված են Ադրբեջանի Հանրապետության ազգային գինանշանով՝ լուսինն ու մահիկը հռազույն դրոշի վրա: Եկեղեցու ներքնամասը օգտագործվում է աշխարհիկ նպատակներով. ներսում արևելքից արևմուտք կառուցված է աղյուսե խորդուբորդ միջնորմ: Հարավային մասն օգտագործվում է որպես խաղասենյակ, որտեղ տեղադրված էին խաղասեղաններ, իսկ հյուսիսային մասը հատկացվել է մի շինարարի, որը գաջե կաղապարներ է պատրաստում շենքերի համար:



Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին.
Լուսանկարը Դայր Ֆիլիպի

Ինձ ասացին, որ եկեղեցին սկսվում է վերանորոգվել, րայց ներս մտնել չթողեցին: Իմ դիտարկումն այս պատկերի մասին կատարվել է դրսից և անհնար էր տեսնել նաև եկեղեցու արևելյան մասը, որպեսզի կարողանայի տեսնել. թե ինչ վիճակում է գտնվում նաև խորանը: Այս մի քանի պատկերները հնարավոր եղավ լուսանկարել միայն շենքի արտաքին կողմից:



Մայիսի 2-ին, շաբաթ.- ԻԱ օր Յինանց:

Այսօր Արարատյան Հայրապետական թեմի առաքնորդական փոխանորդ Գեր. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը և Մայր Աթոռի միաբան Տ. Խորեն արքեպս. Հովհաննիսյանը մեկնեցին ԱՄՆ՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ մասնակցելու Ամերիկայի Հայոց թեմի Ռիմոնդոման 100-ամյակի հանդիսություններին:

Մայիսի 3-ին, կիրակի.- Դ կիրակի: Կարմիր կիրակի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար արքեպս. Հովհաննիսյանը: Հոգեշնորհ Հայր սուրբը հանգամանալից կերպով մեկնաբանեց Կարմիր կիրակիի խորհուրդը և խոսեց մեր կյանքում այն ներգրավելու նշանակության մասին:

Նույն օրը Մայր Աթոռի միաբաններ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Տ. Արշակ արքեպս. Խաչատրյանը և Տ. Արշեն արքեպս. Սամոյանը Ս. Պատարագի մատուցման և Բանին Կենաց քարոզության նպատակով Ս. Պատարագ մատուցեցին և քարոզեցին համապատասխանաբար Վաղարշապատի Ս. Աստվածածին, Ս. Հոփսիսմե և Երևանի Ս. Ջորավոր եկեղեցիներում:

Մայիսի 5-ին, երեքշաբթի.- ԻԴ օր Յինանց:

Այսօր Ուկրաինայի Հայոց առաքնորդ Գեր. Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը և Մայր Աթոռի միաբան Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը մեկնեցին Դամասկոս՝ մասնակցելու մայիսի 8-ին Անտիոքի Ասորի Ուղափառ Եկեղեցու Իգնատիոս Զաքարյա և Անտիոքի Հույն Ուղափառ Եկեղեցու Իգնատիոս Դ. Պատրիարքների հրավերով և հովանավորությամբ կազմակերպված Դամասկոսում սկսվելիք Ուղղափառ /Բյուզանդական և Արևելյան/ բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչների հանդիպմանը (Տես էջ 157):

Մայիսի 9-ին, շաբաթ.- ԻԸ օր Յինանց:

Այսօր Գևորգյան Ծեմարանում Մայր Աթոռի Դիվանատան հովանավորությամբ անցկացվեց Հայագիտական օլիմպիադա, որին մասնակցում էին ՀՀ մարզերից և ԼՂՀ-ից ժամանած դպրոցական շրջանային և մարզային փուլերում հաղթած դպրոցականները:

Մայիսի 10-ին, կիրակի.- Տօն երեւման Ս. Խաչին:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ Գեր. Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը: Հրճաացս Ս. Պատարագի Սրբազան հայրը քարոզեց «Ի յերկնից երևեալ նշանն յաղթութեան. այսօր հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան» (շարական, Կանոն Գ օր Խաչի) բնաբանով: Ս. Պատարագին ներկա էին մայիսի 9-ին մեկնարկած Համահայկական հայագիտական օլիմպիադայի մասնակից դպրոցականները, որոնց Սրբազան հոր ձեռամբ Գևորգյան Ծեմարանի հանդիսությամբ դահլիճում շնորհվեցին վկայականներ բարձր գիտելիքների համար:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան կարգ՝ մորոզ հանգուցյալ նշանավոր երգչուհի Լուիզա Պողոսյանի հոգու խաղաղության և փրկության համար:

Մայիսի 17-ին, կիրակի.- Զ կիրակի: ԼԶ օր Յինանց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս Խալաթյանը: Հրճաացս Ս. Պատարագի Հոգեշնորհ Հայր սուրբը քարոզեց «Ես իսկ եմ յարութիւն և կեանք, ով հաւատայ յիս թեպէտ և մեռանի՝ կեցցէ» (Հովհ. ԺԱ 25) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Մայիսի 21-ին, հինգշաբթի.- Համբարձումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Թիշատակ փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն Հայոց Ի Սոյլ Ի Ս: Էջմիածին, յամի Տեառն 1441: Տօն ազգային:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գևորգյան Ծեմարանի տեսուչ Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաջարյանը: Հավարտ Ս. Պատարագի Գերապատիվ Հայր սուրբը քարոզեց «Արք զալիլեացիք, զի՝ կայք հայեցեալ ընդ երկինս. այս Յիսուս, որ վերացաւ ի ձեռք յերկինս, սոյնպէս եկեսցէ զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս» (Գործք. Ա 11) բնաբանով:

Այնուհետև կատարվեց Հայրապետական մաղթանք՝ 1441 թ. Մայր Աթոռի՝ Սսից Ս. Էջմիածին փոխադրման տարեդարձի առթիվ:

Մայիսի 23-ին, շաբաթ.- ԽԲ օր Յինանց:

Այսօր Մայր Աթոռ ժամանեցին Ռումինիայի թեմի առաջնորդ Գեր. Տ. Տիրայր արքեպս. Մարտիրոսյանը, ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդ Գեր. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Կանադայի թեմի առաջնորդ Գեր. Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Փարիզի առաջնորդ և Արևմտյան Եվրոպայում Հայրապետական պատվիրակ Գեր. Տ. Գյուտ արքեպս. Նազազյանը և Կիլիկիայի Կաթողիկոսության սիաքան, Թեոֆանի թեմի առաջնորդ Գեր. Տ. Արտակ արքեպս. Մանուկյանը՝ մասնակցելու Սարդարապատի հերոսամարտի և Առաջին Համաշխարհային պատերազմի 80-ամյակի հանդիսություններին:

Մայիսի 24-ին, կիրակի.- Երկրորդ Ծաղկազարդ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ.

Ջարեմ աքեղա Կաբադյանը: «Հայր մեր»-ից առաջ Հոգեշնորհ Հայր սուրբը ընթերցեց Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակը՝ գրված Սարդարապատի հերոսամարտի 80-ամյակի առիթով (Կոնդակը տե՛ս էջ 3):

Մայիսի 28-ին, հինգշաբթի. - ԽԷ օր Յինանց:

Այսօր Մայր Աթոռի միաբանությունը մասնակցեց Սարդարապատի հերոսամարտի 80-ամյակի տոնակատարություններին (Տես էջ 13):

Եռյմ օրը Հայաստանում տեղակայված Ռուսաստանի Դաշնության սահմանապահ ֆեդերալ ծառայության հմր. 2433 զորամասի հրամանատարության հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Տ. Կարապետ աքեղա Հարությունյանն ու Հարություն սարկավազ Հարությունյանը մասնակցեցին սահմանապահների օրվան և սահմանապահ զորքերի կազմավորման 80-ամյակին նվիրված հանդիսությունը:

Այս զորամասում բազմաթիվ ոռու գինվորների կողքին ծառայում են մահ հայեր:

Տ. Կարապետ աքեղա Հարությունյանը, օրհնելով սահմանապահներին, պատգամեց նրանց համերաշխ ու արհաբար պաշտպանել հայրենի սահմանները:

Մայիսի 29-ին, ուրբաթ. - ԽԸ օր Յինանց:

Այսօր Գևորգյան Հոգևոր Ընտարանում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Գեր. Տ. Ներսես արքեպս. Պողապալյանի մախազահությամբ, նշվեց Հայաստանի առաջին Հանրապետության հաստատման և Սարդարապատյան հերոսամարտի 80-ամյակը:

«1918 թ., երբ գրավված էր Ալեքսանդրապոլը, երբ Ամենայն Հայոց Գևորգ Ե Կաթողիկոսին թելադրվում էր լքել Մայր Աթոռն ու ավելի ապահով վայրեր մեկնել, Հայոց Կաթողիկոսն իր անհողողող կեցվածքով ու ռազմի կոչով եռանդ ու ոգի հաղորդեց հայ ժողովրդին, դրանով իսկ փրկելով Հայաստան անուր», խոսքերով Սարդարապատի հերոսամարտում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հոգևորականության անուրանալի դերի մասին փաստեց Գևորգյան Ընտարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաբաբյանն իր բացման խոսքում:

Հայ հոգևորականները դարձան ռազմի գինվորներ, ՕՍ. Խաչը ձեռքներին առաջնորդեցին մահապարտների զնդին, ժողովրդի հետ մեկտեղ կերտեցին հայոց պատմական հաղթանակը: Այս մասին բանախոսեց Ընտարանի դասախոս Ավետիս Հարությունյանը:

Ցերեկությունը ներկա էին գերաշնորհ և հոգեշնորհ հայեր, 80-ամյակի հանդիսությունների առիթով Հայաստան ժամանած Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչներ, դասախոսներ, հյուրեր:

Ներկաներին Սարդարապատյան հերոսամարտին նվիրված գրական-գեղարվեստական հայտագրով ներկայացան Ընտարանի ուսանողներն ու երգչախումբը:

«Սա հաղորդություն էր, հաղորդություն մեր անցյալի և հերոսների հոգու հետ», - ասաց Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը:

Մայիսի 30-ին, շաբաթ. - ԽԹ օր Յինանց:

Այսօր, հավարտ Առավոտյան ժամերգության, Մայր Աթոռի միաբանությունը, հյուր հոգևորականների և Գևորգյան Ընտարանի սաների հետ, մախազահությամբ Մայր տաճարի լուսաբարապետ Գեր. Տ. Հուսիկ արքեպս. Սանթրույանի, կատարեցին Հոգեհամզստյան կարգ երանաշնորհ Գևորգ Ե Սուրենյանց Հայրապետի

շիրմի առջև՝ նրա հոգու խաղաղության և ի լույս խորանս բնակության համար, ինչպես նաև աղոթքի և հիշատակության պահ էր Սարդարապատյան հերոսամարտին մասնակցած ամբողջ հոգևոր դասի հոգիների համար: Հավարտ արարողության Սրբազան հայրը իր հոգելից պատգամը տվեց ներկաներին:

Նույն օրը: Կեսօրից հետո, Մայր Աթոռի միաբաններ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Ս. Հոսիսիսն վանքի վանահայր Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը, Բանակի հոգևոր խորհրդատու Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանը, Արցախի թեմի առաջնորդ Գեր. Տ. Պարզև եպս. Մարտիրոսյանի հրավերով մեկնեցին Բերձոր (Հալիմ)՝ մասնակցելու տեղի Ս. Համբարձում եկեղեցու բացման սրբազան արարողությանը (տե՛ս էջ 155):

Մայիսի 31-ին, կիրակի.- Հոգեգալուստ (Պենտեկոստե):

Այսօր Մայր Տաճարում, Առավոտյան ժամերգությունից հետո, տեղի ունեցավ ուրարի տվչություն: Գևորգյան Ընտարանի վեց ուսանող դպիրներ՝ Սահակ Ղազարյանը, Մկրտիչ Այվազյանը, Վիգեն Ղազարյանը, Հրայր Խաչատրյանը, Արա Նալչաշյանը և Մուշեղ Հովհաննիսյանը, ձեռամբ Մայր Տաճարի լուսարարպետ Գեր. Տ. Հուսիկ արքեպս. Սանթրույանի, ստացան ուրարներ:

Սրբազան հայրը «Պահպանիչ» աղոթքով ուսանողների ուսերին օգեց «գտորբ ուրարսմ» և պատվիրեց երբեք չշեղվել մեր Մայր Եկեղեցու դավանական սկզբունքներից ու ավանդություններից, մաղթեց ծառայասիրության բարձր ոգի և Հոգեգալստյան հրաշալի տոնի առիթով Ս. Հոգու շնորհների առատ հեղուկ նրանց վրա: Արարողության ավարտին հոգևորականները, ճեմարանականները, ինչպես նաև ներկա հավատացյալները շնորհավորեցին ուրարակիրներին՝ ցանկանալով նրանց հաստատունություն իրենց ուխտի և ծառայության մեջ:



Նույն օրը Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ Գեր. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Հընթացս Ս. Պատարագի «Հայր Երկնաւոր», «Որդի Աստուծոյ» և «Հոգի Աստուծոյ» փառաբանական երգերից առաջ, յուրաքանչյուր բաժնին համապատասխան, հատված առ հատված ընթերցվեց Ս. Երրորդությանն ուղղված Հովհ. Ոսկերեքյանի փառաբանական աղոթքը: Ապա քարոզեց Սրբազան հայրը:



Հոգեգալստյան ամենազվարճ տոնի առիթով Մայր Աթոռի միաբաններ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Տ. Բագրատ արքեպ. Գալստյանը և Տ. Արշեն արքեպ. Սանոսյանը Ս. Պատարագ մատուցելու և Բանին Կենաց քարոզության համար մեկնեցին համապատասխանաբար Ջրվեժ գյուղի Ս. Կաթողիկեն և Արզավանի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցիներ:

ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷԶՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ**

(1974-1983)

1980

856. Արահամյան Ա. Գ. պրոֆ.: - Ղափիթ քահանա Ձեյթունցու տոմարը: [Ուսումնասիրությունը եւ քննադիր]: 1980, հոկտ., էջ 3-8:

857. Արահամյան Ա. Գ.: - Մի քանի վավերագրեր մեծ եղեռնի արյունոտ օրերից: 1980, ապրիլ, էջ 51-56, մայիս, էջ 45-49:

858. Աղուդիդիս Սավվա: - Լեւրածություն Լեռան քարոզի: (Թարգմանությունը հունարենից՝ եզնիկ քին. Պետրոսյանի): 1980, փետրվար-մարտ, էջ 58-63:

859. Աճնյան Շահե արքեպիսկոպոս: - Ա. Պատարագը՝ վկայություն Սստուծո թագավորության եւ անոր արքայության փորձառությունը: 1980, հունիս-հուլիս, էջ 33-35:

860. Ամալյան Հ[այկ]: - Մակաբայեցվոց գրքի հայերեն թարգմանության ժամանակի եւ հեղինակի մասին: [Ուսումնասիրություն]: 1980, հունվար, էջ 43-53, փետրվար-մարտ, էջ 70-74, օգոստ., էջ 44-51, սեպտ., էջ 44-51:

861. Ամանորը Մայր Աթոռում: 1980, հունվար, էջ 24-25:

862. Աճնյան Հայոց Վեհափառ Հայրապետի եւ պետական բարձրաստիճան անձնավորությունների միջեւ փոխանակված հեռագրեր նոր տարվա առթիվ: 1980, հունվար, էջ 11-13:

863. ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի հոգեւորականաց համագումարը: 1980, հունիս-հուլիս, էջ 45:

864. ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի 78-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովի գումարումը: 1980, հունիս-հուլիս, էջ 43-44:

865. Այվազյան Արզամ: - Մեսրոպավանի, Շրջուի, Ողոհիի եւ Լորակերտի ճարտարապետական հուշարձանները: [Ուսումնասիրություն] 1980, փետրվար-մարտ, էջ 90-98:

Ութ նկար:

865. Այցելություն Հարավային Ամերիկայի տիրախնամ թեմին: [Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի կողմից]: 1980, սեպտ., էջ 37-38:

866. Անդրանիկ սուրբ պատարագ եւ առաջին քարոզ: - Տ. Հովման արեղա Տերտերյանի ուխտի անդրանիկ քարոզը: - Տ. Արել արեղա Օղլուգյանի ուխտի անդրանիկ քարոզը: - Տ. Ջատիկ արեղա Ավետիքյանի ուխտի անդրանիկ քարոզը: 1980, օգոստ., էջ 34-40:

867. Ապրիլյան եղեռնի վաթսուհինգերորդ տարեկիցի նշումը Մայր Աթոռում: 1980, ապրիլ, էջ 41-42:

868. Առաքել Ն. Պատրիկ: - «Պաղոս»: (Կենսագրության մի փորձ): 1980, հոկտ., էջ 31-34:

869. Սատուրյան Ավագ ծայրագույն վարդապետ: - Քրիստոսի մարդեղության եռակի պաշտոնները: [Ուսումնասիրություն]: 1980, նոյեմբ., էջ 8-15:

870. Ստվածաբանների հանդիպում Լեոնիդորադի Յոգեւոր ճեմարանում: 1980, հունվար, էջ 30:

871. Ավարտաճառի պաշտպանություն ծայրագույն վարդապետական իշխանություն ստանալու համար: [Ավագ վրդ. Սատուրյան]: 1980, հոկտ., էջ 12-13:

872. Ավետիքյան Ջատիկ արքեպիսկոպոսի հանդիսություն Յոգեւոր ճեմարանում: 1980, հունիս-հուլիս, էջ 14-18:

873. Ավետիքյան Ջատիկ արքեպիսկոպոսի արքեպիսկոպոս Օրբելյան: («Հակաճառութիւն ընդդէմ երկաթնակաց» ժողովածուն եւ նրա նորագույն հատվածները): 1980, հոկտ., էջ 22-30:

874. Ավետիքյան Ջատիկ արքեպիսկոպոսի արքեպիսկոպոս Օրբելյան: [Կյանքն ու գործունեությունը]: 1980, սեպտ., էջ 47-55:

875. Ավետիքյան Ջատիկ արքեպիսկոպոսի Սուրբ Գրիգոր Նարեկացուն նվիրված երեկո Յոգեւոր ճեմարանում: [Երեք նկար]: 1980, նոյեմբ., էջ 16-19:

876. Ավետիքյան Ջատիկ արքեպիսկոպոսի Սուրբ Ստեփանոսի տոմը եւ սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում: [Հուսիկ արքեպիսկոպոս Սանթրույանը վեց հոգու սարկավագ է ձեռնադրում՝ Աշոտ սրկ. Պետրոսյան, Ալեքսան սրկ. Թադևոսյան, Ստեփան սրկ. Կարապետյան, Վարդան սրկ. Բաղդասարյան, Մեսրոպ սրկ. Խաչիկյան]: 1980, դեկտ., էջ 31-33: Նկ. Ձեռնադրությունից մի պահ:

877. Արաբաջյան Անանիա վրդ.: Նորին Սուրբ Օծություն S.S. Վազգեն Ա Կաթողիկոսի այցելու-

թյունը Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ին: 1980, ապրիլ, էջ 28-39:

Բովանդ.: - 11 ապրիլի, ուրբաթ, մեկնում Վեհափառ Հայրապետի: - Դիմավորում Թբիլիսիում: - Թբիլիսիի հայոց ս. Էջմիածին եկեղեցում: - Ընդունելություն Վրաց պատրիարքարանում: - Այցելություններ: - Վեհափառ Հայրապետի խոսքը Վրաց սուրբ Սիոն տաճարում: - Հայրապետական պատրագ Թբիլիսիի Հայոց ս. Գեւորգ եկեղեցում: - Վեհափառ Հայրապետի խոսքը ս. Գեւորգ եկեղեցում պատարագի պահին: - Պաշտոնական ընդունելություն: - Իլիա Բ Կաթողիկոսի խոսքը ճաշկերույթին: - Վեհափառի խոսքը ճաշկերույթին: - Այց Գորի եւ Բորժոմի քաղաքներ: - Վերադարձ Մայր Աթոռ:

Երկու նկար:

878. Արաբաջյան Անանիա վարդապետ: - Սուրբ Եփրեմ Խուրի Ասորի (306-379): [Հայերեն թարգմանված աղոթքից մեկ հատված]: 1980, նոյեմբ., էջ 28-30:

879. Բաղդասարյան Վարդան: - Ուխտագնացություն դեպի Լճբատա, Հաթիճա, Օծունի, Հաղպատի, Սանահինի եւ Դյուսիսային Հայաստանի այլ նշանավոր վանքերն ու պատմական հուշարձանները: 1980, հունիս-հուլիս, էջ 46-51:

880. Բեյրութի «Կրոնասեր տիկնանց համախմբումի» գործունեությունը: 1980, փետրվար-մարտ, էջ 42-43:

881. Բեյրութի «Կրոնասեր տիկնանց համախմբում»-ի գործունեության քառամյակը: 1980, նոյեմբ., էջ 52-53:

882. Բունիաթյան Գրիգորիս վարդապետ: - Ամանորյա քաղոց Մայր Տաճարում (1 հունվարի 1980 թ.): 1980, հունվար, էջ 36-37:

883. Գալուստյան Ընդիգ արքեպիսկոպոս: - Կարգ ու կանոն: 1980, օգոստ., էջ 19-30:

884. Գահակալական հանդիսություն Ամստերդի և Դամայն Արեւելքի Ստորական ուղղափառ եկեղեցու նորոգման պատրիարք Նորին Ամենապատվություն Մար Իզմատիոս Ջաքքա Ա-ի: 1980, սեպտ., էջ 44:

Նորոգման պատրիարքի նկարը: Ներդիր:

885. Գելորգ Ե Կաթողիկոս Ամենայն Դայոց: - Երջանկահիշատակ Տ.Տ. Գելորգ Ե Կաթողիկոսի սրտառուչ կոմդակը Մայր Աթոռում 1914 թվականի դեկտ.ի 28-ին եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողով նշանակելու մասին՝ Արեւմտյան Դայատանից ս. էջմիածին հասած թվառ և անօթեւան հայ զաղթականներին օգնելու համար: 1980, ապրիլ, էջ 25-27:

886. Դիպլոմային աշխատանքների պաշտպանության հոգեւոր ճեմարանում: 1980, ապրիլ, էջ 42-45:

887. Դիվան Մայր Աթոռի: - Դադորդագրություն: [Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգենի Ս Կաթողիկոսի գահակալության 25 ամյակին նվիրված հանդիսությունները 1981 թ. աշնանը կատարելու մասին]: 1980, փետրվար-մարտ, էջ 8:

888. Եկեղեցիների Դամաշխարհային հորդի «Առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի նստաշրջանի գումարումը Մելբուռն քաղաքում: 1980, հունիս-հուլիս, էջ 53-56:

Մեկ նկար:

889. Եկեղեցական նոր Ամսագիր: [Նվիրված Լուս Ամսեւսում հրատարակվել սկսված «Մայր Եկեղեցի» ամսագրին]: 1980, հունիս-հուլիս, էջ 52:

890. «Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի» գլխավոր քարտուղար դոկտոր Գլեն Գարֆիլդ

Վիլամսի այցելությունը Մայր Աթոռ: 1980, սեպտ., էջ 42:

891. Երուսաղեմի Դայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի այցելությունը Ռումինիայի և Բուլղարիայի հայ համայնքներին: Սրբազան պատրիարք հայրը Բուլղարիայում: [3օր նկար]: 1980, հունիս-հուլիս, էջ 22-26:

892. Էկումենիկ կյանք: - Եկեղեցիների Դամաշխարհային հորդի կենտրոնական կոմիտեի տարեկան նստաշրջանը ժնեւում: - Պաշտոնական հանդիպում Սովետական Միությունում գործող եկեղեցիների և ՍՍՄ-ի եկեղեցիների ներկայացուցիչների միջև օգոստ.ի 22-25-ը ժնեւում: [Վազգեն Վեհափառի և դոկտ. Վ. Ա. Վիսերթ Դուֆթի միջև փոխանակված նամակներ]: 1980, սեպտ., էջ 39-41:

Մեկ նկար:

893. Էկումենիկ կյանք: - «Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի 8-րդ համաժողովը»: Արեւելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների եկեղեցիների ներկայացուցիչների երկրորդ հանդիպումը Եկեղեցիների Դամաշխարհային հորդի դեկավարության հետ: 1980, հունվար, էջ 32-34:

894. Էկումենիկ հանդիպում Դաննովեր քաղաքում: 1980, սեպտ., էջ 43:

895. «Էջմիածին» ամսագրի խմբագրություն: - Մասնավոր վարդապետական աստիճանի տվչություն: - [Սրսեն եպս. Բերբերյանը վարդապետական մասնավոր գավազան կրելու իրավունք է շնորհում տ. Դակոբ արք. Գրընճյանին]: [Նորոգմայի կենսագրությունը և դիմանկարը]: 1980, փետրվար-մարտ, էջ 32-33:

Նկ. Այվագովսկի. Դիսուսի երեւումը ծովի վրա: Ներդիր:

896. «Էջմիածին» ամսագրի խմբագրություն: - Վաստակավոր արվեստաբանը: [Սարգիս Մելիք-սեթյանի ծննդյան 80-ամյակի առթիվ]: [Դիմանկար]: 1980, փետրվար-մարտ, էջ 40-41:

897. Թահմիզյան Ն[իկողոս]: - Սահակ Չորափորեցին եւ խաչի ու եկեղեցու շարականները: [Վեց ծայնագրություն]: 1980, մոյեմբ., էջ 37-47:

898. Թեմական կյանք: Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմ: 1980, մոյեմբ., էջ 35-36:

899. Ժամանակագրութիւն ձեռնադրութեանց (1759-1798): [Ակրտիչ եպիսկոպոսի եւ Գալուստ սարկավագի գործի առաջաբանը գրել եւ բնագիրը հրատարակության է պատրաստել Գեւորգ Հունանյանը]: (Մատենադարանի ձեռ. թիվ 2882, էջ 1ա-8բ): 1980, հոկտ., էջ 42-51:

900. Ժողովուրդների խաղաղության համար Համաշխարհային պառլամենտի միստը Սոֆիայում: 1980, հոկտ., էջ 52-53:

901. Ի գիտություն: [Էջմիածին] ամսագրի խմբագրությունը տ. եզմիկ քին. Պետրոսյանի, Սուրեն Քոլանջյանի եւ Հովհաննես Թովուզյանի ընդգրկմամբ համալրելու մասին]: 1980, հունվար, էջ 27:

902. Իսլամական կոնֆերանս Տաշքենդում: [Վազգեն Վեհափառի գրությունը կոնֆերանսին]: 1980, սեպտ., էջ 45-46:

903. Իրացի Հայոց թեմի առաջնորդի ընտրություն: [Առաջնորդ է ընտրվում Տ. Ավագ վրդ.՝ Սաստուրյանը]: 1980, ապրիլ, էջ 47-48:

904. Լեփսիուս Վերոնիկա: - Դոկտ. Հովհաննես Լեփսիուսի դուստր Վերոնիկա Լեփսիուսի մամակը Հայոց Հայրապետին: [Վազգեն Ա-ին ուղղված մամակի բնագիրը եւ հայերեն թարգ-

մանությունը]: 1980, մոյեմբ., էջ 25-27:

Նկ. Դոկտ. Հովհաննես Լեփսիուս:

905. Լուրեր քույր եկեղեցիների կյանքից: - Բարեփոխական եկեղեցիների Համաշխարհային հորհրդի պատվիրակության այցը Կ. Պոլսի Հունաց Տիեզերական Պատրիարքին: 1980, հունվար, էջ 29:

906. Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքները շարունակող կոմիտեի մատաշըջանը: 1980, հոկտ., էջ 54-55:

907. Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի «Մեր աշխարհը, մրա խնդիրներն ու հույսերը» թեմայով միջազգային հանձնախմբի աշխատանքները Թբիլիսիում: 1980, հունվար, էջ 35:

908. Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի միջազգային սեմինարը Բուդապեշտում: 1980, հունիս-հուլիս, էջ 57:

909. Ծխական եկեղեցական ամսագիր: [Ավստրալիայի «Լույս» ամսագիրը]: [Ֆրանսիայի «Գեղարդ» պարբերաթերթը]: 1980, մոյեմբ., էջ 48-49:

910. Կ. Պոլսի պատրիարքական աթոռում: (Հռոմի քահանայապետ Նորին Սրբությունը Հովհաննես-Պողոս Բ Պապի այցելությունը Կ. Պոլսի Հայոց Պատրիարքական Աթոռին): 1980, հունվար, էջ 28:

911. Կարգ վարդապետացն հայոց: [Բնագիրը հրատարակության պատրաստեց Գեւորգ Հունանյանը]: 1980, փետրվար-մարտ, էջ 20-31:

912. Համայն Անգլիայի եպիսկոպոսապետ եւ միտրոպոլիտ Քենտրբերիի մորթնտիր արքեպիսկոպոս Ռոբերտ Ռանսիի գահակալությունը: [Վազգեն Վեհափառի շնորհավորական գիրը]. 1980, մայիս, էջ 25-26:

Ներդիր: Մեկ խաչքար:

913. Հայ եկեղեցու տոմեղի սրբերի համառոտ կենսագրությունները: 1980, հունվար, էջ 38-42, փետրվար-մարտ, էջ 34-39, հունիս-հուլիս, էջ 37-42, հոկտ., էջ 14-21, նոյեմբ., էջ 31-34:

914. Հայ նշանավոր բանաստեղծ Գեորգ Էմինի ծննդյան 60 ամյակին նվիրված երեկո Մայր Աթոռում: 1980, հունվար, էջ 26:

915. Հայրապետական գնահատանքի եւ օրհնության կոմդակներ: 1980, հունվար, էջ 19-20:

916. Հանգիստ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանի (1925-1980): [Մահախոսական-կենսագրական]: [Դիմանկարով]: 1980, դեկտ., էջ 34-35:

917. Հանդիսություն վեհարանում: 1980, դեկտ., էջ 19-28:

Բովանդ.՝ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի բացման խոսքը Սովետական Հայաստանի 60 ամյակի հանդիսության առթիվ: - Սիոն Կրկյաշարյանի զեկուցումը Հայաստանի 60-ամյակի առթիվ: - Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի ողջույնի խոսքը: - Հայոց Հայրապետի պատգամն ու օրհնությունը Հայաստանի վաթսուհինամյակին: [Եղիշե պատրիարք Տեր-տերյանի գրությունը Վազգեն Վեհափառին]:

Չորս նկար:

918. Հանքեր Ա. Մ.: - Նոր կտակարանի աստվածաբանության ներածություն: (Անգլերենից թարգմանեցին՝ Ստեփանոս արք. Չաքալյանը եւ Աթանաս քահանա Սովսիսյանը): 1980, փետրվար-մարտ, էջ 75-82:

919. [Հատիտյան Արթուր]: հմբագրական: Հայ ժողովրդի ազգային վերածննդյան փառապանծ հորեկյանը: 1980, դեկտ., էջ 11-12:

Մեկ նկար: Ներդիր:

920. [Հատիտյան Արթուր]: Հայ ժողովուրդը եւ իր Մայր եկեղեցին: հմբագրական: 1980, ապրիլ, էջ 6-9:

921. [Հատիտյան Արթուր]: - Մասնավոր եւ ծայրագույն վարդապետական գավազանի իշխանության տվյալյան կարգը: հմբագրական: [Արտատպված «Էքմիածին» ամսագրի 1958 Շ համարից]: 1980, փետրվար-մարտ, էջ 9-11:

922. [Հատիտյան Արթուր]: «Սիոն» ամսագիրը: [«Սիոն» ամսագրի շապիկը]: 1980, մայիս, էջ 33-38: Ներդիր: Մեկ խաչքար:

923. Հ.Բ.Ը. միության ցկյանս նախագահ տիար Ալեք Մանուկյանի ճառը: 1980, նոյեմբ., էջ 22-24:

924. Հեսիքիոս Երուսաղեմացու մի նորահայտ ճառը (նվիրված ս. Հովհաննես Մկրտչին): [Ռաջաբանը եւ բնագրի պատրաստումը Տ. Եզնիկ քին. Պետրոսյանի, թարգմանությունը՝ Երվանդ Մելքոնյանի]: 1980, փետրվար-մարտ, էջ 44-50: Բնագրի 4 լուսանկարներով:

Նկ.: խաչքար: Ներդիր:

925. Հորեկյանական հանդիսություններ Երուսաղեմի հայոց վանքում: [Նվիրված Տ. Չաքարիա պատրիարք Կոփեցու ծննդյան 200 ամյակին]: 1980, սեպտ., էջ 31-33:

926. Հորեկյանական հանդիսություններ: - 1980, դեկտ., էջ 13-18:

Բովանդ.՝ Հայրենիքի հասարակության եւ սփյուռքահայության ներկայացուցիչների ժողով: - Հանդիսավոր Միստ՝ Նվիրված Հայաստանի վաթսուհինամյակին: - Եպիսկոպոսաց խորհրդակցություն: - Հանդիսավոր ս. պատարագ, Հայրապետական կոմդակի ընթերցում եւ հայրապետական մաղթանք:

Մեկ նկար:

927. Հորեկյանական տոնակատարություն եւ խորհրդակցություն

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում: [Մաեւ Եղիշե պատրիարք Տերտերյանի եւ Շնորհք պատրիարք Գալուստյանի գիրը ուղղված Վազգեն Վեհափառին]: 1980, օգոստ., էջ 31-33:

928. Հոգեւոր պաշտոնյաների նոր նշանակումներ: 1980, փետրվար, էջ 18:

929. Հովհան Օձնեցի: - Ընդդեմ պալիկյանների: (Գրաբարից թարգմանեց՝ Սրշալույս Ղազինյանը): 1980, փետրվար-մարտ, էջ 51-57:

930. Հովհաննիսյան Վաչագան: - Սուրբ Նարեկացուն: [Բանաստեղծություն]: 1980, հունիս-հուլիս, էջ 36:

931. Հովվական այցելություն Իրաքի Հայոց թեմին: [Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի կողմից]: [Մեկ նկար]: 1980, ապրիլ, էջ 48-50:

932. Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի այցելությունը Կ. Պոլիս: 1980, հունվար, էջ 31:

933. Ղազարյան Մանյա: - «Մեկը դատաստանի» մեկնաբանումը XVII-XVIII դարերի հայ կերպարվեստում: [Ուսումնասիրություն]: 1980, փետրվար-մարտ, էջ 83-89:

934. Մադոյան Ա[րշակ]: Վահրամ վարդապետ Բաբունին եւ նրա «Ուտանաւոր պատմութիւնը»: [Ուսումնասիրություն] 1980, դեկտ., էջ 36-42:

935. Մահ Բարսեղ Թաշչյանի (1919-1980): [Մահախոսական-կենսագրական]: [Դիմանկարով]: 1980, մայիս, էջ 59:

936. Մահ դեկտ. Սարգիս Ալեքսանդրի Մելիքսեթյանի (1899-1980): [Մահախոսական-կենսագրական: Դիմանկարով]: [Վազգեն Վեհափառի ցավակցական հեռագիրը]: 1980, նոյեմբ., էջ 50-51:

937. Մահ պրոֆ. Առաքել Գեւորգի Առաքելյանի (1887-1980): [Մահախոսական-կենսագրական]: [Դիմանկարով]: [Վազգեն Վեհափառի ցավակցական հեռագիրը]: 1980, մայիս, էջ 57-58:

938. Մահ տ. Թորգոմ քահանա Փոսթեքյանի (1903-1980): [Կենսագրական-մահախոսական: Դիմանկարով]:

939. Մահ տ. Սահակ ավագ քահանա Ղազարյանի (1884-1980): [Կենսագրական-մահախոսական: Դիմանկարով]: 1980, հունիս-հուլիս, էջ 59:

940. Մահ տ. Կարապետ ավագ քահանա Քեմալյանի (1919-1980): [Մահախոսական-կենսագրական]: [Դիմանկարով]: 1980, օգոստ., էջ 61:

941. Մայր Աթոռում: (Մանր լուրեր): 1980, հունվար, էջ 26-27:

Բովանդ.՝ հունվարի 3: [Վեհափառ Հայրապետին եւ այցելում Ավետարանական եկեղեցիների Համաշխարհային հորհրդի նախագահ Իվան Սիխայելի Սերգեյը (ԱՄՆ), ԱՄՆ-ի ռուսական եւ ուկրաինական Ավետարանական-Արտչական եկեղեցիների հորհրդի նախագահ Նիկոլայ Իվանի Սելվիսյուկը եւ Մոսկվայի Ավետարանական-Արտչական եկեղեցու քարոզիչ Ալեքսանդր Վասիլիի Սավելիը]:

942. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1980, փետրվար-մարտ, էջ 17-19:

943. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1980, ապրիլ, էջ 45-46:

Բովանդ.՝ ապրիլի 17 [Վեհափառ Հայրապետը ընդունում է Տոկիոյի «The Yomiuri Shimbun» ճապոնական օրաթերթի խմբագիրներ Կոզո Կիմուրային եւ Յուշիմորի Տամ-դոյին]: - Ապրիլի 29 [Վեհարանում դասախոսությամբ համդես է գալիս

պարսկահայ ճարտարապետ, գերմանիայի համալսարանի դասախոս Արմեն Հախնազարյանը]:

944. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1980, մայիս, էջ 28-30:

Բովանդ.: մայիսի 4 [Ուխտավորաբար Մայր Աթոռ եւ Վեհափառ Հայրապետին է այցելում Պոլիդիվի (Բուլղարիա) հայոց հոգևոր հովիվ Տ. Սահակ քին. Մեսրոպյանը]: - Մայիսի 18 [Մայր Տաճարում Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգիստ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, նորոգ հանգուցյալ դոկտ. պրոֆ. Առաքել Առաքելյանի հիշատակին]:

945. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1980, հունիս-հուլիս, էջ 19-21:

Բովանդ.: Հունիս 17 [Վեհափառ Հայրապետին է այցելում գերմանացի հայագետ դոկտ. Բրյուքեր Բենթսենը (Բեռլին)]: - Հունիս 18 [Վեհափառին է այցելում Մոսկվայում Ավստրիայի հանրապետության արտակարգ դեսպան Հերալդ Յինդեգերը]: - Հունիս 22 [Վեհափառ հայրապետին է այցելում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ տ. Սամվել վրդ. Սամուրյանը]:

946. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1980, օգոստոս, էջ 41-43:

Բովանդ.: հուլիս 27 [Մայր Տաճարում ս. պատարագ է մատուցում նորընծա Տ. Ջատիկ աբղ. Ավետիքյանը: Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ «Նորոգ հանգուցեալ» Մայր Աթոռի բարերար մարսելահայ Արծրուն Ջրբաշյանի հիշատակին]: - Օգոստոս 24 [Մայր Տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր

Աթոռում գտնվող Խարթումի հոգևոր հովիվ Տ. Օշական քին. Աշոգյանը: Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը]:

947. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1980, սեպտ., էջ 34-36:

Բովանդ.: սեպտեմբերի 7 [Մայր Տաճարում Ավագ խորանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Ներսես եպս. Պողապալյանը: Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվում է հոգեհանգիստ հայ ժողովրդի ազնիվ բարեկամ պրոֆ. Հովհաննես Լեյպցիուսի հիշատակին: Նրա դստեր՝ Վերոնիկա Լեյպցիուսի խնդրանքով]: - Սեպտեմբեր 21 [Վեհափառ Հայրապետին են այցելում Մայր Աթոռի բարերարներ ֆրանսահայ ժիրայր Սիմասյանը եւ ամերիկահայ Հրայր Հովնանյանը՝ տիկնոջ հետ]:

948. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1980, հոկտ., էջ 9-11:

Բովանդ.: Հոկտեմբեր 1 [Մայր Աթոռ եւ Վեհափառ Հայրապետին են այցելում Ավստրալիայից եւ Միացյալ Նահանգներից ժամանած 80 հայ ուխտավորներ, որոնց անունից Վեհափառ Հայրապետին է դիմում հայ բարեգործական ընդհանուր Միության Նյու Յորքի տիկնանց հանձնաժողովի ատենապետ Լուսի Այլընը: Նույն օրը երեկոյան, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարված միաբանական հերթական հավաքություն «Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հալացքները» թեմայով բովանդակալից դասախոսություն է կարդում Մատենադարանի ավագ գիտաշխատող Սեն Արեւշատյանը]: - Հոկտեմբերի 5 [Մայր Տաճարում ս. պատարագ է մատուցում Իրաքի Հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ

վրդ. Ասատուրյանը: Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգիստ՝ 1920 թ. Հաճընի հերոսամարտում զոհված հայ մարտիկների հիշատակին]: - Հոկտեմբերի 19 [Ուխտավորաբար Մայր Աթոռ Եւ Վեհափառ Հայրապետին է այցելում պոլսահայերի մի խումբ, որի անունից Վեհափառին է դիմում Կարալիս Ուղուրյանը]: - Հոկտեմբերի 25 [Ուխտավորաբար Մայր Աթոռ Եւ Վեհափառ Հայրապետին է այցելում Լիբանանահայ մտավորական պրոֆ. Բարունակ Թովմասյանը]:

949. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1980, նոյեմբ., էջ 20-21:

950. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1980, դեկտեմբեր, էջ 29-30:

Բովանդ.՝ դեկտեմբեր 14 [Մայր Տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Սրաբաքյանը: Հավարտ ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է քառասունքի հոգեհանգիստ հանգուցյալի՝ Գերագույն Հոգեւոր խորհրդի անդամ, արվեստաբան դոկտ. Սարգիս Մելիքսեթյանի հիշատակին]:

951. Մանուկյան Թորգոմ արքեպիսկոպոս: - Հայ կրոնական դաստիարակությունը անցյալին և այսօր: 1980, սեպտ., էջ 12-19:

952. Մանուկյան Սերովբե արքեպիսկոպոս: - Ծես և արարողություն: 1980, սեպտ., էջ 7-11:

953. Մանուկյան Սիոն արքեպիսկոպոս: - Աղոթքի կենսագործող գործությունը: 1980, հունիս-հուլիս, էջ 26-32:

954. Մարուքյան Հովհաննես ավագ քահանա: - Սուրբ Խաչի խորհուրդը: 1980, օգոստ., էջ 52-54:

955. Մուրադյան Պարույր: - Ղազար Փարպեցու մի տեղեկության պատմա-մշակութային նշանակությունը: [Ուսումնասիրություն]: 1980, հունվար, էջ 54-57:

956. Նշխարներ Որոգինեսի հայկական թարգմանություններից: [Բնագիր: Հրատարակության պատրաստեցին Եզնիկ քին. Պետրոսյանը և Հայկազուն արք. Նաջարյանը]: 1980, մայիս, էջ 39-44: Բնագրային մի քանի լուսանկարներով:

957. Զինջինյան Ջավեն արքեպիսկոպոս: - Սրտասահմանյան պայմաններու ազդեցությունը Հայ եկեղեցիի կարգ ու սարքի վրա: - Հայ ժողովուրդի կենսունակությունը: - Մերձավոր Արեւելք և խոշոր մայր ցամաքամասեր: - Արեւմտյան երկրներում մեջ և հետզհետե ամենուրեք: 1980, սեպտ., էջ 20-27:

958. Պետրոսյանց Վիկտոր Մնացականի: - Հայրենական մշակութի պաշտպան հայ կանայք: 1980, հոկտ., էջ 35-41, դեկտ., էջ 43-45:

959. Սարգսյան Եղիշե քին.: - Ս. Գեղարդա վանքը հիմնովին վերանորոգված: 1980, նոյեմբ., էջ 54-56:

Երեք նկար: Ներդիր:

960. Սարդարապատի հերոսամարտի ոգեկոչումը Մայր Աթոռում: Վեհափառ Հայրապետի քարոզը Հոգեգալստյան տոնի և Սարդարապատի հերոսամարտի տարեդարձի առթիվ Մայր Տաճարում: [Նկ.: Ջորավար Պողոս Փիրումյան]: 1980, մայիս, էջ 21-24:

961. Սուրբ Ջատիկի տոնը Մայր Աթոռում: 1980, ապրիլ, էջ 40:

962. Սրբոց Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում: 1980, փետրվար-մարտ, էջ 12-13:

963. Սուրբ Ստեփանոսի տոմը եւ սարկավազական ձեռնադրությունը Մայր Աթոռում: [Գուսիկ սրբազանը սարկավազ է ձեռնադրում Տիգրան, Հայկ, Ստեփան, Բորիս, Վարդգես եւ Անդրանիկ ձեռնարկաններից]: 1980, հունվար, էջ 21-24:

Նկ. Մի պահ ձեռնադրությունից:

964. Սուրբ Ծննդյան հանդիսություններ Մայր Աթոռում: 1980, հունվար, էջ 25-26:

965. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ազնուափայլ տիկին Աննա Զոպանեանին, հարազատ դստեր Մայր Աթոռյ Սրբոյ Էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Բաղդադ: Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը Բաղդադի Հայոց տիկնանց աղքատախնամ մարմնի ատենապետուհի տիկին Աննա Զոպանյանին «ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին: 1980, ապրիլ, էջ 15-16:

966. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ազնուափայլ տիկին Էօժեն Ստեփանեանին, հարազատ դստեր Մայր Աթոռյ Սրբոյ Էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Բաղդադ: Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը Բաղդադի Հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգեհոնահար տիկին Էօժեն Ստեփանյանին «ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին: 1980, ապրիլ, էջ 16: Մեկ ներդիր՝ Ղանիայում հրատարակվող միսիոներական ամսագրի 1980 թ. ապրիլի համարի, որը նվիրված է Վազգեն Ա Վեհափառին եւ Հայաստանի պատմական վանքերին, շապիկը:

967. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ազնուափայլ օրիորդ Հռիփսիմ Գաղազաշեանին, հարազատ դստեր Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Փարիզ: Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը Փարիզի Հայոց դպրոցաներ տիկնանց վարժարանի տնօրենուհի օրիորդ Հռիփսիմե Գաղազաշեանին «ս. Սահակ - ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին: 1980, ապրիլ, էջ 13-14:

968. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Կանադայի Հայոց ինքնուրույն թեմական վիճակ կազմելու ամօրիվ: 1980, մայիս, էջ 3-4:

969. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակություն հաստատելու եւ հոգեշնորհ տ. Մեսրոպ ծայրագույն վարդապետ Գրիգորյանին Կենտրոնական Եվրոպայի Հայոց Հայրապետական պատվիրակ նշանակելու մասին: 1980, հունվար, էջ 14-16:

970. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման վաթսուևամյակի ամօրիվ: 1980, դեկտ., էջ 3-5:

971. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակը՝ Հայաստանում Սովետական կարգերի հաստատման վաթսուևամյակի ամօրիվ: 1980, մայիս, էջ 3-5:

972. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի կոնդակը մասնավոր վարդապետական եւ ծայրագույն վարդապետական աստիճանների տվչության կարգի մասին: 1980, փետրվար-մարտ, էջ 3-5:

973. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակը Բեյրութի կրոնասեր տիկնանց համախմբումի անդամներին եւ նրանց «ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին: 1980, մոյսմբ., էջ 5-7:

974. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Գերաշնորհ տ. թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, առաջնորդին Արեւելեան թեմին Հայոց Միացեալ Նահանգաց, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Նյու-Յորք: Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակը ԱՄՆ-ի Նյու Պրիթլըն Գընեթիքեթի ս. Հարություն նորակառույց եկեղեցու օծման առիթով: 1980, մայիս, էջ 18-19:

975. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Գերաշնորհ տ. Գարեգին եպիսկոպոս Գազանճեանին, քարեջան որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Սիդնեյ: Վեհափառ Հայրապետի կոնդակը տ. Գարեգին եպիսկոպոս Գազանճյանին արքուքյան պատիվ շնորհելու մասին: 1980, հունվար, էջ 18-19:

976. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Գերաշնորհ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկեանին, քարեջան առաջնորդին թեմին Հայոց Ռումանիոյ եւ թեմին Հայոց Պուլկարիոյ, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Բուխարեստ: Վեհափառ Հայրապետի կոնդակը տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկեանին արքութեան պատիվ շնորհելու մասին: 1980, փետրվար-մարտ, էջ 6-7:

977. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Գերաշնորհ տ. Ղաւիթ եպիսկոպոս Սահակեանին, Հայրապետական պատվիրակի Հայոց Հարաւային Ամերիկայի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Բուենոս-Այրես: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Գերաշնորհ տ. Դավիթ եպիսկոպոս Սահակեանին Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետական Պատվիրակ նշանակելու մասին, 1980, հունվար, էջ 17-18:

978. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Գանատայի Սէնթ Գեթրինգի ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, հոգեբարձութեան յարգարժան անդամներուն եւ համայն հաւատացեալ ժողովրդին ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Սենթ-Գեթրինգ: Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակը Կանադայի Հայոց Սենթ Գեթրինգի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու

շինության հիսնամյակի առիթով: 1980, մայիս, էջ 17-18:

979. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Հայ Բարեգործական Ընդհանուր Միության «Դարուհի Յակոբյան» վարժարանի տնօրենության, ուուցչական մարմնի պաշտօնեության եւ աշակերտության ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական Աստուածականոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն: Բեյրութ: Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը Բեյրութի Հայ Բարեգործական Ընդհանուր Միության «Դարուհի Յակոբյան» վարժարանի քառասնամյակի առթիվ: 1980, ապրիլ, էջ 12-13:

980. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Հայոց Հայրապետի օրհնության կոնդակը Դանիայի կանանց միսիոներական ընկերության նախագահ սարկավագուհի քույր Քրիստին Վինդին եւ պատասխանը: Կոպենհագեն: 1980, ապրիլ, էջ 17-18:

981. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Հոգեշնորհ տ. Աւագ վարդապետ Ասատուրեանին, առաջնորդին թեմին Հայոց Իրաքի, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակը Իրաքի Հայոց թեմի նորընտիր առաջնորդ տ. Ավագ վարդապետ Ասատուրյանի առաջնորդական պաշտոնը հաստատելու մասին: 1980, մայիս, էջ 16-17:

982. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Մեծայարգ պրոֆ. Բարունակ Թովմասեանին, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Բեյրութ: Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակը բեյրութաբնակ պրոֆեսոր Բարունակ Թովմասյանին «ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով պարգևատրելու մասին: 1980, մայիս, էջ 19-20:

983. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Մեծայարգ տիար Աբրահամ Շահինեանին, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Բաղդադ: Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը տիար Աբրահամ Շահինյանին «ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով պարգևատրելու մասին: 1980, ապրիլ, էջ 11-12:

984. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Մեծայարգ տիար Ստեփան Տէր-Այվազեանին, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական: Թուսան, Սրիգոնա, ՎՄՆ: Վեհափառ Հայրապետի կոնդակը տիար Ստեփան Տէր-Այվազյանին «ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով պարգևատրելու մասին: 1980, հունիս-հուլիս, էջ 3-4:

985. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Մեծայարգ տիար Հասրաթ Միքայելեանին, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ողջոյն Հայրական

եւ օրհնութիւնն Հայրապետական: Բաղդադ: Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը Իրաքի Հայոց ազգային կեդրոնական վարչության նախագահ դոկտ. Հասրաթ Միքայելյանին «ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով պարգևատրելու մասին: 1980, ապրիլ, էջ 10-11:

986. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Մեծայարգ տիար Կարապետ Քիչմիշեանին, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Արքոյ էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւնն Հայրապետական: Բաղդադ: Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը Բաղդադի Հայոց հայ երկսեռ երիտասարդաց միության «Կոմիտաս» երգչախմբի ղեկավար տիար Կարապետ Քիչմիշյանին «ս. Սահակ - ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին: 1980, ապրիլ, էջ 14-15:

987. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Մեծայարգ տիար Հրայր Յովնանեանին, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Արքոյ էջմիածնի ողջոյն Հայրական եւ օրհնութիւնն Հայրապետական: Թոմզ Ռիվեր, Նյու-Յորք: Վեհափառ Հայրապետի կոնդակը տիար Հրայր Յովնանյանին (ԱՄՆ) «ս. Գրիգոր Լուսավորիչ» ա կարգի շքանշանով պարգևատրելու մասին: 1980, օգոստ., էջ 8-9:

988. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների աթիւ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրա-

պետական երեք աթոռներին, թեմակալ առաջնորդներին եւ եկեղեցական համայնքներին: 1980, հունվար, էջ 9-10: Նկ. Գորելեն: Ներդիր:

989. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի Իրաշափառ Սուրբ Հարության տոնի աթիւ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին եւ եկեղեցական համայնքներին: 1980, ապրիլ, էջ 22-23:

990. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի խոսքը՝ արտասանված սփյուռքահայության ներկայացուցիչների ժողովում: (Երեւան, 24 մոյեմբ. 1980): 1980, դեկտ., էջ 6-8:

991. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի խոսքը՝ ուղղված Միացյալ Նահանգաց հոգեւորականաց համագումարին (մայիս, 1980): 1980, մայիս, էջ 9-12:

992. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի խոսքը ուղղյալ Երուսաղեմի Հայոց պատրիարքության միաբանության խորհրդակցական համագումարին (3-10 օգոստ., 1980 թ.): 1980, օգոստ., էջ 3-7:

993. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Գերաշնորհ տ. Վաչե արքեպս. Հովսեփյանին, առաջնորդ Արեւմտյան թեմին Հայոց

Սիացյալ Նահանգաց: Վեհափառ Հայրապետի օրհնության գիրք՝ ուղղված Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արեւմտյան թեմի թեմական տարեկան համագումարին: 1980, մայիս, էջ 13:

994. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Նորին ամենապատվոթյուն տ. Անվերիոս Զաքարյան պատրիարք Ասորի օրթոդոքս սուրբ եկեղեցու: Դամասկոս: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրք Նորին Ամենապատվոթյուն տ. Անվերիոս Զաքարյան պատրիարք ընտրվելու առթիվ: 1980, օգոստ., էջ 10:

995. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Նորին Սրբություն Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ուղղված Հյուսիսային Ամերիկայի Արեւելյան թեմի պատգամավորական ժողովին (մայիս, 1980): 1980, մայիս, էջ 6-8:

996. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի քարոզը Երեւանի ս. Սարգիս եկեղեցում (11 մայիսիս 1980 թ.): 1980, մայիս, էջ 14-15: Մեկ նկար:

997. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Մայր Տաճարում: (1980 թ. ապրիլի 6): 1980, ապրիլ, էջ 3-5:

998. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Հայրապետական քարոզ Փրկչի

Հրաշափառ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր Տաճարում, (1980 թ. հունվարի 6): 1980, հունվար, էջ 3-4:

999. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի նախագահության նախագահ մեծահարգ Բաբկեն Սարկիսովին՝ Հայաստանում Սովետական կարգերի հաստատման վաթսուամյակի առթիվ: 1980, դեկտ., էջ 9:

1000. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Հայկական ՍՍՀ Սինիստրների հորհրդի նախագահ մեծահարգ Ֆադեյ Սարգսյանին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման վաթսուամյակի առթիվ: 1980, դեկտ., էջ 10:

1001. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամանորի եւ Փրկչի Հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Շայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի եւ քույր եկեղեցիների հոգեւոր պետերի միջեւ փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1980, հունվար, էջ 5-8:

1002. ՎԱԶԳԵՆ Ա ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Հայոց Հայրապետի եւ ժնեւում եկեղեցիների Համաշխարհային հորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրի միջեւ փոխանակված հեռա-

գրեր Սպրիյան եղեմնի վաթսուն-հինգամյակի առթիվ: 1980, ապրիլ, էջ 24:

1003. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ԳԱՅՈՑ: - Փրկչի Հրաշափառ Սուրբ Հայրության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն S.S. Վազգեն Ա Հայրապետի եւ քույր եկեղեցիների հոգեւոր պետերի միջեւ փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1980, ապրիլ, էջ 19-21:

1004. Վանյան Վահան: - Շամշադինի հուշարձան-վանքերը: [Երկու նկար]: 1980, դեկտ., էջ 46-50:

1005. Վեհափառ Հայրապետի գահակալության քսանհինգամյա տարեդարձին նվիրված հանդիսություն Մայր Աթոռում: - Ա. պատարագ Մայր Տաճարում: - Ընդունելություն ի պատիվ Հայոց Հայրապետի գահակալության քսանհինգամյակի: 1980, սեպտ., էջ 3-6:

Երկու նկար, Ներդիր:

1006. Վեհափառ Հայրապետը ընդունում է Մայր Աթոռի եւ Արարատյան թեմի քահանա հայրերին: 1980, մայիս, էջ 27:

1007. Վերաբացման հանդիսություն Հոգեւոր Շեմարանում: - Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքը Հոգեւոր Շեմարանի բացման հանդեսին: 1980, սեպտ., էջ 28-30:

1008. Վիեննայի արքեպիսկոպոս-կարդինալ Ֆրանց Կյոնիգը Մայր Աթոռում: 1980, սեպտ., էջ 38:

1009. Տարեկան տեղեկագիր Երուսաղեմի Արքոց Թարգմանչաց երկրորդական վարժարանի (1979-1980): 1980, հոկտ., էջ 56-57:

1010. Տեր-Հակոբյան Զգոն եպս.: - Հոգեգալուստ: 1980, մայիս, էջ 31-32:

1011. Տ. Հովման արքեպ Տերտերյան, տ. Աբել արքեպ Օղլուգյան, տ. Զատիկ արքեպ Ավետիքյան, տ. Պետրոս քահանա Մալյան: [Կենսագրականները եւ արքեպաների դիմանկարները]: 1980, հունիս-հուլիս, էջ 12-13:

1012. Տեր-Միքայելյան Նուբար: - Ցուցակ Մայր Աթոռ Ա. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 1980, փետրվար-մարտ, էջ 99-104, օգոստ., էջ 55-60, հոկտ., էջ 58-60, նոյեմբ., էջ 57-60, դեկտ., էջ 51-55:

1013. Տերտերյան Եղիշե արքեպիսկոպոս: - Հայ եկեղեցիի ազգային նկարագիրն ու դերը: 1980, օգոստ., էջ 11-18:

1014. Տեր-Պետրոսյան Լ[եւոն] Հ[ակոբի]: - Հայ-ասորական հարաբերությունների մեծագույն հետազոտողը: (Երվանդ Տեր-Միմասյանի (1879-1974) ծննդյան 100-ամյակի առթիվ): 1980, փետրվար-մարտ, էջ 64-69:

1015. Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1980 թվականի ընթացքում տպագրված նյութերի: 1980, դեկտ., էջ 56-60:

1016. Քահանայական ձեռնադրություն: [Հուսիկ արքեպս. Սանթրոյանը քահանա է ձեռնադրում Հովհաննես սրկ. Ղազարյանին, Օնիկ սրկ. Լուսարարյանին, Խաչատուր սրկ. Մատարյանին, Ղեւոնդ սրկ. Հարությունյանին եւ Անդրանիկ սրկ. Օհանյանին վերանվանելով նրանց տ. Բարսեղ քին. Ղազարյան, տ. Օհան քին. Լուսարարյան, տ. Գրիգոր քին. Օհանյան, տ. Նարեկ քին. Մատարյան, տ. Ղեւոնդ քին. Հարությունյան]: Նորընծաների կեն-

սագրականները]: 1980, փետրվար-մարտ, էջ 14-15:

1017. Զահանայական ձեռնադրություն Մայր Աթոռում: - Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր Տաճարում ս. էջմիածնի տոնին և քահանայական ձեռնադրության ժամանակ (8 հունիսի 1980 թ.): - ճաշկերույթ օրվա հանդիսությունների առիթով: - Վեղարի տվչություն: [Վազգեն Վեհափառը քահանա է ձեռնադրում Վահրամ սրկ. Տերտերյանին, Հրաչ սրկ. Օղլուգյանին, Վաչագան սրկ. Ավետիքյանին և Բորիս սրկ. Մալյանին, վերանվանելով նրանց տ. Հովնան, տ. Աբել, տ. Ջատիկ և տ. Պետրոս: Առաջին երեքը կուսակրոն]: 1980, հունիս-հուլիս, էջ 5-11:

Երկու նկար:

1018. Քուլանջյան Աուրեն Ե.: - Պրոֆ. դոկտ. Ավետիս Ամենյան, Միացյալ Նահանգների միջնադարյան հայերեն ձեռագրերի ցուցակ, Կալիֆորնիայի համալսարանի հրատարակչություն, Բերկլի.Լոս-Անժելոս.Լոնդոն. 1976, էջ XVX-863: [Գրքի շապիկը]: 1980, մայիս, էջ 50-56:

1019. Օրթոդոքս և հին կաթոլիկ եկեղեցիների միջև դիալոգի աստվածաբանական հանձնաժողովի չորրորդ հանդիպումը: 1980, հունվար, էջ 29-30:

1020. "Эчмиадзин" официальный журнал Святого Эчмиадзинского Престола. 1980, հունվար, էջ 58-59, փետրվար-մարտ, էջ 105, ապրիլ, էջ 57-58, մայիս, էջ 60-61, հունիս-հուլիս, էջ 60-61, օգոստ., էջ 62, սեպտ., էջ 61-62, հոկտ., էջ 61, նոյեմբ., էջ 61, դեկտ., էջ 61:

1021. "Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin. 1980, հունվար, էջ 59-61, փետրվար-մարտ, էջ 106, ապրիլ, էջ 59-60, մայիս, էջ 61-62, հունիս-հուլիս, էջ 62-63, օգոստ., էջ 62-63, սեպտ., էջ 62-63, հոկտ., էջ 62, նոյեմբ., էջ 62, դեկտ., էջ 62:

1022. "Etchmiadzine" organe officiel du Saint Siège d'Etchmiadzine. 1980, հունվար, էջ 61-62, փետրվար-մարտ, էջ 107, ապրիլ, էջ 61-62, մայիս, էջ 63-64, հունիս-հուլիս, էջ 63-64, սեպտ., էջ 63-64, հոկտ., էջ 63, նոյեմբ., էջ 63, դեկտ., էջ 63:

"ՇՇՄԻԱԺՀԻՆ"

ՕՖԻՇԻԱԼՅՆԻ ՅՐՈՒՆԱԼ ՇՇՄԻԱԺՀԻՆՏԻՔՈՍԱԿԱ
(ՄԱԻ 1998)

1. ՇՅԻԿԼԻԿԱ Կաթոլիկոսա Վսեխ Արմյան Դարեցինա Դ, քօսվաճեննա 80-լետիս քրօզքաղաճեննա նեզաճիսքիսմոյ Քեսքիպլիկա Արմենիա և քաճեննա քանքիք Վ Տարճարաքատսկոյ քիքե, 14 մայ, 1998 Դ (սթր. 3-6).

ՔԵԺԱԿՏԻՈՆՆԱԿԱ.

2. ԻԵՐՈՄՈՆԱՒ ԲԱԴՐԱԿ ԴԱԼՏԻԱՆ. Քւթ կ Տարճարաքաթ քրօքաճեն Շերեքրեսթօլննն ՏՅ. ՇՅԻԱԺՀԻՆ (սթր.7-12).
3. ԻԵՐՈՄՈՆԱՒ ԱՐՏԻՆ ՏԱՆՕՏԻԱՆ. Կ 80-լետիս Տարճարաքատսկոյ քիքե (սթր. 13-18).
4. ԴԵՎՐԿ ԱՐՒԿՅՈՒՅԱՆ. Քօնն, արմյանն! (սթիքօթրօքեննե) - (սթր.18).

ՔԵԼԻԴԻՈՅՈՅՆՓԻԼՈԼՈԴԻԿԵՏԻԿԻ ՕԺԺԵԼ

5. ԱՐՒԻԵՔԻՏԿՈՔ ՏԱԴԵ ԱՇԵՄԻԱՆ. "Վ տօմ յե տեօ" (Քելիգիօքեննե) - (սթր. 20-24).
6. Քիքքօ քենսքօքա յերսալիսնսքօք ԿիՐիլլա յնքերաթրս Կօնսթանթինս օ յաճեննա Վ նեքե յնաճեննա ՏՅաթօք Կրեսթա (քերօքաճեն Շ ճրեննե-արմյանսքօք քրօթարքիմանճրիթա Միքաէլա Աչաքադյան) - (սթր. 25-27).
7. ԱԿՕՔ ԿԵՕՏԱԻԱՆ. Նեճաճնօ օնաճրսքեննօ քրօքեննե արքիմանճրիթա Կերօքե "Օ քրիչեննա քրիքեճեննա Դօքքօճա Վ Իերսալիսն" (իսքքեճեննա և քօճենննիք) - (սթր. 28-40).
8. ՏՅ. ՖՐԱՆՀԻՅԿ ՏԱԼՅՏՏԻԿԻ. "Քւքօքօքեճեննա կ քրօքեճեննա յիքեննա". Շաթթ ԴԴ. (քերօքաճեն Շ ռսսքօք Արքիմք Քաքայան)- (սթր. 41-56).
9. ՅԱՆ- ՄԱՐԻ ՄԱՐԿԻՆ. Վսքօճք յիք Վօսթօք Վ Յսքնօյ Իթալիա (ճօ 11 Վ.) (Իսքքեճեննա. Քերրքաճեն Շ ֆրանսսքօք Աճաթ Յօզօյան) - (սթր. 57-65).
10. Յ. Դ. ԱՄԲԱՐՇՄԻԱՆ. Նօճա յնթերքաթաթա յեքօթօրք Տօք Վ "Այսմաճրքե" (իսքքեճեննա) - (սթր. 66-72).
11. ԴՐԻԴՐ ԲՐՒԿԻԱՆ. Ժաթա ռօքճեննա Խրիսթա Վ արմյանսկօյ կնիքնօյ տրաճիքի (իսքքեճեննա) - (սթր. 73-88).
12. ԱՐՏԱԿ ՄԱԺՕԻԱՆ. Քերրքա յաթօր արմյանսքիք քւթեճք յաճեննա (իսքքեճեննա, քօճենննիք քրօքեննա Մարթիրօսա Երճնաճի "Իսթրիա տրաթնա ֆրանքօ". Քերրքաճեն Շ ճրեննեարմյանսքօք) - (սթր. 89-96).
13. ՎԱՐԿԱՆ ԴՐԻԴՐԻԱՆ. Քերրքսքա Կաթոլիկոսա Դսքաս Կարնեճի Շ ճարեք Կարթլ-Կաքեթի Քերաքլօք ԴԴԴ և Շենաճնա ցրսզինսկօյ ճարսկօյ Տեճնա (1786-1792 ԴԴ.) (իսքքեճեննա) - (սթր. 97-108).
14. ՅՐԻԻ ՕՎԱՆԵՏԻԱՆ. Փիլօլօգիքեճեննա տսքքեննա (սթր. 109-113).

15. ГЕВОРК ВРТАНЕСЯН. Сардарapat-80. Об участии армянского духовенства в героической битве (исследование) - (стр. 114-119).
16. БАЛАБЕК МЕЛБЯН. Священнослужитель, страдающий вместе с народом (Свящ. Захария Апресян) (исследование) - (стр. 120-127).
17. ХАЧИК БАДИКЯН. Покровители Геворговской Духовной Академии. Степан Малхасянц (к 140-летию со дня рождения и 50-летию со дня смерти, исследование) - (стр. 128-140).

ЛИТЕРАТУРНЫЙ ОТДЕЛ

18. СУРЕН ДАНИЕЛЯН. Благотворительность - пристань спасения (фонд "Погос Арауманян") - (стр. 141-146).
19. СУРЕН ДАНИЕЛЯН. Деятели искусства сестры Мазлум (стр. 147-150).
20. МУШЕХ ОВАНЕСЯН. Торжественный акт в Геворговской Академии, 28 мая 1998 г (стр. 152).
21. АНАИТ АВАКЯН, АРМИНЕ ПАНОСЯН. Паломничество в Цахкеванк в праздник Вознесения, 21 мая 98 г (стр. 153-154).
22. Освящение освобожденной земли (Освящение новой церкви Св. Вознесения в Бердзоре - (стр. 155-156).
23. ПРОТОАРХИМАНДРИТ МИКАЭЛ АЧАПАГЯН. Подготовительная встреча в Дамаске представителей Православных Церквей перед Всемирной Ассамблеей, 7-13 мая 1998 г (стр. 157-158).
24. ПИТЕР БОУТЕНЕФФ. 50-летие Всемирного Совета Церквей и 8-ая Ассамблея (стр. 159-164).
25. Монастырь Св. Богородицы (епархиальный центр Греческой Православной Церкви в г. Норт-Форт-Майерс штата Флорида США) - (стр. 165-169).
26. Посещение представителя Архиепископа Кентерберийского и Первопрестольного Эчмиадзинского О. Филиппа Бакинкой армянской церкви Св. Лусаворич (о плачевном состоянии церкви) - (стр. 170-171).
27. Хроника Первопрестольного Эчмиадзина за май месяц (стр. 172-175).
28. ИВРОМОНАХ ХОРЕН ОВАНЕСЯН. Библиография журнала "Эчмиадзин" (1974-1983 - (стр. 176-190).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(MAY 1998)

1. His Holiness Karekin I's Encyclical dedicated to the 80th Anniversary of the creation of independent state and Sardarabad battle, May 14, 1998 (pp. 3-6).

EDITORIAL

2. **HIEROMONK BAGRAT GALSTYAN**. The way of Sardarabad passes through the Mother See (pp. 7-12).
3. **HIEROMONK ARSHEN SANOSSYAN** - 80th Anniversary celebrations of Sardarabad battle (pp. 13-18).
4. **GEVORG HARUTYUNYAN** - Remember, son of the Armenian (poetry) - (pp. 18).

RELIGIO-PHILOLOGICAL

5. **ARCHBISHOP SHAHE AJEMYAN** - With the same body (pp. 20-24).
6. The Letter of St. Cyril of Jerusalem to Emperor Constantine on apparition of the Holy Cross in the sky (translation from Grabar by Archimandrite Mikael Ajapahyan) (pp. 25-27).
7. **HAGOP KYOSEYAN** - The newly invited "The Reason of Palm Sunday" of Kerovbe Vardabed (pp. 28-40).
8. **FRANCIS of SALES** - Introduction to the Devout Life (translation from Russian by Arpine Papayan) - (pp. 41-56).
9. **JEAN-MARI MARTIN** - The Easterners in Southern Italy (upto XI century) (translation from French by Azat Bozoyan) - (pp. 57-65).
10. **V. G. HAMBARDZUMYAN** - Newly invited words in "Yaysmavurk" (pp. 66-72).
11. **GRIGOR BRUTYAN** - The date of Christ's birth according the Armenian literary tradition (pp. 73-88).
12. **ARSHAK MADOYAN** - The first-born of Armenian diaries (the translation of "History of Franks' country" by Martiros of Erzuka) - (pp. 89-96).
13. **VARDAN GRIGORYAN** - The correspondence of Catholicos Ghukas of Karin with Harakli II King of Kartl-Kakheti and the members of royal family (1786-1792) - (pp. 97-108).
14. **YURI HOVHANNISYAN** - Philological clarifications (pp. 109-113).
15. **GEVORG VRTANESYAN** - Sardarabad-80: Monks' participation in this heroic battle (pp. 114-119).
16. **BALABEK MELYAN** - Priest suffered by national difficulties (Priest Zakaria Apresyan) - (pp. 120-27).
17. **KHACHIK BADIKYAN** - Beneficents of Kevorkyan Seminary: Stepan Malkhasyants (on the occasion of 140th anniversary of birth and 50th anniversary of death) - (pp. 128-140).

LITERARY

18. SUREN DANIELYAN - Benevolence - place of salvation ("Poghos Arzumanyan" fund) - (pp. 141-146).
19. SUREN DANIELYAN - Sisters Mazlum - the artists (pp. 147-150).
20. MUSHEGH HOVHANNISYAN - Ceremony in the Kevorkyan Seminary, May 28 1998 (p. 152).
21. ANAHIT AVAGYAN, ARMINE PANOSSYAN - Pilgrimage to Dzaghkavank on Ascension Day, May 21 1998 (pp. 153-154).
22. Sanctification of the liberated soil (consecration of the newly-built St. Ascension church in Berdzor), May 31 1998 (pp. 155-156).
23. ARCHIMANDRITE MIKAEL AJAPAHYAN - Pre-Assembly meeting of the Orthodox Churches in Damascus, May 7-13 1998 (pp. 157-158).
24. PETER BOUTENEFF - 50th Anniversary of WCC and the VIII Assembly (pp. 159-164).
25. Holy Virgin's Monastery - diocesan centre of Greek Orthodox Church (in North Fort Mayers city of Florida, USA) - (pp. 165-169).
26. The visit of R. Philip Storr-Ventur, the representative of the Archbishop of Canterbury in the Mother See, to S. Gregory Illuminator Armenian church of Baku (about the sorrowful condition of the church) - (pp. 170-171).
27. Church pulpit: News - The description of celebrated Holy Liturgies and delivered sermons in the Cathedral and other ceremonies in the Mother See on May (pp. 172-175).
34. HIEROMONK KHOREN HOVHANNISYAN - Bibliography of "Etchmiadzin" monthly (1974-1983) - (pp. 176-190).

"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(MAI 1998)

1. L'encyclique de SS Karékine 1er, Catholikos de tous les Arméniens à l'occasion du 80e anniversaire de l'indépendance de la 1ère République arménienne et à la mémoire des victimes de la bataille de Sardarabad. 14 mai 1998 (pp. 3-6).

REDACTION

2. PERE PAKRAD KALOUSTIAN. Le chemin de Sardarabad passe par le Saint-Siège d'Etchmiadzine (pp. 7-12).
3. PERE ARCHENE SANOSSIAN. La commémoration du 80e anniversaire de la bataille héroïque de Sardarabad (pp. 13-18).
4. KEVORK HAROUTIOUNIAN. "Souviens-toi, fils arménien". Poème (pp. 18).

PHILOLO-RELIGIEUX

5. ARCHEVEQUE CHAHE ADJEMIAN. "Avec son corps". Catéchisme (pp. 20-24).
6. La lettre de l'évêque Guregh de Jérusalem au roi Constantin au sujet de l'apparition de la croix dans le ciel. Traduction de l'arménien classique par l'archimandrite Mikaël Adjabayan (pp. 25-27).
7. HAGOP KEUSSEYAN. L'oeuvre nouvellement connue "la raison de la venue du Seigneur à Jérusalem" du prêtre Kéropé. Etude (pp. 28-40).
8. FRANCISCUS DE SALI. Guide de la vie pieuse. Traduction du russe par Arpiné Babayan (pp. 41-56).
9. JEAN-MARIE MARTIN. Les orientaux dans le sud de l'Italie jusqu'au 11e siècle. Etude. Traduit du français par Azad Bozoyan (pp. 57-65).
10. V.K. HAMPARTSOUMIAN. Nouveaux mots du ménologe. Etude (pp. 66-72).
11. KRIKOR BROUTIAN. La date de la naissance du Christ selon la tradition littéraire arménienne (pp. 73-88).
12. ARCHAG MADOYAN. Les notes du pionnier arménien. "Histoire du pays des francs" de Mardiros d'Erzinga. Traduit de l'arménien moderne (pp. 89-96).
13. VARTAN KRIKORIAN. La correspondance du Catholikos Luc de Garni avec le roi Héracle de Kartel-Kakhet et les membres de la famille royale géorgienne. 1786-1792. Etude (pp. 97-108).
14. YOURI HOVANISSIAN. Verites Philologiques (pp. 109-113).
15. KEVORK VERTANESSIAN. Sardarabad 80. La participation des monastiques à cette bataille héroïque. Etude (pp. 114-119).
16. PALAPEG MELIAN. Le religieux qui a tant souffert des soucis nationaux. Prêtre Zakaria Abressian. Etude (pp. 120-127).

17. KHATCHIG BATIKIAN. Les dévoués du collège Kévorkian. Stépan Malkhassiantz. A l'occasion du 140e anniversaire de la naissance et 50e du décès. Etude (pp. 128-140).

LITTERAIRE

18. SGURENE DANIELIAN. La bienfaisance. étape du salut. Le fond "Boghos Arzoumanian" (pp. 141-146).
19. SOURENE DANIELIAN. Les soeurs artistiques de Mazli (pp. 147-150).
20. MOUCHEGH HOVANISSIAN. Cérémonie au collège Kévorkian. 28 mai 1998 (p. 152).
21. ANAHID AVAKIAN, ARMINE PANOSSIAN. Pèlerinage à Dzaghgévank à l'occasion de la fête de l'Ascension. 21 mai 1998 (pp. 153-154).
22. La sanctification de la terre libérée de Pertsor. La bénédiction de l'Eglise de l'Ascension, nouvellement construite. 30 mai 1998 (pp. 155-156).
23. ARCHIMANDRITE MIKAEL ADJABAYAN. La rencontre préliminaire des Eglises orthodoxes à Damas. 7-13 mai 1998 (pp. 157-158).
24. PETER POYTENEV. Le 50e anniversaire du conseil mondial des Eglises et la 8e assemblée (pp. 159-164).
25. Le monastère Ste-Marie, centre diocésain de l'Eglise orthodoxe grecque dans la ville North Ford Mayers de l'état de Floride des USA (pp. 165-169).
26. La visite du représentant au Saint-Siège de l'archevêque de Canterbury, le père Philipp Storr Venter, à l'Eglise arménienne St-Grégoire l'Illuminateur de Bakou. Au sujet de l'état déplorable de l'Eglise (pp. 170-171).
27. Diverses informations ecclésiastiques. Description des différentes messes, homélies, célébrations et cérémonies au mois de mai 1998 (pp. 172-175).
28. PERE KHORENE HOVANISSIAN. Bibliographie du mensuel "Btchmiadzine". 1974-1983 (pp. 176-190).

ԽՄԲԱԳԻՐ՝ ԲԱԳՐԱՏ ԱՔԵՂԱ ԳԱԼՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

ԴԱՍԻՉ՝ 77704

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ